

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՑԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



EUROPEAN
EDUCATIONAL REGIONAL
ACADEMY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2(01)

ԵՐԵՎԱՆ
2013

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 (01)

ԵՐԵՎԱՆ
2013

ՀՏԳ-001 Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել
ԳՄԴ-72 Եվրոպական կրթական տարածաշրջանային
Ե 744 ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Հովհաննիսյան Գ.Ն., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Խաչատրյան Ա.Հ., իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վահանյան Գ.Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Խաչատրյան Հ.Ե., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ղարսյան Է.Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մովսիսյան Յու.Մ., ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Գրիգորյան Յու.Գ., ֆիզմաթ գիտ. դոկտոր
Քրիստոֆ Արեյսոց, ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժող./
Ե 744 ԵՏԱ. Գլխ. խմբ.՝ Խաչատրյան Ա.Պ., - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2013:
Գիրք 3 - 320 էջ:

Ժողովածուն ընդգրկում է իրավաբանության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИЯ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ISBN 978-99941-2-609-5

ՀՏԳ-001

ԳՄԴ-72

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2013
© Publishing of European Educational Regional Academy, 2013

**ՎԱՐՈՒՅԹԻՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

Ա.Ա. Թադևոսյան

Արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների հիմնարար ուղղություններից մեկը քրեադատավարական օրենսդրության կատարելագործումն է՝ ուղղված ինչպես քրեական դատավարության շրջանակներում անձի սահմանադրական իրավունքները երաշխավորող մեխանիզմների մշակմանը, այնպես էլ քրեական վարույթի բնականոն ընթացքն ապահովող արդյունավետ քրեադատավարական կառուցակարգերի կատարելագործմանը:

Ե՛վ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության գործող օրենսգիրքը (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.), և՛ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) սահմանում են քրեադատավարական նորմերի համակարգ, որոնց առկայությունը բացառում է վարույթին տվյալ մասնակցի մասնակցությունը: Խնդրո առարկա հարցի շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորման մեխանիզմների հետազոտությունը¹: Տվյալ կարգավիճակն ունեցող սուբյեկտը գործին մասնակցում է ոչ թե սեփական, այլ վարույթի մեկ այլ մասնակցի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Հիշյալ նպատակն անմիջականորեն բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի պահանջներից, որը կոչված է երաշխավորելու համապատասխան իրավաբանական օգնություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը: Օրենսդիրը հետամուտ է լինում բացա-

¹ Սույն աշխատանքի շրջանակներում «փաստաբան» հավաքական հասկացության ներքո դիտարկվում են պաշտպանը, տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը, ինչպես նաև վկայի փաստաբանը:

ռելու վարույթին այն փաստաբանների մասնակցությունը, որոնք, որոշակի հանգամանքներից ելնելով, չեն կարող իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրենց համապատասխան իրավունքներն ու պարտականությունները՝ այդպիսով վնաս հասցնելով ինչպես իրենց պաշտպանյալների/վստահորդների, այնպես էլ արդարադատության շահերին:

Ստորև ներկայացնում ենք ՀՀ գործող քր. դատ. օր.-ի և Նախագծի համապատասխան հոդվածների բովանդակությունը.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳԻՐԶ**

Հոդված 93.

Պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը

1. Պաշտպանը կամ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կամ անձնական, ծառայողական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցում կամ մասնակցել է քրեական գործի քննությանը.

2) գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, մասնագետ, փորձագետ կամ վկա.

3) օրենքով կամ դատարանի դատավճռով իրավունք չունի լինելու փաստաբան կամ ներկայացուցիչ:

2. Պաշտպանը, ինչպես նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող պաշտպանյալի կամ վստահորդի կողմից մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նա տվյալ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, որի շահերը հակասում են պաշտպանյալի կամ վստահորդի շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ:

3. Մույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով պաշտպանին հեռացնելը թույլատրվում է միայն պաշտպանյալի համաձայնությամբ:

4. Պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելու հարցը լուծում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 68.

Վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքները

1. Պաշտպանը, տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

1) տվյալ վարույթին մասնակցել է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ, բացառությամբ վկայի փաստաբան հանդես գալու դեպքերի.

2) գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, ով մասնակցել կամ պաշտպանի կամ լիազոր ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.

3) տվյալ վարույթի հետ կապված իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, ում շահերը հակասում են վստահորդի շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ.

4) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել փաստաբան:

2. Մեղադրյալի պաշտպանը չի կարող նույն վարույթի ընթացքում ներկայացնել այլ անձանց, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները կիրառվում են նաև վկայի փաստաբանի վրա, բացառությամբ մեկից ավելի տուժողներ կամ վկաներ ներկայացնելու դեպքերի:

Նախագծի 68-րդ հոդվածն ամրագրում է վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքները, այն է՝ պաշտպանը, տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

1. Տվյալ վարույթին մասնակցել է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ, բացառությամբ վկայի փաստաբան հանդես գալու դեպքերի:

Քրեադատավարական օրենսդրությունն արգելում է տվյալ վարույթի շրջանակներում մի քանի գործառույթների իրականացումը տարբեր սուբյեկտների կողմից՝ աշղյիսով սահմանելով փաստաբանի կողմից իր գործունեության հետ անհամատեղելի գործառույթների իրականացման անհնարինություն այն դեպքում, եթե վերջինս տվյալ վարույթում հանդես է եկել այլ դատավարական կարգավիճակով²: Վերոգրյալ արգելքը հետապնդում է մի քանի նպատակ: Նախ և առաջ, փաստաբանի հիմնական ֆունկցիան իր պաշտպանյալին/վստահորդին սահմանադրորեն ամրագրած իրավաբանական օգնության իրավունքի իրացման ապահովումն է, ինչն անհամատեղելի է այլ ֆունկցիաների իրականացման հետ: Բացի այդ, գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ վարույթից այս կամ այն սուբյեկտին հեռացնելը չի բխում ոչ պաշտպանյալի/վստահորդի, ոչ էլ արդարադատության շահերից (նման դեպքերում անհրաժեշտ է առավելազույնս բացահայտել մասնակցությունը բացառող հանգամանքների բնույթը, և հատկապես, որքանով են տվյալ հանգամանքները խոչընդոտում վարույթին անձի օբյեկտիվ և անկողմնակալ մասնակցությանը)³: Մինևույն ժամանակ, ինչպես նշում է իրավաբանական գիտությունների թեկնածու Ս.Ս. Ամպենովը, ի տարբերություն դատավարության այլ սուբյեկտների (դատարան, վարույթի հանրային մասնակիցներ)՝ փաստաբանի առջև օբյեկտիվության և անձնական շահագրգռվածության բացակայության պահանջ չի դնում, այլ միայն սահմանում է, որ վերջինս իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով ապահովել իր պաշտպանյալի/վստահորդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, բայց և այնպես, փաստաբանը իր «առաքելությունը» հավուր պատշաճի իրականացնելու համար պետք է ունենա բավարար անկախություն⁴, ընդ որում՝ անկախություն ինչպես հոգեբանական, այնպես էլ դատավարական իմաստով: Անկախությունը՝ հոգեբանական իմաստով, կարող է

² Таран А.С. Обстоятельства, исключают участие адвоката в уголовном процессе: монография. - М.: Юрлитинформ, 2013, ст. 28.

³ Горский М. В. Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование). - М.: Юрлитинформ, 2011, ст. 82.

⁴ Ампенев Сергей Сергеевич. Обстоятельства, исключают участие в уголовном судопроизводстве : диссертация кандидата юридических наук .- Тюмень, 2010, ст. 121.

սահմանափակվել, երբ վերջինս վարույթին մասնակցել է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ, քանզի տվյալ դեպքում փաստաբանի մոտ, նախկին կարգավիճակով պայմանավորված, կարող է կանխակալ, փաստաբանական գործունեության հետ անհամատեղելի վերաբերմունք ձևավորվել իր պաշտպանյալի/վստահողի նկատմամբ: Տվյալ կապակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ս. Տարանը նշում է, որ քննարկվող խնդրի կապակցությամբ թեորիապես և հիպոթետիկ մակարդակով էականորեն տարբերվող դիրքորոշում հայտնելը գիտության մեջ բնորոշվում է իբրև փաստաբանի կողմից մասնագիտական էթիկայի խախտում⁵: Գ.Պ. Վատմանը ընդգծում է. «Փաստաբանի կողմից անձնական պատվի և մասնագիտական արժանապատվության հետ անհամատեղելի է ստանձնել այնպիսի հանձնարարություն, որը տվյալ գործով հակասում է նախկինում նրա կողմից իրավաբանական գրականության շրջանակներում արտահայտված տեսակետին»⁶:

Փաստացի, նախկին գործունեությունը կարող է խաթարել պաշտպանի և մեղադրյալի, տուժողին կամ գույքային պատասխանողի և նրա լիազոր ներկայացուցչի միջև վստահության հիմքերը՝ հիմք տալով համապատասխանաբար մեղադրյալին, տուժողին կամ գույքային պատասխանողին, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնին կասկածի տակ դնել վարույթին տվյալ փաստաբանի մասնակցության նպատակահարմարությունը:

2. գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, ով մասնակցել կամ պաշտպանի կամ լիազոր ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին:

Նշված հանգամանքը ևս դիտվում է իբրև պաշտպանի, տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցչի գործունեության անկախությունը սահմանափակող հանգամանք: Տվյալ դեպքում

⁵ Таран А.С. Обстоятельства, исключющие участие адвоката в уголовном процессе: монография. – М.: Юрлитинформ, 2013, ст. 37.

⁶ Ватман Д. П. Адвокатская этика. М.: Юридическая литература, 1977, ст. 7.

Էական նշանակություն է ձեռք բերում «ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերություններ» հասկացության պարզաբանումը, որը «ազգականներ» հասկացության մասով բացահայտվում է Նախագծի 6-րդ հոդվածի 51 և 52-րդ կետով, իսկ ինչ վերաբերում է «անձնական կախվածության այլ հարաբերություններ» հասկացությանը, թեև օրենսդիրը այն չի սահմանել, այնուամենայնիվ ենթադրվում է, որ դրանք ներառում են այն հարաբերությունները, որոնք կարող են սահմանափակել անձի ազատությունը դրսևորելու անկողմնակալ վարքագիծ և կայացնելու ողջամիտ և հիմնավոր որոշումներ: Գործնականում, քրեական վարույթում ներգրավված պաշտոնատար անձից փաստաբանի կախվածությունը կարող է լուրջ վնաս հասցնել ինչպես պաշտպանյալի/վստահորդի օրինական շահերին, այնպես էլ արդարադատության շահերին, քանզի տվյալ դեպքում խաթարվում են քրեական դատավարության առանցքային սկզբունքները, ինչպիսիք են կողմերի հավասարությունը և մրցակցությունը, իրավաբանական օգնության ապահովումը, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը: Ազգակցական կամ անձնական կախվածությունը խոչընդոտում է ինչպես փաստաբանի, այնպես էլ համապատասխան պաշտոնատար անձանց գործունեությանը, հետևաբար Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 65-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով քննարկվող հիմքով քրեական վարույթից հեռացվում են այն անձինք, որոնք մյուսներից ուշ են ձեռք բերել քրեական վարույթում ներգրավված անձի կարգավիճակ:

3. տվյալ վարույթի հետ կապված իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, ում շահերը հակասում են վստահորդի շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ.

Փաստաբանի հիմնական գործառույթը իր պաշտպանյալի/վստահորդի օրինական շահերը ներկայացնելն ու պաշտպանելն է, հետևաբար ցանկացած գործողություն կամ անգործություն, որը կարող է հակասել վերջինիս շահերին, անթույլատրելի է: Օրենսդիրը, փաստորեն, գործնականում չի արգելում միևնույն փաստաբանին ներկայացնել քրեական

դատավարության մի քանի մասնակիցների շահերը՝ պայմանով, որ այդ շահերը միմյանց չհակասեն: Շահերի միջև հակասությունը կարող է արտահայտվել, օրինակ՝

- մեղադրյալների գործողությամբ (նրանցից մեկը ցուցմունք է տվել մյուսի դեմ),

- մեղադրյալների շահերի օբյեկտիվ հակասությամբ (երկու մեղադրյալներն էլ ժխտում են հանցագործությանը իրենց մասնակցությունը՝ չնայած գործի հանգամանքները օբյեկտիվորեն վկայում են նրանցից մեկի կողմից դրա կատարումը) և այլն⁷:

Ի տարբերություն Նախագծի՝ գործող օրենսգրքի համաձայն՝ նշված հիմքով պաշտպանին հեռացնելը թույլատրվում է միայն պաշտպանյալի համաձայնությամբ: Կարծում են, Նախագիծն առավել արդյունավետ լուծում է առաջարկում, քանզի ցանկացած պարագայում, եթե առկա է վստահորդների շահերի բախում, անգամ պաշտպանյալի համաձայնությունը չի կարող դիտվել իբրև վարույթին փաստաբանի մասնակցությունը հնարավոր դարձնող հանգամանք, որպիսի պայմաններում առաջին հերթին վտանգվում է պաշտպանյալի օրինական շահերի արդյունավետ պաշտպանության ապահովումը:

4. օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել փաստաբան:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է. «Փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար»: Բացի այդ, նույն օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ անձը չի կարող լինել փաստաբան, եթե նա՝

- 1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- 2) դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

⁷ Ампинов Сергей Сергеевич. Обстоятельства, исключющие участие в уголовном судопроизводстве: диссертация кандидата юридических наук .- Тюмень, 2010, ст. 129.

Նման սահմանափակումները, նախ և առաջ, բխում են քրեական դատավարության այն սուբյեկտի շահերից, ում ներկայացնում է տվյալ փաստաբանը, քանզի վերջիններիս շահերի պաշտպանությունն ու որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը կարող է ապահովվել միայն օրենսդրության տեսանկյունից «պատշաճ» փաստաբանի միջոցով: Հարկ է ընդգծել, որ և՛ որպես պաշտպան, և՛ որպես տուժողի կամ գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչ՝ փաստաբանը գործի վարույթում ներգրավվում է վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, ընդ որում՝ Նախագծի 45-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով՝ պաշտպանության ստանձնումը հաստատելու համար պաշտպանը վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է իր անձը հաստատող և փաստաբան լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերը: Փաստորեն, փաստաբանին հիշյալ հիմքով վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները կարող են բացահայտվել նաև մինչ վերջինիս վարույթում ներգրավվելը: Սակայն, գործնականում չեն բացառվում իրավիճակներ, երբ քննարկվող հանգամանքները ի հայտ գան վարույթում ներգրավվելուց հետո, օրինակ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցումը, փաստաբանին դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու դեպքում և այլն:

Ի տարբերություն ՀՀ գործող քր. դատ. օր.-ի, որը նախատեսում է փաստաբանի միայն «վարույթից հեռացնելու» ինստիտուտը, Նախագիծը օգտագործում է երկու իրավական կատեգորիա՝ «վարույթից ազատելը» և «վարույթից հեռացնելը»: Գործող օրենսգրքում «վարույթից հեռացնելու» ինստիտուտն ամրագրված է 11-րդ գլխում՝ «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» վերտառությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը «վարույթից ազատելու» ինստիտուտը սահմանում է 8-րդ՝ «Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ» գլխում, իսկ «վարույթից հեռացնելու» ինստիտուտը՝ 17-րդ՝ «Դատավարական սանկցիաները» գլխում:

Վարույթի մասնակիցների իրավական կարգավիճակի բովանդակության անբախտելի մասն են կազմում օրենսդրությամբ նախատեսված

դատավարական իրավունքները և պարտականությունները, ընդ որում՝ սուբյեկտի կողմից իր վրա դրված դատավարական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը բնորոշվում է իբրև իրավախախտում և հանգեցնում համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառման⁸:

ՀՀ գործող քր. դատ. օր.-ի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանը, որին հայտնի է քրեական դատավարությանն իր մասնակցությունը բացառող հանգամանք, պարտավոր է դրա մասին հայտնել դատավարության շահագրգռված մասնակիցներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին, իսկ այն դեպքում, երբ նա կասկածում է իր մասնակցությամբ գործի նորմալ քննության հնարավորությանը, հայտարարել գործով վարույթից իրեն հեռացնելու մասին միջնորդություն: Փաստորեն, գործող օրենսդրությամբ, «վարույթից հեռացնելու» ինստիտուտը կիրառվում է միայն փաստաբանի վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության դեպքում: Մինևույն ժամանակ ի տարբերություն գործող քրեադատավարական օրենսդրության՝ Նախագծով քննարկվող անձանց վարույթից հեռացման ինստիտուտը, ինչպես արդեն նշվել է, դիտարկվում է որպես վերջիններիս նկատմամբ կիրառվող քրեադատավարական սանկցիա: Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 148-րդ հոդվածի՝ վարույթին մասնակցող փաստաբանը կամ օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև հանրային մեղադրողը վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր որոշմամբ կարող է հեռացվել վարույթից, եթե՝

1) երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը, կամ

2) սույն գլխով սահմանված կարգով երեք անգամ դատավարական

⁸ Хачатуров Р.Л., Липинский Д.А. Общая теория юридической ответственности: Монография. СПб.: Издательство Р. Арсланова «Юридический центр Пресс», 2007, ст. 842, Коврига З.Ф. Уголовно-процессуальное принуждение. Воронеж: Изд-во Воронежского университета, -1975, ст. 30. См'у Поплавская Н.Н., Тугушева Е.Г. “Механизм реализации уголовно-процессуальной ответственности”// “Правонарушение и юридическая ответственность”, Материалы международной научно-практической конференции (Тольятти, 13-14 ноября 2012 года), Тольятти, Издательство ТГУ, 2012, ст. 254.

սանկցիայի ենթարկվելուց հետո շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունները:

Քննարկվող ինստիտուտի վերաբերյալ համանման դիրքորոշում բազմիցս արտահայտվել է նաև մասնագիտական գրականության մեջ⁹: Ինչպես նշում է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ս. Տարանը, քրեական դատավարության շրջանակներում բացարկյ/վարույթից հեռացնելը վարույթին մասնակցելուց ազատելն է, որի արդյունքում օրենքով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում սուբյեկտը զրկվում է իր դատավարական իրավունքները իրականացնելու հնարավորությունից և կորցնում իր դատավարական կարգավիճակը¹⁰: Նշված մոտեցումը միանգամայն արդարացված է, քանզի սուբյեկտի նկատմամբ քրեադատավարական սանկցիաներ փաստացի կիրառվում են վերջինիս կողմից օրենքով իր վրա դրված քրեադատավարական պարտականությունները չկատարելու դեպքում: Ընդգծենք, որ դատավարական պարտականությունները երաշխավորվում են դրանք չկատարելու կապակցությամբ նեգատիվ դատավարական հետևանքների ի հայտ գալու սպառնալիքով¹¹: Ինչ վերաբերում է «վարույթից ազատելու» ինստիտուտին, գործող օրենսգիրքը փաստաբանի նկատմամբ այն չի կիրառում (հոդված 89): Նախագծով վարույթից ազատելու ինստիտուտը կիրառվում է այն դեպքում, երբ առկա են վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքներ: Ինչպես գործող օրենսգրքով (հոդված 88, մաս 2), այնպես էլ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (հոդված 64, մաս 2), փաստաբանի վրա դրված է դատավարական պարտականություն վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների վերաբերյալ, տեղեկատվության տիրապետման դեպքում այդ մասին հայտնել վարույթի շա-

⁹ Уголовный процесс: Учебник для вузов. Под ред. В.П. Божьева. 2-е изд., исп. и доп. – М.: Спарк, 2000, с. 41; Столмаков А.И. Понятие и классификация санкций норм уголовно-процессуального права// Правоведение. – 1977, №3, с. 40-46. Տե՛ս Թարան Ա.Ս. Отвод адвоката как юридическая ответственность. // Вектор науки ТГУ. №3(3). 2010, ст. 199.

¹⁰ Թարան Ա.Ս. Отвод адвоката как юридическая ответственность. // Вектор науки ТГУ. №3(3). 2010, ст. 199.

¹¹ Уголовный процесс: Учебник для вузов. Под ред. В.П. Божьева. 2-е изд., исп. и доп. – М.: Спарк, 2000, с. 41.

հազրգիռ մասնակիցներին, իսկ այն դեպքում, երբ առկա է համոզմունք իր մասնակցությամբ վարույթի բնականոն ընթացքի անհնարինության վերաբերյալ՝ ներկայացնել վարույթին մասնակցելուց իրեն ազատելու մասին միջնորդություն: Փաստացի, նման միջնորդություն չներկայացնելը, այսինքն՝ իր վրա դրված դատավարական պարտականությունը չկատարելը, դիտվում է որպես դատավարական խախտում և հանգեցնում քրեադատավարական պատասխանատվության առաջացման՝ համապատասխան դատավարական սանկցիայի կիրառման, որն իրականացվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից տվյալ անձին վարույթին մասնակցությունից հարկադիր հեռացմամբ:

Այսպիսով՝ նպատակահարմար ենք համարում Նախագծի 148-րդ հոդվածով նախատեսել փաստաբանին վարույթից հեռացնելու դատավարական սանկցիայի կիրառումը նախագծի 68-րդ հոդվածով ամրագրված վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքների ակայության դեպքում իրեն վարույթին մասնակցելուց ազատելու միջնորդություն չարամտորեն չներկայացնելու հիմքով:

Առանցքային հասկացություններ. փաստաբան, մասնակցությունը բացառող հանգամանք, վարույթից ազատել, վարույթից հեռացնել, քրեական դատավարություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1995թ. (2005 թ. փոփոխություններով):
2. Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգիրք, (01.07.1998, ՀՕ-248):
3. Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ:
4. Հայաստանի Հանրապետության օրենք Փաստաբանության մասին (08.12.2011, ՀՕ-339-Ն):

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. Ампенев Сергей Сергеевич. Обстоятельства, исключаящие участие в уголовном судопроизводстве: диссертация кандидата юридических наук .- Тюмень, 2010, 190 с.
6. Ватман Д.П. Адвокатская этика. М., Юридическая литература, 1977, 93 с.
7. Горский М.В. Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование). - М., Юрлитинформ, 2011, 240 с.
8. Поплавская Н.Н., Тугушева Е.Г. Механизм реализации уголовно-процессуальной ответственности // “Правонарушение и юридическая ответственность”, Материалы международной научно-практической конференции (Тольятти, 13-14 ноября 2012 года), Тольятти, Издательство ТГУ, 2012.
9. Таран А.С. Обстоятельства, исключаящие участие адвоката в уголовном процессе: монография. – М., Юрлитинформ, 2013, 192 с.
10. Таран А.С. Отвод адвоката как юридическая ответственность. // Вектор науки ТГУ. №3(3). 2010.
11. Уголовный процесс: Учебник для вузов/ под ред. В.П. Божьева. 2-е изд., исп. и доп. М., Спарк, 2000, 574 с.
12. Хачатуров Р.Л., Липинский Д.А. Общая теория юридической ответственности: Монография. СПб.: Издательство Р. Арсланова, Юридический центр Пресс, 2007, 950 с.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гринберг Т.Э. - Образ страны или имидж государства: поиск конструктивной модели. // “МЕДИАСКОП” – электронный научный журнал факультета журналистики МГУ им. М.В.Ломоносова, Выпуск №2., 2008г./ URL: <http://www.mediascope.ru/taxonomy/term/150> (հարցման ամսաթիվը՝ 15.03.2013):
2. Киселев И.Ю. - Проблема образа государства в международных отношениях в рамках конструктивистской парадигмы. //Электронный Информационно-аналитический центр по изучению

- общественно-политических процессов на постсоветском пространстве /Публикации от 08 апреля 2007г./ URL:http://www.ia-centr.ru/archive/public_detailsa5fc.html?id=491 (Һурғуһи Һиһуһрһиһи` 15.03.2013):
3. Fisk, R.P., Grove, St.J., John, J. - Interactive Services Marketing. HOUGHTON MIFFLIN, 2008, 3rd Edition. pages: 340. Һи 187:
 4. True, J. “Globalisation and Identity” // Globalisation and Identity / Raymond Miller (ed.) – South Melbourne: Oxford University Press, 2006, 73-74.
 5. Минтусов И.Е., Егорова-Гантман Е.В. - Политическое консультирование. Изд. 2-е. – М.:§Никколо-Медиа:, 2002, 471 с. Һи 231:
 6. Афанасьев С.В. - Формирование корпоративного имиджа как основная составляющая PR-стратегии. – Барнаул, 2008. – 26 с. // “Гуманитарные технологии в социальной сфере” – электронное издание Российского государственного педагогического университета им. А.И. Герцена. Дата размещения: 19.08.2008/ URL: http://portal.gersen.ru/component/option,com_mtree/task,viewlink/link_id,7163/Itemid,50/ (Һурғуһи Һиһуһрһиһи` 28.04.2013):
 7. Чернышов Ю.Г. - Имидж России и проблемы интеграции на постсоветском пространстве. // Вестник Российской Ассоциации Политической Науки. Материалы конференции: “Стратегии политического развития России”, 05-06 февраля 2004г. Барнаул: Изд-во Алт. гос. ун-та. URL: <http://rapn.ru/?grup=72&doc=137> (Һурғуһи Һиһуһрһиһи` 30.04.2013):
 8. Anholt, S. Competitive Identity: The New Brand Management for Nations, Cities and Regions. Palgrave Macmillan, 2007. Pages: 160. Һи 87:
 9. Шипова Е.А. PR-сообщество на службе страны // “Советник” – профессиональный журнал о связях с общественностью и рынке PR. Москва, 2004, №6. Һи 4-5:
 10. Галумов Э.А. - Имидж против имиджа. – М.: Изд-во «Известия», 2005, 552 с. Һи 174:
 11. Галумов Э.А. - Международный имидж России: стратегия формирования. – М.: Изд-во «Известия», 2004, 446 с. Һи 149:
 12. Lasswell, H.D. - The Structure and Function of Communication in Society. // The Communication of Ideas. Lyman Bryson (ed.). New York: The Institute for Religious and Social Studies. 1948. Pages: 203-243.
 13. UNWTO e-library: Tourism region definition. URL: <http://www.wtoelibrary>.

org/content/?k=definition+country+image&mode=allwords (հարցման ամսաթիվը՝ 22.04.2013):

14. Спирченко М.А. - Образ, имидж и бренд туристского города. // Архитектон: известия вузов – электронный межвузовский журнал. 2007, №18 (Приложение). Материалы студенческой научной конференции «Актуальные проблемы архитектуры и дизайна-2007». URL: http://archvuz.ru/2007_22/5 (հարցման ամսաթիվը՝ 22.04.2013):
15. Горохов А.Ф. - Комплексный подход к формированию маркетинговой стратегии развития туристической дестинации // Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук. – С-Пб., 2007

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ ОБСТОЯТЕЛЬСТВ, ИСКЛЮЧАЮЩИХ УЧАСТИЕ АДВОКАТА В ПРОИЗВОДСТВЕ В СООТВЕТСТВИИ С ПРОЕКТОМ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А.А. Тадевосян

Резюме

Уголовно-процессуальное законодательство устанавливает систему норм, в соответствии с которыми наличие определенных обстоятельств ведет к исключению участия адвоката в уголовном процессе. В связи с огромной ролью адвоката в уголовном судопроизводстве, велико значение четкого определения в законе круга обстоятельств, исключающих участие адвоката в деле. Значимо также правильное применение этого процессуального института на практике. Все это требует осмысления его положений в уголовно-процессуальной науке. Данная статья посвящена институту уголовно-правового регулирования обстоятельств, исключающих участие адвоката в уголовном производстве на основе проекта нового Уголовно-процессуального кодекса Республики Армения. В статье автор анализирует структуру обстоятельств, в наличии которых адвокат

подлежит отстранению или освобождению от участия в уголовном производстве.

Ключевые понятия: адвокат, обстоятельства, исключения участия, отстранение от производства, освобождение от участия в производстве, уголовный процесс.

CRIMINAL-PROCEDURAL REGULATION OF
CIRCUMSTANCES EXCLUDING THE PARTICIPATION OF AN
ADVOCATE FROM CRIMINAL PROCEEDING ACCORDING
TO THE DRAFT OF A NEW CRIMINAL PROCEDURE CODE OF
THE REPUBLIC OF ARMENIA

A.A. Tadevosyan

Summary

Criminal-procedural legislation establishes a system of norms in accordance of which the existence of certain circumstances leads to exclusion of an advocate from criminal proceeding. Due to the enormous role of an advocate in criminal procedure, it is imperative to define clearly the range of circumstances excluding the participation of an advocate in criminal case. The correct application of this procedural institute is also significant. All these issues require deep understanding of its provisions in the science of criminal procedure. This article is dedicated to the institute of criminal-procedural regulation of the circumstances excluding the participation of an advocate in criminal proceeding in a base of the draft of a new Criminal Procedure Code of Republic of Armenia. In the article the author analysis the structure of circumstances in existence of which the advocate is consider to be a subject of the exclusion or release from proceedings.

Key concepts: *advocate, circumstances excluding the participation, exclusion from proceedings, criminal procedure.*

**ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶՆՆԻՉԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱԱՄԲ
(ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ
ՕՐԵՆՍԳՐԶԻ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐԶԻ ՆԱԽԱԳԾԻ
ՀԱՄԵՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Ա. Հովհաննիսյան, Կ. Բատիկյան

Քննչական մարմնի ղեկավարը՝ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ առաջին անգամ հանդես է եկել ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1966 թվականի հունվարի 12-ի հրամանագրով, համաձայն որի նա պետք է վերահսկողություն իրականացնէր հանցագործությունները բացահայտելու և կանխելու ուղղությամբ, քննիչների գործողությունների ժամանակին կատարելու հարցում [1]:

Հարկ է նշել, որ քննչական մարմնի ղեկավարի ինստիտուտն իսպառ բացակայում էր ԱՊՀ երկրների համար 1996 թվականի փետրվարի 17-ին ընդունված մոդելային քրեական դատավարության օրենսգրքում: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մեղադրանքի կողմը ներկայացնող այս սուբյեկտը ընդգրկվեց (այսուհետ՝ գործող օրենսգիրք):

Այսպես, գործող օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ քննչական բաժնի պետ են համարվում դատախազության, հատուկ քննչական ծառայության, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների քննչական վարչության, բաժնի, բաժանմունքի պետերը և նրանց տեղակալները, որոնք գործում են իրենց իրավասության սահմաններում:

Կարծում ենք, որ գործող օրենսգրքով սահմանված «քննչական բաժին» տերմինի գործածումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ, համաձայն ՀՀ օրենսդրության, «բաժինն» իր մեջ չի կարող ներառել նաև մյուս ստորաբաժանումները, մասնավորապես՝ վարչությունները և բաժանմունքները:

Իսկ այն, որ քննչական բաժնի պետ է համարվում նաև դատախազության քննչական վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետը և նրա տեղակալները, մեր կարծիքով, օրենսդրի կողմից թույլ տրված բացթողում է, քանի որ 2007 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատախազությունից ամբողջապես առանձնացվեց քննչական համակարգը և վերացավ «դատախազության քննիչ» կատեգորիան:

Բացի այդ, գործող օրենսգրքով «քննչական մարմնի ղեկավարի» լիազորությունները սահմանվել են ոչ թե 3-րդ բաժնի «Սեղադրանքի կողմը» գլխում, այլ 8-րդ բաժնի «Նախնական քննություն» գլխում, ինչը ոչ միայն անհասկանալի է, այլև հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասին:

Ուստի կարծում ենք, որ հիմնավոր է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով [2] (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվող այն փոփոխությունները, ըստ որի քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները սահմանվել են նախագծի 5-րդ՝ «Վարույթի հանրային մասնակիցները» գլխում, «քննչական բաժնի պետ» հասկացությունը փոխարինվել է «քննչական մարմնի ղեկավար» հասկացությամբ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ, օրինակ, հատուկ քննչական ծառայությունը չունի առանձին քննչական ստորաբաժանումներ և ղեկավարվում է անմիջապես ծառայության պետի կողմից, իսկ նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանվել է, որ քննչական մարմնի ղեկավար է համարվում քննչական ծառայության, գլխավոր վարչության, վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետը կամ նրա տեղակալը, ով իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է նախաքննության ընթացքը:

Անդրադառնանք գերատեսչական վերահսկողության և դատախազական հսկողության գործառույթների տարանջատման, դրանց ներդաշնակ հարաբերակցության ապահովման վերաբերյալ տեսության մեջ և գործնական աշխատանքում առկա խնդիրներին՝ ներկայացնելով նաև գործող օրենսգրքի և նախագծի համեմատախրավական վերլուծությունը սույն դրույթների շուրջ:

Խ.Ս. Տաջիևը վերլուծելով գերատեսչական վերահսկողության և դատախազական հսկողության գործառույթների տարանջատման հիմնախնդիրը, նշում է առկա երեք հիմնական տեսակետներ.

1. ըստ առաջին տեսակետի կողմնակիցների. քննության նկատմամբ ղեկավարումը մեկնաբանվում է որպես հսկողության յուրահատուկ մեթոդ՝ համարելով, որ չի կարելի սահման անցկացնել ղեկավարման և հսկողության միջև,

2. երկրորդ տեսակետի ներկայացուցիչները ենթադրում են, որ դատախազը ղեկավարում է միայն դատախազության քննիչներին, իսկ ոստիկանության քննիչների գործունեությունը ղեկավարում է քննչական մարմնի ղեկավարը,

3. համաձայն երրորդ տեսակետի ներկայացուցիչների, ղեկավարումը և հսկողությունը տարբեր գործառույթներ են, իսկ դատախազը օրինակաչության նկատմամբ հսկողությանը զուգընթաց իրականացնում է քննության նկատմամբ ղեկավարում[3]:

Դժվար է համաձայնել ներկայացված տեսակետներին, քանի որ, մեր կարծիքով, դրանց հիմքում դրված այն գաղափարը, որ դատախազը կամ քննչական մարմնի ղեկավարը իրականացնում են քննության նկատմամբ ղեկավարում, արդեն իսկ ճիշտ չէ:

Կարծում ենք, որ «ղեկավարում» տերմինի գործածումը ինքնաբերաբար ենթադրում է քննիչի դատավարական ինքնուրույնության սահմանափակում, այսինքն՝ քննության ընթացքի կանխորոշում, քննիչի փոխարեն որոշումների ընդունում և գործողությունների կատարում, ինչը, հիմնավոր չէ ու կարող է հանգեցնել քննչական համակարգի հեղինակազրկմանն ու արժեզրկմանը:

Հաշվի առնելով նշյալը՝ կարծում ենք, որ գործող օրենսգրքի 53-րդ հոդվածի համապատասխան դրույթներն առ այն, որ դատախազը նախաքննության և հետաքննության նկատմամբ իրականացնում է դատավարական ղեկավարում, ինքնաբերաբար հակասում են ոչ միայն 17-րդ և 25-րդ հոդվածներին ու 55-րդ հոդվածի 3-րդ մասին, որոնք բնութագրում են քննիչի դատավարական ինքնուրույնության որոշակի տարրերը, այլ և ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով ՀՀ դատախազությանը վերապահված լիազորություններին:

Հատկանշական է, որ, նախագծի 38-րդ հոդվածից պարզ է դառնում, որ դատախազը հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնում է ոչ թե ղեկավարում, այլ հսկողություն, որն արտահայտվում

է քննության օրինականության և հիմնավորվածության ստուգման նպատակով հանձնարարությունների տրմամբ, ինչը, հիմնավոր է և բխում է ՀՀ Սահմանադրությունից:

Ըստ Ա.Բ. Սողվյովի՝ դատախազական հսկողության և գերատեսչական վերահսկողության գործառույթների տարանջատման բարդությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց շարքում առավել էական են՝

1. դատախազը և քննչական մարմնի ղեկավարը, գործելով ինքնուրույն և որոշ ղեպքերում՝ զուգահեռ, քննիչի գործողություններն ուղղում են հանցագործությունների քննության ընթացքում քրեական դատավարության խնդիրների իրականացմանը,

2. դատախազի և քննչական մարմնի ղեկավարի որոշ լիազորություններ համընկնում են [4]:

Ավանդում կարելի է համոզվել ուսումնասիրելով գործող օրենսգրքի 53-րդ և 193-րդ հոդվածները: Այսպես, գործող օրենսգրքի 193-րդ հոդվածը քննչական մարմնի ղեկավարին իրավունք է վերապահում քրեական գործը մի քննիչից հանձնել մյուսին, ցուցումներ տալ առանձին քննչական գործողությունների կատարման վերաբերյալ, նախաքննության կատարումը հանձնարարել մի քանի քննիչների, որոնք, ըստ գործող օրենսգրքի 53-րդ հոդվածի, համարվում են դատախազի բացառիկ լիազորությունների մի մասը:

Դատախազի բացառիկ լիազորությունները նաև քննչական մարմնի ղեկավարին վերապահելը հակասում է թե՛ գործող օրենսգրքի 53-րդ հոդվածին, թե՛ ՀՀ Սահմանադրությանը [5]:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե գործող օրենսգրքով քննչական մարմնի ղեկավարի համար նախատեսված վերոնշյալ լիազորությունները, որոնք համընկնում են դատախազի լիազորությունների հետ, թեթևացնում են դատախազի հոգսը և աշխատանքը հսկողություն իրականացնելու առումով: Սակայն դա այդքան էլ այդպես չէ, քանի որ նման դեպքում առաջանում են ոչ միայն հակասություններ, այլև գործնական խնդիրներ, մասնավորապես, դրանք կարող են շփոթ առաջացնել մինչդատական վարույթում քննություն իրականացնող իրավապահ մարմինների աշխատանքում:

Օրինակ, եթե որևէ տարածքային քննչական ստորաբաժանման պետ հանձնում է քրեական գործը մի բաժնի քննիչից մյուսին, ապա դա որոշ

չավով ընդունելի է, քանի որ նախաքննության նկատմամբ հսկողությունը նույն դատախազի ձեռքում է, իսկ այն դեպքում, երբ, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության ղեկավարը այս կամ այն պատճառով որոշում է հանձնել քրեական գործը մեկ այլ ստորաբաժանման քննիչի, ապա դատախազին մնում է կամ հաշտվել դրա հետ կամ դիմել վերադաս դատախազին, որպեսզի վերջինս քննչական ստորաբաժանման պետին գործը վերադարձնելու ցուցում տա:

Հաշվի առնելով վերոգրյալը կարծում ենք, որ դատախազական հսկողության և գերատեսչական վերահսկողության գործառույթների ներդաշնակ հարաբերակցության ապահովման համար պետք է բացառվեն դատախազի ու քննչական մարմնի ղեկավարի միջև մրցակցությունը և քննչական մարմնի ղեկավարին ոչ կազմակերպական լիազորությունների տրամադրումը: Ուստի այս առումով տեղին և արդարացված են նախագծով նախատեսվող համապատասխան փոփոխությունները: Նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննչական մարմնի ղեկավարն այլևս օժտված չէ ոչ կազմակերպական լիազորություններով, մասնավորապես, չի կարող քննիչին տալ ցուցումներ, իրավունք չունի առանց վերադաս դատախազի գրավոր համաձայնության գործը հանձնելու մի քննիչից մյուսին, եթե այն հանգեցնում է նախաքննության կատարման վայրի փոփոխության: Ինչ վերաբերում է նախաքննության կատարումը մի քանի քննիչներին հանձնարարելուն, ապա նախագծի 38-րդ և 40-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ այն այլևս չի համարվում դատախազի բացառիկ լիազորություն:

Վերլուծելով նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասը՝ պարզ է դառնում, որ, ի տարբերություն գործող օրենսգրքի, նախագծով քննչական մարմնի ղեկավարի համար սահմանվել են կազմակերպական, մեթոդական բնույթի նաև այլ լիազորություններ, համաձայն որոնց քննչական մարմնի ղեկավարը ծանոթանում է իր ենթակայության տակ գտնվող քննիչի կողմից իրականացվող նյութերին, դրա հիման վրա իր իրավասության սահմաններում քննիչին տալիս է կազմակերպական բնույթի հանձնարարություններ, իր որոշմամբ վարույթից հեռացված քննիչին փոխարինում է այլ քննիչով, ապահովում է վերադարձված քրեական գործով վարույթը շարունակելու մասին դատախազի հանձնարարության կատարումը:

Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մասի հետ կապված նշենք, որ այն, ի տարբերություն գործող օրենսգրքի, քննչական մարմնի ղեկավարն իր որոշումների և հանձնարարությունների պատճենները պետք է անհապաղ ուղարկի հսկող դատախազին, ևս մեկ անգամ խոսում է նախագծով՝ քննիչի ինքնուրույնության ապահովման լրացուցիչ երաշխիքների սահմանման մասին:

Նշենք նաև, որ, ի տարբերություն գործող օրենսգրքի, որի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 26-րդ կետի և 193-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի կողմից դատախազի ցուցումների բողոքարկումը չի կասեցնում դրանց կատարումը, բացառությամբ 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետի, նախագծի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է. «Քրեական հետապնդման հարուցման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության կամ հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմաններում հսկող դատախազի տված հանձնարարությունը պարտադիր է քննչական մարմնի ղեկավարի, քննիչի և հետաքննության մարմնի պետի համար, սակայն վերջիններս իրավասու են դրա վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին», այսինքն՝ քննիչը կամ քննչական մարմնի ղեկավարը, ըստ նախագծի, կարող են հսկող դատախազի տված հանձնարարության վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին առանց այն կատարելու, որը, մեր կարծիքով, հիմնավոր է և խոսում է քննիչ-քննչական մարմնի ղեկավար-հսկող դատախազ կապերի ներդաշնակ հարաբերակցության մասին, ինչի մասին վկայում է նաև նախագծի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ նախաքննության արդյունավետ կազմակերպումն ապահովելու սահմաններում քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին տրված հանձնարարությունները վերջինիս կողմից կարող են բողոքարկվել հսկող դատախազին, չկասեցնելով դրանց կատարումը [6]:

Ինչ վերաբերում է գործող օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին սահմանված բացառություններին, ապա դրանք տեղին չեն, քանի որ գործող օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետը վերաբերում է ոչ թե քննչական մարմնի ղեկավարի կողմից կամ քննչական մարմնի ղեկա-

վարին, այլ դատախազի կողմից քննիչին տրված համապատասխան ցուցումների հետ անհամաձայնության դեպքերին:

Եվ վերջապես. ցանկանում ենք նշել որ, ի տարբերություն գործող օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության, ըստ որի՝ դատախազի ցուցումներն անհետաձգելի դեպքերում կարող են տրվել բանավոր, սակայն դրանք ենթակա են գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նախագծի վերլուծությունից հետևում է, որ քննչական մարմնի ղեկավարին կարող են տրվել միայն գրավոր հանձնարարություններ, ինչի մասին վկայում է նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 47-րդ կետով սահմանված «հանձնարարություն» հասկացությունը: Համաձայն դրա այն դատախազի կողմից քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին կամ քննիչի կողմից հետաքննության մարմնին տրվող գրավոր հրահանգ է, կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:

Այսպիսով, քննչական մարմնի ղեկավարի կարգավիճակի, լիազորությունների, դատախազական հսկողության և գերատեսչական վերահսկողության գործառույթների ներդաշնակ հարաբերակցության ապահովման հետ կապված դրույթների մասով գործող օրենսգրքի և նախագծի համեմատախրավական վերլուծությունից հետևում է, որ նախագծով նախատեսվում են էական ու բովանդակային մի շարք փոփոխություններ, որոնք հիմնավոր են:

Առանցքային հասկացություններ. *քննչական մարմնի ղեկավար, գերատեսչական վերահսկողություն, դատախազական հսկողություն, քննիչ, դատախազ:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քրեական դատավարություն, «Ընդհանուր մաս», Երևան, 2006 թ., էջ 205:
2. <http://moj.am/legal/view/article/418/>:
3. Таджикиев Х.С. Прокурорский надзор и ведомственный контроль за расследованием преступлений. Ташкент, 1995, էջ 31:

4. Проблемы повышения эффективности прокурорского надзора за законностью расследования преступлений. Материалы научно-практической конференции / Редкол.: Батищева Л.В., Демин В.Г., Зорин Г.А., Лапшин А.В., Михайлов А.И. (Отв. ред.), Соловьев А.Б., Токарева М.Е. – М., 1992, т. 23:
5. Казинян Г.С. Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей Республике Армения (сравнительно-правовое исследование), Ереван, 1999, т. 2 177:
6. Նշեմք, որ հանձնաժողովի անդամները սահմանված է նաև գործող օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասում:

ОСОБЕННОСТИ ИНСТИТУТА ОБЕСПЕЧЕНИЯ ИСКА В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

А. Оганесян, К. Батикян

Резюме

Значение института обеспечения иска состоит в том, что применяются некоторые меры предусмотренные законом, гарантирующие исполнению судебного решения, которые предназначены защитить законные интересы истца от отрицательных последствий. Эти отрицательные последствия могут быть в результате объективных причин или недобросовестных действия ответчика, впоследствии которого может стать трудным или невозможным исполнения судебного решения, или ухудшать положение имущества, которое является предметом спора. Нужные качества, которые характеризуют обеспечение иска следующие: срочность, временный характер, защита имущественных интересов истца и пропорциональность меры обеспечения к требованиям иска.

Ключевые понятия: глава следственного органа, административный контроль, контроль прокурора, следователь, прокурор.

THE INSTITUTIONAL PECULIARITIES OF CLAIM ENSURING IN CIVIL PROCEEDINGS

A. Hovhannisyan, K. Batikyan

Summary

The meaning of the claim ensuring institute is gaining some measures which are guaranteeing judgment further execution and are stipulated by law and which are to defend the applicant's profits from numerous negative consequences. Those negative consequences can be resulted from objective causes and the respondent's dishonest actions, because of which the execution of the judgment can become difficult or even impossible or the condition of the argued property can be deteriorated. The necessary characters of claim insurance are urgency, temporality, protection of the applicant's property interests and the proportionality of the ensured measures to the requirements of the claim.

Key concepts: *head of the investigative body, administrative control, prosecutor control, investigator, prosecutor.*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԸ ՈՐՊԵՍ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ

Ա. Չոբանյան

Արբիտրաժային դատարանը հիմնականում բիզնես հանրության միջև ծագող վեճերի քննության հնագույն ձևերից է: Ինչպես նշում է Ա. Վիցինը՝ «Պատմականորեն միջնորդների դատարանը նախորդել է հասարակական իշխանության դատարանին»¹:

Նեգելը նույնպես իր ժամանակին առաջարկում էր կողմերին պարտավորեցնել մինչև պաշտոնական դատարանին դիմելը, դիմել հասարակ (միջնորդ, հաշտարար) դատարանին և փորձել գալ համաձայնության²:

Նոր տնտեսաձևի (շուկայական) պայմաններում ձեռնարկատիրական, այդ թվում՝ ֆինանսական և բանկային գործունեության հետ կապված մասնավոր շահերի պաշտպանության անհրաժեշտությունը թելադրում է առևտրային բնույթի հարաբերություններից ծագող վեճերի առավել որակյալ և արագ լուծման, դրանց քննության ժամկետների կրճատման, առևտրային գաղտնիքի պահպանումն ապահովելու նպատակով ստեղծել պետական արդարադատությունից դուրս արբիտրաժային մարմիններ, որոնք նշված վեճերը կարող են լուծել ավելի արդյունավետ, քան պետական դատարանը, և միաժամանակ հասնել ճիշտ իրավաբանական արդյունքների:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս բազմաթիվ են այն հասարակական միավորումները՝ ստեղծագործական, երիտասարդական և այլն, որոնք իրենց մասին օրենքներին համապատասխան լուծում են իրենց անդամ հանդիսացող կամ չհանդիսացող քաղաքացիների (օրինակ՝ արհեստակցական միությունների և ադմինիստրացիայի հավասար թվով անդամներից կազմված հաշտեցման հանձնաժողովները՝ աշխատանքային գործերով) կամ կազմակերպությունների (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների) միջև ծագած վեճերը: Նման մարմինների թվին են պատկանում նաև Հայաստանի Հանրապետության

առևտրաարդյունաբերական պալատին կից 2007 թվականին ստեղծված արբիտրաժային դատարանը, 2010 թվականի մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետության բանկերի միության խորհրդի կողմից ստեղծված «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը, որի իրավասությանն են պատկանում կամայական գումարի ֆինանսական վեճերը, և մինչ այդ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2008 թվականի հունիսի 17-ին ընդունված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով ստեղծված Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը, որին կարող են դիմել միմիայն ֆիզիկական անձինք և այն էլ մինչև 10 (տասը) միլիոն ՀՀ դրամական վեճերի դեպքում:

Վերը նշված բոլոր տեսակի միջնորդական (արբիտրաժային) մարմինների ընդհանուր բնութագիրը հետևյալն է՝

1) արբիտրաժային մարմինը (դատարանը) իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակ, 2) այն ըստ էության ոչ պետական է, 3) վեճերի լուծման համար ստեղծվում և գործում է կողմերի հատուկ համաձայնությամբ սահմանված դատավարական ձևով, 4) իրականացվում է որպես միջնորդ դատավորներ (դատավոր) ընտրված անձանց (անձի) կողմից, 5) դրանց նկատմամբ պետական դատարաններն իրականացնում են համագործակցության և վերահսկողության գործառույթներ, 6) դրանք, բացի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքից և իրենց համապատասխան կանոնադրություններից ու կանոնակարգերից, իրենց գործունեությունը կազմակերպում են նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերի պահանջներին համապատասխան:

Այսպիսով, արբիտրաժային գործընթացը հիմնվում է կողմերի միջև կնքված պայմանագրում ամրագրված համապատասխան արբիտրաժային վերապահման և կամ արբիտրաժային համաձայնության վրա:

Երբ վեճի կողմերը գրավոր համաձայնության են գալիս դիմելու արբիտրաժային դատարան, նրանց հայցը դառնում է ընդդատյա արբիտրաժի քննությանը: Այստեղ կարևոր է, որ ներգրավված բոլոր կողմերը լիովին տեղյակ լինեն իրենց վեճն արբիտրաժ տանելու հետևանքների մասին և հասկանան, թե ինչպես է ընթանում արբիտրաժային գործընթացը³:

2010 թվականի մայիսի 15-ին Հայաստանի բանկերի միության խոր-

հուրդը հիմք ընդունելով Հայաստանի բանկերի միության կանոնադրության 9.4.17 կետը և ղեկավարվելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի դրույթներով, որոշում ընդունեց ստեղծել Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը և հաստատել Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությունը և կանոնակարգը:

Հայաստանի բանկերի միության (այսուհետ՝ ՀԲՄ) «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը (այսուհետ՝ Ֆինանսական արբիտրաժ), ՀԲՄ կողմից ստեղծված մշտապես գործող արբիտրաժ է՝ հիմնարկի կարգավիճակով:

Չնայած այն հանգամանքին, որ «Ֆինանսական արբիտրաժը» ստեղծվել է Հայաստանի բանկերի միության կողմից, այնուամենայնիվ այն իր գործունեությունն իրականացնում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրության և կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) և ՀՀ այլ օրենքների ու իրավական ակտերի, ՀԲՄ խորհրդի կողմից հաստատվող կանոնակարգերի հիման վրա:

Առևտրային վեճերը լուծելիս «Ֆինանսական արբիտրաժն» անկախ է, անկողմնակալ, և ոչ ոք, այդ թվում՝ Հայաստանի բանկերի միությունը, իրավունք չունի միջամտելու արբիտրաժային տրիբունալի գույրծունեությանը:

Բացի այդ, ինչպես մեղիացիայի և արբիտրաժի ոլորտում, «Ֆինանսական արբիտրաժը» նույնպես ընտրվում է կողմերի ցանկությամբ և կոչված է ապահովելու անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից առևտրային վեճերի արդարացի լուծումը՝ արդարության ընդհանուր սկզբունքներից ելնելով:

«Ֆինանսական արբիտրաժն» իրավաբանական անձ չէ, այն Հայաստանի բանկերի միության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ:

«Ֆինանսական արբիտրաժի» հայերեն լրիվ անվանումն է՝ «Հայաստանի բանկերի միության Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկ, կրճատ՝ «Ֆինանսական արբիտրաժ»:

«Ֆինանսական արբիտրաժի» իրավասությանը ենթակա են առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կողմերը վերապահել են «ֆինանսական արբիտրաժին»՝ այդ մասին կնքելով արբիտրաժային համաձայնություն:

Կողմերի արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Ֆինանսական արբիտրաժ դիմելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերը, ՀՀ իրավաբանական անձինք, օտարերկրյա քաղաքացիները (քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա իրավաբանական անձինք):

Մինչդեռ, ֆինանսական արբիտրաժի իրավասությանը ենթակա չեն առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կողմերը արբիտրաժային համաձայնությամբ չեն վերապահել ֆինանսական արբիտրաժին⁴:

ՀՀ ֆինանսական արբիտրաժի գործունեությունը հիմնվում է օրինականության, արբիտրաժային տրիբունալի անկախության, օրենքի և արբիտրաժային տրիբունալի առջև քաղաքացիների, իրավաբանական անձանց հավասարության, կողմերի մրցակցության և իրավահավասարության, վեճերի օբյեկտիվ, բազմակողմանի, անկողմնակալ, արագ և պրոֆեսիոնալ քննության սկզբունքների հիման վրա:

«Ֆինանսական արբիտրաժը» ՀՀ օրենքներով, իր կանոնադրությամբ ու իր կանոնակարգով սահմանված խնդիրների լուծման համար տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն ամրագրված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

«Ֆինանսական արբիտրաժի» ֆինանսական միջոցներն ու գույքը օգտագործվում են ֆինանսական արբիտրաժի նախագահի կարգադրությամբ՝ ՀԲՄ նախագահի համաձայնությամբ:

«Ֆինանսական արբիտրաժի» գույքը ձևավորվում է ՀԲՄ կողմից վերջինիս կանոնադրությամբ սահմանված կարգով՝ ֆինանսական արբիտրաժին ամրագրված գույքից և գումարներից, արբիտրաժային վճարներից ու ֆինանսական արբիտրաժին հատկացվող այլ գումարներից:

Օրենքով և «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությամբ սահմանված կարգով «Ֆինանսական արբիտրաժի» գործունեությունից առաջացած դրամական միջոցներն առաջնահերթության կարգով ուղղվում են

արբիտրների հոնորարների, վարչական ծախսերի և կանոնակարգով սահմանված «Ֆինանսական արբիտրաժի» այլ ծախսերի վճարմանը: Մնացած գումարներն ուղղվում են «Ֆինանսական արբիտրաժի» և ՀԲՄ կանոնադրական խնդիրների իրագործմանը:

Ֆինանսական արբիտրաժն ունի նախագահ և արբիտրներ:

Ֆինանսական արբիտրաժի նախագահը, որը համարվում է նաև արբիտր, նշանակվում է ՀԲՄ խորհրդի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

ՀԲՄ խորհուրդը հաստատում է արբիտրների անվանացուցակը, որից վիճող կողմերը կարող են ընտրել համապատասխան արբիտրներ: Ֆինանսական արբիտրաժի արբիտրներ կարող են լինել դիպլոմավորված կամ մագիստրոսի կոչումով բարձրագույն իրավաբանական կրթություն, ֆինանսաբանկային համակարգի առնվազն երեք տարվա ընդհանուր աշխատանքային կամ իրավաբանական խորհրդատվության փորձ և դատաիրավական գործունեության փաստացի փորձ ունեցող անձինք:

Ֆինանսական արբիտրաժն ունի իր աշխատակազմը, որի կառուցվածքը և հաստիքացուցակը ֆինանսական արբիտրաժի նախագահի ներկայացմամբ հաստատում է ՀԲՄ խորհրդի նախագահը:

Առևտրային վեճեր լուծելու նպատակով իր ստեղծման օրվանից, «Ֆինանսական արբիտրաժին» դիմել են ոչ միայն բանկերը, այլև վարկային կազմակերպությունները, բանկերի ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդները:

2010 թվականի հուլիս ամսից «Ֆինանսական արբիտրաժն» իր գործունեության կես տարվա ընթացքում քննել է շուրջ 50 (հիսուն) վեճեր, իսկ 2010 թվականից մինչև այսօր հասցրել է քննել շուրջ երեք հարյուր հիսուն ֆինանսական վեճ: Սա բավական լուրջ արդյունք է նորաստեղծ այս կառույցի համար, մինչդեռ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարանն իր ստեղծման օրվանից, մասնավորապես 2009 թվականից մինչև 2012 թվականն ընկած ժամանակահատվածում քննել է ընդամենը տասը վեճ⁵:

Շատ կարևոր է այն հանգամանքը, որ «Ֆինանսական արբիտրաժի» կողմից քննված բազմաթիվ գործերով կնքվել է հաշտության համաձայնություն:

Փաստորեն, «Ֆինանսական արբիտրաժն» իր գործունեության ըն-

թացքում ապացուցել և, կարծում են, կշարունակի ապացուցել, որ առևտրային վեճերը լուծելիս արբիտրաժային տրիբունալներն անկախ են և անկողմնակալ:

Արբիտրաժներն, ընդհանրապես, կողմերի միջև առաջացած առևտրային վեճերը լուծող կառույցներ են: Թե կոնկրետ որ արբիտրաժի կողմից պետք է լուծվի վեճը, որոշում են կողմերը՝ իրենց միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ: Եվ եթե պայմանադիր կողմերը կնքել են արբիտրաժային համաձայնություն և պայմանավորվել, որ պայմանագրի շուրջ իրենց միջև առաջացած վեճերը պետք է լուծվեն Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժում», ապա իրենց միջև առաջացած վեճերը լուծելու նպատակով նրանք պետք է դիմեն համապատասխան կառույցին, այսինքն՝ «Ֆինանսական արբիտրաժին», որն էլ պետք է քննի և լուծի վեճը: Եվ քանի որ, արբիտրաժային դատարանը գործում է 2006 թվականին ընդունված «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ուստի վեճերը կարող են համապատասխանաբար քննվել նաև Առևտրաարդյունաբերական պալատին կից գործող արբիտրաժային դատարանում, եթե կողմերն արբիտրաժային համաձայնությամբ վերջինիս են վերապահել այդ իրավասությունը:

Այստեղ կարևոր է, որ վեճն առևտրային բնույթ ունենա և կողմերը կնքած լինեն արբիտրաժային համաձայնություն:

«Ֆինանսական արբիտրաժի» կողմից քննված վեճերը հիմնականում վարկային հարաբերություններից բխող վեճեր են: Մասնավորապես, երբ վարկառուները չեն կարողանում ժամանակին մարել իրենց վարկերը, ֆինանսական կազմակերպությունները դիմում են վարկի գումարը, տոկոսներն ու տույժերը բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկաների վրա տարածելու պահանջներով: Սակայն, «Ֆինանսական արբիտրաժը» քննում է նաև այնպիսի վեճեր, որոնք կապված են գործարքի անվավերության կամ վճարային քարտերով կատարված գործարքների հետ և այլն:

«Ֆինանսական արբիտրաժը» վեճը լուծելուց առաջ նախ փորձում է հաշտեցնել կողմերին, իսկ եթե դա չի հաջողվում, նոր միայն կայացնում է համապատասխան վճիռ:

Ինչ վերաբերում է վեճերը ֆինանսական կառույցների օգտին լուծելուն, ապա «Ֆինանսական արբիտրաժը», ելնելով իր կողմից քննված գոր-

ծերի բնույթից, վճիռները մեծ մասամբ կայացրել է ֆինանսական կառույցների օգտին: Սակայն, պատճառն այն չէ, որ «Ֆինանսական արբիտրաժ» ստեղծվել է Հայաստանի բանկերի միության կողմից և պաշտպանել է բանկերի շահերը, այլ այն, որ ֆինանսական արբիտրաժում քննված գործերի գերակշռող մեծամասնությունը եղել են վարկային հարաբերություններից ծագած (սկնհայտորեն հիմնավորված) վեճեր:

Ըստ վիճակագրական տվյալների, բազմաթիվ գործերով ֆինանսական կառույցների հայցերը բավարարվել են մասնակի, նրանց պահանջները մասամբ մերժվել են: Կարելի է կարծել, որ «Ֆինանսական արբիտրաժում» քննված բոլոր գործերով վճիռների կայացումից հետո վիճող բոլոր կողմերն էլ համոզվել են, որ արբիտրաժային տրիբունալի վճիռն արդարացի է, օբյեկտիվ ու անկողմնակալ՝ անկախ այն հանգամանքից, թե ում օգտին է կայացվել այն:

«Ֆինանսական արբիտրաժ» դիմելու համար կողմերը ներկայացնում են հայցադիմում, կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությունը, որը կարող է կնքված լինել ինչպես առանձին համաձայնության տեսքով, այնպես էլ ներառված լինել կողմերի միջև կնքված պայմանագրերում: Բացի այդ, «Ֆինանսական արբիտրաժին» դիմելու դեպքում դիմողը պետք է ներկայացնի նաև արբիտրաժային գումարի նախապես վճարված անդորրագիրը: Ընդ որում «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությունը սպառիչ կերպով սահմանում է նաև կատարողական թերթ տալու հիմքերը⁶:

«Ֆինանսական արբիտրաժի» ծառայությունները վճարովի են և արբիտրաժային վճարի չափը սահմանվում է՝ ելնելով հայցագնի արժեքից: Մասնավորապես, համաձայն Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի, արբիտրաժային վճարը սահմանված է հայցագնի 1.5%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 25 000 (քսան հինգ հազար) ՀՀ դրամը և ոչ ավել, քան 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը: Ոչ գույքային պահանջներով արբիտրաժային վճարը սահմանված է 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի համաձայն, եթե կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ այլ բան սահմանված չէ, ապա մինչև 5 (հինգ) միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտար-

ժուլթային գումարների բռնագանձման պահանջներով վեճերը քննվում են միանձնյա արբիտրաժային տրիբունալի կողմից: Իսկ 5 (հինգ միլիոն) ՀՀ դրամը (համարժեք արտարժույթը) գերազանցող պահանջներով, ինչպես նաև ոչ գույքային պահանջների վերաբերյալ գործերը քննվում են կոլեգիալ արբիտրաժային տրիբունալի կողմից, որպես կանոն՝ երեք արբիտրների կազմով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համաձայն, արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված վճիռներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, վերջնական են, այսինքն՝ բողոքարկման ենթակա չեն և պարտադիր են կողմերի համար:

Այդ վճիռների պահանջները կամովին չկատարելու դեպքում արբիտրաժային տրիբունալի վճիռներն ի կատար են ածվում հարկադիր կարգով՝ ՀՀ ԱՆ Գատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Ընդ որում կատարողական թերթերը տրվում են ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

Բացի այդ, արբիտրաժային տրիբունալի վճիռները պարտադիր են, ճանաչվում և ի կատար են ածվում ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի անդամ հանդիսացող բոլոր պետություններում:

Փաստորեն, ֆինանսական արբիտրաժի ինստիտուտը, որը հանդիսանում է որպես վեճերի լուծման այլընտրանքային ձև, որպես կանոն քննում է առևտրային հարաբերություններից բխող վեճերը և պահպանելով չեզոքություն՝ ֆինանսական արբիտրաժը կողմերին հիմնականում օգնություն է ցուցաբերում հաշտեցման միջոցով հասնելու կառուցողական որոշումների կայացման:

«Ֆինանսական արբիտրաժի» նպատակները և դրանց կենսագործման անհրաժեշտությունը կարևոր է անձանց իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման և վեճերի լուծման գործում՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող այլընտրանքային, իրավական հնարավորություն:

Այսպիսով, «Ֆինանսական արբիտրաժի» կանոնակարգը, որը հաստատված է 2011 թվականի մայիսի 5-ին ՀՀ բանկերի միության խորհրդի կողմից, բաղկացած է հետևյալ 34 բաժիններից, որոնք լիարժեք են դարձնում քննարկվող բոլոր հարցերի կարգավորումը: Այն ունի հետևյալ կառուցվածքը.

1) Ընդհանուր դրույթներ, 2) Գաղտնիությունը, 3) Փաստաթղթերի ներկայացման կարգը, 4) Փաստաթղթերի առաքումը և հանձնումը, 5) Գործը լսելու լեզուն, 6) Գործի քննության ժամկետը, 7) Կիրառելի իրավունքը, 8) Արբիտրաժային վարույթի սկիզբը, 9) Հայցադիմումի ձևը և բովանդակությունը, 10) Արբիտրաժային ծախսերը, 11) Գործի նախապատրաստումը արբիտրաժային վարույթին, 12) Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը, 13) Արբիտրաժային վարույթի ձևավորումը, 14) Արբիտրի, փորձագետի և թարգմանչի բացարկը, 15) Արբիտրի իրավասությունների դադարումը, 16) Արբիտրաժային տրիբունալի փոփոխությունը, 17) Գործի նախապատրաստումը, 18) Գործի լուսնները և փաստաթղթային վարույթը, 19) Բանավոր քննություն, 20) Բանավոր քննության նիստի արձանագրումը, 21) Բանավոր քննության արձանագրությունը, 22) Գործի վարույթը գրավոր նյութերի հիման վրա, 23) Կողմերի մասնակցությունը, 24) Հայցի ապահովման միջոցները, 25) Ապացույցները, 26) Երրորդ անձանց մասնակցությունը, 27) Զննության հետաձգումը և վարույթի կասեցումը, 28) Արբիտրաժային վճիռ, 29) Վճռի հրապարակումը, 30) Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը, 31) Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը, 32) Հաշտության համաձայնություն, 33) Վճռի կատարումը, 34) Արբիտրաժի ավարտը:

Հավելված 1. «Արբիտրաժային ծախսերի և հոնորարների մասին կարգ»:

Հատկանշական է այն հանգամանքը, որ արբիտրաժի ձևավորման փուլում առաջարկվում է, որ մինչև 10 (տասը) միլիոն դրամի գույքային վեճերը քննվեն ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից, իսկ ավելի բարձր գումարի դեպքում ընտրի հաճախորդը, այսինքն՝ դիմի կամ դատարան, կամ ֆինանսական արբիտրաժ:

Սակայն, ի տարբերություն «Ֆինանսական արբիտրաժի», ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան, ֆինանսական համակարգի հաշտա-

րարին պահանջներ ներկայացնելու իրավունք ունեն միայն ֆիզիկական անձինք:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2008 թվականի հունիսի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2008 թվականի հուլիսի 12-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի օգոստոսի 2-ին:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է.

«1. Իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե՝ պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ»:

Նշված օրենքը թույլ է տալիս վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի (այսուհետ՝ Հաշտարար) որոշումը, սակայն նախատեսում է այն դատարանի կողմից չեղյալ ճանաչելու համար որոշակի հիմքեր, որոնք խիստ սահմանափակ են, ինչի արդյունքում կողմերին չի տրվում Հաշտարարի որոշումն իրավասու դատարանում ըստ էության վիճարկելու հնարավորություն, մասնավորապես՝ որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքները վիճարկելու հնարավորություն: Այսպես, քանի որ Հաշտարարի որոշումները կողմերի համար ունեն պարտադիր ուժ, ուստի և պետք է այդ որոշումների օրինականության նկատմամբ ըստ էության դատական քննության հնարավորություն ընձեռնվի կողմերի ցանկությամբ:

Օրենքի վիճարկվող նորմն առավելապես կազմակերպություններին գրկում է դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունից, քանզի Հաշտարարի որոշումները կողմերի համար պարտադիր են դառնում հաճախորդի կողմից դրանք անվերապահորեն և գրավոր ձևով ընդունվելու պարագայում միայն, մինչդեռ կազմակերպությունները գրկվում են այդ որոշումներն արդյունավետ կերպով դատական կարգով

վիճարկելու հնարավորությունից, քանի որ վերը նշված օրենքի վիճարկվող նորմում գետեղված երեք հիմքերից ոչ մեկը չի վերաբերում որոշման ըստ էության բողոքարկմանը և կամ վիճարկմանը:

Այսինքն, իրավաբանական անձինք, այդ թվում նաև ֆինանսական կառույցները՝ բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները Ֆինանսական համակարգի հաշտարարին որպես այդպիսին, դիմելու իրավունք չունեն: Հետևաբար, Ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է մինչև 10 (տասը) միլիոն ՀՀ դրամ գումարի արժեք ունեցող այն գույքային վեճերը, որոնցով խախտվում են ֆինանսական կազմակերպությունների ֆիզիկական անձ հաճախորդների շահերը և այդ ֆիզիկական անձինք դիմում են Ֆինանսական համակարգի հաշտարարին: Առավել ևս, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են և կարելի է կարծել, որ մինչև 10 (տասը) միլիոն ՀՀ դրամ գումարի արժեք ունեցող գույքային վեճերով ֆինանսական կառույցների ֆիզիկական անձ հաճախորդները նախընտրում են դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, այլ ոչ թե առևտրային արբիտրաժներին կամ դատարան:

Բացի այդ, ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ եթե գործը գտնվում է արբիտրաժային տրիբունալի վարույթում, ապա Ֆինանսական համակարգի հաշտարարն իրավունք չունի ընդունելու գործը և քննելու այն: Եվ հակառակը, եթե վեճը քննվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի մոտ, ապա այն չի կարող քննվել առևտրային արբիտրաժում, այդ թվում նաև՝ ֆինանսական արբիտրաժում:

2012 թվականի հոկտեմբեր 9-ին ՀՀ Սահմանադրական դատարանը իր (ՄԳ-Ո 1051) որոշմամբ համաձայնեց Մարդու իրավունքների պաշտպանի իրավական դիրքորոշումներին՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները բողոքարկելու հնարավորության վերաբերյալ: Այսինքն՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների բողոքարկման հնարավորության սահմանափակումը համապատասխանում է Սահմանադրությանը միայն այն դեպքերում, երբ կազմակերպությունները պայմանագիր են կնքել հաշտարարի հետ՝ վերջինիս որոշումները չբողոքարկելու վերաբերյալ: Մնացած բոլոր դեպքերում, նշված դրույթով նախատեսված սահմանափակումը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Արդյունքում, այն իրավաբանական անձինք, ովքեր Ֆինանսական համակարգի հաշտարարի կայացրած որոշումները բողոքարկելու համար նախատեսված սահմանափակումների արդյունքում չէին կարող բողոքարկել դրանք դատական կարգով, այսուհետ կարող են առանց սահմանափակման օգտվել իրենց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

Սա, իհարկե, վիճարկելի մի խնդիր էր, ինչը հակասում էր «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, «Կրեան ընդդեմ Ֆրանսիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-733, ՍԳՈ-747 և ՍԳՈ-906 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Առանցքային հասկացություններ. *բիզնես հանրություն, պետական արդարադատություն, արբիտրաժային մարմիններ, ֆինանսական արբիտրաժ, արբիտրաժային համաձայնություն, իրավաբանական անձինք, դատական պաշտպանություն:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Стен Вичин А. Третьейский суд по русскому праву. Историко-догматическое рассуждение. М., 1856, էջ 3:
 2. Стен Гегель Г. Ф. Философия права. М., 1990, էջ 255:
 3. Стен «Առևտրային արբիտրաժի մասին» կանոնակարգը:
 4. Стен «Ֆինանսական արբիտրաժի » կանոնադրության 2.1 կետը և ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. հոկտեմբերի 9-ի ՍԳՈ-1051 որոշումը:
 5. Հայաստանում 2006թ. ընդունվել է օրենք ««Առևտրային արբիտրաժի մասին», որի համաձայն 2007թ. ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից ստեղծվել է Արբիտրաժային դատարանը: Դրանք բաժանվում են երկու խմբի. հանգամանքների մի մասը պետք է ապացուցի պարտապանը, իսկ մյուսները՝ դատարանը:
1. Էլ. փոստ՝ info@fsm.a
 2. Էլ. փոստ՝ www.finansakan arbirtage.am
 3. Էլ. փոստ՝ www.concourt.am

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. Ампенев Сергей Сергеевич. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве : диссертация ... кандидата юридических наук .- Тюмень, 2010.- 190 с.:
6. Ватман Д. П. Адвокатская этика. М.: Юридическая литература, 1977. - 93 с:
7. Горский М. В. Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование). - М.: Юрлитинформ, 2011. - 240 С.:
8. Поплавская Н.Н., Тугушева Е.Г. “Механизм реализации уголовно-процессуальной ответственности”//“Правонарушение и юридическая ответственность”, Материалы международной научно-практической конференции (Тольятти 13-14 ноября, 2012 года), Тольятти, Издательство ТГУ, 2012:
9. Таран А.С. Обстоятельства, исключающие участие адвоката в уголовном процессе: монография. – М.: Юрлитинформ, 2013. - 192 С.:
10. Таран А.С. Отвод адвоката как юридическая ответственность. // Вектор науки ТГУ. №3(3). 2010, ст. 199-200.
11. Уголовный процесс: Учебник для вузов/ под ред. В.П. Божьева. 2-е изд., исп. и доп. – М.: Спарк,2000.- 574 с.
12. Хачатуров Р.Л., Липинский Д.А. Общая теория юридической ответственности: Монография. СПб.: Издательство Р. Арсланова “Юридический центр Пресс”, 2007.- 950 с.:

ФИНАНСОВЫЙ АРБИТРАЖ КАК МЕТОД АЛТЕРНАТИВНЫХ РАЗРЕШЕНИЙ СПОРОВ В РА

А. Чобанян

Резюме

Данная статья является методом альтернативного разрешения споров, в частности, концепции и принципы финансового арбитража в Республике Армения.

В этой статье представлены структура и цель финансового арбитража, различные подходы о финансовом арбитраже, а также

общие преимущества в отличие от других методов разрешения споров.

Финансовый арбитраж является форумом разрешения споров без суда и следствия с помощью третьей нейтральной, беспристрастной стороной - посредника, который помогает сторонам разработать взаимоприемлемое решение в споре.

В то же время, вступление сторон в финансовый арбитражный процесса является добровольным, и каждая из сторон имеет право выйти из процесса в любое время.

Ключевые понятия: *деловая общественность, государственное правосудие, арбитражные органы, финансовый арбитраж, арбитражное соглашение, юридические лица, судебная защита.*

THE FINANCIAL ARBITRATION AS A METHODS OF ALTERNATIVE DISPUTE RESOLUTION IN REPUBLIC OF ARMENIA

A. Chobanyan

Summary

This article is basicly dedicated to the methods of alternative dispute resolution, particularly to the concept and principles of the financial arbitration in Republic of Armenia.

In this article is presented the various approaches about financial arbitration, the structure and purpose of the financial arbitration, and also the general advantages in contrast to other methods of dispute resolution.

Financial arbitration is a dispute resolution forum without trial with the assistance of a third neutral, impartial party - mediator, who helps parties to develop a mutually acceptable solution to the dispute.

At the same time, the entry of the parties in the financial arbitration process is voluntary, and each party has the right to withdraw from the process at any time.

Key concepts: *business public, state justice, arbitration organs, financial arbitration, arbitration consent, judicial people, judicial protection.*

**ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դ.Գ. Սարգսյան, Տ.Ս. Բաղդասարյան

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Իսկ դատական կարգով իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ է համապատասխան փաստաթղթերի առկայությունը, որի հիման վրա կսկսվի խախտված կամ վիճարկվող իրավունքի վերականգնման կամ պաշտպանության ընթացակարգը:

Վիճարկվող իրավունքների վերականգնմանն ու պաշտպանությանը նպաստում է նաև հայցի ապահովման ինստիտուտը:

Հայցի ապահովման ինստիտուտի կարգավորմանն է ուղղված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ գլուխը: Հայցի ապահովումն իրենից ներկայացնում է մի շարք միջոցների ձեռնարկում, ինչը հայցի բավարարման դեպքում երաշխավորում է վճռի կատարումը:

Դատարանը, իրականացնելով արդարադատություն, որն ուղղված է վերականգնելու անձի խախտված կամ վիճարկվող իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը, արձակում է դատական ակտեր, որոնք ենթակա են պարտադիր կատարման:

Անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված կարևոր պայմաններից է նաև դատական ակտի կատարման ապահովումը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսված է հայցի ապահովման ինստիտուտը՝ որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք՝ ուղղված անձանց գույքային իրավունքների իրական և ամբողջական վերականգնմանը:

Դատավարագիտության մեջ տրված են հայցի ապահովման վերա-

բերյալ տարբեր սահմանումներ: Այդուհանդերձ, հայցի ապահովում ասելով ընդունված է հասկանալ դատարանի կողմից միջոցների ձեռնարկում (հայցի բավարարման դեպքում հայցային պահանջների կատարում):

Ա. Սուխարևը հայցի ապահովումը բնորոշում է որպես դատական վճռի իրական կատարումը ապահովող միջոցների ամբողջություն:¹

Ե. Վասկովսկին հայցի ապահովումը սահմանում է հետևյալ կերպ. «Գատարանի կողմից միջոցների ձեռնարկում, ինչը երաշխավորում է հայցային պահանջների կատարման հնարավորությունը գործը շահելու դեպքում»:²

Ըստ Ե. Տոկլաչևայի՝ «Հայցի ապահովումը դա դատարանի կամ դատավորի գործունեությունն է՝ ուղղված օրենքով նախատեսված միջոցների ձեռնարկմանը, որոնք կերաշխավորեն գործով դատարանի կողմից կայացվելիք վճռի ռեալ իրագործումը այն դեպքում, երբ հայցը կբավարարվի»:

Մ. Օլեգովը կարծում է, որ հայցի ապահովումը դա դատարանի կամ դատավորի դատավարական գործունեությունն է, երբ վարույթ ընդունված գործով անհրաժեշտություն է առաջանում ձեռք առնել օրենքով նախատեսված ապահովման միջոցներ, երբ դրանք ձեռք չառնելը կարող է դժվարացնել կամ անհնարին դարձնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը:³

Համաձայն Ե. Մուրադյանի դիտարկման՝ հայցի ապահովումը միջնորդային դատավարական ինստիտուտ է, որը նախատեսում է դատարանի կողմից, հայցվորի խնդրանքով, համապատասխան դատավարական կանոններին համաչափ միջոցների ձեռնարկում՝ ուղղված դատական ակտի իրագործմանը, կատարմանը, եթե հայցը բավարարվի: Այն դատավարական հարկադրանքի միջոց է:⁴

Իսկ Ա. Գուևը հայցի ապահովումը դիտարկում է որպես դատավարական ինքնուրույն գործողություն՝ ուղղված նրան, որ դատարանի վճիռը հնարավոր լինի ռեալ կատարել:⁵

¹ Ст'ю Большой юридический словарь.- 3-е изд./под. ред. Сухарева. А.Я. –М.: ИНФРА-М, 2007, _ էջ 377

² Ст'ю Учебник гражданского процесса. Е.В. Васильковский. –Москва, 2005. էջ 199

³ Ст'ю Олегов М.Д. Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации. /под. ред. Шакарян М.С. _М., 2004. _ էջ 378

⁴ Ст'ю Мурадян Э.М. Арбитражный процесс. _М, 2004. _ էջ 72

⁵ Ст'ю Гув А.Н. Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. (2-е изд., доп. и перераб.) - «Экзамен», 2006. _ էջ 365-366

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 97-ը սահմանում է հայցի ապահովման հիմքերը, համաձայն որի՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովում թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ ձեռք են առնվում հետագայում վճռի կատարումը երաշխավորող, օրենքով սահմանված որոշակի միջոցներ, որոնք ուղղված են պաշտպանելու հայցվորի (ապագա պահանջատիրոջ) օրինական շահերը մի շարք բացասական հետևանքներից: Այդ բացասական հետևանքները կարող են հանդիսանալ օբյեկտիվ պատճառների կամ պատասխանողի անբարեխիղճ գործողությունների արդյունք, որոնց հետևանքով էլ կարող է դժվարանալ կամ անհնարին դառնալ վճռի կատարումը կամ վատթարանալ վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակը:⁶

Հայցի ապահովման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ ձեռք են առնվում օրենքով սահմանված որոշակի միջոցներ, որոնք հետագայում կերաշխավորեն վճռի կատարումը:⁷

Հայցի ապահովումը հնարավոր է ինչպես կատարողական, այնպես էլ ճանաչողական հայցերով: Այսպես, հեղինակային իրավունքի ճանաչման հայցով հնարավոր է կիրառել հայցի ապահովման հետևյալ միջոցը՝ գրական երկի տպագրման արգելքը, մինչև կլուծվի վիճելի ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի հարցը:⁸

Հայցի ապահովում թույլատրվում է ինչպես սկզբնական, այնպես էլ հակընդդեմ հայցերով: Այս դրույթը նպատակ ունի ապահովել քաղաքացիական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ կողմերի հավասարությունը օրենքի և դատարանի առջև:

Ելնելով այն հանգամանքից, որ հայցի ապահովման արդյունավե-

⁶ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 2007, էջ 331-332

⁷ Տե՛ս Գավթյան Ա.Հ., Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012, էջ 114

⁸ Տե՛ս Исаенкова О.В. — Иск в гражданском судопроизводстве, под. ред. М.А. Вукот, 1997. էջ 66

տությունը շատ դեպքերում ուղղակիորեն կապված է հայցի ապահովման միջոցների կիրառման մասին որոշման ընդունման պահից՝ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսել է հետևյալ դրույթը, որ քաղաքացիական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատավորը որոշում է հայցի ապահովման հարցը: Այսինքն՝ դատարանին իրավունք է վերապահված լուծելու հայցի ապահովման հարցը մինչ գործն ըստ էության քննելը:

Գոյություն ունեն մի շարք հանգամանքներ, որոնք պետք է պարզվեն դատարանի կողմից բոլոր այն դեպքերում, երբ հայցի ապահովման հարց է առաջանում: Այդ հանգամանքների պարզումը էական նշանակություն ունի դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Հայցի ապահովման միջոցների կիրառման մասին որոշում կայացնելիս դատարանը պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ այդ միջոցների կիրառումը կարող է վնաս պատճառել պատասխանողի և գործին մասնակցող անձանց շահերին, ուստի դատարանը հայցի ապահովման մասին որոշումը կայացնում է ելնելով կողմերի և գործին մասնակցող այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից: Այս առումով հետաքրքրություն է առաջացնում Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որը դատարանին իրավունք չի վերապահում սեփական նախաձեռնությամբ հայցի ապահովման միջոցներ կիրառել, և հայցի ապահովում կիրառելու հարցը կարող է բարձրացվել բացառապես կողմերի միջնորդությամբ: Օրենսդրական այս մոտեցման բացասական կողմը կարող է դրսևորվել նրանում, որ դատավարության մասնակիցները ոչ բոլոր դեպքերում են տիրապետում իրավաբանական գիտելիքներին և ելնելով դրանից, կարող են անտեղյակ լինել հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորության մասին: Սակայն նույնիսկ այդ դեպքում էլ նրանք դատարանի կողմից տեղեկացվում են իրենց դատավարական իրավունքների և պարտականությունների մասին: Անհրաժեշտ է հարցին անդրադառնալ համակողմանի և նմանատիպ դրույթի նախատեսումը դիտարկել իբրև դատական վեճի տնօրինման (դիսպոզիտիվության) սկզբունքի դրսևորում, որը առաջ է բերում կողմերի նախաձեռնությամբ քաղաքացիական վեճի տնօրինման հնարավորություն, ինչպես նաև մրցակցության

սկզբունքի պահպանում: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ քաղաքացիական գործերով արդարադատությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Ուստի, առաջարկվում է օրենսդրական փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, համաձայն որի՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Այսպիսով, կբացառվի դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի ապահովման կիրառումը:

Հայցի ապահովումը բնութագրող անհրաժեշտ հատկանիշներն են՝ անհետաձգելիությունը, ժամանակավոր բնույթը, հայցվորի գույքային շահերի պաշտպանությունը, ապահովման միջոցի համաչափությունը հայցապահանջներին:

Անհետաձգելիությունը տվյալ դեպքում նշանակում է հայցի ապահովման մասին դիմումի լուծման հրատապություն, ինչպես նաև՝ այս հարցի լուծման հեշտացված ընթացակարգ:

Ժամանակավոր բնույթը դրսևորվում է որոշակի տևողությամբ ժամանակահատվածի համար ապահովման միջոցների գործողության սահմանափակմամբ, կախված այն հանգամանքից, թե որ պահին է ներկայացվել համապատասխան միջնորդությունը և արդյոք բավարարվել է հայցը, թե՛ ոչ: Եթե դատարանը հայցը մերժելու մասին վճիռ է կայացնում, ապա հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Ընդհանուր առմամբ, օրենսդրի կողմից առաջադրված հայցի ապահովման ինստիտուտը ուղղված է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների պաշտպանությանը: Հայցվորի գույքային իրավունքների պաշտպանությունը արտացոլվում է ապահովման միջոցների նպատակային ուղղվածության մեջ:

Համաչափությունը վերաբերում է կիրառվող ապահովման միջոցների համապատասխանելիությանը առաջադրված հայցապահանջներին:

Պրակտիկայում այս կապակցությամբ առավել հաճախ բարդություններ են ի հայտ գալիս, երբ դատարանի ընտրած ապահովման միջոցը անարդարացիորեն սահմանափակում է պատասխանողի իրավունքները կամ այլևս չի բխում հայցվորի շահերից: Օրինակ, երբ արգելանք է դրվում ավելի մեծարժեք գույքի վրա, քան հայցվորի պահանջն է, կամ այն գույքը, որի վրա արգելանք է դրվել, կորցրել է իր արժեքը և չի կարող երաշխավորել վճռի կատարումը:

Կարելի է առանձնացնել հայցի ապահովման երկու հիմնական նպատակ: Առաջինն ուղղված է արդեն իսկ խախտված իրավունքների վերականգնմանը, իսկ երկրորդը՝ իրավունքների խախտման կանխարգելմանը:⁹

Առաջինի էությունը կայանում է նրանում, որ հայցվորն իր խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանության համար դիմում է դատարան՝ հայց ներկայացնելու միջոցով և հայցի ապահովմամբ երաշխավորվում է նրա հայցի հիմքում դրված պահանջների իրագործումը այն դեպքում, երբ կբավարարվի հայցը:

Երկրորդ նպատակը իրականացնելու համար կարևորվում է դատարանի գործունեությունը հայցի ապահովում կիրառելիս, ուստի դատարանը պետք է հաշվի առնի գործին մասնակցող բոլոր անձանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը: Ընդհանուր առմամբ, այս ինստիտուտի արդյունավետությունը դրսևորվում է վերոգրյալ երկու նպատակների զուգորդմամբ:

Գատարանը միջնորդությունը լուծում է՝ առանց տեղեկացնելու պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Այդ դրույթի հիմքում դրված է այն գաղափարը, որ հայցի ապահովման միջոցների ոչ ժամանակին կիրառումը կարող է հանդիսանալ ոչ արդյունավետ և խախտել հայցվորի իրավունքները, իսկ պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց ծանուցելը կարող է վտանգի տակ դնել ապագա դատական ակտի կատարումը, քանզի պատասխանողը կարող է միջոցներ ձեռնարկել ապահովման ենթակա գույքը թաքցնելու, օտարելու, այլ անձանց փոխանցելու ուղղությամբ: Մյուս կողմից՝ հայցի ապահովման միջոցների կիրառման մասին միջնորդությունը քննելիս պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց չծանուցելը առաջ է բերում մի շարք խնդիրներ վերջիններիս իրավունքների և շահերի

⁹Տե՛ս Практикум по гражданскому процесс. Под. ред. М.К. Треушникова. 2005, _էջ 241

պաշտպանության առումով: Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ դատարանը հայցի ապահովման հարցը լուծելիս պետք է պարզի, թե արդյոք հիմնավորված են հայցվորի պահանջները կամ արդյոք առկա է մտավախություն, որ պատասխանողը կարող է խուսափել իր պարտավորությունները հոժարակամ կատարելուց:¹⁰

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն հայցի ապահովման առարկայի վերաբերյալ երկու հիմնական դիրքորոշումներ, որոնցից առաջինի համաձայն օրենսդիրը, սահմանելով հայցի ապահովման կանոնները, նկատի է ունեցել իրավունքի (շահի) պաշտպանության բովանդակություն ունեցող վճռի կատարման ապահովումը, այլ ոչ թե հայցվորի նյութաիրավական պահանջները՝ ուղղված պատասխանողին:¹¹

Գտնում ենք, որ անհրաժեշտ է համաձայնվել Տ. Յուսուպովի այն մտքին, որ վերոգրյալ դիրքորոշումը տեսականորեն ճիշտ է, սակայն գործնականորեն այն չի կարելի նպատակահարմար համարվել: Դա հիմնավորվում է նախևառաջ նրանով, որ հայցի ապահովման նպատակը հանդիսանում է գործով դատարանի վճռի կատարման երաշխավորումը, սակայն դա հայցի ապահովման նպատակն է, այլ ոչ թե ապահովման ենթակա անմիջական օբյեկտը: Բացի այդ, ապագա դատական ակտը հայցի ապահովման առարկա դիտարկելու համար անհրաժեշտ է պայմանականորեն ընդունել, որ մինչև ակտի ընդունումը դատարանին հայտնի է, որ կբավարարվի պատասխանողին ուղղված հայցվորի պահանջը և ինչ ծավալով, այսինքն՝ թե ինչպիսին կլինի գործի ըստ էության լուծումը: Այս դեպքում հայցի ապահովման միջոցների կիրառումը կնշանակեր ոչ այլ ինչ, քան գործի ելքի կանխորոշում: Ուստի, առավել ընդունելի է դատավարազետների մյուս խմբի դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ: Այսպես, Տ. Յուսուպովը արդարացիորեն նշում է. «Երբ մենք ասում ենք, որ հայցվորը խնդրում է ապահովել իր հայցը, ապա ի նկատի ունենք ոչ թե դատարանին ուղղված հայցվորի պահանջը, որն այդպիսի ապահովման անհրաժեշտություն չունի, այլ միջոցները, ձեռնարկված հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջների պաշտպանության համար»:¹²

¹⁰ Ст'я. Исаенкова О.В – Иск в гражданском судопроизводстве, под. ред. М.А. Вукот, 1997. – էջ 68

¹¹ Ст'я Осокина Г.Л. – Иск (теория и практика) ._М.: Норма, 2000, - էջ 31

¹² Ст'я Юсупов Т.Б. - Обеспечение иска в арбитражном и гражданском процессе _М.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սպառնիչ կերպով է թվարկում հայցի ապահովման միջոցների ցանկը: Սակայն օբյեկտիվ իրականության մեջ լինում են դեպքեր, երբ կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված, նպատակահարմար կլինեն դատարանի կողմից նաև ապահովող այլ միջոցների կիրառումը: Ուսումնասիրելով մի շարք պետությունների օրենսդրություններ (ՌԴ-ՔԴ-Օ հոդված 140 և այլն), կարող ենք նկատել, որ օրենքը դատարանին հնարավորություն է տալիս կիրառելու նաև ապահովող այլ միջոցներ: Ուստի, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով՝ սահմանելով. «Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման այլ միջոցներ, որոնք ուղղված կլինեն սույն օրենսգրքի 97-րդ հոդվածի նպատակների իրագործմանը»:

Վերլուծելով հայցի ապահովման ինստիտուտը ՀՀ-ում՝ նկատում ենք նաև, որ օրենսդիրը չի նախատեսում ո՛չ հայցի ապահովման, ո՛չ հայցի ապահովման մի միջոցը մեկ այլ միջոցով փոխելու և ո՛չ էլ հայցի ապահովումը վերացնելու մասին դատարանի որոշումների մասնավոր բողոքարկման հնարավորություն, ինչը, մեր կարծիքով, աննպատակահարմար է, քանի որ այդ որոշումները շոշափում են գործի երկու կողմերի էական շահերը, և հայցի ապահովման խնդիրների լուծման ընթացակարգից է կախված վճիռների ռեալ կատարումը: Ուսումնասիրելով արտասահմանյան երկրների օրենսդրությունները, ելնելով հայցի ապահովման ինստիտուտի կարևորությունից և կողմերին դատարանի որոշումների բողոքարկման հնարավորություն ընձեռելու անհրաժեշտությունից՝ առաջարկվում է հայցի ապահովման ինստիտուտը կարգավորող ՀՀ քաղ. դատ. օր-ի 14-րդ գլուխը լրացնել առանձին հոդվածով, որը թույլ կտա հայցի ապահովման, ապահովման մի միջոցը մեկ այլ միջոցով փոխելու, ինչպես նաև հայցի ապահովումը վերացնելու մասին դատարանի որոշումների դեմ մասնավոր բողոք բերելու:

Ամբողջացնելով կարող ենք ասել, որ հայցի ապահովումը դատարանի կողմից կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոցներն են, որոնց հիմնական նպատակն է հարուցված հայցը բավարարելու դեպքում երաշխիքներ ապահովել ապագա վճռի կատարման համար:

Ուսումնասիրության արդյունքում առաջ են քաշվել օրենսդրական բնույթի երեք հիմնական հետևյալ առաջարկությունները.

1. բացառել դատարանի նախաձեռնությամբ հայցի ապահովում կիրառելու հնարավորությունը,

2. ամրագրել դատարանի կողմից հայցի ապահովման այլ միջոցներ ձեռք առնելու հնարավորությունը,

3. սահմանել հայցի ապահովում, այն վերացնելու, ապահովման մի միջոցը մեկ այլ միջոցով փոխելու մասին դատարանի որոշումների մասնավոր բողոքարկման հնարավորություն:

***Հանգուցային բառերն են՝** հայցապահանջ, հայցի ապահովում, անհետաձգելիություն, համաչափություն, իրավունքներ, օրինական շահեր, պաշտպանություն, երաշխիք, դատարան, հարկադրանքի միջոցներ, վճիռ:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան Ա.Հ. - Քաղաքացիական դատավարություն, Երևան, 2012, էջ 114, 115:
2. Պետրոսյան Ռ.Գ. - Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007, էջ 331-335:
3. Обеспечение иска в гражданском судопроизводстве. Ткачева Н.Н., 2011. _ էջ 97-128
4. Исаенкова О.В. – Иск в гражданском судопроизводстве, под ред. М.А. Викут, 1997. _ էջ 62-71, 76-92
5. Сахнова Т.Б., Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. - «Волтерс Клувер», 2008. _ էջ 181-187, 207-212
6. Практикум по гражданскому процессу. под ред. М.К. Треушников, 2005, էջ 238-244
7. Большой юридический словарь.- 3-е изд. /под. ред. Сухарева. А.Я. –М.: ИНФРА-М, 2007. _ էջ 377-379
8. Учебник гражданского процесса. Васьковский Е.В. –Москва, 2005, էջ 192, 199 – 217
9. Олегов М.Д. - Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации. /под. ред. Шакарян М.С. _ М., 2004, էջ 377-389

10. Мурадян Э.М. - Арбитражный процесс. _М, 2004, т₂ 72-77
11. Гуев А.Н. - Постатейный комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации. (2-е изд., доп. и перераб.) - «Экзамен», 2006, т₂ 364-381
12. Осокина Г.Л. - Иск (теория и практика) ._М.: Норма, 2000, т₂ 30-56
13. Кузнецов С.А. - Обеспечительные меры в гражданском и административном судопроизводстве. - «Волтерс Клувер», 2007, т₂ 13-27
14. Юсупов Т.Б. - Обеспечение иска в арбитражном и гражданском процессе _М.: Юрист, 2006, т₂ 22- 46

ОСОБЕННОСТИ ИНСТИТУТА ОБЕСПЕЧЕНИЯ ИСКА В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Д.Г. Саргсян, Т.С. Багдасарян

Резюме

Значение института обеспечения иска состоит в том, что применяются некоторые меры предусмотренные законом, гарантирующие исполнению судебного решения, которые предназначены защитить законные интересы истца от отрицательных последствий. Эти отрицательные последствия могут быть в результате объективных причин или недобросовестных действия ответчика, впоследствии которого может стать трудным или невозможным исполнения судебного решения, или ухудшать положение имущества, которое является предметом спора. Нужные качества, которые характеризуют обеспечение иска следующие: срочность, временный характер, защита имущественных интересов истца и пропорциональность меры обеспечения к требованиям иска.

Ключевыми словами являются: *исковое требование, обеспечение иска, срочность, пропорциональность, права, законные интересы, защита, гарантия, суд, меры принуждения, решение.*

THE INSTITUTIONAL PECULIARITIES OF CLAIM ENSURING IN CIVIL PROCEEDINGS

D.G. Sargsyan, T.S. Baghdasaryan

Summary

The meaning of the claim ensuring institute is gaining some measures which are guaranteeing judgment further execution and are stipulated by law and which are to defend the applicant's profits from numerous negative consequences. Those negative consequences can be resulted from objective causes and the respondent's dishonest actions, because of which the execution of the judgment can become difficult or even impossible or the condition of the argued property can be deteriorated. The necessary characters of claim insurance are urgency, temporality, protection of the applicant's property interests and the proportionality of the ensured measures to the requirements of the claim.

The key words are: *suit, maintenance of the suit, the urgency, the proportionality, rights, legitimate interests, defense, court, measures of enforcement, decision.*

ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱՆԻՍՏԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՍՈՂԵԼԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Ա.Վ. Պետրոսյան


Նախորդ աշխատանքում [3] ներկայացրել էինք թվաբանական գրաֆների մեթոդով քիմիական գրաֆների տեղեկատվության բարդության գնահատումը՝ Շենոնի դասական բանաձևով, որտեղ քիմիական գրաֆը ներկայացվում էր որպես նշագրված թվաբանական գրաֆ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երբ պարզ նյութերնունեն փոքր քանակով էկվիվալենտ դասեր, կոռելյացիոն գործակիցը ձգտում է 100-ի:

Սույն աշխատանքի մեջ ներկայացվում է թվաբանական բազմանիստերի տեղեկատվության գնահատումը մոդելային վիճակագրությամբ: Վերցնենք թվային բազմանիստեր n դրանք ծածկագրենք Ֆիբոնաչու թվերով:


Սահմանում 1. Թվաբանական գրաֆի տեսքով ներկայացված բազմանիստը կոչվում է թվաբանական բազմանիստ:

Օրինակ՝ որպես թվային բազմանիստ, վերցնենք քառանկյուն հիմքով բուրգը, որ նունի հինգ գագաթ (i_1, i_2, i_3, i_4, i_5) (նկ.1):

Դիտարկված բազմանիստը ծածկագրենք Ֆիբոնաչու թվերով ($i_1=1, i_2=2, i_3=3, i_4=5, i_5=8$): Ստացված բազմանիստը կարելի է ներկայացնել որպես թվաբանական գրաֆ $G=\{N/M\}$ (նկ.2), որտեղ $N=\{1,2,3,5,8\}$ գագաթների ծածկագիրն է, իսկ $M=\{3,5,6,8,9,10,11,13\}$ թվաբանական գրաֆի ձևիչ բազմությունն է, որի կողերի կշիռը $(i_\alpha + i_\beta) \in M$:



Նկ. 1



Նկ. 2

Նկար 2-ում պատկերված է ծածկագրված թվաբանական գրաֆը

(ԾԹԳ), որտեղ գազաթների քանակը հինգն է, դասերի քանակը՝ ութը, որն էլ համարժեք է կողմերի քանակին: Դրանք են՝ $K_{(1,2)}$, $K_{(2,3)}$, $K_{(3,5)}$, $K_{(5,1)}$, $K_{(8,1)}$, $K_{(8,2)}$, $K_{(8,3)}$, $K_{(8,5)}$:


Վերը նշվածից ելնելով՝ հաշվենք կողմերի ընդհանուր քանակը.

$$q = |K_{(1,2)}| + |K_{(2,3)}| + |K_{(3,5)}| + |K_{(5,1)}| + |K_{(8,1)}| + |K_{(8,2)}| + |K_{(8,3)}| + |K_{(8,5)}|$$

Հաշվարկները իրականացվում են [2] հողվածում բերված բանաձևերով:

Արդեն ստացված ԾԹԳ-ում գազաթները նշանակենք V_i ($i=1, p$) և տվյալ գազաթից դուրս եկող կողմերը U_t -ով (նկ.3):

$$U_1, U_2, \dots, U_{t-1}, U_t \quad (t=1, \ell)$$



Նկար 3.

Յուրաքանչյուր կողմին (V_i, U_t) ամրագրենք $|K(V_i, U_t)|$ կողմերի քանակը, որը պատկանում է $K(V_i, U_t)$ դասին և հաշվենք M_i -ը.

$$M_i = \sum_{t=1}^{\ell} |K(V_i, U_t)| \quad (1)$$

Թվաբանորեն հաշվենք V_i գազաթի կառուցվածքային զանգվածը

$$\bar{M} = |V_i| \sum_{t=1}^{\ell} |K(V_i, U_t)| \quad (2)$$

Ստացված արտահայտության մեջ V_i -ին թվաբանական բուրգի գազաթի ծածկագիրն է՝ $V_i \in L$:

Հաշվենք ԾԹԳ թվաբանական բուրգի ընդհանուր զանգվածը.

$$M = \sum_{i=1}^p \bar{M}_i \quad (3)$$

որտեղ p -ն ԾԹԳ գազաթների քանակն է:

Ենթադրենք V_i -ին ԾԹԳ-ի որևէ գազաթ է, ապա գազաթի ℓ աստիճանը կլինի $V_i(\ell = \text{deg} V_i)$: Ամրագրենք V_i և դիտարկենք նկ.3-ի գրաֆից հատված: Թվաբանական բուրգի յուրաքանչյուր կողին $(V_p, U_t) \in K(V_p, U_t)$, $t = 1, \ell$ գրառենք $|K(V_p, U_t)|$ թիվը՝ $K(V_p, U_t)$ բազմության տարրերից: Արդյունքում ստացվեց ℓ կողմերից կազմված բեռնավորված հատվածների խումբ: ԾԹԳ-ի կառուցվածքային զանգվածի և V_i գազաթների հարաբերության հավանականությունը կհաշվենք հետևյալ բանաձևով.

$$P_i = \frac{\bar{M}_i}{M} \quad (4)$$

Շենոնի դասական բանաձևով հաշվենք տեղեկատվության H քանակը՝ կախված վերը նշված P_i հաշվարկի արդյունքից.

$$H = -\sum_{i=1}^s P_i \log_2 P_i \quad (5)$$

Վերը նշված բանաձևերից օգտվելով հաշվարկենք նկ.2-ում պատկերված ծածկագրված թվաբանական գրաֆի տեղեկատվության քանակը՝ $H=1.81475$: Նման մեթոդով հաշվարկվել են նաև պատահականության սկզբունքով ծածկագրված նկ.2-ի այլ տարրերակներ՝ որոնք ներկայացված են հավելված1-ում:

Առաջարկվող հետազոտված մեթոդի լուսաբանման համար համեմատենք ԿԹԳ-ի հաշվարկված ինֆորմացիաների քանակը նրա կողերի երկարությունների և կողմնային մակերևույթների մակերեսների հետ: Հաշվարկները կատարելու համար ծածկագրված թվաբանական գրաֆի (նկ.2) կողերի երկարությունները հաշվարկենք [10] հոդվածի մետրիկայի մեթոդներով:

Օրինակ 1՝ հաշվարկենք նկ.2-ում կողավորված թվաբանական գրաֆի կողերի ընդհանուր երկարությունը՝

$$L_p = \sum_{i=1}^n L_i \quad (6)$$

որտեղ n -ը կողերի քանակն է, իսկ (i_α, i_β) կողի երկարությունը $L_i = \sqrt{i_\alpha + i_\beta}$, որտեղ $i_\alpha + i_\beta$ տվյալ կողի ծածկագրված կշիռն է: Արդյունքում նկ.2-ում պատկերված ծածկագրված թվաբանական գրաֆի կողերի ընդհանուր

երկարությունը՝ $L_p=20.0541$: Պատահականության սկզբունքով ծածկագրված նկ.2-ի այլ տարբերակների հաշվարկները ներկայացված են հավելված 1-ում:

Օրինակ 2՝ հաշվարկենք նկ.2-ում կողավորված թվաբանական գրաֆի կողմնային մակերևույթի ընդհանուր մակերեսը՝

$$S_{\rho} = \sum_{k=1}^m S_k \quad (7)$$

որտեղ m -ը կողմնային մակերևույթների քանակն է, իսկ $s_k = \frac{1}{2} \sqrt{AB + AC + BC}$ AB , BC և AC կողմեր ունեցող k -րդ նիստի մակերեսն է: Նման մեթոդներով հաշվարկվել են այլ բազմանիստերի համար, որոնց արդյունքները ներկայացված են հավելվածում:

Հավելվածում ներկայացված են կոռելյացիաներ՝ կողերի երկարությունների և տեղեկատվության քանակների, ինչպես նաև կողմնային մակերևույթների մակերեսների միջև: Կոռելյացիայի գործակիցները տատանվում են 0.80 - 0.90 սահմաններում:

Աշխատանքից ակնհայտ է դառնում, որ թվային բազմանիստերում կողմերի երկարությունների մեծացմանը համընթաց մեծանում է տեղեկատվության քանակը, իսկ կողմնային մակերևույթի մեծացումը բերում է տեղեկատվության քանակի փոքրացմանը հավելված 1, (աղյուսակ 1,2,3):

Առանցքային հասկացություններ. գրաֆ, բազմանիստ, Ֆիրոնաչու թվեր, ծածկագրում, կոռելյացիա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Григорьян Ю.Г. - Классификация и статистические свойства арифметических графов // Кибернетика – 1979. –N6. – с. 9-12.
2. Григорьян Ю.Г. - Геометрия арифметических графов // Кибернетика – 1982. –N4. – с. 1-4.
3. Григорьян Ю.Г., Петросян А.В. - Информационная оценка химических структур методами арифметических графов. Եվրոպական սկադեմիա. գիտական հոդվածների ժողովածու, 2011թ., N1.– с. 166-176.

4. Магнусон В., Д. Харрис, С. Бейсак - Химические приложения топологии и теории графов, Москва, М., Мир, 1987г. с.206-221.
5. Grigoryan Yu. - Discret Geometrics Spece // Gybernetics and System Analysis-2006 - N6, p.631-640.
6. Харари Ф. - Теория графов. М., Мир, 1973 г.
7. Григорян Ю.Г. - Группа арифметических автоморфизмов простых циклов // Кибернетика. – 1990. –N4. – с. 9-15.

ИНФОРМАЦИОННАЯ ОЦЕНКА АРИФМЕТИЧЕСКИХ МНОГОГРАННИКОВ СТАТИСТИЧЕСКИХ МОДЕЛИРОВАНИЯХ

А.В. Петросян

Резюме

В статье предложен статический способ [1] информационной оценки арифметических многогранников с помощью кодирующих множеств Фибоначчи. При такой кодировании вершин графа многогранника он приобретает геометрические свойство [5], позволяющие вычислить суммарную длину ребер, величину поверхности и другие показатели этого объекта.

Составлена программа и выполнена соответствующие расчеты, устанавливающие корреляционные связи между геометрическими величинами рассматриваемых арифметических многогранников (приложение 1,2,3).

Ключевые понятия: *граф, многогранник, чисел Фибоначчи, кодирование, корреляция.*

INFORMATION ESTIMATE OF THE ARITHMETIC POLYHEDRA STATAISTICAL MODELING

V. Petrosyan

Summary

The article presents a static method [1] Information arithmetic evaluation of polyhedra using Fibonacci coding sets. With this encoding, the vertices of


a polyhedron, it acquires geometric property [5], allowing to calculate the total length of the edges, the surface area and other indicators of the object.

A program and performed the appropriate calculations that establish correlations between the geometric variables considered arithmetic polyhedra (Appendix 1,2,3).

Key concepts: *graph, Star, Fibonacci numbers, coding, correlation.*


ՀԱՎԵԼՎԱԾ 1

Աղյուսակ 1

 <p>Գագաթների կոդավորում Ֆիբոնաչու թվերով</p>					H Տեղիկային հարաբերակցություն	L Գումարային կոդավորում	S Կոդավորման մոդուլի կոդավորում
i_1	i_2	i_3	i_4	i_5			
1	2	3	5	8	1.81475	20.0541	14.0248
2	5	3	1	8	1.90817	20.6596	14.0137
8	1	2	3	5	1.92519	21.5021	12.9296
5	2	8	1	3	1.92947	21.6596	11.531
8	3	2	1	5	1.9383	21.881	12.9296
1	8	3	2	5	2.00597	21.5021	12.9296
2	3	5	8	1	2.04693	21.5268	10.2458
8	5	2	3	1	2.22212	23.442	10.318

$R_{H,L} = 0.90$ $R_{H,S} = -0.80$


Աղյուսակ 2

 <p>Գագաթների կողավորում Ֆիբոնաչու թվերով</p>					Տերմինատվության H	Գրաֆի երկարություն L	Գրաֆի կողմնային մակերևույթի մակերեսը S
i_1	i_2	i_3	i_4	i_5			
8	1	5	2	3	1.81835	23.7402	18.4731
1	3	5	2	8	1.93173	23.814	17.5459
1	8	2	3	5	1.98829	24.1478	17.4711
2	5	1	3	8	1.99333	23.6596	17.1957
1	2	5	3	8	2.06902	24.2596	17.0917
3	1	2	5	8	2.07774	24.3707	16.1421
1	3	2	5	8	2.08982	24.3803	16.1421
5	1	2	3	8	2.12588	24.6596	16.0917
1	2	3	5	8	2.16393	24.7707	16.0421

$R_{H,L} = 0.90$

$R_{H,S} = -0.85$

Աղյուսակ 3


 <p>Գագաթների կողավորում Ֆիբոնաչու թվերով</p>						Ինֆորմացիան թարգմտված H i ₆	Գրաֆի երկարություն L	Գրաֆի կամային մոդելների նկարագր S
i ₁	i ₂	i ₃	i ₄	i ₅	i ₆			
8	5	2	3	1	13	2.08343	36.6837	33.2458
5	1	2	3	13	8	2.12509	36.6878	32.449
1	2	5	13	8	3	2.12695	37.377	32.0348
2	3	5	13	8	1	2.13058	37.4703	32.0182
1	2	3	5	8	13	2.13403	37.2878	32.149
13	5	2	3	1	8	2.13808	37.2147	32.1262
3	2	5	8	13	1	2.14471	37.1371	32.0458
1	3	5	2	8	13	2.17637	37.1281	32.0126

$R_{H,L} = 0.90$ $R_{H,S} = -0.80$


ԹՎԱՅԻՆ ՏԱՐՐԻ ՄՈԴԵԼ

Ռ.Է. Ֆատյան

Մխենատեխնիկական մոդելավորման ավանդական ծրագրերում լայնորեն կիրառվում են թվային տարրերի մակրոմոդելները [1-6]: Գրանք թույլ են տալիս զգալիորեն բարձրացնել հաշվարկի արագությունը, բայց այնքան, որ հնարավոր լինի հաշվարկել մեծ ինտեգրալ սխեմաներ (ՄԻՍ): Խառը մոդելավորման համակարգերում [7-9] այդ մակրոմոդելների դերը խիստ ընկնում է: Մխենաների թվային հատվածների հետ կապված խնդիրների մեծամասնությունը կարող է հաջողությամբ լուծվել տրամաբանական և տրամաբանական-էլեկտրական խառը մոդելավորման եղանակներով: Ընդ որում, ավանդական մակրոմոդելների համեմատ այս դեպքում հաշվարկի ժամանակը կրճատվում է կարգերով:



Նկար 1. Թվային տարրի մակրոմոդելի կառուցվածքը



Նկար 2. Մակրոմոդելի տեղեկատվական գրաֆը


Ասվածը չի նշանակում, որ ժամանակի մեջ անընդհատ թվային տարրերի մակրոմոդելները դարձել են ոչ պիտանի: Գոյություն ունեն բազմաթիվ սխեմաներ, որոնք պարունակում են անալոգային տարրերով զուգորդված թվային տարրեր: Նման սարքավորումներում թվային տարրերն ստանում են մուտքային ազդանշանները անալոգային տարրերից և տեղեկատվություն են փոխանցում այլ անալոգային տարրերի: Նման դեպքերում խառը

տրամաբանական-էլեկտրական մոդելավորման առավելությունները չեն կարող օգտագործվել ժամանակի մեջ անընդհատ մակրոմոդելների փոխարեն: Սակայն, դրանց անընդհատությունը վերաբերում է միայն մուտքային և ելքային փոփոխականներին: Ներքին վիճակները կարող են քվանտավորված լինել, այնպես որ այդ մոդելները գտնվում են մոդելավորման երկու մակարդակների եզրին:


Լրիվ համարժեք սխեմայի պարզեցման եղանակով կառուցվող բարդ մակրոմոդելները պակաս արդյունավետ են բաղադրիչային մակարդակի մոդելների համեմատ: Մնացած մակրոմոդելները սովորաբար կառուցվում են Գրինբաումի կողմից առաջարկված սկզբունքով և ունեն նկար 1-ում բերված կառուցվածքը: Մուտքային բլոկն արտացոլում է մուտքային վոլտամպերային բնութագիրը (ՎԱԲ-ը) և մուտքերի էլեկտրական փոխազդեցությունը: S_p և T_h բլոկներն արտացոլում են ելքային ազդանշանի տրամաբանական կախվածությունը մուտքայիններից և տարածման հապաղումից: $E_{\text{տր}}$ բլոկն արտացոլում է ելքային ազդանշանի ձևը պարապ ընթացքի ռեժիմում: Ելքային բլոկը նկարագրում է ելքային ՎԱԲ-երը: Իհարկե, մակրոմոդելների կոնկրետ իրագործումներում այս կամ այն բլոկները կարող են բացակայել կամ միավորվել միմյանց հետ:

Կառուցվածքն ապահովում է բլոկների միջև տեղեկատվության փոխանցման միակողմանի ուղղվածությունը, ինչը նպաստում է կառուցվածքային տարանջատմանը: Այդ դեպքում մոդելի տեղեկատվական գրաֆը բաղկացած է միայն միակողմանի ճյուղերից (նկ. 2), այսինքն՝ առավելագույնս բավարարում է կառուցվածքային տարանջատման պահանջներին: Միայն պետք է ապահովել մոդելի ենթաձրագրում առանձին գազաթների անկախ հաշվարկի հնարավորությունը: Մուտքային և ելքային ՎԱԲ-երն ամենից հաճախ հարմար է մոտարկել հատվածագծային ֆունկցիաներով: Բազմաթիվ ծրագրերում նման մոտարկումները լրջորեն դանդաղեցնում են հաշվարկի ալգորիթմների գույամիտությունը: Մոդելների հարմարեցումն իրադարձային տարանջատմանը մեծապես պայմանավորված է S_p և T_h բլոկների կառուցման եղանակներով: S_p բլոկն ընդունում է տեղեկատվությունը տրամաբանական զրոյի $U_{2\text{եմ}}^0$ և տրամաբանական մեկի $U_{2\text{եմ}}^1$ նկատմամբ շեմերի մուտքային ազդանշանների մեծության վերաբերյալ, մշակում է այն և ելքի է ուղարկում E_{S_p} ազդանշանը, որը նորմավորված

է 0-1 միջակայքում: E_{s_p} -ի կախվածությունը մուտքային $U_{մուտք.i}$ լարումներից կարող է լինել քվանտավորված կամ անընդհատ: Առավել պարզ է երկարժեք քվանտավորմամբ մոդելը, որում E_{s_p} -ն ընդունում է 0 կամ 1 արժեքներ: Եթե պետք է արտահայտել $U_{մուտք.i}$ արձագանքը $U_{շեմ}^0 < U_{մուտք.i} < U_{շեմ}^1$ միջակայքում գտնվող ազդանշանների, ապա կարելի է մտցնել եռարժեք քվանտավորումը՝ ավելացնելով $E_{s_p} = 0.5$ արժեքը, կամ, ի վերջո, $E_{s_p}(U_{մուտք.i})$ կախվածությունը դարձնել անընդհատ:



Նկար 3. Մակրոմոդելներում T_h բլոկի տիպային իրագործումը



Նկար 4. X_B -ի հետ $E_{սբ}$ -ի եռարժեք կապը

T_h բլոկն ամենից հաճախ իրագործվում է RC ինտեգրող շղթայի տեսքով (նկ. 3): Ունակության լարումը (նշանակենք այն X_B -ով) որոշվում է հետևյալ դիֆերենցիալ հավասարմամբ՝

$$X_B + \tau X'_B = E_{s_p} \quad (1)$$

և կառավարում է $E_{տլ}$ -ի ձևավորումը: Ինտեգրիկանության նման ներկայացման թերությունները հայտնի են՝ իրական սխեմաներին հատուկ պա-

րապ ռեժիմը կարճատև մուտքային ազդակների դեպքում, հապաղումների և ճակատների միանշանակ փոխադարձ կապը, $0 \rightarrow 1$ և $1 \rightarrow 0$ միջմիացումների հավասար իներցիականությունը: Այդ թերությունները վերացվում են T_n և $E_{\text{տր}}$ բլոկների տարբեր բարդացումներով: Պարզ և բավականին ունիվերսալ լուծում է X_{20} և X_{21} շեմերի ներմուծումը (նկ. 4), որոնք տրոհում են X_B -ի հնարավոր արժեքների տիրույթը երեք գոտիների՝ 0, 1, X: Երբ X_B -ն գտնվում է 0 գոտում, $E_{\text{տր}}$ -ը հավասար է $E_{\text{տր}0}$ տրամաբանական գրոյի լարմանը պարապ ընթացքի դեպքում: 1 գոտում $E_{\text{տր}} = E_{\text{տր}1}$, իսկ X գոտում $E_{\text{տր}}$ -ը փոխվում է որպես ֆունկցիա X_B -ից՝ $E_{\text{տր}} = f(X_B - X_{20})$: Այսպիսով՝ X գոտում X_B -ն խաղում է որոշակի մասշտաբային ժամանակի դեր, որը որոշում է էլքային ազդակի տևողությունը և ձևը: Պարզագույն դեպքում $E_{\text{տր}}$ -ը X_B -ի գծային ֆունկցիա է՝

$$E_{\text{տր}} = \frac{E_{\text{տր}0} X_{21} - E_{\text{տր}1} X_{20} + (E_{\text{տր}1} - E_{\text{տր}0}) X_B}{X_{21} - X_{20}} \quad (2)$$

Եվ այդ դեպքում $E_{\text{տր}}(t)$ -ն բնութագրվում է էքսպոնենտի հատվածով (ինչպես և $X_B(t)$ -ն), որն ստացվել է X_B փոփոխականի՝ 0 կամ 1 գոտի անցնելիս: Հնարավոր է նաև $E_{\text{տր}}(t)$ -ի կախվածության ցանկացած ավելի ճշգրիտ մոտարկում: 0 և 1 գոտիներում ժամանակի տարբեր հաստատունների և X_{20} , X_{21} ընտրությամբ կարելի է անկախ ձևով տալ հապաղումները և ճակատները միջմիացման տարբեր ուղղությունների դեպքում:

Նկարագրված մոդելները բավարար ճշտությամբ արտացոլում են թվային տարրերի ժամանակային հարաբերակցությունները: Սակայն հաշվարկի արդյունավետության տեսանկյունից այդ մոդելները արդյունավետ չեն: Մոդելավորման ապարատը՝ (1) դիֆերենցիալ հավասարումները, չի համապատասխանում հապաղումների և կայունացման ժամանակների վերաբերյալ այն սահմանափակ տեղեկատվությանը, որ ստացվում է դրա միջոցով: (1) դիֆերենցիալ հավասարումները մեծացնում են հավասարումների համակարգի չափողականությունը, ստիպում են փոքրացնել ինտեգրման քայլը՝ $\eta_{\phi}(t)$ կախվածությունը ճիշտ ընկալելու համար: Դա դժվարացնում է իրադարձությունների կանխատեսումն իրադարձային մոդելավորման ժամանակ, որոնք կայանում են η_2 շեմերի հատման մեջ: Բոլոր այս թերությունները կարելի վերացնել, եթե հրաժարվենք (1)

դիֆերենցիալ հավասարումից և $\eta_{\text{թ}}$ -ի արժեքների յուրաքանչյուր գոտու համար ընդունենք ժամանակից $\eta_{\text{թ}}$ -ի գծային կախվածության օրենք՝

$$X'_B = S \cdot \text{sign}(E_{S_p} - X_B), \quad (3)$$

որտեղ S -ը X_B -ի փոփոխության արագության մոդուլն է: (3) հավասարումն օգտագործող մոդելներն անվանենք վիճակների ալգորիթմական հաշվարկով մոդելներ (ՎԱՀՄ), քանի որ, ինչպես ցույց է տրվելու ստորև, դրանցում վերանում է բուն (3) հավասարման թվային լուծման անհրաժեշտությունը: Եթե ՎԱՀՄ-ում օգտագործվում է X_B -ի հետ $E_{\text{էլ}}$ -ի եռագոտի կապը (նկ. 4), ապա S մեծությունները պետք է տարբերվեն կախված այն բանից, թե որ գոտում է այժմ գտնվում X_B -ն (S_0 ՝ 0 գոտու համար, S_1 ՝ 1 գոտու համար), իսկ X գոտում՝ նաև X_B -ի փոփոխման ուղղությունից (S_2^+ ՝ X_B -ի մեծացման դեպքում, S_2^- ՝ փոքրացման դեպքում): Այդ դեպքում, քվանտավորված E_{S_p} -երի համար X_{20}, X_{21} թվային արժեքները դառնում են անտարբեր $S < X_{20} < X_{21} < 1$ միջակայքերում, քանի որ ժամանակի բոլոր միջակայքերը որոշվում են գոտու լայնության և համապատասխան S_i մեծության հարաբերություններով:

$$\begin{aligned} t^0 &= X_{20} / S_0, \quad t^1 = (1 - X_{21}) / S_1, \\ t^{01} &= (X_{21} - X_{20}) / S_2^+, \quad t^{10} = (X_{21} - X_{20}) / S_2^- \end{aligned} \quad (4)$$

մեծությունները $\sigma_{\text{տր}}$ -ի քվանտավորմամբ եռագոտի ՎԱՀՄ-ի պարամետրեր են և հեշտությամբ որոշվում են տարրերի դինամիկ բնութագրերի միջոցով:

Այժմ անցնենք ՎԱՀՄ-ի հաշվարկի եղանակների դիտարկմանը: Կանգ առնենք E_{S_p} -ի երկնիշ քվանտավորմամբ և $E_{\text{էլ}}(X_B)$ գծային կախվածությամբ մոդելի վրա: Մոդելն ունի գործունեության 8 տիրույթներ, որոնք տարբերվում են X_B արժեքներով և X_B -երի փոփոխման ուղղություններով: Նկար 5-ում պատկերված են այդ տիրույթները և դրանց տրված պայմանական համարները: 1 և 8 տիրույթները կայուն են, համապատասխանում են $X_B=0$ և $X_B=1$ արժեքներին, 2 և 3 տիրույթները համապատասխանաբար համապատասխանում են 0 գոտում աճին և անկմանը և այլն: Անցումները տիրույթների միջև տեղի են ունենում E_{S_p} -ի միջմիացության ժամանակ կամ X_B փոփոխականի կողմից գոտու եզրին հասնելիս: Նկար 5-ում բերված է հնարավոր անցումների գրաֆը և նշված են անցման պատճառները՝ E_{S_p} -ի

կամ X_B -ի փոփոխությունը: Ելքերը կայուն տիրույթներից հնարավոր են միայն E_{Sp} -ի ազդեցության տակ: Նկար 6-ը ցույց է տալիս $U_{\text{մուտք}}$ -ի, E_{Sp} -ի և X_B -ի փոխազդեցությունը: Այդ օրինակում $t_1, t_2, t_4, t_5, t_6, t_8, t_9$ պահերին անցումները կապված են E_{Sp} -ի, իսկ t_3, t_7, t_{10}, t_{11} պահերին՝ գոտիների սահմանին հասնելու հետ: Որևէ t_h^i պահին գոտու սահմանը հատելիս հերթական իրադարձությունը՝ գոտու այլ սահմանի հասնելը, կարելի է սպասել t_h^{i+1} պահին, որը հավասար է՝

$$t_h^{i+1} = t_h^i + t_{i+1}^k, \quad (5)$$


որտեղ t_{i+1}^k -ը հավասար է t^0, t^1, t^{01} կամ t^{10} , կախված այն տիրույթից, որի մեջ անցնում է X_B -ն: Եթե X_B փոփոխականը հասնում է 0 կամ 1 (նկար 6-ում պահեր t_3, t_{11}), ապա (5) արտահայտության մեջ $t^k = \infty$, քանի որ E_{Sp} միջմիացության բացակայության դեպքում այդ վիճակները պահպանվում են անվերջ երկար: Եթե X_B -ն գտնվում էր որևէ գոտում, ընդ որում հերթական իրադարձությունը կանխատեսվում է t_h^i պահին, իսկ $t_2 < t_h^i$ պահին տեղի է ունեցել E_{Sp} փոխանցատումը (նկար 6-ում պահեր t_2, t_5, t_6, t_7, t_8), ապա նախկին կանխատեսումը փոխվում է նորով, որը, ինչպես կարելի է ցույց տալ, հավասար է՝

$$t_h^{i+1} = t_2 + t_{i+1}^k - \frac{t_{i+1}^k}{t_i^k} (t_h^i - t_2), \quad (6)$$

որտեղ t_h^k -ը t^U -ի այն արժեքն է, որը համապատասխանում է աշխատանքի այն տիրույթին, որում գտնվում էր մոդելը t_2 պահից առաջ: 0 և 1 գոտիների համար $t_{i+1}^k = t_i^k$, բայց X գոտու համար դրանք տարբեր են: (5) արտահայտությունը կարելի է դիտարկել որպես (6)-ի մասնավոր դեպք, երբ $t_2 = t_h^i$: Տիրույթի համարը և իրադարձության կանխատեսվող t_h^{i+1} պահը լիովին որոշում են մոդելի վիճակը: Դրանք էլ որոշում են նաև E_{bip} (t)-ն՝


$$E_{\text{bip}}(t) = \begin{cases} E_{\text{bip}0} & \text{տիրույթներ 1, 2, 3} \\ E_{\text{bip}1} + (E_{\text{bip}1} - E_{\text{bip}0}) \frac{t - t_c^{i+1}}{t^{01}} & \text{տիրույթ 4} \\ E_{\text{bip}0} - (E_{\text{bip}1} - E_{\text{bip}0}) \frac{t - t_c^{i+1}}{t^{10}} & \text{տիրույթ 5} \\ E_{\text{bip}} & \text{տիրույթներ 6, 7, 8} \end{cases} \quad (7)$$

Նկար 5-ի գրաֆը ցույց է տալիս, որ տիրույթի համարը միարժեքորեն բնութագրում է նաև անցման ուղղությունը: Դ-ա երևում է այն բանից, որ յուրաքանչյուր տիրույթ ունի X_B -ի հետ կապված ոչ ավել, քան մեկ հաս դուրս ելնող ճյուղ, և E_{Sp} -ի հետ կապված մեկական ճյուղ:



Նկար 5. E_{Sp} -ի երկնիշ քվանտավորմամբ ՎԱՀՄ. ա) աշխատանքային տիրույթները, բ) անցումների գրաֆը

Դրանից ելնելով՝ t_{n+1} պահին h_n սխեմայի հավասարումների ինտեգրման որոշակի քայլում հաշվարկի ալգորիթմը բերվում է հետևյալին: Ստուգվում է, արդյոք տեղի չի ունեցել E_{Sp} միջմիացություն և տեղի է ունենում $t_{n+1} < t_B^{i+1}$ պայմանը: Եթե միջմիացությունը կար և իրադարձություն տեղի չի ունեցել, (7) արտահայտության միջոցով հաշվարկվում է E_{bip} -ը, և հաշվարկն այդ քայլում ավարտվում է: Եթե տեղի է ունեցել E_{Sp} միջմիացություն $t_n < t_h^{i+1}$ պահին, ապա նկար 5-ի գրաֆով որոշվում է նոր տիրույթի համարը և (6) արտահայտությամբ վերահաշվարկվում է t_h^{i+1} -ն: Մոդելի ներսում




Նկար 6. Անցողիկ պրոցեսը ՎԱՀՄ-ում

իրադարձությունների մշակումն ավարտվում է այն պահին, երբ $t_h^{i+1} < t_{n+i}$: Եթե քայլի վրա հաշվարկի սկզբում $t_h^{i+1} < t_n$, ապա սկզբում մշակվում են t_n -ին նախորդող իրադարձությունները, հետո E_{Sp} միջմիացությունը, իսկ այնուհետև՝ հաջորդող իրադարձությունները: Իրադարձությունների մշակումից հետո (6) արտահայտությամբ որոշվում է E_{top} -ն և հաշվարկներն ավարտվում են:

Շարադրված մոտեցումը կարող է հեշտությամբ կիրառվել նաև ավելի բարդ ՎԱՀՄ-ների վրա, որոնք ունեն ոչ թե մեկ, այլ մի քանի ներքին վիճակներ: Դա, մի կողմից, թույլ է տալիս բավականին բարդ սարքերի ՎԱՀՄ-ներ կառուցել, իսկ մյուս կողմից՝ ճշգրտել անցողիկ պրոցեսների նկարագրությունը: Օրինակ՝ վերը բերված մոդելներում ճակատների

տևողությունը որոշվում է X_B -ի կողմից գոտին անցնելու ժամանակով, որը միշտ փոքր է X_B -ի հաստատման ամբողջ ժամանակից: Դա ոչ լրիվ է բավարարում տրամաբանական տարրերում ընթացող պրոցեսների ֆիզիկային: X_B փոփոխականն արտացոլում է որոշ ներքին պրոցեսներ՝ լիցքի տարրալուծումը տրանզիստորում, տարրի ներքին ծավալների վերալիցքավորումը և այլն: Իսկ ճակատների տևողությունները որոշվում են տարրի ելքային շղթայի իներցիականությամբ և մի շարք դեպքերում կարող են գերազանցել ներքին պրոցեսների հաստատման ժամանակը: Այդ պատճառով մոդելը կարող է սխալներ թույլ տալ մոդելի հաստատման տևողությունից փոքր կարճատև մուտքային ազդեցությունների դեպքում: Այդ սխալներից կարելի է խուսափել՝ ներմուծելով երկու ներքին փոփոխական՝ $X_{\alpha 1}$ և $X_{\alpha 2}$, որոնցից առաջինը բնութագրում է մոդելավորվող օբյեկտի մուտքային և միջանկյալ կասկադների, իսկ երկրորդը բնութագրում է ելքային շղթաների իներցիականությունը: $X_{\alpha 1}$ -ի համար սովորաբար բավարար է առանձնացնել շեմային արժեքով առանձնացվող երկու գոտի (նկար 7): S -ի փոփոխման արագությունը կարող է ընդունվել հաստատումն: S և X_2 մեծությունները որոշում են մոդելի $t^0 = X_n / S$, $t_1 = (1 - X_n) / S$ պարամետրերը՝ երկարատև մուտքային ազդակների միջմիացություններից 0 և 1 գոտիներում $X_{\alpha 1}$ -ի գտնվելու ժամանակներն են: $X_{\alpha 2}$ -ի փոփոխության ուղղությունը որոշվում է $\eta_{\alpha 1}$ -ի գտնվելու գոտիով (0 կամ 1):



Նկար 7. ՎԱՀՄ-ի անցողիկ պրոցեսները

ՎԱՀՄ-ները նպատակահարմար է օգտագործել նաև թվասանալոգային և անալոգաթվային փոխարկիչների (ԹԱՓ և ԱԹՓ) մակրոմոդելների մշակման ժամանակ, որոնք անհնար է մոդելավորել ավելի արդյունավետ տրամաբանական մակարդակի վրա՝ մուտքերի և ելքերի վրա անալոգային ազդակների առկայության պատճառով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Архангельский А.Я., Светцов С.В. - Методика синтеза электрических макромоделей логических схем среднего и большого уровней интеграции // В сб. Автоматизация проектирования в электронике, Киев, 1980, вып. 22,- с. 64-70.
2. Бахов В.А. - Макромоделирование цифровых и импульсных схем при помощи макроэлементов // Известия вузов СССР, Радиоэлектроника, 1980, №6, - с. 13-20.
3. Архангельский А.Я., Меликян В.Ш. - Макромодели элементов схем на коммутируемых конденсаторах // Изв. вузов СССР, Радиоэлектроника, том 29, 1986, №6, с. 86-87.
4. Меликян В.Ш. - Макромодель цепочки логических вентилей // В сб.: Моделирование, оптимизация, управление, Ереван, 1998, Вып. 1, - в. 52-57.
5. Dartu F., Tutuiianu B., Pileggi L.T. - Interconnect Macromodels for Timing Simulation. – In.: Proc. 3st ACM/IEEE Design Automation Conference, 1996, pp. 611-616.
6. Kong J.T. Overbanser D. - Methods to Improve Digital MOS Macromodel accuracy. IEEE Translations on Computer-Aided Design of Integrated Circuits and Systems, 1995, v. 14, pp. 868-881.
7. Архангельский А. Я., Меликян В. Ш. - Смешанное схемотехническое и функционально-логическое моделирование аналого-цифровых схем. – Киев, Электронное моделирование, АН СССР, 1984, Т. 6, - ц. 35-39.
8. Chadha R., Visweswariah C., Chen C.F. - Multilevel Mixed-mode A/d Simulator. – IEEE Translations on Computer Aided Design of Integrated Circuits and Systems, 1992, v. 11, №5, pp. 575-586.
9. Saleh R.A., Newton A.R. - Mixed-mode Simulation. – Kluwer Academic Publishers, 1990. – 248p.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՎԻՆԵՐԸ

Հ.Շ. Խաչատրյան

Համաշխարհային փորձով հիմնավորվել է, որ պետության կողմից պետական ֆինանսների ձևավորման նպատակով դրամական ֆոնդերը հավաքագրվում են պետական բյուջե և օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն ծախսվում են տնտեսական և սոցիալական տարբեր բնույթի գործառույթների իրականացման նպատակով:

Այս առումով խիստ անհրաժեշտ է կարևորել տնտեսության մասշտաբով բյուջետային հիմնարկների գործունեության ծավալման համար անհրաժեշտ ֆինանսների հետազոտությունը, որը ներառում է բյուջետային հիմնարկությունների ֆինանսներին բնորոշ հարաբերությունների այն շրջանակը, որ կապված է ֆինանսական միջոցների հոսքերի ձևավորման, դրանց շրջանառության իրականացման հետ, հանդես գալով դրամական միջոցների ձևով:

Դա նշանակում է, որ կրթության համակարգին անհրաժեշտ ֆինանսները այն նպատակային ծախսվող դրամական միջոցներն են, որոնք կոչված են կրթական հաստատությունների ծառայության դիմաց հատկացումների կատարման համար, այդ հատկացումների համար անհրաժեշտ գումարները և ժամկետները որոշելու համար, այդ հատկացումների համար անհրաժեշտ միջոցների զծով մախահաշիվ և այլ բնույթի հաշվետվություններ կազմելու համար:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ նշված նպատակներով օգտագործվող դրամական միջոցները օժտված են հետևյալ բնորոշ գծերով.

- առաջին բնորոշ գիծը կայանում է նրանում, որ դրանք ունեն նպատակային բնույթ և կոչված են փոխհատուցելու այս կամ այն ծառայության համար անհրաժեշտ ծախսերը,
- այդ հատկացումները հանդես են գալիս որոշակի գումարի տեսքով և մասնակցում են այս կամ այն գործընթացի կատարմանը:

Կարելի է հանգել այն հետևության, որ կրթության համակարգը իր զարգացման առանձնահատկությանը զուգընթաց պահանջում է բավական

նին մեծ քանակությամբ ֆինանսական միջոցներ, որոնց հիմնական բաժինը, ինչպես արդեն նշել ենք, կազմում են բյուջետային միջոցները: Բայց քանի որ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով բյուջետային միջոցները ամբողջությամբ չեն բավարարում կրթական հաստատությունների կողմից սպառվող միջոցների պահանջները, ուստի բավականին լրացուցիչ միջոցների կարիք է զգացվում այդ կարևոր համակարգի պահանջները ամբողջությամբ ֆինանսական ռեսուրսներով բավարարելու համար:

Դ-ա նշանակում է, որ ինչպես նախկինում, այնպես էլ ժամանակակից պայմաններում լրացուցիչ ֆինանսական միջոցներով կրթության համակարգի պահանջների բավարարումը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Հետևաբար թե բյուջետային ֆինանսական միջոցները և թե լրացուցիչ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրն այսօր նույնպես համարվում է այդ կարևոր համակարգի զարգացման ռազմավարության կարևոր խնդիրներից մեկը:

Բավական է նշել, որ այսօր կրթության համակարգի կողմից ծառայության մատուցման դիմաց լրացուցիչ ֆինանսական միջոցները որպես ոչ բյուջետային միջոցներ մանկավարժության և կրթության տնտեսագիտությանը նվիրված գրականությունում դիտարկվում են որպես արտաբյուջետային ֆինանսական միջոցներ [1]: Իրականում ստացվում է, որ արտաբյուջետային ֆինանսական միջոցների աղբյուրը ոչ թե պետական և համայնքային բյուջեների եկամուտներն են, այլ այն ֆինանսական միջոցները, որոնք ոչ մի առնչություն չունեն բյուջեի հետ, որոնք կրթության համակարգ մուտք են գործում այլ աղբյուրների ձևով:

Դ-ա է այն հիմնական պատճառներից մեկը, որ արտաբյուջետային ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրները խիստ տարբերվում են բյուջետային միջոցների հաշվին ստացվող միջոցներից: Դ-ա անշուշտ նշանակում է, որ արտաբյուջետային միջոցների ձևավորման ֆինանսական մեխանիզմը ունի որոշակի առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունը արտահայտվում է նրանում, որ դրանք մի կողմից չեն հանգեցնում կրթության համակարգում գործող նորմաների և նորմատիվների փոփոխությանը, իսկ մյուս կողմից՝ ձևավորվում են բոլորովին այլ

¹ Захарчук Л.А. Экономика образовательного учреждения. М., 2011, стр. 37.

աղբյուրներից և չեն ազդում բյուջետային ֆինանսավորման վրա: Դա կարելի է հիմնավորել նրանով, որ ֆինանսավորման համար անհրաժեշտ արտաբյուջետային միջոցների օգտագործման հետ առնչվող նորմաներն ու նորմատիվները նույնպես հիմնավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, բյուջետային օրենքներով, հարկային օրենքներով, «Կրթության մասին» օրենքով, ֆինանսների և կրթության նախարարությունների կողմից ընդունված որոշումներով, համապատասխան գործակիցներով ու նորմատիվային ակտերով:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ արտաբյուջետային ֆինանսական միջոցները ձևավորվել են դեռ հին ժամանակներից և որոշիչ դեր են կատարել կրթության համակարգի զարգացման, նոր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման գործում:

Այս առումով դեռևս XIX դարի վերջին և XX դարի սկզբներին գիտականորեն հիմնավորվել է, որ կրթության հիմնարկությունների կողմից մատուցված ծառայությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը գանձարանային (բյուջետային) միջոցներն են, ինչպես նաև կապիտալի օգտագործման դիմաց ստացվող տոկոսները, առանձին գործարարների կողմից կրթության հիմնարկություններին ցուցաբերված աջակցությունն ու օգնությունը, ինչպես նաև ուսուցման դիմաց վճարների ձևով ստացվող միջոցները [2]: Միաժամանակ, այդ աղբյուրների համակարգում հիմնական աղբյուր համարվել են գանձապետական եկամուտները [3]:

Ներկայումս արտաբյուջետային ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են հետևյալ աղբյուրների հաշվին.

1. վճարովի հիմունքներով ուսուցման ծառայությունների կատարման դիմաց ձևավորված ֆինանսական միջոցներ,
2. կրթության հիմնարկներում արտաբյուջետային միջոցներ կարող են ստացվել ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման գործընթացի միջոցով,
3. կազմակերպության սկզբունքով անհատ գործարարների կողմից կրթության հիմնարկություններին աջակցության նպատակով կատարված վճարումներ:

² Беляков С.А. Экономика образования. М., 2002, стр. 153-159.

³ Беляков С.А. Экономика образования. М., 2002, стр. 160.

Այսպիսով, արտաբյուջետային ֆինանսական միջոցները, որպես ոչ բյուջետային միջոցներ, ունեն ձևավորման ինքնուրույն աղբյուր և դիտվում են բյուջետային եկամուտներից դուրս՝ որպես լրացուցիչ ֆինանսական միջոցներ, իրենց առանձնահատկություններով հանդերձ:

Բավական է նշել, որ ժամանակակից պայմաններում կրթության հաստատությունների կողմից ստացված արտաբյուջետային միջոցները, որպես լրացուցիչ միջոցներ, համարվում են ինքնուրույն օգտագործման միջոցներ: Ի դեպ, այդ միջոցները, որպես ոչ հարկային եկամուտներ, մշակված նախահաշվի միջոցով օգտագործվում են ուսուցման հետ կապված այլ հատկացումների կատարման նպատակներով:


Այս ամենով հանդերձ, ինչպես նկատեցինք, «արտաբյուջետային գործունեություն» հասկացությունը, որ հատկապես առանձնահատուկ է կրթության համակարգին, ձևավորվել է դեռ հին ժամանակներից: Այդ հասկացության բովանդակությունը ժամանակին գնահատվել է ելնելով այն իրավիճակից, երբ կրթության համակարգի գործունեությանը զուգընթաց, բյուջեից ֆինանսական միջոցների հատկացումից բացի, կրթության ոլորտում պահանջվեց իրականացնել լրացուցիչ գործունեություն՝ ուսուցման ժամանակից դուրս օգտագործելով կադրային ներուժը: Այդ գործունեության իրականացման համար լրացուցիչ միջոցներ սկսեցին ձևավորվել ոչ թե բյուջեի միջոցներից, այլ այսպես կոչված արտաբյուջետային միջոցներից, որոնք ձևավորվում են տարբեր աղբյուրներից:

Այսպիսով, եթե բյուջետային միջոցները անվերադարձելիության սկզբունքով կատարված հատկացումներն են կրթության հաստատություններին, նրանց կողմից կատարված ծառայությունների փոխհատուցման համար, ապա մնացած միջոցները, որոնք օգտագործվում են կրթության հաստատությունների կողմից, դիտվում են արտաբյուջետային միջոցներ:

Իրականում ստացվում է, որ կրթության համակարգի կողմից կիրառվող ֆինանսական միջոցների աղբյուրները կարելի է բաժանել ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային ֆինանսական միջոցների աղբյուրների (տես գծապատկեր 1):

Թիվ 1 գծապատկերից երևում է, որ կրթության հաստատությունների ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են ինչպես պետական և համայնքային բյուջեների միջոցներից, այնպես էլ այլ աղբյուրներ:

րից ստացվող ֆինանսական միջոցներից, այսինքն արտաբյուջետային ֆինանսական միջոցներից:



Գծապատկեր 1. **Արթուրյան համակարգին հատկացվող ֆինանսական միջոցների աղբյուրները:**

Ժամանակակից պայմաններում արտաբյուջետային ֆինանսական միջոցները ձևավորվում են հետևյալ ֆինանսական աղբյուրների հաշվին.

1. կրթության համակարգի հաստատություններին առանձին բարերարների կողմից հատկացվող ֆինանսական միջոցները,
2. հանրակրթական հաստատություններում վճարովի սկզբունքով ուսուցման կազմակերպման դիմաց հավաքագրված ֆինանսական միջոցները,
3. նախապատրաստական բաժանմունքներում առանձին հաստատություններում հավաքագրված ֆինանսական միջոցները,
4. արտասահմանյան ուսանողության կողմից վճարովի սկզբունքով Հայաստանի տարբեր բարձրագույն հաստատություններում հավաքագրված ֆինանսական միջոցները,
5. մասնագետ կադրերի որակավորման բարձրացման նպատակով առանձին կրթական հաստատությունների կողմից այդ նպատակով ուսուցման կազմակերպման դիմաց հավաքագրված ֆինանսական միջոցները,
6. նախապատրաստական քոլեջներում առանձին բուհերում ընդգրկվածների կողմից հավաքագրված ֆինանսական միջոցները:

Արտաբյուջետային ֆինանսական միջոցների համակարգում հավաքագրված ֆինանսական միջոցների աղբյուրների համակարգում հիմնականը կրթության համակարգում առկա և հեռակա ուսուցման ձևերում, ինչպես նաև մագիստրոսական ուսուցման ձևերում ուսուցման համար հավաքագրված վճարումներն են:

Այս առումով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ պետական ուսումնական հաստատություններում ուսուցման գործունեության նպատակին համապատասխան ուսուցման գործընթացը կառավարության որոշման համաձայն կարող է իրականացվել ուսումնական, գիտահետազոտական և գիտալաբորատորիաների գծով ծառայության մատուցման դիմաց կատարված ծառայության դիմաց [4]:

Այդ ժամանակից ի վեր բարձրագույն ուսումնական հաստատություններում մտցվեց ուսուցման դիմաց ֆինանսավորման նոր կարգ, վճարովի հիմունքներով ուսուցման գործընթացի կազմակերպման համար: Այդ ուղղությամբ ընդունված որոշումը իր հիմնավորումը ստացավ սահմանադրության, քաղաքացիական օրենսդրության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության օրենքներով:

Հայտնի է, որ հանրապետության անկախացումից հետո շուկայական տնտեսավարման ուղին բռնած Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում նույնպես կատարվեցին որոշակի բարեփոխումներ՝ կապված թե վճարովի հիմունքներով ուսուցման կազմակերպման հետ և թե վճարովի բարձրագույն ուսումնական հաստատությունների ձևավորման հետ:

Անշուշտ, նման բարեփոխումները լուրջ նախադրյալներ ստեղծեցին հանրապետությունում բարձրագույն կրթության հետագա զարգացման և մասնագետ կադրերի նկատմամբ պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման համար: Դա միաժամանակ հանգեցրել է բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգում անվճար ուսուցման և վճարովի ուսուցման հարաբերակցության փոփոխությանը (տես աղյուսակ 1):

Աղյուսակի տվյալներից երևում է, որ հանրապետության անկախացումից հետո բավականին ավելացել է ինչպես պետական, այնպես էլ ոչ

⁴ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, հոդված 27, 14.04.1999թ., էջ 16:

պետական բուհերի թիվը: Անշուշտ, ավելացել է նաև դրանցում սովորող ուսանողների թիվը: Այսպես, եթե 1990/91 ուսումնական տարում պետական բուհերը հանրապետությունում 14-ն էին, ապա հետագա տարիներին դրանց թիվը ավելացավ և կազմեց 23:

Աղյուսակ 1

Պետական և ոչ պետական բուհերի և դրանցում սովորողների թվից անվճար և վճարովի հիմունքներով հարաբերակցության փոփոխությունը անկախացումից հետո ընկած ժամանակաշրջանում

	1990/91	1999/2000	2001/02	2005/06	2007/08	2008/09	2009/10	2010/11
Պետական բուհերի թիվը	14	16	20	22	22	23	23	23
Ոչ պետական բուհերի թիվը		82	71	67	63	67	54	51
Ուսանողների ընդհանուր թիվը (1000 ուսանող)	48.9	39.8	47.4	73.7	112.2	114.4	114.6	111.0
Անվճար սովորող ուսանողների թիվը (1000 ուսանող)	47.1	15.8	16.6	19.9	28.1	19.9	20.1	16.5
Վճարովի համակարգում սովորող ուսանողների թիվը (1000 ուսանող)	1.8	24	30.8	53.8	84.1	94.5	94.5	94.5
Անվճար սովորողների բաժինը %-ով	96.3	42.9	35.0	27.0	25.0	24.0	24.0	24.0
Վճարովի սովորողների բաժինը %-ով	3.7	57.1	65.0	73.0	75	76	76	76

Հանրապետության կառավարության որոշման համաձայն ձևավորվեցին նաև ոչ պետական բուհեր, որոնց թիվը եթե 1990/91 թթ. 2-ն էր (Աճառյանի անվան և «Գլաձոր» կառավարման համալսարանները), ապա հետագա

տարիներին դրանց թիվը ունեցավ աճի միտում և 1999/2000 ուս. տարում հասավ մինչև 82-ի, որը հետագա տարիներին ունեցավ նվազման միտում՝ հաշվի առնելով ինչպես աշխատանքի շուկային համապատասխան շատ մասնագիտությունների գծով պահանջարկի և առաջարկի հարաբերակցության տեղաշարժերը, այնպես էլ առանձին ոչ պետական բարձրագույն հաստատությունների նյութական բազան, ինչպես նաև դրանց մի մասում ուսման ցածր մակարդակը: Նման պայմաններում ոչ պետական բուհերի թիվը եթե 2001/2002 ուս. տարում կազմել էր 71, ապա 2010/11 ուսումնական տարում դրանց թիվը կրճատվել և կազմել է 51 ոչ պետական բուհ:

Չնայած այն բանին, որ ոչ պետական բուհերի թիվը բավականին կրճատվեց, այնուամենայնիվ ուսանողության թիվը պետական և ոչ պետական բարձրագույն հաստատություններում ունեցել է աճի միտում: Այսպես, եթե 1999/2000 ուսումնական տարում դրանցում սովորողների թիվը կազմել էր 47.4 հազար ուսանող, ապա հետագա տարիներին ընդունելության թվաքանակի աճի շնորհիվ ավելացավ դրանցում սովորողների թիվը, որը 2009/10 ուս. տարում կազմեց 114.6 հազար ուսանող: Հետագա տարիներին, կապված հատկապես ոչ պետական բուհերի թվի կրճատման հետ, կրճատվեց նաև բուհերում սովորող ուսանողների ընդհանուր թիվը և 2010/11 ուսումնական տարում կազմեց 111.0 հազար ուսանող:

Համաձայն «Կրթության մասին» օրենքում կատարած փոփոխության և վճարովի հիմունքներով ուսուցման ձևի արմատավորման հետ բավականին տեղաշարժեր կատարվեցին նաև անվճար և վճարովի հիմունքներով բուհերում սովորողների հարաբերակցությունում: Եթե անվճար հիմունքներով սովորողների թիվը 1990/91 ուս. տարվա վերջում կազմում էր ընդհանուր ուսանողության 96.3 տոկոսը, իսկ վճարովի հիմունքներով սովորողների թիվը՝ 3.7 տոկոս, ապա այդ հարաբերակցությունը կտրուկ կրճատվեց և 1999/2000 ուս. տարում կազմեց համապատասխանաբար 42.9 և 57.1 տոկոս: Դա նշանակում է, որ եթե 1990/91 ուս. տարում անվճար սովորողների թիվը կազմել էր 47.1 հազար ուսանող, իսկ վճարովի հիմունքներով սովորողներինը՝ 1.8 հազար ուսանող, ապա դրանց հարաբերակցությունը 1999/2000 ուս. տարվա վերջում կազմել է 15.8 և 42.9 հազար ուսանող: Ինչպես նկատում ենք, վճարովի հիմունքներով սովորող ուսանողների թիվը ունեցել է աճի միտում, որի պատճառով վճարովի հիմունքներով սովորողների

բաժինը ավելացավ և կազմեց 57.1 տոկոս: Այդ միտումը շարունակեց պահպանվել նաև հետագա տարիներին: Այսպես, 2005/06 ուս. տարում վճարովի և անվճար ուսանողների հարաբերակցությունը կազմել է 19.9 հազար անվճար սովորողի դիմաց՝ վճարովի 53.8 հազար, այսինքն վճարովի հիմունքներով սովորողների բաժինը ավելացավ և կազմեց ընդհանուր ուսանողության 73 տոկոսը: Ի դեպ, այդ օրինաչափությունը շարունակեց պահպանվել նաև հետագա տարիներին և 2010/11 ուսումնական տարում կազմեց 76 տոկոս:

Անշուշտ, մման տեղաշարժերի հետ միասին կարևոր նշանակություն ունեցավ նաև զեղչերի վերաբերյալ որոշումը, ինչպես նաև ռոտացիոն հիմունքներով բարձր առաջադիմություն ունեցող վճարովի ուսանողներին անվճար համակարգի փոխադրման և ցածր առաջադիմություն ունեցող անվճար ուսանողներին վճարովի հիմունքներով ուսուցման փոխադրման հարաբերակցության փոփոխությունը:

Արտաբյուջետային ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներից վերջին տասնամյակներում բավականին ավելացել են նաև մի շարք բարձրագույն հաստատություններում արտասահմանյան ուսանողների մասնագիտական կրթություն ստանալու դիմաց պարտադիր վճարումները պայմանագրային հարաբերությունների առկայության պայմաններում:

Այսպես, օրինակ, ներկայումս բավականին մեծ է իրանահայ և Սփյուռքի շատ այլ երկրներից մասնագիտություն ստացողների թիվը: Այսօր Հայաստանի բուհերում տարբեր մասնագիտությունների գծով սովորում են բավականին թվով ուսանողներ (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում [5]

	2006	2007	2008	2009	2010
Օտարերկրյա ուսանողների թվաքանակը, ընդամենը	4239	4230	4011	3089	3316

Աղյուսակի տվյալներից երևում է, որ չնայած օտարերկրյա ուսանողների թիվը վերջին տարիներին ունեցել է նվազման միտում. 2006թ., 4239 օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի դիմաց 2010թ. այն կազմել է

⁵Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011թ., էջ 143-144:

3316 ուսանող, այնուամենայնիվ նրանց համար տարբեր ուսումնական հաստատություններում ուսուցման կազմակերպումը դարձյալ հանգեցրել է արտաբյուջետային ֆինանսական միջոցների բավականին աճի:

Արտաբյուջետային միջոցների ձևավորման կարևոր աղբյուր է նաև առանձին բուհերում մասնագետ կադրերի վերապատրաստման գործընթացի կազմակերպումը, որտեղ բուհերի նախկին շրջանավարտները լայն հնարավորություն են ստանում մասնակցելու վերապատրաստման ուսուցման գործընթացներին, որի համար պայմանագրային հիմունքներով նրանց հիմնարկությունների կողմից կատարվում են համապատասխան վճարումներ, ինչը և նպաստում է այդ հաստատություններում արտաբյուջետային ֆինանսական միջոցների ավելացմանը:

Այս առումով առաջարկվում է հետևողականություն ցուցաբերել հանրապետության բուհերում արտասահմանյան ուսանողների հետ տարվող կրթական աշխատանքի որակական հատկանիշների բարձրացման գործում, որը կարող է նպաստել հանրապետությունում օտարերկրյա ուսանողների թվի հետագա ավելացմանը:

Բարձրագույն կրթության համակարգի հաստատություններում արտաբյուջետային ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուր է ծառայում նաև հաստատությունների կողմից պայմանագրային հիմունքներով գիտահետազոտական թեմաների շուրջ աշխատանքների կազմակերպումը, որի համար սահմանված նորմատիվներով կատարվում են համապատասխան հատկացումներ, որպես արտաբյուջետային ֆինանսական միջոցներ, որոնց հաշվին հաստատությունները կարող են ձեռք բերել համակարգիչներ և զանազան այլ սարքավորումներ, ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ ձևով կազմակերպելու նպատակով:

Այս առումով առաջարկվում է հնարավորության սահմաններում ընդլայնել բարձրագույն հաստատություններում ամբիոնների կողմից գիտահետազոտական թեմաներով կատարվող աշխատանքների շրջանակները, որոնք արտաբյուջետային ֆինանսական միջոցների ավելացման առումով ունեն կարևոր նշանակություն:

Առանցքային հասկացություններ. բյուջետային ֆինանսավորում, արտաբյուջետային ֆինանսավորում, վճարովի ուսուցում, անվճար ուսուցում, հեռակա ուսուցում, համայնքային բյուջե, զանձապետական միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Захарчук Л.А. Экономика образовательного учреждения. М., 2011.
2. Беляков С.А. Экономика образования. М., 2002.
3. «Շրթնորյունի մասին» ՀՀ օրենքը, հոդված 27, 14.04.1999թ.:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Երևան, 2011թ.:

УСОВЕРШЕНСТВОВАНИЕ НАПРАВЛЕНИЙ ВНЕБЮДЖЕТНОГО ФИНАНСИРОВАНИЯ В СФЕРЕ ОБРАЗОВАНИЕ

А.Ш. Хачатрян

Резюме

Для расширения деятельности бюджетных заведений в хозяйственных масштабах необходимо исследовать отношения, характерные финансам, связанные с формированием финансовых направлений, с осуществлением их оборотов.

Это обусловлено тем, что образовательная система требует довольно большие финансовые средства, основную часть которых составляют бюджетные средства.

Их наличием обусловлено формирование дополнительных финансовых средств.

Использование внебюджетных среды обосновывает также гражданским кодексом, бюджетными законами, принятыми решениями и нормативными, принятыми со стороны министерств просвещения и финансов.

Ключевые понятия: *бюджетное финансирование, внебюджетное финансирование, платное обучение, бесплатное обучение, дневное обучение, заочное обучение, общинный бюджет.*

THE ADVANCED WAYS OF BUDGETARY FINANCING OF THE
EDUCATIONAL SYSTEM

H.SH. Khachatryan

Summary

For the expansion of the activity of budgetary institutions on economics scale it is necessary to investigate peculiar to finance relations attached to forming lines of financial means and realizing their circulation.

It is conditioned by the fact that educational system demands rather great amounts of financial means, the main part of which makes up budgetary means. The formation of the supplementary financial means depends on their presence. The usage of the budgetary means is also substantiated by the civil code, budgetary laws, the resolution and normative acts passed by the ministries of Finance and education.

Key concepts: *budget financing, budgetary financing, paid training, free training, tay-time course, correspondence course, community budget, treasury means.*

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ն.Լ. Կիրակոսյան


«Բոլոր այն ամենից, ինչ որ ասվեց և արվեց,
ավելի շատ ասվել է, քան արվել»

ԱճՈՆ

Կրթության ոլորտում ձևավորվել, ամրապնդվել և լայն տարածում են գտել ուսուցման, դասավանդողի և ունկնդիրների փոխհարաբերությունների, համագործակցության երեք ձև [1, 23], որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունները: Դրանք են.

1. պասիվ ուսուցում,
2. ակտիվ ուսուցում,
3. ինտերակտիվ ուսուցում:

Պասիվ ուսուցումը ուսուցման, դասավանդողի և ունկնդիրների միջև համագործակցության ձև է, որի դեպքում դասավանդողը հիմնական գործող անձն է և ղեկավարում է ուսուցման գործընթացը, իսկ ունկնդիրները հանդես են գալիս պասիվ լսողի դերում, ենթարկվելով դասավանդողի հրահանգներին (տես գծանկար 1):




Գծանկար 1

Պասիվ ուսուցման ժամանակ դասավանդողի և ունկնդիրների միջև կապը արտահայտվում է հարցումների, ինքնուրույն, ստուգողական աշխատանքների և նմանատիպ այլ աշխատանքների միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և ունկնդիրների կողմից

ուսուցման ծրագրի յուրացման տեսանկյունից, այս մեթոդի արդյունավետությունը շատ փոքր է: Չնայած դրան, այն ունի նաև դրական կողմեր: Գա դասավանդողի համեմատաբար թեթև պատրաստվածության աստիճանն է և համեմատաբար մեծ ծավալի ուսուցողական նյութի մատուցումն է ուսուցման սահմանափակ ժամանակահատվածում:

Ակտիվ ուսուցումը դասավանդողի և ունկնդիրների համագործակցության ձև է, որի դեպքում նրանք փոխազդում են միմյանց վրա, և ունկնդիրները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ, ավելին՝ դասավանդողը և ունկնդիրները նույն հարթության վրա են, այսինքն իրավահավասար են (տես գծանկար 2):




Գծանկար 2

Եթե ուսուցման պասիվ մեթոդները ենթադրում են փոխգործակցության ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդները՝ դեմոկրատական ոճը:

Շատերը ակտիվ և ինտերակտիվ ուսուցումները միջև հավասարության նշան են դնում [6]: Սակայն չնայած ընդհանրություններին, դրանք ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ ուսուցումը կարելի է դիտարկել որպես ակտիվ ուսուցման ավելի ժամանակակից ձև:

Ինտերակտիվ (intel-փոխադարձ, act-գործել) նշանակում է համագործակցել, ինչ-որ մեկի հետ գրուցել, երկխոսության մեջ մտնել: Ի տարբերություն ակտիվ ուսուցման, ինտերակտիվ ուսուցումը կողմնորոշված է ուսուցման գործընթացում ունկնդիրների ակտիվության էլ ավելի բարձրացմանը (տես գծանկար 3):

Ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին երկխոսություն է, որի ընթացքում տեղի է ունենում համագործակցություն դասավանդողի և



Գծանկար 3

ունկնդիրների, ինչպես նաև ունկնդիրների միջև:

Ինտերակտիվ ուսուցումը իրականացվում է մի շարք սկզբունքներով.

- ուսուցումը դասախոսություն չէ, այլ ընդհանուր աշխատանք,
- բոլոր ունկնդիրները անկախ տարիքից, սոցիալական կարգավիճակից, աշխատանքի վայրից հավասար են,
- յուրաքանչյուր ունկնդիր ցանկացած հարցի վերաբերյալ սեփական կարծիքի իրավունք ունի,
 - պետք է քննադատել գաղափարը, այլ ոչ թե անձը,
 - դասընթացին հնչեցվածը գործունեության ուղեցույց չէ, այլ տեղեկատվություն մտածելու համար:

Ինտերակտիվ ուսուցման խնդիրներն են.

- ունկնդիրների մոտ հետաքրքրության առաջացում,
- դասընթացի արդյունավետ յուրացում,
- ունկնդիրների կողմից առաջադրված խնդրի լուծման տարբերակների ինքնուրույն որոնում,
 - ունկնդիրների միջև փոխհարաբերությունների, համագործակցության ձևավորում, թիմում աշխատելու ուսանում, ցանկացած տեսակետի, կարծիքի նկատմամբ համբերության դրսևորում, յուրաքանչյուրի խոսքի ազատության, արժանապատվության նկատմամբ հարգանք,
 - ունկնդիրների կարծիքի ձևավորում,
 - մասնագիտական և հաղորդակցման հմտությունների ու կարողությունների ձևավորում:

Ուսուցման այս ձևը ապահովում է դաստիարակչական խնդրի լուծու-

մը, քանի որ ուսուցանում է թիմային աշխատանքի, ընկերների կարծիքները լսելու կարողություն, ապահովում է բարձր մոտիվացիա, գիտելիքների կայունություն, երևակայության և ստեղծագործական մտքի զարգացում, ինքնաարտահայտման ազատություն, փոխադարձ հարգանք:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողի դերը կտրուկ փոխվում է. դադարելով կենտրոնական դեմք լինելուց՝ նա դառնում է գործընթացը կազմակերպող և կարգավորող, նախապես պատրաստում է անհրաժեշտ առաջադրանքները և ձևակերպում է խմբերում քննարկվելիք հարցադրումներն ու թեմաները, տալիս է խորհրդատվություն, վերահսկում է պլանի կատարման կարգը և ժամանակը:

Ունկնդիրները նույնպես ավելի ճկուն են դառնում, կոմունիկացիաների մեջ են մտնում միմյանց հետ, համատեղ լուծում դրված խնդիրները, հաղթահարում բախումները, գնում փոխզիջման:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ինտերակտիվ ուսուցումը թուլացնում է ունկնդիրների նյարդային լարվածությունը, թույլ է տալիս ուշադրությունը սևեռել դասընթացի գլխավոր հարցերի վրա:

Բոլոր այն գործընթացներից, որոնք ուղղված են բարելավելու կազմակերպության աշխատանքները, ինտերակտիվ ուսուցումը ամենաազդեցիկն է: Այն կիրառելի է և ղեկավարների, և աշխատողների համար: Ինտերակտիվ ուսուցումն անձնավորության կամ կազմակերպության զարգացման մեթոդ է: Այս ուսուցման ամենակարևոր կանոններից մեկը այն է, որ գործնական քայլերը և ուսուցումը ուղեկցում են միմյանց: Չի կարող լինել ուսուցում առանց քայլերի և քայլեր՝ առանց ուսուցման: Այդ պատճառով էլ ուսուցման գործընթացում պետք է ստեղծել հատուկ պայմաններ, որպեսզի ունկնդիրները կարողանան սովորել միմյանցից, թե ինչպես ավելի լավ կազմակերպեն իրենց ամենօրյա աշխատանքը: Սա իրական ունակություններ է պահանջում՝ կարողանալ սովորել իրական կյանքի դեպքերից, որովհետև քանի սովորում են, դրանք անփոփոխ չեն մնում:

Փաստորեն, ինտերակտիվ ուսուցումը թույլ է տալիս ունկնդիրներին ուղղորդել և վարժեցնել լուծելու խնդիրները միմյանց հետ համագործակցության միջոցով [2, 14]:

Ինտերակտիվ ուսուցման գլխավոր նպատակն է օգնել մարդկանց սովորելու իրենց և ուրիշների ներկա և անցյալ գործողություններից և կի-

րառել դրանք ապագայում: Հմտությունների միջոցով իրենց փորձը մեկը մյուսին փոխանցելով մարդիկ կարողանում են լուծել կազմակերպությանը վերաբերող կարևոր հարցերը կամ խնդիրները:

Հմտությունների ուսուցման նպատակներից է նախ մարդկանց միասին հավաքել, երկրորդ՝ խնդիրների լուծման և ուսուցման վերաբերյալ կարծիքներ փոխանակել, միմյանց աջակցել և խրախուսել: Սա նշանակում է, որ ինտերակտիվ ուսուցման համար կարևոր բաղադրիչ է մարդկանց մասնակցությունը ուսուցման գործընթացին: Իսկ մասնակցության պայմաններն են.

1. Յուրաքանչյուր ոք մասնակցում է կամավոր հիմունքներով: Չի կարելի ստիպել որևէ մեկին մասնակցելու:

2. Յուրաքանչյուր անձ պետք է ունենա կառավարման խնդիր, որի վերաբերյալ կցանկանա քայլեր ձեռնարկել:

3. Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է մտածի ներկայացված հարցերի շուրջ, արտահայտի կարծիքներ և մյուս մասնակիցներին վերաբերվի ինչպես իր ընկերներին:

4. Հստակ քայլեր ձեռնարկել և սովորել այդ քայլերից:

Ինտերակտիվ ուսուցումը խթանում է թիմային աշխատանքը և նպաստում է խնդիրների լուծմանը:

Ինտերակտիվ ուսուցումը իրականացվում է որոշակի ալգորիթմով՝ քայլերի հաջորդականությամբ [3, 61].

1. ինքնաներկայացում և «սառույցկոտրուկ»,

2. նպատակների սահմանում,

3. օրակարգի հաստատում,

4. խնդրի ներկայացում,

5. հարց ու պատասխան,

6. քննարկում,

7. ամփոփում, կիրառում, փորձարկում,

8. գնահատում,

9. փակում:

Ստորև ներկայացվում են այս քայլերը հաջորդականությամբ:

1. **Ինքնաներկայացում և «սառույցկոտրուկ»:** Ինտերակտիվ ուսուցման դեպքում դասավանդողը պետք է սկսի ներկայանալով, բացատրելով, թե ով է ինքը, թե ինչու է հատկապես ինքը վարում ուսուցումը, ինչքանով է

որակավորված և ինչի հիման վրա է այդ կարծիքին: Յուրաքանչյուր ունկնդիր նույնպես պետք է ներկայանա, նշելով իր անուն-ազգանունը, պաշտոնը (եթե աշխատող է): Այստեղ առաջնահերթ խնդիր է դասավանդողի և ունկնդիրների միջև կապի ստեղծումը: Այդ նպատակով աշխարհում լայնորեն կիրառվում է «սառույցկոտրուկի» մեթոդը [4, 57]: Այն խմբի լարվածությունը թուլացնելու, «ես» և «դուք»-ի կարծրատիպը «մենք»-ի փոխելու հիանալի եղանակ է: Սառույց կոտրելը օգնում է ունկնդիրներին թուլացնել լարվածությունը, իսկ դա էլ իր հերթին օգնում է, որ նրանք լինեն ավելի ուշադիր և մասնակցող: Դա հնարավորություն է ընձեռնում կառուցել թիմային մթնոլորտ: Սառույցկոտրուկի գործընթացը կարելի է իրականացնել հումորային, գվարճալի արտահայտությունների, պատմությունների, ինչպես նաև խաղերի միջոցով: Ամենաշատը կիրառվում են խաղերը, որոնց միջոցով բացահայտվում են ունկնդիրների անձնական հակումները, բնավորության գծերը, ինչն էլ նպաստում է միմյանց անձնապես ավելի լավ ճանաչելուն:

Այսպես, սառույցկոտրուկի ժամանակ կարելի է կիրառել հետևյալ խաղը:

Յուրաքանչյուր մասնակցի տալիս են թուղթ, որի վրա յուրաքանչյուր ունկնդիր գրում է հետևյալ հարցերի պատասխանները. «Ո՞րն է Ձեր սիրած ուտելիքը, կենդանին, շուն, զբաղմունքը, գույնը»: Ընդ որում, մեկը մյուսի պատասխանները չպետք է տեսնի: Պատասխանները հավաքելուց հետո դասավանդողը կարդում է դրանք բարձրաձայն, իսկ ունկնդիրները փորձում են գուշակել, թե պատասխաններից որն ում է պատկանում: Յուրաքանչյուր ճիշտ գուշակված պատասխանի համար տրվում է մեկ միավոր: Այն ունկնդիրը, ով ամենաշատ միավորները կհավաքի, կստանա մրցանակ:

Սառույցկոտրուկի գործիքներից մեկը «ճիշտ պահը որսալու» կարողությունն է: Այն չպետք է շատ երկար լինի, հակառակ դեպքում՝ ուսուցման հիմնական նպատակը կմնա անհասանելի: Միաժամանակ, չպետք է շատ կարճ լինի, որ ունկնդիրների մոտ տպավորություն չստեղծվի, թե այն ընդամենը վարժություն է: Եթե ուսուցումը տևելու է ամբողջ օրը, ապա սառույցկոտրուկին կարելի է հատկացնել կես ժամ, իսկ եթե ուսուցումը տևելու է մեկ ժամ՝ ապա մեկ կամ երկու րոպե:

Փաստորեն, սառույցկոտրուկը հնարավորություն է տալիս ստեղծել համախմբվածություն՝ հիմնված վստահության և փոխըմբռնման վրա:

2. Նպատակների սահմանում: Ինտերակտիվ ուսուցման ընթացքում դասավանդողը ուղղորդում է ունկնդիրներին դասընթացի նպատակների իրագործմանը, ինչպես նաև մշակում է դասընթացի պլանը, որը սովորաբար իրենից ներկայացնում է ինտերակտիվ վարժություններ և խնդիրներ, որոնց կատարումով ունկնդիրը յուրացնում է դասընթացի նյութը:

Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործունեության հատուկ ձև է, որը ենթադրում է կոնկրետ և կանխատեսելի նպատակներ: Նպատակը կայանում է նրանում, որ ստեղծվի ուսուցման հարմարավետ պայմաններ, որտեղ ունկնդիրը «տեսնում» է իր առաջադիմությունը, ստանում գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև ստեղծվում է բազա՝ ուսուցման ավարտից հետո խնդիրների լուծման համար:

3. Նորմերի, կանոնների սահմանում: Ունկնդիրների հետ պետք է սահմանել լսարանի ուսուցման ողջ գործընթացի համար կանոններ, որոնց մեջ մտնում է դասընթացը սկսելու և ավարտելու, ընդմիջումների ժամանակացույցը: Սահմանվում են նաև բոլորի համար ընդունելի էթիկայի նորմեր ուսուցման ողջ գործընթացի համար, ինչպես նաև դասընթացի ընթացքում ունկնդիրների գործունեության շրջանակը: Գոյություն ունեն խմբում ինտերակտիվ ուսուցմամբ աշխատելու օրինակելի կանոններ.

- լինել ակտիվ,
- հարգել մասնակիցների կարծիքը,
- լինել բարյացակամ,
- լինել պարտաճանաչ, պատասխանատու,
- չընդհատել,
- լինել բաց համագործակցելու համար,
- լինել հետաքրքրված,
- ձգտել ճշմարտության,
- լինել ճկուն,
- հարգել խմբում աշխատելու կանոնները:

Կարևոր է որոշել, թե ովքե՞ր են ակտիվ ունկնդիրները և ինչպե՞ս կարելի է ստանալ նրանց աջակցությունը սկզբնական ժամանակաշրջանում: Դրա համար անհրաժեշտ է հարցնել, թե ո՞վ կարող է օժանդակել դասընթացին և խոչընդոտել:

Հիմնական ընդդիմադիրներին և կողմնակիցներին հարկ է հնարավոր-

րություն ընձեռնել արտահայտելու իրենց կարծիքը: Եվ կողմնակիցները, և ընդդիմադիրները ինչ-որ բան կսովորեն միմյանցից:

4. **Օրակարգի հաստատում:** Մասնակիցները հաստատելով օրակարգը, կատարում են ժամանակի բաշխում: Եթե դասընթացը ծավալուն է և շատ բան պետք է հիշել, ապա կարելի է օրակարգից բացի օգտագործել նաև «checklist», ինչը ևս մեկ միջոց է համոզվելու համար, որ ամեն ինչ մանրամասն կատարված է: «Checklist»-ը ունի հետևյալ տեսքը [5,132].

5.

	Արվել է	Դիտողություններ	Ժամկետ/դատողություններ
Օրակարգ			
Առաջնայնություններ			
Ունկնդիրները			
Ժամանակը, տևողությունը			
Օրակարգին համապատասխան անհրաժեշտ սարքավորումներ, պարագաներ			
Ընդմիջումներ, նախաճաշ			

6. **Խնդրի ներկայացում:** Շատերը սովորություն ունեն միանգամից քայլեր ձեռնարկելու առանց իրավիճակը և հնարավորությունները լավ ուսումնասիրելու: Սակայն խնդիրը լուծելու համար կարևոր է դրա ճիշտ ձևակերպումն ու ներկայացումը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել իրավիճակը և հնարավորությունները: Իսկ դա կարող է բավական ժամանակ խլել:

Ուսումնասիրությունը իրականացնելու համար պետք է հարցադրումներ անել: Հարցերը պետք է վերաբերեն փաստերին և կարծիքներին: Այդ պատճառով էլ մարդկանց անհրաժեշտ է հարցնել ոչ միայն այն մասին, թե նրանք ի՞նչ գիտեն, այլ նաև ի՞նչ կարծիք ունեն իրավիճակի վերաբերյալ, ի՞նչ են արել և ի՞նչ են անում այդ խնդիրների առնչությամբ:

Խնդրի ներկայացման հիմքում պետք է դրվի ինտերակտիվ ուսուցման կարևոր սկզբունքներից մեկը՝ մյուսներից և մյուսների հետ սովորել: Որոշ մարդիկ նախընտրում են սովորել խմբերում՝ միմյանց հետ խոսելու

միջոցով, այնուհետև դրանք զարգացնել անհատական ընթերցումների և մտորումների միջոցով: Մյուսները նախնորում են սկսել ինքնուրույն կարգալ և մտածել, մինչ մյուսների հետ քննարկելը: Խնդիրը այնպես պետք է ներկայացնել, որ դրա լուծումը երկու տեսակի մարդկանց կարիքներն էլ բավարարի:

7. Հարց ու պատասխան: Ինտերակտիվ ուսուցման առանցքային կետերը հարցեր տալու պահանջի առկայությունն է: Պայմանականորեն տարբերում են հարցերի յոթ խումբ [6, 56].

- Իրավիճակային հարցեր: Հարցերի այս խումբը վերաբերում է տվյալ խնդրի լուծմանն ուղղված հնարավորություններին և սպառնալիքներին, ազդող գործոններին:

- Անձնական հարցեր: Հարցերի այս խումբը արտահայտում է ունկնդիրների անձնական մոտեցումը խնդրի վերաբերյալ, ներառյալ նրա առաջնության նախապատվությունը, աշխատանքի նախասիրությունները, ժամանակի կառավարումը և աշխատանքի կազմակերպման սկզբունքներն ու փիլիսոփայությունը:

- Կիրառական հարցեր: Հարցերի այս խմբով պարզաբանվում է, թե ի՞նչ է արել կամ անում տվյալ ունկնդիրը, որպեսզի հաղթահարի աշխատանքային խոչընդոտները:

- Կարիերային վերաբերող հարցեր: Այստեղ նշվում են անձնական փորձից բխող հարցերը, որոնք ձեռք են բերվել նախորդ աշխատանքից և պահանջում են ուսուցման գործընթացի վերանայում:

- Ծրագրին վերաբերող հարցեր: Այս հարցերը վերաբերում են նրան, թե ինչպես են մարդիկ տեսնում իրենց դերը և տեղը խնդրի իրականացման գործում, թե ինչպիսի ներդրում կարող են ունենալ և ինչ դասեր քաղել:

- Համեմատական հարցեր: Այս հարցերի միջոցով նշվում է, թե ունկնդիրը ի՞նչ է սովորել գրքերից և ամսագրերից, մյուսների աշխատանքի ուսումնասիրությունից և ինչպե՞ս է այն օգտագործել կամ պատրաստվում օգտագործել:

- Քաղաքականության հարցեր: Այս հարցերը վերաբերում են ինտերակտիվ ուսուցման կազմակերպչական, թիմային և առաջնորդման ռազմավարություններին:

Հարցերը պետք է լինեն ավելի ազատ և չուղղորդող, օրինակ՝ «Ելնելով

ներկա իրավիճակից՝ հաջողության հասնելու համար ինչպիսի՞ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել»:

Հարցերը կարող են վերաբերել կամ խնդրին, կամ պատասխանին՝ ի՞նչ պետք է արվի, ու՞մ կողմից, ե՞րբ և ինչպե՞ս:

Հարկ է խուսափել առաջնորդող այնպիսի հարցերից, ինչպիսին է «Չե՞ք կարծում, արդյոք, գործերը կլավանան, եթե դուք...», քանի որ այս մոտեցմամբ բացահայտվում է պատասխանը և թե ինչ պետք է անի այդ մարդը: Պատասխանները պետք է լինեն այնպիսին, որ՝

- հիմնավորեն անձի կողմից ձեռնարկվող քայլերը,
- ցույց տան, թե ինչ են սովորել ձեռնարկված քայլերից,
- ինչ են իրենք արել կամ անում սովորածը կիրառելու համար:

Հարց ու պատասխանը այնպես պետք է կառուցվի, որ փարատվեն ունկնդիրների կասկածները, բացահայտվի, թե ինչպես դրանք հաղթահարել, և ոչ թե մատնացույց անել այն, ինչը որոշակի է: Յուրաքանչյուր ունկնդիր ուսուցման գործընթացում հայտնվում է անորոշ իրավիճակում, որն էլ ծնում է կասկածներ և մտավախություններ՝ ի՞նչ և ինչպե՞ս անելու հարցերում: Ունկնդիրները որքան շատ կարողանան սովորել իրենց կասկածները փարատել և հասկանալ մյուսների տեսանկյունը, այնքան ավելի հավանական է, որ այդ հարցն ավելի պարզորոշ կդառնա: Այդ պատճառով էլ ուղղակի կապ գոյություն ունի կասկածների և հարցերի միջև: Արդյունավետ հարցեր տալու արվեստը և այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ մարդիկ կարող են բանավիճել և սովորել միմյանցից, չափացանց կարևոր հանգամանք է, որը պետք է միշտ ուշադրության կենտրոնում պահել:

8. Քննարկում: Քննարկման իմաստը միմյանցից սովորելն է: Այդ պատճառով հմտությունների ուսուցման խմբերում պետք է խրախուսել միմյանցից սովորելը: Սա հզոր միջոց է ազատ և իմաստալից քննարկումներ անցկացնելու նպատակով, որտեղ մարդիկ ավելի շատ հասկանում են միմյանց, քան վիճում: Քննարկումները կարող են բարձրացնել ինքնավստահությունը և մարդկանց ներգրավվելու ցանկությունը: Սովորաբար, սա որոշիչ դեր է խաղում հաջողության և, ինչու ոչ, նաև տապալման հարցերում:

Ինտերակտիվ ուսուցման գործընթացում իշխում է զրուցառճը: Սակայն օժանդակ տեսողական միջոցները մույնպես կարևոր դեր են խաղում:

Գրատախտակին հիմնական հարցերի նշումը շատ դեպքերում կարող է ավելի կենտրոնացնել քննարկումները և արագացնել փոխադարձ ընկալումը և համաձայնության գալը:

Անհրաժեշտ է խրախուսել ունկնդիրներին թղթի վրա ներկայացնել իրենց մտքերը մինչ քննարկումը: Այս ձևով պարզորոշ կլինեն քննարկումների մակարդակի և խնդիրների լուծման բարելավման արդյունքները: Գրատախտակին գրառումների միջոցով հնարավոր է հասկանալ յուրաքանչյուրի մտահղացումը, գաղափարը, և դրանով բարելավել խնդիրների լուծումը: Սա և՛ հմտություն է, և՛ ուսուցման գործընթաց, որը մեկ քայլ առաջ է տանում խնդիրների լուծումը:

9. Ամփոփում, կիրառում, փորձարկում: Պետք է խրախուսել ունկնդիրներին գրելու այն, ինչ որ պետք է անեն ուսուցման ավարտից անմիջապես հետո, ինչպես նաև նաև այն, թե ինչ են սովորել և ինչ կարծիք ունեն արդյունքների վերաբերյալ: Այս գրառումները պարզաբանման և հետագա քայլերի հիմք են: Գրանցելով առաջխաղացումները՝ դրանով օգնել մարդկանց սովորելու և ճանաչելու տարբեր տեսակետներ, միաժամանակ առաջ քաշելով խնդրի լուծման տարբերակներ:

Ինտերակտիվ ուսուցման արդյունքները տարբեր են լինում: Գրանք ձեռնարկված քայլերի չափերի արդյունքներ են: Ուսուցման վերջում յուրաքանչյուր ունկնդիր պետք է կարողանա նշել, թե ինչ է ստացել իբրև արդյունք:

10. Գնահատում: Գործողությունը քայլերի խումբ է ցանկալի արդյունք ստանալու նպատակով: Ուսուցումը գործընթաց է, որը թույլ է տալիս ունկնդիրներին հասկանալու, թե ինչ են իրենք անում և ի վիճակի են արդյունք ստեղծելու, ընդ որում նախընտրելի է արագ և արդյունավետ ձևով և քիչ ծախսումներով:

Ինտերակտիվ ուսուցման արդյունավետությունը կարելի է գնահատել հետևյալ հարցերի պատասխաններով.

- Ի՞նչը ամենամեծ տպավորություն թողեց Ձեզ վրա:
- Դասընթացի ընթացքում ի՞նչը օգնեց Ձեզ լուծել խնդիրը և ի՞նչը խանգարեց:
- Ի՞նչը զարմացրեց դասընթացի գործընթացում:
- Ինչո՞վ էիք առաջնորդվում որոշումների կայացման գործընթացում:

- Ինչպե՞ս եք դուք գնահատում Ձեր գործողությունները և խմբի գործողությունները:

- Եթե Դուք կրկին մասնակցեիք այս դասընթացին, ի՞նչը կփոխեիք Ձեր վարքագծում:

11. Փակում:

Ինտերակտիվ ուսուցումը պրոֆեսիոնալ մենեջմենթի ապագան է: Այն միաժամանակ և՛ ուսուցում է, և՛ հմտությունների ու կարողությունների ձեռք բերում, և՛ կառավարման ձև:

Առանցքային հասկացություններ. *ինտերակտիվ ուսուցում, ինտերակտիվ ուսուցման սկզբունքներ, ինտերակտիվ ուսուցման խնդիրներ, դասավանդող, ունկնդիրներ, սառույցկտրուկ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ինտերակտիվ ուսուցման կանոններ:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Панфилова, А.П. Инновационные педагогические технологии: Активное обучение: учебное пособие, М.: Издательский центр «Академия», 2009, 192 с.
2. Кларин М.В. Интерактивное обучение – инструмент освоения нового опыта //Педагогика. 2000, № 7, с. 12-18.
3. Современные образовательные технологии: учебное пособие / под ред. Н.В. Бордовской. 2-е изд., М.: КНОРУС, 2011, 432 с.
4. Вислобоков Н.Ю. Технологии организации интерактивного процесса обучения // Информатика и образование, 2011. № 6, с. 111-114.
5. Gudykunst W.B., Hammer M.R. Basic training design: approaches to intercultural training// Landis D., Brisling R.W.: Handbook of intercultural training. Vol. 1. Issues in theory and design. New York, 1983. pp. 118-154.
6. Антони М.А. Интерактивные методы обучения как потенциал личностного развития студентов, Психология обучения. 2010, № 12, с. 53-63.

МЕТОДИЧЕСКИЕ ВОПРОСЫ ИНТЕРАКТИВНОГО ОБУЧЕНИЯ

Н.Л. Киракосян

Резюме

В статье рассмотрены некоторые методические вопросы интерактивного обучения. Преставлены особенности разных форм обучения, их различия и сходства. Подчеркнута важность и значимость интерактивного обучения в системе современного образования. Выявлена сущность, принципы и задачи интерактивного обучения. Особое внимание уделено алгоритму осуществления интерактивного обучения, его шагам, подробно исследован весь комплекс этих шагов.

Ключевые понятия: *интерактивное обучения, принципы интерактивного обучения, задачи интерактивного обучения, преподаватель, слушатель, методы интерактивного обучения, правила интерактивного обучения.*

METHODICAL ISSUES OF INTERACTIVE TRAINING

N.L. Kirakosyan

Summary

In the article some methodical issues of interactive training are studied. We have represented different features of the training, their differences and similarities. We have underlined the importance of interactive training in modern educational system, revealed the nature, the objectives, the principles of the latter and the problems of implementing it.

Special attention is paid to the algorithm (implementation steps) of the interactive training: complex of these steps are considered very particularly and in this way proving the advantages of interactive training.

Key concepts: *interactive training, the principles of interactive training, the issues of interactive training, lecturer (teacher), listener (auditor), ice cracker, the methods of interactive training, the rules of interactive training.*

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Լ.Մ. Ավանեսյան

ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում ավելի ակնառու է դառնում տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը: Տնտեսության զարգացման տարաբնույթ ռազմավարական ծրագրերն այսօր տնտեսության վրա ազդեցության ժամանակակից պետության մեխանիզմներ են, ինչը թույլ է տալիս տնտեսության զարգացումը տանել հասարակության համար առավել շահավետ ուղիով: Նմանատիպ նպատակային քաղաքականության միջոցառումներից է արդյունաբերական քաղաքականությունը:

Արդյունաբերական քաղաքականությունը միանշանակ մեկնաբանվող երևույթ չէ: Ընդհանուր առմամբ կառավարության կողմից իրականացվող արդյունաբերական քաղաքականությունն արտահայտվում է ծրագրերի ու հայեցակարգերի մշակմամբ: Նման ծրագրերի նպատակն է հայրենական արդյունաբերության շրջանակներում գերակա ոլորտների առանձնացումը և դրանց զարգացման խթանումը: Առհասարակ, ինչպես վկայում է երկրների զարգացման փորձը, արդյունաբերական քաղաքականության հիմքում տարբեր գործիքներ են, բնականաբար նաև տարբեր մոդելներ:

Միզագալին այրակտիկայում, կիրառվում են արդյունաբերական քաղաքականության տարբեր մոդելներ, մասնավորապես, **արտահանմանն ուղղված մոդելը**: Այս մոդելի էությունը արտահանմանն ուղղված արտադրության համաչափ խրախուսման մեջ է: Խրախուսման հիմնական մեթոդներն ուղղված են մրցունակ ճյուղերի զարգացմանն ու աջակցմանը: Առաջնային խնդիր է մրցունակ արտադրանքի արտադրությունը և դրանով համաշխարհային շուկա ներթափանցելը: Պետությունն իրականացնում է այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ հարկային և մաքսային արտոնյալ սակագների սահմանումը, արտահանող կազմակերպությունների համար վարկավորման, արտարժույթի ցածր փոխարժեքի, արտահանող ճյուղերի գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը և այլ միջոցներ:

Այս մոդելի կարևոր առավելություններից են երկրի ներգրավումը միջազգային շուկայում և համաշխարհային ռեսուրսների և տեխնոլոգիաների հասանելիությունը, տնտեսության հզոր մրցունակ ճյուղերի զարգացումը, որոնք ապահովում են երկրի բյուջեի մուտքերի մեծ մասը, արտարժույթի ներգրավումը և դրանց ներդրումը ազգային տնտեսության զարգացման մեջ: Արտահանմանն ուղղված մոդելի կիրառման դրական և ցայտուն օրինակներ կարող են լինել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ճապոնիան, Հարավային Կորեան, Չիլին, Մալազիան, Թայլանդը, Սինգապուրը, վերջին ժամանակներս նաև Չինաստանը: Կան նաև բացասական օրինակներ՝ Վենեսուելան, Մեքսիկան:

Արտահանմանն ուղղված մոդելի կիրառման բացասական գործոնները կապված են հիմնականում հումքի արտահանման հետ, քանի որ արտահանման արտադրանքի մեջ դրա չափից ավելի առկայությունը կարող է բերել ազգային արդյունաբերության կառուցվածքի պարզեցմանը, կառավարման համակարգերում կոռուպցիայի մեծացմանը, մշակվող արդյունաբերական երկրից մարդկային և ֆինանսական ռեսուրսների արտահոսքի (ինչը և պատահեց Վենեսուելայում), ինչը երկարաժամկետ հատվածում կարող է իր հերթին բերել վերամշակող արդյունաբերական երկրի մրցունակության անկմանը, տնտեսական աճի արագության և կուտակվող գիտելիքների մակարդակի նվազմանը:

Արդյունաբերությունը Հայաստանում ավանդաբար եղել է տնտեսության հիմքը: Արդյունաբերությունը տնտեսության այն ոլորտն է, որի վիճակով, սկսած Հայաստանի անկախացման առաջին իսկ օրվանից, մտահոգված են եղել թե՛ կառավարությունը և թե՛ ժողովուրդը: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ մտահոգությունը, որ պայմանավորված է մեր ժողովրդի մտավոր զարգացման բարձր մակարդակով, հիմնված է այն մտավախության վրա, որ արդյունաբերական լավագույն ավանդույթներ ունեցող երկրում այն չպահպանելը կնշանակի հրաժարվել համազգային նպատակներին հասնելուց:

Հանրապետության արդյունաբերության ներկա վիճակը բնութագրվում է մի շարք խնդիրներով, որոնք, հիմնականում, ընդհանուր են հանրապետության գրեթե բոլոր արդյունաբերական ճյուղերի համար: Որոնցից են՝

- արդյունաբերության միկրո մակարդակում հետազոտությունների

և վերլուծությունների պակասը, տեղեկատվական բազայի բացակայությունը,

- ընկերությունների ռազմավարական զարգացման ծրագրերի բացակայությունը,
- ներքին շուկայի ոչ լիարժեք պաշտպանվածությունը,
- հիմնականում ներմուծված հումքի վրա արտադրության հիմնվածությունը,
- Հայաստանում արտադրվող հումքային արտադրատեսակների վերջնական արտադրանքի վերածման շրթայի բացակայությունը,
- բարձր տրանսպորտային ծախսերը,
- ձեռնարկությունների կողմից, հատկապես փոքր և միջին, մարքեթինգի իրականացման ցածր կարողությունները,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակությունը,
- վարկային միջոցների անմատչելիությունը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում էլ ավելի սրվեցին վերոնշյալ հիմնախնդիրները: Ավելին, արդյունաբերական արտադրանքի պահանջարկի կտրուկ անկման հետևանքով, ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում նկատվեց անկում արդյունաբերական ճյուղերում: Այն հանգեցրեց որոշ արտադրությունների կրճատման կամ փակմանը և որպես հետևանք՝ աշխատատեղերի քանակի նվազման, որն իր ուղղակի բացասական ազդեցությունն ունեցավ բնակչության սոցիալական վիճակի վրա: Ուստի, այսօր հրատապ է դառնում տնտեսության կարևորագույն ճյուղի՝ արդյունաբերության ակտիվացումը և դիվերսիֆիկացումը, հիմնական շեշտը դնելով հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ) վրա:

Կարևորվում է ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում: ՓՄՁ-ն հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկը:

Ելնելով վերոնշյալ հարցադրումներից, Հայաստանում նպատակա-

հարմար է կիրառել արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականությունը, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Ներքին շուկայի փոքր ծավալները: Նույնիսկ ներմուծման փոխարինման քաղաքականության կիրառումը վերջիվերջո պետք է հանգեցնի արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականությանը, քանի որ ներքին շուկայի փոքր ծավալները արագորեն կարող են լրացվել:

- Արտարժույթի ներհոսքի դրական ազդեցությունը տնտեսության մյուս ճյուղերի վրա: Ներմուծման փոխարինման քաղաքականության պարագայում դա հնարավոր չէ ապահովել:

- Տեղական ապրանքների մրցունակության բարձրացումը: Ներմուծման փոխարինման քաղաքականության կիրառման դեպքում տեղական ապրանքները համաշխարհային շուկայում անմրցունակ են լինում, քանի որ հովանավորչական քաղաքականության պատճառով ազգային տնտեսությունը տարանջատվում է համաշխարհային տնտեսությունից:

- Հովանավորչական քաղաքականության միջոցառումների սահմանափակությունը: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ է, պարտավոր է սահմանափակել հովանավորչական քաղաքականության գործիքակազմը:

Վերոնշյալ հարցադրումների շրջանակներում, պետական աջակցությունը մասնավորապես կարող է իրականացվել հետևյալ ուղղություններով.

☞ Արդյունաբերության տարբեր ճյուղերի համար կոնֆերանսների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում այլ երկրների համապատասխան ոլորտների մասնագետների, արդյունաբերական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ Հայաստանի կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն կունենան ոչ միայն մասնագիտական հարցերի վերաբերյալ կարծիքներ փոխանակել, այլ նաև զարգացնել գործարար կապերի ցանցը:

☞ Չռեմարկությունների ներկայացուցիչների աշխատանքային այցերի կազմակերպումը այլ երկրներ, որոնց ընթացքում իրենք հնարավորություն կունենան ոչ միայն այցելել այդ երկրների կազմակերպությունները, այլ նաև մասնակցել դասընթացների այնտեղի առաջատար ուսում-

նական հաստատություններում, որը կնպաստի իրենց մասնագիտական կարողությունների բարձրացմանը: Այս հարցում կարևոր դեր կարել էն խաղալ Սփյուռքի ներկայացուցիչները:

✍ Արդյունաբերական կազմակերպությունների ղեկավարների ընդգրկում պետական պատվիրակություններում, միջկառավարական հանձնաժողովներում:

✍ Հանդիպումների ընթացքում պատվիրակությունների կողմից արտահանման ուղղվածություն ունեցող հեռանկարային ճյուղերի և կազմակերպությունների արտադրանքի ներկայացում:

✍ Արտասահմանում ՀՀ դեսպանատների առևտրային ներկայացուցիչների ինստիտուտի դերի բարձրացում:

Այսպիսով, արդյունաբերական քաղաքականությունը միջոցառումների համակարգ է, որն ուղղված է ազգային տնտեսության զարգացմանը, նրա ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների, ժամանակակից տեղեկատվական և այլ ծառայությունների, մարդկային կապիտալի զարգացմանը: Նրա ակտիվ և հետևողական իրականացումը, որն ուղղված է տնտեսության նորացմանը և տնտեսավարման ինովացիոն եղանակների ներդրմանը, հնարավորություն է տալիս բարձրացնել բնակչության կենսամակարդակը, կրճատել աղքատությունը և արժանի տեղ գրավել համաշխարհային տնտեսության մեջ: Արդյունաբերական քաղաքականության հիմնական նպատակն է՝ ապահովել պետական կարգավորմամբ արդյունաբերության ներդաշնակ զարգացումը և վերացնել տնտեսական աճը արգելակող խոչընդոտները: Շուկայական տնտեսությունում արդյունաբերական քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված է տնտեսության հետագա կայունացմանն ու զարգացմանը հետևյալ ուղիներով. ազատական տնտեսական քաղաքականության շրջանակներում մրցակցային միջավայրի բարելավում, ներդրումային միջավայրի ակտիվացման հետևողական աջակցում, միջազգային նորմերին համապատասխանող և գործարարության զարգացմանը նպաստող ներդաշնակ օրենսդրական դաշտի ստեղծում և կատարելագործում, տնտեսության ինտեգրում համաշխարհային տնտեսությանը, արտահանման հանդեպ ներմուծման բացասական հաշվեկշռի կրճատում, արտահանման կառուցվածքում գիտատար արտադրատեսակների մասնաբաժնի

ավելացում, ազգային ինովացիոն համակարգի ձևավորում ու զարգացում, գիտության և տնտեսության իրական հատվածի միջև կապերի սերտացում, մտավոր սեփականության, հեղինակային և հարակից իրավունքների պահպանության համակարգի հետագա կատարելագործում, փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության համակարգի շարունակական կատարելագործում, տեղեկատվական տեխնոլոգիաների զագացման համար նպաստավոր պայմանների ապահովում: Այդ առումով զարգացած արդյունաբերական երկրների արդյունաբերական արտադրության մարտավարությունը կառուցվում է նորագույն տեխնոլոգիաների և վարչարարական լուծումների հիմքի վրա: Ընդ որում նախատեսված է աջակցություն ցուցաբերել այն ձեռնարկություններին (անկախ սեփականության ձևից), որոնք ապահովում են տնտեսական կայունությունը՝ թողարկելով միջազգային շուկայում մրցունակ արտադրատեսակները, նպաստում են ներքին և արտաքին կողպերացիայի զարգացմանը, արտաքին ներդրումների ներգրավմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

***Առանցքային հասկացություններ.** փոքր և միջին ձեռնարկություններ, տնտեսության պետական կարգավորում, արդյունաբերական քաղաքականություն, արտահանման խթանում:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն 2009 թ.
2. ՀՀ հարկային վարչարարության ռազմավարություն 2008 -2011 թթ.
3. Baier, S. L. and J.H. Bergstrand, 2004, Economic Determinants of Free Trade Agreements, Journal of International Economics, vol. 64, no. 1.
4. Baier, S. L. and J.H. Bergstrand, 2009, Bonus vetus OLS: A simple method for approximating international trade-cost effects using the gravity equation, Journal of International Economics, vol. 77, no. 1, pp. 77-85.
5. Linders, G. J. and B. Straathof, 2009, Trade and Growth in the European Union, CPB Discussion Paper (forthcoming).
6. Anderson, J. E. and E. Van Wincoop, 2003, Gravity with Gravititas: A Solution to the Border Puzzle, American Economic Review, vol. 93, no. 1, pp. 170-192.
7. Anderson, J. E. and E. Van Wincoop, 2004, Trade Costs, Journal of Economic Literature, vol. 42, no. 3.

8. Badinger, H., 2005, Growth Effects of Economic Integration: Evidence from the EU Member States (1950-2000), Review of World Economics/ Weltwirtschaftliches Archiv, vol. 141, no. 1, pp. 50-78.
9. Baier, S. L. and J.H. Bergstrand, 2001, The Growth of World Trade: Tariffs, Transport costs, and Income Similarity, Journal of International Economics, vol. 53, pp. 1-27.
10. Baier, S. L. and J.H. Bergstrand, 2004, Economic Determinants of Free Trade Agreements, Journal of International Economics, vol. 64, no. 1.
11. Baier, S. L. and J.H. Bergstrand, 2009, Bonus vetus OLS: A simple method for approximating international trade-cost effects using the gravity equation, Journal of International Economics, vol. 77, no. 1, pp. 77-85.
12. Baldwin, R. E., 2001, Regulatory Protectionism, Developing Nations and a Two-Tier World Trade System Richard E. Baldwin, Quantifying the Impact of Technical Barriers to Trade: Can It Be Done?.
13. Blonigen, B. A., R.B. Davies and K. Head, 2003, Estimating the Knowledge-Capital Model of the Multinational Enterprise: Comment, American Economic Review, vol. 93, no. 3, pp. 980-994.

ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ ЭКСПОРТНО-ОРИЕНТИРОВАННОЙ ПРОМЫШЛЕННОЙ ПОЛИТИКИ В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ РА

Л. Аванесян

Резюме

На данном этапе развития экономики РА становится очевидным необходимость государственного регулирования экономики. Различные стратегические программы развития экономики сегодня являются механизмами влияния на экономику современного государства, что позволяет вести развитие экономики в выгодном для общества направлении. Промышленная политика является из мероприятий подобной целевой политики.

Промышленность в Армении традиционно являлась основой экономики. Промышленность сфера экономики, состоянием которой с первых дней независимости Армении были озабочены и правительство, и народ. И это вполне естественно, поскольку в стране с лучшими промышленными традициями ее потеря будет означать отказ от достижения общенациональных целей.

В целом, промышленная политика, осуществляемая правительством, выражается в разработке программ и концепций. Целью подобных программ является выявление приоритетных отраслей в рамках отечественной экономики и стимулирование их развития.

Ключевые понятия: *малые и средние предприятия, государственное регулирование экономики, промышленная политика, стимулирование экспорта.*

THE EXPEDIENCE OF IMPLEMENTATION OF EXPORT-ORIENTED INDUSTRIAL POLICY FOR THE DEVELOPMENT OF THE ECONOMY OF THE RA

L. Avanesyan

Summary

In the current stage of economic development of Armenia it is much more obvious the need for state regulation of the economy. Different strategic programs of economic development are the mechanisms of the government to have an influence on the economy, which gives an opportunity to have an economic development which will be much more beneficial for population. Such a targeted policy measure is the industrial policy.

Traditionally the industry was the basis of the economy of Armenia. Industry is the sphere of economy which has concerned both the government and the nation since the first days of independence. And it is quite natural, as not maintaining it in a country which has the best industrial traditions means to defuse achieving the national goals.

In general, the industrial policy implemented by the government is expressed in processing programs and concepts. The aim of such programs is the extraction of priorities in the native economy and the promotion of their development.

Key concepts: *small and medium-sized enterprises, state regulation of the economy. industrial policy, export promotion.*

**ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ
ԸՍՏ «ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՉԲԱՂՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
2013 Թ. ՉԵԿՈՒՅՑԻ»**

Վ. Սահակյան

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը: Այդ նպատակին հասնելու համար ՀՀ կառավարությունը 2008թ.-ից սկսած մի շարք աշխատանքներ է իրականացնում Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի ստեղծման ուղղությամբ: Բարեփոխումներն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարությունն ընդունել է գործարար միջավայրի բարելավման միջոցառումների մի շարք ծրագրեր¹:

Դինամիկ գործարար միջավայր սպահովելու կառավարության քաղաքականության շնորհիվ, ընկերությունները ներդրումներ են կատարում, աշխատատեղեր են ստեղծում և բարձրացնում արտադրողականությունը, այսինքն՝ գործարարության զարգացման ավելի մեծ հնարավորություններ են ստացել: Գործադիր մարմինները, որոնք ձգտում են ամրապնդել մասնավոր հատվածի դերը, պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն մակրոտնտեսական գործոններին, այլև գործող օրենքների որակին, կանոնակարգերին և ինստիտուցիոնալ միջոցառումներին, որոնք ամենօրյա տնտեսական կյանքի մասն են կազմում:

**Գործարար միջավայրի գնահատումը ըստ
«Գործարարությամբ զբաղվելու մասին զեկույցի»**

2003թ.-ից լույս տեսնող Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու մասին զեկույցի» նպատակն է ուշադրության կենտրոնում պահել զեկույցում ներառված երկրների տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես՝ փոքր և միջին ընկերությունների վրա ազդող օրենքներն

1 ՀՀ կառավարության 2008թ. թիվ 775, 2010թ. թիվ 97-Ն և 2010թ. թիվ 1768 որոշումներ

ու կանոնակարգերը: Ջեկույցը հիմնված է ոլորտի մասնագետների պատասխանների վրա, որոնք գնահատում են ստանդարտ դեպքերի սցենարները: Գրանք վերաբերում են ընկերությունների գործունեության տարբեր փուլերին՝ ընկերության գրանցում և ընդլայնում, կանոնավոր աշխատանքի ապահովում և այլն:

«Գործարարությամբ զբաղվելու մասին զեկույցը» գործարարությամբ զբաղվելու դյուրինության ցուցանիշների սահմանված խմբի համախառն գնահատումն է, որոնք չափում և հետազոտում են փոքր և միջին ընկերությունների վրա ազդող օրենսդրական կարգավորումները: Ջեկույցը դասակարգում է տնտեսություններն ըստ 1-ից 185 սանդղակի: Յուրաքանչյուր տնտեսության համար հաշվարկվում է «Գործարարությամբ զբաղվելու մասին» զեկույցում ներառված գործոնների (ցուցանիշների) պարզ միջինով՝ ընկերության ստեղծում, շինարարական թույլտվությունների տրամադրում, էլեկտրականության ստացում, սեփականության գրանցում, վարկի ստացում, ներդրողների պաշտպանություն, հարկերի վճարում, արտաքին առևտուր, պայմանագրերի կիրարկում, անվճարունակության լուծում և այլն:

Ընդհանուր առմամբ, զեկույցը ներկայացնում է երկու համախառն ցուցանիշների արդյունքները՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը և սահմանային ցուցանիշից հեռավորությունը: Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը տնտեսությունները համեմատում է միմյանց հետ: Սահմանային ցուցանիշից հեռավորությունը չափում է յուրաքանչյուր գործոնի հեռավորությունը տվյալ գործոնի համար արձանագրված բացարձակ լավագույն ցուցանիշից: Երկու ցուցանիշներն էլ օգտագործվում են համեմատությունների ժամանակ: Երբ համեմատվում են փոփոխություններն ըստ տարիների, սահմանային ցուցանիշից հեռավորությունը ցույց է տալիս, թե ժամանակի ընթացքում տվյալ տնտեսության գործարարների համար որքան է փոխվել կարգավորող միջավայրը բացարձակ առումով, իսկ գործարարությամբ զբաղվելու դյուրինության ցուցանիշը ցույց է տալիս միայն հարաբերական փոփոխությունը:

Գործարարությամբ զբաղվելու դյուրինության դասակարգման մեջ երկրի դիրքը ցույց է տալիս յուրաքանչյուր տնտեսության կատարողականը համեմատած այլ տնտեսությունների հետ: Չնայած այս դասակարգումը շատ բան է ասում տնտեսությունում առկա գործարար միջավայրի

մասին, այնուամենայնիվ ամբողջական չէ: Գործարարությամբ զբաղվելու դյուրինության դասակարգման ցուցանիշները չեն չափում գործարար միջավայրի բոլոր գործոնները, որոնք նշանակություն ունեն ընկերությունների և ներդրողների համար կամ ազդում են տնտեսության մրցունակության վրա²: Այդուհանդերձ, բարձր դիրքը նշանակում է, որ գործարարությամբ զբաղվելու համար ստեղծվել է բարենպաստ միջավայր:

ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները

Իրականացված բարեփոխումների շնորհիվ ըստ «Գործարարությամբ զբաղվելու մասին» 2013թ. զեկույցի դասակարգման 185 երկրների շարքում Հայաստանը 32-րդն է: Նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքը 18 կետով, իսկ վերջին երկու տարիների ընթացքում՝ 29 կետով:

«Doing Business 2013»-ի տարեկան զեկույցում Հայաստանն ԱՊՀ երկրների շարքում ունի լավագույն ցուցանիշը: Համագործակցության երկրներից Հայաստանին հաջորդում են Ղազախստանը (49-րդ տեղ), Բելառուսը (55), Մոլդովան (83), Ռուսաստանը (112), Ուկրաինան (138), Տաջիկստանն ու Ուզբեկստանը (համապատասխանաբար 141 և 154-րդ տեղերը):


Տարածաշրջանում ևս Հայաստանը առաջատարներից է (գծապատկեր 1.1): Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԱ) երկրներից Հայաստանը բարենպաստ գործարար միջավայրի ցուցանիշով զիջում է միայն Վրաստանին:

Անցած տարիների ընթացքում արձանագրված ՀՀ գործարար միջավայրի բարելավումը հիմնականում պայմանավորված է հետևյալ բարեփոխումներով.

1. Հարկերի վճարում - Կրճատվել են հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային վճարումների կատարման պարբերականությունները:

2. Արտաքին առևտուր - Բարեփոխումներ են իրականացվել արտա-

² Օրինակ՝ չեն գնահատվում ապահովության, կոռուպցիայի և կաշառքների գերակայությունը, շուկայի չափը, հարկաբյուջետային կառավարման որակը, մակրոտնտեսական կայունությունը, աշխատուժի հմտությունների մակարդակը կամ ֆինանսական համակարգերի կայունությունը:



քին առևտրին առնչվող տեխնիկական հսկողության մի շարք ոլորտներում (ապրանքների պարտադիր հավաստագրման, չափազիտական հսկողության, անասնաբուժական հսկողության, բուսասանիտարական հսկողության, ծագման երկրի որոշման և հավաստագրերի տրամադրման): Ներդրվել են մաքսային հայտարարագրման և մաքսային ձևակերպումների էլեկտրոնային համակարգեր:

3. Ընկերության հիմնադրում - Հիմնվել է իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման կենտրոնը և ներդրվել է իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման էլեկտրոնային համակարգը (e-register.am): Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները կրճատվել են՝ 169-ից հասնելով 96-ի, որոնցից 12-ը հանդիսանում են պարզ, իսկ 84-ը՝ բարդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ: Ստեղծվել է լիցենզիաների ձեռք բերման էլեկտրոնային հնարավորություն (www.e-gov.am), ներդրվել է ձեռնարկությունների գրանցման, լիցենզավորման և հարկային հաշվետվությունների առցանց ստացման և ներկայացման համակարգը:

4. Շինարարական թույլտվություններ - Հստակեցվել և կրճատվել են շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ գործընթացները և ժամկետները, մասնավորապես՝ ինժեներական սպա-

սարկում իրականացնող ծառայությունների կողմից տրվող օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները կառուցապատողին են տրամադրվելու ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ համատեղ՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվողի կողմից:

5. Պայմանագրերի կիրարկում - Վերացվել է իրավաբանական անձանց կողմից կնիք ունենալու պարտադիր պահանջը: Կատարելագործվել է ԴԱՀԿ (Դատական ակտերի հարկադիր կատարման) ծառայությունում հարկադիր էլեկտրոնային աճուրդով պարտապանի գույքի իրացման կարգը, մասնավորապես՝ բացառվել է ինչպես պետական մարմինների, այնպես էլ այլ անձանց օրենքով չնախատեսված միջամտությունը աճուրդի ընթացքին:

6. Վարկերի ստացում - ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության գաղտնիության ապահովմանը, վարկային բյուրոների լիցենզավորմանը (այս ոլորտը նախքան այդ իրավական ակտերի ընդունումը չէր կարգավորվում), բարձրացվել է վարկային տեղեկատվության հասանելիությունը:

7. Ներդրողների պաշտպանվածություն - 2011 թվականի հունիսի 18-ին ընդունվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-210-Ն օրենքը, որով կատարելագործվում են շահագրգռվածության առկայությամբ իրականացված գործարքների (տնտեսական գործունեության) բացահայտման մեխանիզմները և մեծացվում է տնօրենների պատասխանատվությունը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» N 1769-Ա որոշումը: Կանոնագիրքը տարածվում է ՀՀ կառավարության կողմից 2011թ. հունիսի 23-ին N 881-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների վրա: ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) օժանդակությամբ մշակվել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի տարեկան հայտարարագրի նմուշը:

8. Սեփականության գրանցում - Սեփականության պետական գրանցման ոլորտում ներդրվել են գրանցման արագացված գործակիցներ:


9. Չեմնարկության փակում/լուծարում - Կրճատվել են ընկերությունների լուծարման գործընթացի ժամկետները:

10. Աշխատանքային հարաբերությունների կարգավորում - ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել են գործարարությանն աջակցման թեժ գծեր, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտե) գործողությունների գանգատարկման միջգերատեսչական խորհուրդ:


Իրականացված միջոցառումները բարելավել են «Գործարարությամբ զբաղվելու մասին 2013թ. գեկույցում» ներառված 10 ցուցիչների դիրքերը այլ տնտեսությունների համապատասխան ցուցանիշների համեմատությամբ (գծապատկեր 1.2):

Նշված գծապատկերը ցույց է տալիս, որ Հայաստանը էականորեն բարելավել է ընկերության ստեղծման, շինարարական թույլտվությունների

Գծապատկեր 1.2



տրամադրման, սեփականության գրանցման, վարկի ստացման և ներդրողների պաշտպանության գործընթացները, որոնց շնորհիվ էլ հիմնականում զեկույցում արձանագրել է բարձր դիրք: Ձեկույցում ներառված մյուս 5 գործընթացների առումով Հայաստանը մյուս երկրների համեմատ նշանակալիորեն զիջում է իր դիրքերը: Ծիշտ այնպես, ինչպես գործարարությամբ զբաղվելու դյուրիմության դասակարգումն է նկարագրում ուսումնասիրվող թեմայի միայն մի մասը, այնպես էլ դասակարգման աղյուսակում ցուցանիշների դիրքերի փոփոխություններն են արտացոլում բարենպաստ գործարար միջավայրի մի մասը: Ցուցանիշների դիրքերի տարեցտարի փոփոխությունները աղյուսակում վկայում են ընկերությունների համար կարգավորող միջավայրի փոփոխությունների մասին, սակայն դրանք միշտ էլ հարաբերական են: Տնտեսության վարկանիշը կարող է փոխվել այլ տնտեսություններում տեղի ունեցած զարգացումների շնորհիվ: Տնտեսությունը, որ իրականացրել է գործարար միջավայրի կարգավորման բարեփոխումներ, հնարավոր է չունենա աճ (կամ նույնիսկ զիջի իր դիրքերը) վարկանիշային աղյուսակում, եթե նրանից առաջ են անցել այլ տնտեսություններ, որոնց գործարար միջավայրի կարգավորման բարեփոխումներն էլ ավելի դրական առաջընթաց են ունեցել «Գործարարությամբ զբաղվելու» զեկույցի գնահատման ժամանակ: Ավելին՝ դասակարգման աղյուսակում տարեցտարի արձանագրվող փոփոխությունները ընդհանուր առմամբ չեն արտացոլում, թե ինչպես է գործարար միջավայրի կարգավորումը փոխվել տվյալ տնտեսությունում ժամանակի ընթացքում, կամ տարբեր ոլորտներում: Այսպիսի փոփոխությունների գնահատման համար անցած տարի «Գործարարությամբ զբաղվելու մասին զեկույցը» ներկայացրեց «սահմանային հեռավորության ցուցանիշը»: Այն ցույց է տալիս, թե որքան է զիջում յուրաքանչյուր տնտեսություն, ամենալավ արդյունքը գրանցած տնտեսությանը 2005թ.-ից ի վեր, գործարարությամբ զբաղվելու 9 ցուցանիշների առումով: Համեմատելով տնտեսության գնահատականները ժամանակահատվածի 2 կետում՝ օգտագործողներին հնարավորություն է ընձեռվում գնահատել, թե որքան է փոփոխվել տնտեսության կարգավորիչ միջավայրը ժամանակի ընթացքում, որքան են առաջ շարժվել (կամ հետընթաց ապրել) «Գործարարությամբ զբաղվելու մասին զեկույցում» ընդգրկված ոլորտային ցուցանիշները՝ առավել արդյունավետ և ճկուն կարգավորվող ոլորտների համեմատ (զծապատկեր 1.3):



Ինչպես երևում է սահմանային ցուցանիշի 2005թ.-ից մինչև 2012թթ.-ը ընկած ժամանակահատվածի հաշվետվությունում (գծապատկեր 1.3), անցած տարիների ընթացքում Հայաստանն ընկերությունների և սեփականության գրանցման իր ցուցանիշներով բավական մոտեցել է սահմանային ցուցանիշին: Նշված ժամանակաշրջանում նշանակալիորեն բարելավվել են շինարարական թուլությունների տրամադրման, վարկերի ստացման, ներդրողների պաշտպանության և հարկերի վճարման գործընթացները: Գրաֆիկից պարզ է դառնում, որ չնայած որոշ միջոցառումների իրականացմանը, էական առաջընթաց չի գրանցվել արտաքին առևտրի, պայմանագրերի կիրարկման և անվճարումակության լուծման գործընթացներում: Բոլոր գործընթացների ընդհանուր միջինը ցույց է տալիս, որ անցած 7 տարիներին Հայաստանը միջինը բարելավել է գործարար միջավայրի վրա ազդող 9-ը գործոնները, մոտենալով ընդհանուր 70,6% սահմանային ցուցանիշին:

Զարգացման ուղղությունները

Բարեփոխումները շարունակական են և միտված են աստիճանական քայլերի միջոցով Հայաստանը դարձնել բիզնեսի վարման տեսանկյունից առավել բարենպաստ երկիր: Այդ նպատակով մշակվել և 07.03.2013թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2013 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 240-Ա որոշումը, որտեղ ներառված են օրենսդրական և վարչարարական բարեփոխումներին միտված մի շարք գործողություններ: Հարկ է նշել, որ որոշման հավելվածում առաջարկվող բարեփոխումները խմբավորված են ըստ «Գործարարությամբ զբաղվելու մասին» զեկույցի ցուցանիշների համապատասխան: Ձեկույցում ներառված են 8 գործընթացների բարեփոխմանն ուղղված ընդհանուր թվով 49 առաջարկ: Բացակայում են միայն սեփականության գրանցման և անվճարունակության լուծմանը վերաբերող առաջարկները:

Հարկային ոլորտում նախատեսվում է դրամարկղային գրքերը էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորություն ընձեռել, վերացնել գույքահարկի և հողի հարկի հաշվետվությունների ներկայացման պահանջը, ներդնել գույքահարկի և հողի հարկի հետ կապված տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսվարող սուբյեկտների միջև փոխադարձ ծանուցման էլեկտրոնային համակարգ, պայմաններ ապահովել էլեկտրոնային հարկային հաշվետվության համակարգի համատարած կիրառման համար, բոլոր մարզերում բացել հարկ վճարողների սպասարկման կենտրոններ, ներդնել նոր սերնդի բազմաֆունկցիոնալ ՀԳՄ-ներ այն ոլորտներում, որտեղ դրանց կիրառումն օրենքով պարտադիր է, վերացնել ՀԳՄ-ներով արձանագրված հասույթների մասին թղթային եղանակով տեղեկությունները հարկային մարմիններին ներկայացնելու պրակտիկան և այլն:

Արտաքին առևտրի ոլորտում կկրճատվի ֆիզիկական անձանց կողմից և միջազգային փոստային առաքումների միջոցով ապրանքների տեղափոխման գործընթացը: Վերցված ապրանքները կվերադարձվեն տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Կարագացվեն մաքսային ձևակերպումները: Կներդրվի ՀՀ մաքսային սահմանով արտա-

հանվող սպրանքների մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերի «մեկ պատուհանի» սկզբունքով տրամադրման մեխանիզմը, դեղերի և դեղանյութերի ներմուծման հավաստագրի էլեկտրոնային ստացման «մեկ պատուհան» համակարգը:

Մաքսային արժեքի որոշման հետ կապված՝ կմշակվեն և կիրառարկվեն մաքսային արժեքի որոշման մեթոդների կիրառման կանոնները տնտեսավարող սուբյեկտների և մաքսային ծառայողների համար:

Ընկերության ստեղծման գործընթացը կկրճատվի, հնարավորություններ ստեղծելով E-registry համակարգի միջոցով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կանոնադրության գրանցման և այլ փոփոխություններ (վերակազմավորում, լուծարում և այլն) իրականացման համար նույն կայքի տեղեկատվությունը հասանելի կլինի անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ ապահովելով օտարերկրյա տնտեսավարողներին մատուցվող ծառայությունների մատչելիությունը:

Շինարարական թույլտվությունների տրամադրման առումով հիշատակման արժանի են փոքր ու միջին բիզնեսի համար օրինակելի նախագծերի մշակումը (պահեստներ, սննդի, մանրածախ առևտրի օբյեկտներ և այլն), հրատարակումը և հաստատված նախագծերի տրամադրումը, պարզեցված ընթացակարգով շինարարություն իրականացնելու համար:

Նախատեսվում է նաև էլեկտրականության, գազի և ջրի միացման նպատակով հողահատկացման համար անհրաժեշտ ժամկետների կրճատում, Երևան քաղաքում տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, շինարարական թույլտվությունների և ավարտված շինարարության շահագործման ակտերի վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ վիճակագրության տեղադրում Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում, շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում:

Էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման համար կներդրվի էլեկտրոնային համակարգ, կկրճատվեն էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման ժամկետները և գործընթացները:

Պայմանագրերի կիրարկման ոլորտում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխությունների իրականացմամբ պարտապանի գույքի առկայության դեպքում կատարողական գործողութ-

յունների իրականացումը կսահմանվի 15 օր: Նախատեսվում է կրճատել դատական վեճերի լուծման ժամկետները, դատարանին ենթակա որոշ հարցերով որոշումների կայացման հնարավորությունը փոխանցել նոտարներին, նոտարի մոտ ներդնել մեկ պատուհանով ծառայությունների մատուցում և այլն:

Վարկերի հասանելիության բարձրացման նպատակով նախատեսվում է ուսումնասիրել դեբիտորական պարտքի և այլ ակտիվների ընդհանուր նկարագրով գրավադրելու հնարավորությունը և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, ստեղծել բոլոր տեսակի շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական համակարգ:


Վերջաբան

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տվյալներով փոքր և միջին ձեռնարկատիրությունը ներկայումս նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում: ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը 2009թ. ՀՆԱ-ի մեջ կազմել է 42.5% (968,722.5 մլն. դրամ), 2008թ. 41.7%-ի (1,110,304.28 մլն դրամ) դիմաց: Արձանագրվել է 0.8 տոկոսային կետով աճ, սակայն բացարձակ արժեքով նվազել է 141,581.7 մլն դրամով: Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը հատկապես շինարարական, առևտրի և ծառայությունների ոլորտներում:

ՀՀ օրենսդրությանը համապատասխան գրանցված առևտրային ԻԱ շուրջ 97.4%-ը և ԱՁ-ների 98%-ը ՓՄՁ սուբյեկտներ են: ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների բաշխվածքը 2007-2009թթ. գրանցվածների մեջ ունի հետևյալ պատկերը (զձապատկեր 1.4):

Գձապատկեր 1.4

	ՓՄՁ սուբյեկտներ [%]				Խոշոր [%]
	Գերփոքր	Փոքր	Միջին	Ընդամենը	
2007 վերջ	82.6	12.7	2.5	97.8	2.2
2008 վերջ	74.0	18.3	5.4	97.7	2.3
2009 վերջ	75.9	16.8	5.0	97.7	2.3



Գծապատկեր 1.5

Երևան քաղաքում և ՀՀ այլ մարզերում ՓՄՉ սուբյեկտների բաշխվածությունը (գծապատկեր 1.5) թույլ է տալիս ներկայացնել մայրաքաղաքի և մարզերի միջև տնտեսական զարգացման անհամասնությունների քանակական ցուցանիշը,

ցույց տալով ՓՄՉ սուբյեկտների թվաքանակի և տվյալ տարածաշրջանի տնտեսական զարգացածության աստիճանը:

Գծապատկեր 1.6-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ՓՄՉ ոլորտի մասնաբաժինը երկրի արտաքին առևտրաշրջանառության մեջ դեռևս համեմատաբար ցածր է, արտահանման մեջ այն կազմում է 17.7, իսկ ներմուծման մեջ՝ 26.2 տոկոս: Վերլուծելով երկրի արտաքին առևտրաշրջանառության մեջ, մասնավորապես արտահանման ծավալում, ՓՄՉ ոլորտի համեմատաբար փոքր մասնակցությունը՝ կարելի է եզրակացնել, որ ՓՄՉ սուբյեկտները ներկայումս հիմնականում իրենց համար թիրախային են համարում ներքին շուկան, չեն կարողանում րավարարել արտաքին շուկայի կողմից ներկայացված պահանջները և արտահանման ընթացքում հանդիպում են խոչընդոտների կամ երկրի ներսում, կամ էլ արտաքին շուկայում իրենց արտադրանքը ներկայացնելիս:

Գծապատկեր 1.6

	2007թ.		2008թ.		2009թ.	
	ՓՄՉ	Խոշոր	ՓՄՉ	Խոշոր	ՓՄՉ	Խոշոր
	[%]		[%]		[%]	
Արտահանում	17.4	82.6	17.9	82.1	17.7	82.3
Ներմուծում	37.3	62.7	37.8	62.2	26.2	73.8

ՓՄՁ սուբյեկտների հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2009թ.-ին կազմել են 139.6 մլրդ դրամ, որը պետական բյուջե վճարված հարկերի 26.8%-ն է: ՓՄՁ սուբյեկտների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը 2009 թվականին կազմել է 50.1 մլրդ դրամ կամ 48%:

ՀՀ տնտեսություն օտարերկրյա ներդրումների հոսքերը (ներառյալ պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածը) 2012թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 1 մլրդ 587 մլն դոլար, որը 2011թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 8.6%-ով, ընդ որում ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 656.7 մլն դոլար (անկումը՝ 27.5%), այլ ներդրումներինը՝ 928.9 մլն դոլար (աճը՝ 12%), պորտֆելային ներդրումներինը՝ 1.4 մլն դոլար: Հայաստանի ՓՄՁ-ների զարգացման ընթացքը դեռևս հանդիպում է որոշակի խոչընդոտների, որոնք պայմանավորված են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններով: Դրանցից են, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները, ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի (մատուցվող ծառայությունների) դեպի շուկաներ առաջնդման հետ կապված խնդիրները, սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասը, ժամանակակից տեխնոլոգիաների և տեղեկատվության անհասանելիությունն ու արտաքին տնտեսական կապերի թուլությունը: Առկա հիմնախնդիրների դրսևորումները և սրությունը խիստ տարբերվում են՝ կախված ՓՄՁ սուբյեկտների գործելավայրից (Երևան, ՀՀ այլ մարզեր): Տարբերությունները կտրուկ են արտահայտվում հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում: Այս համատեքստում պետական քաղաքականությունն ուղղված է ՓՄՁ զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի պարզեցմանն ու թափանցիկության ապահովմանը:

Առանցքային հասկացություններ. գործարար միջավայր, գործարար, գործարարությունը Հայաստանում, գնահատում, օրենքներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Менеджмент, Издание 2-е, Ричард Л. Дафт
2. www.mineconomy.am
3. www.Doingbusiness.com
4. <http://www.smednc.am/>

ТЕМПЫ РАЗВИТИЯ БИЗНЕС СРЕДЫ АРМЕНИИ ПО ОТЧЕТУ «ВЕДЕНИЮ БИЗНЕСА 2013»

В. Саакян

Резюме

“Отчет о темпах развития бизнес среды Армении по Ведению Бизнеса за 2013-ий год” статья посвящена оценке текущей ситуации бизнес среды Армении на основе методологии Ведения бизнеса за 2013-ий год. Отчет Ведение Бизнеса рассматривает насколько легко или трудно для предпринимателей Армении, открыть и управлять бизнес при соблюдении соответствующих правил. Отчет измеряет и отслеживает изменения в нормативных актах регулирующих 11 областей жизненного цикла бизнеса: создание предприятий, получение разрешений на строительство, получение электроэнергии, регистрация собственности, получение кредита, защита инвесторов, уплата налогов, международная торговля, исполнение контрактов, решении несостоятельности и найме работников. Для сравнения, он также предоставляет данные для других отдельных стран для каждого показателя. Эта статья не только подчеркивает степень препятствий для ведения бизнеса в Армении, но и помогает определить источник этих препятствий, поддерживая политику в разработке нормативно-правовой реформы.

Ключевые понятия: *бизнес среда, предприниматель, бизнес в Армении, оценка, правила.*

ARMENIA'S BUSINESS ENVIRONMENT'S PACES OF DEVELOPMENT BY "DOING BUSINESS 2013" REPORT

V. Sahakyan

Summary

"Armenia's business environment's paces of development by Doing Business 2013 Report" article concerns the evaluation of Armenia's business environment current situation based on Doing Business 2013 methodology. Doing Business Report sheds light on how easy or difficult it is for a Armenia's entrepreneur to open and run a business when complying with relevant regulations. It measures and tracks changes in regulations affecting 11 areas in the life cycle of a business: starting a business, dealing with construction permits, getting electricity, registering property, getting credit, protecting investors, paying taxes, trading across borders, enforcing contracts, resolving insolvency and employing workers. To allow useful comparison, it also provides data for other selected economies for each indicator. This article not only highlights the extent of obstacles to doing business in Armenia; it also helps identify the source of those obstacles, supporting policy makers in designing regulatory reform.

Key concepts: *business environment, entrepreneur, doing business in Armenia, evaluation, regulation.*

**ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ**

Վ. Սահակյան

ՀՀ գործարար միջավայրի միջազգային հետազոտությունները ի հայտ են բերում հակասական պատկերներ: Մի կողմից՝ զարգացած իրավական և կարգավորիչ դաշտի առկայություն, մյուս կողմից՝ օրենքների և կանոնակարգումների թերի կիրառում:

Բյուրոկրատական ընթացակարգերի առումով ՀՀ բիզնես միջավայրը զբաղեցնում է բարենպաստ դիրք՝ ԱՊՀ երկրների, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նոր անդամների համեմատությամբ, ըստ Համաշխարհային բանկի ամենամյա «Գործարարությամբ զբաղվելու զեկույցի»: Այն գնահատում է գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը աշխարհի շուրջ 185 երկրներում, կենտրոնանալով երկրների գործող կանոնակարգերի վրա, որոնք բարձրացնում կամ սահմանափակում են ընկերության գործունեությունը: Նախորդ տարիներին իրականացրած բարեփոխումների շնորհիվ «Գործարարությամբ զբաղվելու 2013թ.» զեկույցում Հայաստանը 185 երկրների շարքում զբաղեցնում է 32-րդ դիրքը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով այն 18 կետով, իսկ վերջին երկու տարիների համեմատ՝ 29 կետով:

Համաձայն «Մրցունակության համաշխարհային զեկույցի» Հայաստանի կատարողականում արտացոլված են բացասական գործոններ: 2012-2013թթ. ցուցանիշով Հայաստանն իր մրցունակությամբ 144 երկրների շարքում 82-րդն է: Ընդ որում անցած տարվա համեմատ նա 10 միավորով բարելավել է իր դիրքը: Չեկույցում առավել խնդրահարույց գործոններ են համարվում կոռուպցիան, մաքսային վարչարարությունը և դատական անկախությունը:

Այս աշխատանքի նպատակն է մերկայացնել կոռուպցիոն դրսևորումները վերոնշյալ 3 ոլորտներում:

Ներկա իրավիճակ

Կոռուպցիան լուրջ խոչընդոտ է երկրի սոցիալական, տնտեսական

և քաղաքական զարգացման համար: Կոռուպցիան վերացնում է օրենքի գերակայությունը, հանգեցնում սակավ ռեսուրսների անարդյունավետ բաշխման, անվստահություն ներշնչելով ժողովրդավարության հանդեպ, հարցականի տակ դնում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Տնտեսության զարգացման առումով կոռուպցիան խոչընդոտում է տնտեսական աճին: Կոռուպցիայի բարձր մակարդակը նվազեցնում է արտաքին և ներքին ներդրումները, քանի որ այն ի չիք է դարձնում կանխատեսելիությունը և մեծացնում գործարարությանը զբաղվելու ծախսերը: Կոռուպցիան ծնում է ներդրումների հանդեպ անորոշություն և նվազեցնում ձեռնարկատերերի ներդրում կատարելու մոտիվացիան: Կոռուպցիայի մակարդակը գործարարությանը զբաղվելու լուրջ ճնշում է Հարավային Ասիայի ավելի քան 70% ընկերությունների համար: Աֆրիկայի 64%-ը, Լատինական Ամերիկայի գրեթե 60%-ը, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կեսից ավելիի համար կոռուպցիան լուրջ խոչընդոտ է հանդիսանում զարգացման համար¹: Կոռուպցիան հիմնական խոչընդոտներից է, որին փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) առնչվում են իրենց գործարար միջավայրում: Նրանք սովորաբար առաջինն են տուժում շուկայում, որովհետև ի գորտու չեն խուսափելու կոռուպցիայից: Որպես հետևանք՝ շահույթը և գոյատևումը վտանգվում են: Կոռուպցիոն բարձր ծախսերը (ժամանակային և ֆինանսական) դժվարացնում են փոքր ընկերությունների զարգացումը: ՓՄՁ-ները աշխարհում դիտվում են տնտեսությունների շարժիչ ուժը: Սրանք աղքատության վերացման կարևոր գործոն են: Հետևաբար կոռուպցիան կարող է կործանարար լինել տնտեսության համար:

Միջազգային հանրությունը վերջին շրջանում սկսել է որոնել ՓՄՁ ոլորտը իրենց հակակոռուպցիոն ծրագրերում ընդգրկելու եղանակներ: Ավելի ու ավելի հաճախ են փոքր ընկերությունների շահերը քննարկման առարկա դառնում միջազգային հակակոռուպցիոն ֆորումներում: Ոլորտի մասնագետները կարևորում են ՓՄՁ-ների շահերի պատշաճ արժարժումը: Սակայն, բացի քննարկումներից և ՓՄՁ սուբյեկտներին կոռուպցիայի դեմ պայքարի համար ուղեցույցներ ապահովելու փորձերից, միջազգային մակարդակով շատ բան չի արվել: Գլոբալ նախաձեռնություններից ամենաճանաչվածը և

¹ «The Firms Speak: What the World Business Environment Survey Tells Us about Constraints on Private Sector Development» հոդված

խոշորագույնը «Business Anti-Corruption Web Portal» կազմակերպությանն է, որն ուսումնասիրում է կոռուպցիայի ձևերը տարբեր երկրներում և դրանց վերացման գործիքները: Այն ՓՄՁ-ներին առաջարկում է պարզ և պրակտիկ բիզնես գործիքներ և բիզնես խորհրդատվություն, օգնելով նրանց խուսափել կոռուպցիայից և ձեռավորել ավելի բարենպաստ բիզնես միջավայր:

Գործարարությունը և կոռուպցիան

Վերջին տարիներին Հայաստանի արձարագրած տնտեսական աճը հիմնականում պայմանավորում էին երկու առաջատար ոլորտների՝ շինարարության և ծառայությունների աճով: Տնտեսական բարեփոխումների շնորհիվ 2006-ից 2007թ. արտաքին ուղղակի ներդրումների ծավալն աճեց ավելի քան 200%-ով: Սակայն, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով, 2008թ.-ին Հայաստանը արձանագրեց 29% առևտրային դեֆիցիտ և 10% գնաճ, ինչը նպաստեց ՕՈՒՆ-երի զգալի կրճատմանը. 2009-2010թթ. ՕՈՒՆ-ները կրճատվել են միջինը 30%-ով²: Չնայած կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությունների ընդունմանը և իրականացմանը, կոռուպցիան շարունակում է մնալ լուրջ խնդիր Հայաստանում³: Փոքր, դեպի ծով ելք չունեցող երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, կոռուպցիան սպառնում է վերացնել ներքին և արտաքին ներդրողների վստահությունը, թեև ներդրումային քաղաքականությունը Հայաստանում առավել լիբերալներից է ԱՊՀ տարածաշրջանում: Հայաստանում պետական կառավարական ապարատն ու գործարար էլիտան խիստ փոխկապակցված են: Բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար ներդրումներ են կատարում ռազմավարական ոլորտներում, կառավարության անդամները վերահսկում են մասնավոր ընկերությունները, իսկ էլիտայի ազդեցիկ հատվածը վերաբերվում է պետական ընկերություններին, ինչպես մասնավոր սեփականության⁴: Օրինակ, ըստ Բերտելսման հիմնադրամի⁵ տնտեսության այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպիսիք

² Armstate.am

³ ԱՄՆ Պետդեպարտամենտի 2012 և Համաշխարհային տնտեսական ֆորումի Միցունակության համաշխարհային զեկույց 2012-2013

⁴ Global Integrity 2009 and the US Department of State 2010

⁵ <http://www©bti-project©org/countryreports/pse/arm/>

են էներգետիկայի և բանկային ոլորտները, դարձել են մենաշնորհային՝ քաղաքական և գործարար վերնախավերի միջև դաշինքների միջոցով: Այդ «փակ» ոլորտները նպաստում են կառավարության թափանցիկության և հաշվետվողականության բացակայությանը: Հայաստանի առանցքային ոլորտներ մնում են օլիգարխների և ազդեցիկ էլիտաների ձեռքում⁶, որոնք ստանում էին արտոնյալ օգնություն մասնավորեցման վաղ փուլերում: Նմանապես, ԱՄՆ-ի առևտրային ծառայության 2011 թ.-ի հաշվետվությունը գնահատում է Հայաստանի բարձրաստիճան պետական պաշտոնյաների և զարգացող մասնավոր բիզնեսի միջև հարաբերությունները որպես խրախուսվող և փոխադարձ շահավետ⁷: Ըստ այդ աղբյուրի, բարձրաստիճան պաշտոնյաները ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով ձեռք են բերում ուղղակի, մասնակի կամ անուղղակի վերահսկողություն, զարգացող մասնավոր ընկերությունների հանդեպ: Նման վերահսկողությունն իրականացվում է թաքնված գործընկերոջ կամ սեփականության մեծ բաժնին տիրող մասնավոր այլ ընկերության միջոցով: Դեկավար անձի ներգրավումը կարող է լինել նաև անուղղակի ձևով՝ մերձավոր ազգականների և ընկերների միջոցով: Այսպիսի փորձը խրախուսում է մենաշնորհների կամ օլիգոպոլիսաների ստեղծումը և խեղաթյուրում պայքարը՝ ուղղված մասնավոր հատվածում թափանցիկության աճին: Կոռուպցիան ընդհանուր առմամբ կարելի է սահմանել որպես պետական իշխանության չարաշահում մասնավոր շահի համար: Չարաշահումը, որպես կանոն, իրականացվում է իրավական ուժի միջոցով: Մեր կողմից սահմանվող կոռուպցիային են վերաբերում, օրինակ, կառավարության կողմից պետական գույքի վաճառքը պաշտոնյաներին, պետական գնումների կաշառքները, պետական միջոցների յուրացումները և այլն: Համաշխարհային տնտեսական ֆորումի «Համաշխարհային մրցունակություն 2012-2013» զեկույցում հարցված բիզնես ղեկավարների շրջանում կոռուպցիան նշվել է որպես առավել խնդրահարույց գործոն Հայաստանում գործարարությամբ զբաղվելու առումով: Նմանապես, հարցումները ցույց են տալիս, որ հետազոտված ընկերությունների գրեթե 40%-ը համարում է կոռուպցիան որպես իրենց գործողությունների լուրջ սահմանափա-

⁶ Freedom House 2012

⁷ <http://armenia.usembassy.gov>

կում, իսկ 16%-ը տրամադրված է ոչ պաշտոնական վճարումների միջոցով «իրականացնել որոշ գործեր»⁸: «EBRD & World Bank BEEPS Armenia 2008»-ը⁹ հայտնում է, որ ընկերությունները կաշառքների վրա ծախսում են վաճառքից ստացված հասույթի միջինը 0,8%-ը: Թեև կոռուպցիան ազդում է բոլոր տեսակի ընկերությունների վրա, այդուհանդերձ հետազոտությունները ցույց են տալիս, որ ճնշումը շատ անհամաչափ է մասնավորապես ՓՄՁ-ների համար: Կոռուպցիայի բարձր մակարդակի մասին է հայտնում նաև «Foundation for Small and Medium Businesses 2006»¹⁰ հիմնադրամը, որի տվյալներով՝ հարցված ՓՄՁ-ների ավելի քան 90%-ը կոռուպցիան նշում է որպես ամենալուրջ խոչընդոտ Հայաստանում բիզնեսի աճի համար: Ավելին, կաշառքները որպես տարեկան վաճառքների մասնաբաժին ավելի մեծ են ՓՄՁ-ների համար, որը գնահատվում է տարեկան վաճառքների 10%-ի չափով: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստան»¹¹ կազմակերպությունն ընդգծում է, որ կոռուպցիան հիմնական խոչընդոտն է Հայաստանում գործող ՓՄՁ-ների աճի համար: Ընկերություններին առաջարկվում է մշակել, ներդնել և զարգացնել հակակոռուպցիոն գործընթացներ և իրականացնել պատշաճ պլանավորում Հայաստանում ներդրումներ կատարելու և գործարարությամբ զբաղվելու համար:

Դատական համակարգ

Ըստ ԱՄՆ Պետդեպարտամենտի 2012 թ. զեկույցի Հայաստանի բազմաթիվ դատարաններում առկա է արդյունավետության և անկախության ցածր մակարդակ և անհրաժեշտություն կա բարեփոխելու Հայաստանի դատական համակարգը: Չնայած ընթացիկ դատական բարեփոխումների ջանքերին, գործարարների և ներդրողների մեծ մասը դատական համակարգը չեն համարում կենսունակ տարբերակ իրավական պայմանագրերի կիրարկման համար: Գործարարները հիմնականում վախենում են, որ կոռուպցիան և հովանավորությունը կպայմանավորեն դատական որոշումների արդյունքները: Բացի այդ, ընկերությունների կողմից դատավորները չեն

⁸ Համաշխարհային բանկ և «IFC-Enterprise 2009»

⁹ www.ebrd.com

¹⁰ <http://www.fsmb.am/>

¹¹ <http://transparency.am/>

համարվում բավականաչափ կոմպետենտ կարգավորելու առևտրային վեճերը, ինչպես նշվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրություն հիմնադրամի»¹² կողմից: Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու 2012թ.» զեկույցը Հայաստանում առևտրային վեճերի լուծման ժամանակահատվածի զգալի աճ է արձանագրել, 2011թ. 285 օրվա փոխարեն այժմ այն տևում է 440 օր: Հաշվի առնելով դատական համակարգի հանդեպ վստահության պակասը, վեճերի այլընտրանքային լուծման տարբերակները շատ կարևոր են օտարերկրյա ներդրողների համար: Սակայն, միջազգային արբիտրաժի տարբերակները բացառվում են Հայաստանի կառավարության մասնակցությամբ վեճերի լուծման տարբերակների մեջ: Բացի վերոնշյալից, Համաշխարհային բանկը և ՄՖԿ-ի «Enterprise Surveys 2009»¹³ հարցումը ընկերությունների շրջանում անվստահության մեծ ալիք է արձանագրում Հայաստանի արդարադատության համակարգի արդյունավետության և արդարության նկատմամբ: Այնուամենայնիվ, ինչպես նշվում է ԱՄՆ Պետդեպարտամենտի 2012թ. զեկույցում, չնայած Հայաստանում եղել են որոշ ներդրումային վեճեր արտասահմանյան ներդրողների մասնակցությամբ, այդուհանդերձ չկա օրինաչափության ոչ մի ապացույց, որ օտարերկրյա ներդրողների հանդեպ խտրականություն է ցուցաբերվել: Համաշխարհային տնտեսական ֆորումի «Համաշխարհային մրցունակության զեկույց 2012-2013»-ում հարցված ընկերությունները նշում են, որ դատարանները ենթարկվում են առանձին քաղաքացիների, ընկերությունների, կառավարության անդամների քաղաքական ազդեցություններին: Ըստ «EBRD & World Bank BEEPS Armenia 2008» զեկույցի Հայաստանում գործող ընկերությունների համար ամենևին էլ հազվադեպ չէ դատարանների հետ իրենց հարաբերությունների ընթացքում կաշառք տալը:

«Փոքր և միջին ձեռնարկատիրություն 2006» հիմնադրամի կողմից հարցված ՓՄՁ-ների գրեթե կեսը նշում են, որ ոչ ֆորմալ վճարումները «միշտ/հաճախ» անհրաժեշտ են դատական գործընթացը դատարաններում արագացնելու համար: Շատ ավելի բարձր տոկոս են կազմում դատարաններին չվստահող ՓՄՁ-ները, հիմնական պատճառներ վկա-

¹² <http://caps.am>

¹³ <http://www.enterprisesurveys.org/>

յակոչելով կասկած հարուցող օրենքները և դրանց կամայական կիրառումը: Ըստ «Freedom House-2012»-ի անարդյունավետ և մասնակի կոռումպացված դատական համակարգը նպաստում է անբարեխիղճ մրցակցությանը և խոչընդոտում մասնավոր սեփականության իրավունքների կիրարկմանը և երկրում նոր ընկերությունների ստեղծմանը: Համաձայն Եվրոպական հանձնաժողովի «Եվրոպական հարևանության ներդրման քաղաքականությունը Հայաստանում 2012» և «Բերտելսման հիմնադրամ 2012»-ի դատական ոլորտների բարելավումները կարևոր են Հայաստանում գործարարության կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու համար: Հատկապես մեծ կարևորություն ունեն դատարանների անկախությունը, դատավորների վերապատրաստումը և քրեական դատավարության օրենսգրքի վերանայումը:

Մաքսային վարչարարություն

Մաքսային վարչարարությունը փոքր և միջին ձեռնարկությունների կողմից համարվում է ամենակոռումպացված հաստատություններից մեկը Հայաստանում: Ըստ ԱՄՆ Պետդեպարտամենտի 2012թ. գեկույցի մաքսային օրենքների անհետևողական կիրառումը, հատկապես կապված առևտրի ոլորտում գնահատման և կարգավորող կանոնների հետ, խոչընդոտում է ՓՄՁ-ների մրցունակությանը և նոր մասնակիցների մուտքը շուկա: Արտասահմանյան գործարարները հաճախ պետք է համակերպվեն ոչ թափանցիկ մաքսային գործընթացներին և ավելացնեն ծախսերը: «Global Integrity 2011» հաշվետվությունում հաղորդվում է, որ մաքսային և ակցիզային օրենքները չեն կիրառվում միատեսակորեն կամ առանց խտրականության: Գործնականում որոշ խմբեր կարողանում են հետևողականորեն խուսափել մաքսային օրենքներից:

ՎՋԵԲ¹⁴-ը և Համաշխարհային բանկի «BEEPS Armenia 2008» հաշվետվությունը տեղեկացնում է, որ երբեմն ոչ ֆորմալ վճարումներ են իրականացվում մաքսային մարմինների հետ աշխատանքի ժամանակ: Նմանապես, «Foundation for Small and Medium Businesses 2006» հիմնադրամը բացահայտել է, որ երեք ՓՄՁ-ներից գրեթե երկուսը ակնկալում են ոչ պաշտոնական վճարումների միջոցով խուսափել ապրանք-

¹⁴ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ների առաքումների մաքսային վճարումներից: Կոռուպցիան մաքսային վարչարարությունում կարևորեց նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, որը մտահոգություն հայտնեց ՊԵԿ-ի անսահմանափակ իշխանության և ներմուծվող ապրանքների արժեքի գնահատման առումով, ուշադրություն դարձնելով «մաքսային պաշտոնյաների» հետ համագործակցող գործարարների կողմից ապրանքների լայնածավալ մաքսանենգությանը, ինչպես նաև մաքսատուրքերից խուսափելու այլ փորձերին: Այդպես հաղորդում է «Transparency International»-ի «Global Corruption Report 2009»¹⁵ զեկույցը:

Բացի այդ, ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի «Global Enabling Trade Report 2012»¹⁶ հաշվետվության, բիզնես ղեկավարները տեղեկացնում են, որ Հայաստանի սահմանին ապրանքները մաքսագերծելու համար արտահանման և ներմուծման համար պահանջվում է զգալի ժամանակ և թղթաբանություն և, որ գործընթացը վարակված է կոռուպցիայի և կաշառակերության դեպքերով: Այնուամենայնիվ, ԱՄՆ Պետդեպարտամենտի 2012թ. զեկույցում արձանագրվում է, որ, չնայած կոռումպացված պաշտոնյաների առկա խնդրին, ինչպես տեղի, այնպես էլ օտարերկրյա ձեռնարկությունները նշում են, որ մաքսային օրենքների և կարգավորման վերաբերյալ գիտելիքները հնարավորություն են տալիս ընկերությունների սեփականատերերին խուսափելու կաշառակերության փորձերի մեծ մասից:

Կոռուպցիայի վերացման համար անհրաժեշտ քայլերը

Կառավարության ջանքերը՝ բարձրացնելու կառավարելիությունը եւ կրճատելու կոռուպցիան Հայաստանում, մեր դիտարկումներով հիմնականում կենտրոնացած են միայն պետական մարմինների աշխատանքների բարելավման վրա: Մինչդեռ ներկայումս անհրաժեշտ է ամրապնդել տեղի բիզնեսի ունակությունը, որպեսզի վերջիններս կարողանան պահանջել և պաշտպանել իրենց իրավունքները և ստիպել պետական ինստիտուտներին հաշվետու լինելու: Ոչ բարենպաստ գործարար միջավայրի հետևանքով առաջացող ծախսերը անհամաչափ են բաշխվում մասնավորապես ՓՄՁ-ների համար, իսկ բյուրոկրատական խոչընդոտները սահմանափակում են փոքր բիզնեսի հասանելիությունը տարբեր ծառայություններին,

¹⁵ www.transparency.org

¹⁶ www.weforum.org

որոնց նրանք ապավինում են եւ որոնցից մեծ բիզնեսը կարող է օգտվել համեմատաբար հեշտությամբ:

Ավելին, փոքր և միջին ձեռնարկությունների սուղ ռեսուրսները հնարավորություն չեն տալիս լուծելու այս խնդիրները անհատապես, ստանալու հասարակական հնչեղություն կամ մասնակցելու բարեփոխումների գործընթացներին, պաշտպանելու իրենց շահերը:

Մեր կարծիքով ՀՀ գործարար միջավայրում որոշակի գործոնների առկայությունը անհրաժեշտ նախապայման է, որպեսզի ընկերությունները ներգրավված լինեն կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Այդ գործոնները ներառում են.

- կրթական եւ իրազեկության բարձրացման համապատասխան մեխանիզմների առկայություն.
- բողոքների գրանցման եւ հաշվետվողականության հասանելի համակարգեր.
- իրավաբանական հաստատությունների հասանելի եւ մատչելի օգնություն.
- օժանդակող օրենքների մշակում.
- տեղի գործարարությանը աջակցող կառույցներ՝ ունակ ՓՄՁ-ներին օգնություն ցուցաբերելու կոռուպցիոն խնդիրների առնչությամբ:

Վերջաբան

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում Հայաստանի ձեռքբերումները լավագույն դեպքում սահմանափակ են և այս առումով համաշխարհային հարցումները մտահոգիչ պատկեր են արձանագրում: Ներկայիս հակակոռուպցիոն ռազմավարությունը ընդունվել է 2009 թ. և նպատակ ունի իրականացնելու հակակոռուպցիոն պարտավորությունները, որոնք ստանձնվել են միջազգային այնպիսի կառույցների հանդեպ, ինչպիսիք են «GRECO-ն»¹⁷ (Հակակոռուպցիոն երկրների խումբ) և «OECD-ն»¹⁸ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն): Հայաստանի նախկին ռազմավարության (որն ընդգրկում էր 2003-2007թթ. ժամանակահատվածը)

¹⁷ Group of States against corruption (GRECO), <http://www.coe.int>

¹⁸ Organisation for Economic Co-operation and Development (OECD), www.oecd.org

տարածված քննադատություններից էր, որ չնայած այն բարելավումներ է կատարել հակակոռուպցիոն օրենսդրության մեջ, սակայն ձախողվել է ներդրման փուլում: Ավելին, քննադատները հաճախ մեղադրում են իշխանություններին կենտրոնանալու համար ցածր և միջին օղակների կոռուպցիայի վրա, անտեսելով կոռուպցիոն դրսևորումները ավելի բարձր մակարդակներում: Կոռուպցիայի դեմ պայքարի դանդաղ առաջընթացը փոխկապակցված է թույլ դատական համակարգի հետ: Ինչպես շատ հետխորհրդային երկրներում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը տեսականորեն ամրագրում է անկախ դատական համակարգի սկզբունքը, սակայն գործնականում դատական համակարգը մնում է ենթակա քաղաքական ազդեցության և միջամտության: Երբ խոսքը գնում է առևտրային գործերի մասին, դատական համակարգը հաճախ օգտագործվում է իշխանության քաղաքական հակառակորդների դեմ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ ընթանում են բարեփոխումներ՝ բարելավելու համար դատական համակարգի գործունեությունը և ընդլայնելու անկախությունը: Երկրի քաղաքական համակարգի հիմնական կողմերից մեկը, որ խեղաթյուրում է գործարար միջավայրը, քաղաքական և գործարար վերնախավի անդամների միջև սերտ կապերի առկայությունն է: Չնայած միջազգային ֆինանսական հաստատությունների ճնշմանը, կառավարությունը չի կարողացել արձանագրել նշանակալի առաջընթաց այդ կապերի խափանման առումով: Օրենսդրական փոփոխությունները նույնպես, դեռևս չեն ունեցել մեծ ազդեցություն: Արդյունքում, փոքր և միջին ձեռնարկությունները բողոքում են, որ մեծ բիզնեսի սերտ կապերը քաղաքական շրջանակներում զգալի առավելություններ են ապահովում, երբ խոսքը վերաբերում է հարկային օրենսդրության և կանոնակարգերի կիրառմանը, այդպիսի կապեր չունեցող ընկերություններին դնելով առևտրային և ֆինանսական անբարենպաստ դիրքում: Խնդրի մասին իրազեկումը առաջին անհրաժեշտ քայլն է, եթե նպատակ ունենք լուծելու այն: Հաստատանի համար լավ նորությունն այն է, որ տեղեկացվածության պակաս չկա, երբ խոսքը վերաբերում է կոռուպցիային: Հարցումները ցույց են տալիս, որ մարդիկ նշում են այն, որպես երկրի կարևորագույն խնդիրներից մեկը: Ցավոք, Հայաստանում կոռուպցիոն խնդիրների վերաբերյալ հանրային բարձր տեղեկացվածությունը խնդրի միակ դրական կողմն է: Հասարակության մեջ արմատացած կոռուպցիայի վերացումը երբեք հեշտ չէ: Դա ավելի

դժվար է, երբ կոռուպցիոն հետազոտությունների շրջանակում հարցվածների մեծ մասը ընդունում է կոռուպցիան որպես կյանքի բաղկացուցիչ մաս, որի վերացման առումով անձամբ իրենք ոչինչ չեն կարող անել: Թեև հանրության մեջ կա կոռուպցիայի հաղթահարման ներուժ, հարցական է մնում, թե առկա բացասական միտումները և հիասթափությունը կարո՞ղ են հեղաշրջվել, թե ոչ:

Առանցքային հասկացություններ. *կոռուպցիոն դրսևորումներ, բիզնես միջավայր, կառավարություն, տնտեսական աճ, բիզնես:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «The Firms Speak: What the World Business Environment Survey Tells Us about Constraints on Private Sector Development» հոդված, 10.04.2008
2. Corruption prevention to foster small and medium-sized enterprise development, VOLUME II, Vienna, 2012
3. Journal of Economic Perspectives-Volume 19, «Eight Questions about Corruption», Jakob Svensson, Summer 2005
4. ԱՄՆ Պետդեպարտամենտի 2012թ. զեկույց
5. Գործարարությամբ զբաղվելու 2012թ. զեկույց
6. Համաշխարհային տնտեսական ֆորումի «Մրցունակության համաշխարհային զեկույց 2012-2013»
7. «Global Enabling Trade Report 2012» զեկույց
8. «Global Corruption Report 2009» զեկույց
9. Foundation for Small and Medium Businesses 2006
10. «EBRD & World Bank BEEPS Armenia 2008» զեկույց
11. www.mineconomy.am
12. www.armstate.am
13. www.Doingbusiness.com
14. <http://www.smednc.am/>
15. <http://www.bti-project.org/countryreports/pse/arm/>
16. <http://armenia.usembassy.gov>
17. <http://transparency.am/>

18. www.transparency.org
19. www.weforum.org
20. <http://www.coe.int>
21. www.oecd.org

ВОЗДЕЙСТВИЯ КОРРУПЦИОННЫХ ПРОЯВЛЕНИЙ НА БИЗНЕС-СРЕДУ АРМЕНИИ

В. Саакян

Резюме

Коррупция является серьезным препятствием для социального, экономического и политического развития страны. Коррупция разрушает верховенство закона, приводит к неэффективному распределению ресурсов, деморализует демократию политической системы и подрывает уважение к правам человека. Коррупция также препятствует экономическому росту. Коррупция уменьшает иностранные и внутренние инвестиции поскольку делает непредсказуемыми и увеличивает затраты на ведение бизнеса. Это увеличивает неопределенность и риск, связанные с инвестициями и снижает стимулы для предпринимателей. Основная цель статьи «Влияние коррупционных практик на бизнес-среды Армении» является анализ типов коррупции в бизнес-секторе Армении, судебной системе и в таможенном администрировании. Исследования показывают, что правительство Армении тесно взаимосвязано с бизнес-элитой и судьями. Ситуация не является перспективной также и в таможенной администрации, которая рассмотрена МСБ (Малый и средний бизнес) как одна из самых коррумпированных институтов в Армении. Руководители предприятий сообщают, что экспорт и импорт требует значительного времени и документов для очистки товаров, на границе с Арменией, и что процесс погряз в коррупции и взяточничестве. Это статья содержит обзор статистических анализов и мер, которые могут быть использованы для улучшения общих условий бизнеса, таким образом, что позволило бы МСБ противостоять коррупции.

Ключевые понятия: *коррупционные проявления, бизнес среда, правительство, экономический рост, бизнес*

THE OF EFFECTS CORRUPTION PRACTICES ON THE ARMENIA'S BUSINESS ENVIRONMENT

V. Sahakyan

Summary

Corruption is a serious hindrance to a country's social, economic and political development. Corruption undermines the rule of law, results in the inefficient allocation of resources, demoralizes democratic political systems and undermines respect for human rights. Corruption also impedes economic growth. With rampant corruption, foreign and domestic investment is discouraged because corruption destroys predictability and increases the cost of doing business. It increases the uncertainty and risk attached to investment and reduces incentives for entrepreneurs. The main objective of article "The impact of corruption practices on Armenia's business environment" is to analyse the types of corruptions in Armenia's business sector, judicial system and customs administration. Researches show, that Armenian government is strongly interlinked with business elites and judges. The situation isn't promising in custom administration also. Considered by SMEs as one of the most corrupt institutions in Armenia, business executives report that exporting and importing requires considerable time and paperwork to clear goods at the Armenian border, and that the process is plagued by corruption and bribery. The present article contains an overview of statistical analyses and measures that can be used to improve the overall business environment in a way that allows SMEs to stand up against corruption.

Key concepts: *corruption practices, business environment, government, economic growth, business*

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Սկրտչյան

Առևտուրը գործունեության որոշակի տեսակ է, որի խնդիրն է ապրանքների փոխանակումը ըստ որոշակի օրենքների: Գոյություն ունի ապրանքների փոխանակման երկու տարբերակ՝ ուղղակի, որն այլ կերպ անվանում են նաև բարտեր, և անուղղակի, որի դեպքում կիրառվում է փողը՝ որպես փոխանակման միջոց: Արտաքին առևտուրը /էքսպորտ/ ենթադրում է այլ երկրների ներկայացուցիչների հետ ապրանքային տարաբնույթ հարաբերություններ: Անկասկած, արտահանումը կարևորագույն դեր է խաղում ցանկացած պետության տնտեսական կյանքում, քանի որ ապահովում է նրա երեք հիմնական գործառնությունների իրականացում: Առաջին հերթին, արտաքին առևտրի արդյունավետ կառավարումը թույլ է տալիս պետությանը՝ որպես տնտեսվարող սուբյեկտի, խթանել ազգային ռեսուրսների խնայողաբար օգտագործումը, այդ թվում նաև բնական ռեսուրսների, որը վերջին ժամանակներս մեծ նշանակություն է ստանում: Երկրորդ, արտաքին առևտրի դրական տեղաշարժը, բնականաբար, ապահովում է նոր արտադրությունների բացում, ինչն էլ իր հերթին մեծացնում է աշխատատեղերի թիվը պետության ներսում, դրանով իսկ իջեցնելով այնպիսի սոցիալական ցուցանիշի մակարդակը, ինչպիսին է գործազրկությունը: Երրորդ, արտաքին առևտրի բարձր արդյունավետությունը թույլ է տալիս պետությանը ստանալ արտասահմանյան արժույթի բավականաչափ ներհոսք, ինչն էլ իր հերթին խթանում է արտադրության զարգացմանը, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների ձեռքբերմանը, ոսկու և արժույթի պաշարների մեծացմանը, վերջապես, որպես հետևանք, ստեղծվում են բարենպաստ պայմաններ դեպի երկիր այս կամ այն ներդրումների ներհոսքի համար:

Այսպիսով, արտաքին առևտրի որակյալ և արդյունավետ կառավարումը ցանկացած պետության առաջնային խնդիրներից է: Բացառություն չէ նաև Ճապոնիան. երկիր, որը լինելով բնական ռեսուրսներով աղքատ, կարողացավ բավականին հաջող վերջին տարիներին ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը: Սկզբնապես Ճապոնիան վերամշակող արդ-

յունաբերության համաշխարհային կենտրոն էր, իսկ հետո զարգացում ապրեցին գիտատար ճյուղերը:

Այսօր Ճապոնիան ժամանակակից համաշխարհային տնտեսության առավել նշանավոր առևտրային տերություններից է: Ճապոնիայի տնտեսությունը մեծապես կախված է վառելիքի և արդյունաբերական հումքի ներմուծումից: Այսօրվա դրությամբ ներմուծման կառուցվածքը նշանակալիորեն փոխվել է. առաջնահերթությունը տրվում է մեծ քանակի պատրաստի արտադրանքի ներմուծմանը, այլ ոչ թե հումքային ապրանքների: Չի կարելի չնշել այն փաստը, որ Ճապոնիային նրա կայացման բոլոր փուլերում բնորոշ է եղել առևտրային հաշվեկշռի դրական սալդոն: Սակայն Ճապոնիայի արտաքին առևտրի դրական սալդոն, որը տարիներ շարունակ ապահովում էր ֆինանսների ներհոսք դեպի երկրի տնտեսություն, այժմ նվազման միտում ունի: Իսկ ինչ վերաբերում է Ճապոնիայի տնտեսական աճին, ապա այն 2011 թվականի ֆինանսական տարում կազմել է ընդամենը 2.3 տոկոս¹:

Ճապոնիայի տնտեսությունը ուղղված է բարենպաստ արտաքին տնտեսական կապերի ստեղծմանը՝ նպատակ հետապնդելով ստեղծել և զարգացել պետության մրցունակությունը: Այսինքն, երկրի տնտեսությունը ունի արտաքին առևտրային կողմնորոշում: Ճապոնիայում մեկ շնչի հաշվով արտաքին առևտրային ցուցանիշը (2011թ. այն կազմում էր 12189.37 ԱՄՆ դոլար)² չի կարելի համարել բարձր այն պատճառով, որ չնայած առևտրային շրջանառության ծավալները մեծ են, բայց մեկ շնչի հաշվով արտաքին առևտրային ցուցանիշով Ճապոնիան զբաղեցնում է տասներորդ տեղը աշխարհում:

Ճապոնիան հանդիսանում է ժամանակակից տնտեսության երրորդ խոշորագույն առևտրային տերությունը: Արտաքին առևտուրը բնական ռեսուրսներից զուրկ երկրում խաղում է կենսականորեն կարևոր դեր: Արտահանման մասշտաբները բազմիցս գերազանցում են ներմուծմանը անհրաժեշտ արժույթի կուտակման: Այլ երկրներում բոլոր տեսակի վաճառքների 98.6 տոկոսը բաժին է ընկնում պատրաստի արդյունաբերական արտադրանքին, այդ թվում 74.1 տոկոսը՝ մեքենաներին և սարքավորում-

¹ Ճապոնական վիճակագրական բյուրոյի պաշտոնական կայք էջ՝ URL: <http://www.stat.go.jp>

² <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ja.html>

ներին: Արտաքին առևտրային շրջանառության ցուցանիշով (1006.9 մլրդ ԱՄՆ դոլար) 2009թ. Ճապոնիան զիջում էր միայն ԱՄՆ-ին, ԳՖՀ-ին և Չինաստանին (համապատասխանաբար 2439,7, 2209 և 2,115 մլրդ ԱՄՆ դոլար): Արտադրանքները, որոնք թողարկվում են ճապոնական կազմակերպությունների արտասահմանյան ներկայացուցչությունների կողմից, հիմնականում սպառվում են այդ երկրների տեղական շուկաներում, սակայն ներմուծվում են նաև Ճապոնիա³:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը նշանակալի ազդեցություն ունեցավ Ճապոնիայի տնտեսական զարգացման վրա: Շատ ջանքեր պահանջվեցին, որպեսզի նորից անցում կատարվեր ակտիվ տնտեսական զարգացմանը: Այսպես, 2011թ. արտաքին տնտեսական շրջանառությունը, հաշվարկված վճարային հաշվեկշռի մեթոդով, հասել է 1595.5 մլրդ ԱՄՆ դոլարի 2009թ. 1006.9-ի փոխարեն:

2002 - 2010թթ. ընթացքում Ճապոնիայի արտաքին առևտրի ծավալները աճել են շուրջ երկու անգամ, սակայն այդ աճը տեղի է ունեցել անկայուն ձևով: Վերջինս հատկապես նկատելի է 2003 և 2004 թվականներին: Սկզբում արտաքին առևտրի ծավալները 2002թ. 858718 մլրդ դոլարից 2003թ. նվազել են մինչև 752805 մլրդ դոլար, իսկ հետո 2004թ. այս ցուցանիշը գրանցել է 753939 մլրդ դոլար: Այս տարիների ընթացքում նվազման միտում են ունեցել նաև Ճապոնիայի ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշները: 2002թ. ցուցանիշը Ճապոնիան կարողացել է գերազանցել միայն 2006թ.: Դրա հետևանքով է, որ 2006-2010թթ. ժամանակահատվածում արտաքին առևտրի շրջանառության ցուցանիշը աճել է:

Չի կարելի չնշել այն փաստը, որ Ճապոնիայի արտաքին առևտրի զարգացման ողջ ընթացքում ծածկման գործակիցը գերազանցել է 100 %-ի շեմը, ինչը վկայում է այն մասին, որ արտահանումը գերազանցել է ներմուծման ծավալներին: Բայց միևնույն ժամանակ ծածկման գործակիցը աստիճանաբար նվազել է: Եթե 2002թ. ցուցանիշը կազմել է 126.3%, ապա 2009թ. այն կազմել է արդեն 114.5%, ինչը, անկասկած, վկայում է Ճապոնիայի տնտեսության մեջ ներմուծման դերի մեծացման մասին: 2010թ. ծածկման գործակիցը կազմել է 103.1%, ինչի կապակցությամբ կարելի է

³ International Journal of Theory and Policy “Japan and the World Economy” June 2010, էջ 12

Աղյուսակ 1.

Ծաղկունիայի արտաքին առևտրի զարգացման դինամիկան 2002 - 2010 թթ.⁴

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արտաքին առևտրի շրջանառությունը (մլրդ ԱՄՆ դոլար)	858718	752805	753939	855084	1020335	1109974	1229557	1329513	1549009
Արտահանումը (մլրդ ԱՄՆ դոլար)	479227	403616	416730	471999	565743	594986	649948	709668	786434
Ներմուծումը (մլրդ ԱՄՆ դոլար)	379491	349189	337209	383085	454592	514988	579609	619845	762575
Ծածկման գործակիցը (%)	126,3	115,6	123,6	123,2	124,5	115,5	112,1	114,5	103,1
Ծաղկունիայի տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ (%)	7,9	6,9	5,1	6,7	6,5	6,1	5,7	5,5	5,2
Ծաղկունիայի տեսակարար կշիռը համաշխարհային ներմուծման մեջ (%)	6,0	5,8	5,4	5,3	5,3	5,2	5,1	4,7	4,9

⁴ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ja.html>

նշել այն փաստը, որ շուտով հնարավոր է, որ ներմուծումը առաջատար տեղ զբաղեցնի Ճապոնիայի արտաքին առևտրի շրջանառության մեջ:

Համաշխարհային արտահանման մեջ երկրի տեսակարար կշիռը 2002-2010թթ. ժամանակահատվածում աստիճանաբար կրճատվել է, միևնույն ժամանակ արտահանման ծավալները աճել են: Նույնը տեղի է ունեցել նաև Ճապոնիայի ներմուծման հետ: Դրանից հարկ է նշել, որ Ճապոնիան, չնայած աճի տեմպերի, զիջում է իր առաջատարի դիրքերը, այնպիսի երկրների, ինչպիսին է, օրինակ, Չինաստանը, որն ավելի ու ավելի է բարելավում իր դիրքերը և ամրապնդվում ժամանակակից համաշխարհային տնտեսության մեջ:

Ճապոնիայում մինչ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ի հայտ գալը արտահանման արժեքային ծավալների աճը հիմնավորված է եղել ներքին շուկայի վճարունակ պահանջարկի առկայությամբ, բայց միևնույն ժամանակ մեծ ոլորտ էր զբաղեցնում առևտուր արտաքին շուկաներում: Արտահանման-ներմուծման գործունեության ռեկորդային քանակական ցուցանիշների երկիրը հասել է 2011թ. (1595,5 մլրդ ԱՄՆ դոլար): Չնայած տնտեսական ճգնաժամին, Ճապոնիան 2006թ.-ից սկսած նախկինի պես հաջողակ կերպով զարգացրել է իր տնտեսությունը: Ներմուծվող ապրանքների կտրվածքով առաջատար դիրքեր են զբաղեցրել մեքենաները և սարքավորումները, վառելիքը, սնունդը, քիմիկատները, տեքստիլը, հանքաքարը և այլ հումքային ապրանքներ: Հենց ապրանքների այս կատեգորիաների և, մեծամասամբ, մեքենաների և սարքավորումների նկատմամբ ներքին շուկաներում պահանջարկի կրճատումն էլ 2003-2004թթ. ընթացքում ձևավորեց ներմուծման ծավալների կրճատման հիմնական մասը: Ներմուծում է Ճապոնիան առաջին հերթին հանքային վառելիք (նավթ, ածուխ և գազ), որին բաժին է ընկնում ընդհանուր ներմուծման 27,7%: Էլեկտրոնիկայի ներմուծումը կազմում է 12,8%, արդյունաբերական ապրանքների՝ 9,7%, մեքենասարքավորումներին՝ 9,3%: Ինչպես նաև Ճապոնիան ներմուծում է սննդամթերք (8,5%), քիմիական ապրանքներ (7,3%) և հումք (7%)⁵:

Արտահանումը և նրա ապրանքային կառուցվածքը, ինչպես և 2000-ական թվականներին, կապված է երկրից պատրաստի արտադրանքի արտա-

⁵ <http://worldbank.org>

հանման հետ: Ապրանքային հիմնական խմբերը, որոնց նկատմամբ վերջին տարիներին նկատվել է մեծ պահանջարկ, հանդիսանում են. տրանսպորտային միջոցները, տրանսպորտային սարքավորումները, էլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկան, քիմիական արդյունաբերության արտադրանքները: Ճապոնիան զբաղեցրել է առաջին տեղը աշխարհում մի շարք էլեկտրոն և ռադիոապրանքների, պողպատի արտադրության մեջ, ընդ որում չունենալով ոչ հանքաքար, ոչ ածուխ և այլն: Ճապոնիայի արտաքին տնտեսական գործունեությունը տարբերվում է իր ապրանքային հագեցվածությամբ և ապրանքաշրջանառության մեծ ծավալներով: Ճապոնական արտահանման ապրանքաճյուղային կառուցվածքում վերջին տարիներին, մասնավորապես 2011թ., առաջատարի դերում են եղել տրանսպորտային սարքավորումները (24,2%), արտահանման ավելի փոքր տեսակարար կշիռ բաժին է ընկել էլեկտրատեխնիկային և էլեկտրոնիկային (21,4%) և մեքենաշինությանը (19,7%): Արդյունաբերական ապրանքները /ներառյալ պողպատյա և թուջե արտադրանքները, ինչպես նաև գունավոր մետաղները, տեքստիլային թելերը և կտորողենը/ կազմում են 11,5%, իսկ քիմիական ապրանքները՝ 9%⁶:

Աճի միջին տարեկան տեմպի ցուցանիշով, Ճապոնիայի արտահանման առավել դինամիկ զարգացող հողվածներից է հանդիսանում ոչ պարենային հումքը (բացի վառելիքից):

Արտահանման-ներմուծման ռեկորդային քանակական ցուցանիշները, որոնք ձեռք են բերվել վերջին տարիներին, չի կարելի միանշանակ դիտել որպես դրական երևույթներ, քանի որ դեռևս պահպանվում են բացասական գործոնների ազդեցությունը՝ կապված արտաքին առևտրի հետ, իսկ դրանցից ոմանք նույնիսկ ավելի են ուժգնացել: Մասնավորապես, Ճապոնիայի դերի կրճատումը այլ երկրների համեմատությամբ: Սինույն ժամանակ ճապոնական ապրանքների համար բնորոշ է բարձր մրցունակությունը: Ճապոնական արտադրանքի հիմնական դրական կողմը հանդիսանում է այն փաստը, որ խոտան արտադրանքի քանակը չի գերազանցում արդյունաբերական արտադրանքի 0.01%: Աշխատանքի արտադրողականության արագընթաց աճը, այս կամ այն կոնֆլիկտների դեպքում աշխատաժամանակի նշանակալիորեն փոքր կորուստները, մասնավոր

⁶ <http://www.stat.go.jp>

խնայողությունների ամենաբարձր մակարդակը նույնպես ունեն ոչ փոքր դերակատարություն ժամանակակից համաշխարհային տնտեսության մեջ ճապոնիայի դիրքերի ամրապնդման գործում⁷:

Այսօր, հետճգնաժամային ժամանակահատվածում, ճապոնական խոշորագույն կազմակերպությունները արտահանման շուկայում բախվում են հսկայական խնդիրների հետ: Կրճատվում են կապիտալ ներդրումները և պակասում են արտադրական պաշարները՝ երկարատև ճգնաժամի սպասումների և արտահանման կրճատումների կապակցությամբ: 2009թ. ֆինանսական տարվա վերջում տնտեսության բոլոր ճյուղերում անցկացվել են մասսայական կրճատումներ: Ճապոնիայի այնպիսի գործատուները, ինչպիսիք են Toyota Motor Corp., Komatsu Ltd., Sharp Corp., Sony Corp., կրճատել են իրենց աշխատատեղերը: Այսօր իրավիճակը փոխվում է շատ դանդաղորեն, բայց նպատակաուղղված, գործազրկության մակարդակը Ճապոնիայում 2012թ. հուլիսի դրությամբ կազմել է 4.2%:

Ճապոնիայի ՀՆԱ 2010թ. երրորդ եռամսյակի վերջնական տվյալներով նախորդ եռամսյակի համեմատ կրճատվել է 0,5%-ով: Ընդ որում, տարեկան հաշվետվություններով ՀՆԱ կրճատումը կազմել է 1,8%: Չնայած դրան այսօրվա դրությամբ Ճապոնիան աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը ՀՆԱ-ի ցուցանիշով (5 458 մլրդ ԱՄՆ դոլար): Ըստ ՀՆԱ ոլորտների Ճապոնիան բաժանվում է գյուղատնտեսության՝ 1,5 %, արդյունաբերության՝ 22,8 %, ծառայությունների ոլորտի՝ 75,7 %: 2011 թվականի ընթացքում երկրի ՀՆԱ կրճատվել է 0.2 տոկոսով, ընդ որում՝ ոչ պետական ոլորտում ներդրումները կրճատվել են 2,0% -ով⁸:

Ճապոնիայի ներմուծման ծայրահեղ բարձր կենտրոնացումը վառելիքահումքային ապրանքների և նյութերի նեղ խմբի վրա երկրի տնտեսությունը դարձնում է բավականին զգայուն համաշխարհային ենթակառուցվածքների տատանումների նկատմամբ և սահմանափակում է աշխատանքի միջազգային բաժանման մեջ նրա արդյունավետ մասնակցության հնարավորությունները: Տարին տարվա նկատմամբ Ճապոնիայի տնտեսությունը ավելի ու ավելի է կախվածության մեջ ընկնում է ներգակիրների

⁷ Economic survey of Japan 2008: Reforming the labour market to cope with increasing dualism and population ageing.

⁸ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ja.html>

(առաջին հերթին նավթի) համաշխարհային գներից, ինչն էլ գնալով ավելի մեծ վտանգ է ներկայացնում երկրի սոցիալ-տնտեսական կայունության համար: Նույնը կարելի է ասել հումքի ներմուծման մասին, իսկ վերամշակող արդյունաբերության համար արտադրանքի ներմուծումը ճապոնիայում խաղում է շատ նշանակալի դեր:

Արդյունաբերության վերամշակող ճյուղերի արտադրանքների արտահանման բարենպաստ առանձնահատկություններից մեկը հանդիսանում է այն, որ նրանում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձր տեխնոլոգիատար արտադրանքները:

Արտաքին առևտրում ճապոնիայի հիմնական գործընկեր երկրներ են հանդիսանում Չինաստանը, ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի երկրները, Հարավ-Արևելյան Ասիայի երկրները: Ճապոնիան ակտիվ կերպով համագործակցում է Չինաստանի հետ, արտահանումը 2011թ. դեպի Չինաստան աճել է 17.5%-ով, իսկ ներմուծումը ավելացել է 9.8%-ով: Վերջին հաշվով 2011թ. ընթացքում Չինաստանի հետ առևտրի սալբոն դրական է եղել: Արտահանումը ԱՄՆ 2011թ. ընթացքում աճել է ընդամենը 4.8%-ով, սակայն ներմուծումը ցուցաբերել է առավել բացասական դինամիկա. մեկ տարվա ընթացքում այն կրճատվել է 6.5 տոկոսով: Արտահանումը Արևմտյան Եվրոպայի երկրներ 2011թ. ընթացքում 2010-ի համեմատ, չի փոփոխվել, իսկ ներմուծումը կրճատվել է 0.4%-ով: Նշանակալի չափով ներմուծման աճը պայմանավորված է եղել ռեսուրսների գների աճով, իսկ արտահանումը 2011թ առաջին կիսամյակի դրությամբ կայուն է եղել, բայց այսօր նույնիսկ առկա են իրադրության վատթարացման ռիսկեր, քանի որ իենի ծավալների աճի արդյունքները դեռևս նկատելի չեն: Անկայունության ռիսկերը ճապոնական տնտեսության ներսում դեռևս կաճեն⁹:

Ճապոնիայի ներկայիս մասնագիտացումը աշխատանքի միջազգային բաժանման մեջ պատրաստի արտադրանքի մատակարարման առումով միանգամայն օբյեկտիվ երևույթ է: Այն արտացոլում է Ճապոնիայի աշխարհագրական դրությունը, մասնավորապես՝ մի շարք օգտակար ռեսուրսների բացակայությունը երկրի տարածքում: Ճապոնիայի արտահանող ճյուղերը հանդիսանում են առավել ուժեղ և արդյունավետ ժամանակակից տնտեսության մեջ, հենց այդ պատճառով էլ արտահանման ծավալ-

⁹ WorldEconomic Outlook Database. URL: <http://www.imf.org>

ների կրճատումը կազդի Ճապոնիայի արտադրողականության, տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի վրա, ինչն էլ, անշուշտ, կասկածի տակ կդնի երկրի տնտեսական առաջատարությունը:

Արտահանվող ապրանքների պահանջարկի մեծացումը տարեցտարի ամրապնդում է ճապոնական տրանսպորտային և գիտատար ճյուղերի ապրանքների մրցունակությունը, որն էլ աստիճանաբար մեծանում է բարձր որակական և գնային առանձնահատկությունների հաշվին:

Ճապոնիայի արտաքին առևտրի կառուցվածքում գլխավոր դերը՝ որպես խոշորագույն գործընկեր, զբաղեցնում է Չինաստանը, որին ուսումնասիրվող ժամանակահատվածում բաժին է ընկել երկրի արտաքին առևտրային շրջանառության առավել մեծ մասը: 2011թ. արտահանումը դեպի Չինաստան կազմել է 18,88 %, ներմուծումը՝ 22,2 %:

Ճապոնիայի արտաքին տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից, որը մեծ ազդեցություն է ունենում ճապոնական տնտեսության զարգացման վրա, հանդիսանում է տնտեսական համագործակցությունը այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Չինաստանը և ԱՄՆ: Դիտարկվող ժամանակահատվածում Ճապոնիայի առևտրատնտեսական հարաբերությունները տվյալ երկրների հետ զարգացել են բավականին անհավասարաչափ, բայց ընդհանուր առմամբ նկատելի են արտահանման և ներմուծման տեսակարար կշիռների աճի նշանակալի տեմպեր դեպի հենց այս երկրներ:

Այսպիսով, 2002-2012թթ. ընթացքում Ճապոնիայի արտաքին առևտրի զարգացման հիմնական միտումների ոլորտում կատարված վերլուծության արդյունքում փաստացիորեն հանգում են հետևյալին. մի կողմից նկատվում է արտաքին առևտուրը բնութագրող քանակական ցուցանիշների աճ, որոնք սակայն ուղեկցվել են 2003 և 2004 թվականների անկմամբ, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներով, որը սկսվել էր 2008թ.: Միևնույն ժամանակ ակնհայտ է Ճապոնիայի արտաքին առևտրի ոլորտի իրավիճակի քանակական բնութագրիչների անընդհատ բարելավում: Ընդհանուր առմամբ արտաքին տնտեսական ոլորտը զարգանում է դինամիկ կերպով՝ անմիջապես արձագանքելով շրջապատի փոփոխություններին: Սակայն դրա կառուցվածքի օպտիմալացման համար անհրաժեշտ է մշակել ռազմավարական կողմնորոշվածությամբ միջոցառումների համալիր: Ճապո-

նական արդյունաբերության մի քանի ճյուղեր, ինչպիսիք են արհեստական մանրաթելի և սև մետաղների արտադրությունը, աստիճանաբար մեծացնում են հզորությունները և կողմնորոշվում են դեպի առավել թանկարժեք անհատական և փոքրածավալ գիտատար արտադրանքների արտադրություն, ինչպիսիք են դեղորայքը, հրթիռները, միկրոպրոցեսորային արտադրանքները, ծրագրային ապահովվածությունը, բիոտեխնոլոգիական ապրանքները, այսինքն՝ անցում են կատարում այն ճյուղեր, որոնք դիտարկվում են որպես ամերիկյան արդյունաբերության վերջին առաջատար ճյուղեր:

Բացի այդ, Ճապոնիան չի կարող իրեն թույլ տալ ուշադրությունից դուրս թողնել այնպիսի մրցակիցների, ինչպիսիք են Ավստրալիան, որը արդեն երկար ժամանակ է ունի բարձր տնտեսական ցուցանիշներ, Մալազիան, Թայլանդը և Ինդոնեզիան, որոնք ունեն զարգացման համար անհրաժեշտ բավականաչափ ներուժ, ինչպես նաև աշխարհի այլ տարածաշրջանների նոր ինդուստրիալ երկրները, օրինակ Բրազիլիան: Արտաքին աշխարհից «մեկուսացվածության» զգացումը կարող է խոչընդոտ հանդիսանալ Ճապոնիայի համար համաշխարհային առաջատարի դերը ստանձնելու առումով:

Ճապոնիան զարգացած արտաքին առևտուր ունեցող երկիր է, բայց միևնույն ժամանակ այն դեռևս զարգացած միջազգային մտածողություն և համապատասխան կազմակերպվածություն ունեցող երկիր չի դարձել¹⁰: 21-րդ դարի սկզբին Ճապոնիան կանգնած է կայուն տնտեսությանը վերադառնալու և համաշխարհային տնտեսության իր առաջատար դերը պահպանելու անհրաժեշտության առջև:

Առանցքային հասկացություններ. *ազատ առևտուր, առևտրի դեֆիցիտ, զարգացում, ծառայություններ, կառավարում, կառուցվածք, մասնագիտացում, ներմուծման քվոտա, նորամուծություն, օգտակար հանածոներ*

¹⁰ Japan - Economic forecast summary (November 2011) URL: <http://www.oecd.org>

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Economic survey of Japan 2008: Reforming the labour market to cope with increasing dualism and population ageing.
2. Europe Japan Centre, Kaizen Strategies for Improving Team Performance, Ed. Michael Colenso, London: Pearson Education Limited, 2000
3. International Journal of Theory and Policy “Japan and the World Economy” June 2010
4. Japan - Economic forecast summary (November 2011) URL: <http://www.oecd.org>
5. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ja.html>
6. <http://worldbank.org>
7. <http://www.imf.org>
8. <http://www.stat.go.jp>

ANALYSIS OF THE PROBLEMS OF THE FOREIGN TRADE OF JAPAN

S. Mkrtchyan

Summary

In any country, difficulties concerning achievement of high quality and foreign trade's efficient management seem one of key problems. Japan is not an exception, too – a country that, being poor in natural resources, has been rather successfully integrated into the world economy during recent period. Japan's economy is aimed at creating favorable external and internal economic relations, aiming to create state competition and develop it. It means that Japanese economy has been oriented on foreign trade. At present, Japan is one of the most famous commercial powers in modern world economy. This article is dedicated to the research of foreign trade management in Japan.

Key concepts: *free trade, trade deficit, development, services, management, structure, specialization, import quota, innovation, minerals*

АНАЛИЗ ПРОБЛЕМ УПРАВЛЕНИЯ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ ЯПОНИИ

С. Мкртчян

Резюме

Трудности, связанные с достижением высокого качества внешней торговли и эффективного управления ею, являются ключевой проблемой для любой страны. Япония не является исключением – страна, которая, будучи бедной природными ресурсами, весьма успешно интегрировалась в мировую экономику в последний период. Экономика Японии нацелена на формирование благоприятных внешне- и внутриэкономических отношений, направленных на становление и развитие государственной конкуренции. То есть, экономика страны имеет внешнюю торговую ориентацию. Сегодня Япония является наиболее известной коммерческой силой в современном мире экономики. Данная статья посвящена исследованию управления внешней торговлей этой страны.

Ключевые понятия: *свободная торговля, торговый дефицит, развитие, услуги, управление, структура, специализация, импортная квота, инновация, полезные ископаемые.*

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՃԳՆԱԺԱՍԸ**

Ս. Սկրտչյան

Աշխարհի ոչ մի երկիր չի կարող գոյատևել առանց այլ երկրների հետ տնտեսական կապերի, իսկ շատ երկրների համար էլ առևտուրն արտաքին տնտեսական գործունեության հիմնական ձևն է: Երկրների միջև առևտրային կապերի անհրաժեշտությունը պայմանավորված է բնական և աշխատանքային ռեսուրսների ասիմանափակվածությամբ, դրանց անհավասարաչափ բաշխմամբ, նեղ սպառողական շուկայով, ինչպես նաև նրանով, որ ապրանքների արտադրությունն առհասարակ պահանջում է տարբեր ռեսուրսների, տեխնոլոգիաների և ներդրումային ապրանքների առկայություն: Եթե նույնիսկ երկրներն ունեն ռեսուրսաապահովվածության բարձր մակարդակ, սպառողական լայն շուկա, միևնույն է, չեն կարող անհրաժեշտ արդյունավետությամբ արտադրել բոլոր այն ապրանքները, որոնց կարիքը զգում է իր երկրի հասարակությունը:

ՀՀ-ում արտաքին առևտրային կապերը ձևավորվել են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ: Մինչ անկախացումը Հայաստանի ապրանքներ արտադրող ձեռնարկություններն ու ճյուղերը կոոպերացված կապերի մեջ էին գտնվում ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ: Իսկ դա նշանակում է, որ խորհրդային տարիներին Հայաստանն ինքնուրույն առևտուր և արտարժութային գործարքներ իրականացնել չէր կարող:

Անցման տարիներին Հայաստանի արտաքին առևտրային կապերի բնույթը փոխվեց՝ դառնալով ազատական և ինքնուրույն: Այդ կապերն ամրապնդելու և ընդլայնելու համար, առաջին հերթին, տնտեսությունը պետք է կայունանա և զարգանա անշեղ աճի տեմպերով: Սովորաբար փոքր երկրները, ինչպիսին Հայաստանն է, իրենց արտաքին առևտրային կապերը չեն կարող կառուցել այլ երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ունենալու համար, նրանք ցանկանում են ստեղծել փոխհամաձայնության վրա ձևավորվող հարաբերություններ, որոնք

սկզբնական շրջանում թեկուզև հանգեցնեն «զուտ արտահանման» պատիվ հաշվեկշռի, սակայն նպատակը հետապնդելով հետագայում այն ակտիվ դարձնելն է:

Մինչ 2007-2008թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի վերջին 5 տարիների Հայաստանի մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկայի ուսումնասիրությունը որոշակիորեն բացահայտում է ազատական տնտեսակարգին անցման ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական միտումները:

Պետք է նշել, որ տնտեսական ճգնաժամի հետևանքով, որն ավելի խորը դրսևորվեց 1991-1994թթ. երկրի համախառն ներքին արդյունքը կրճատվեց ավելի քան 2 անգամ (միայն 1992 թվականին 42 տոկոսով): Ծգնաժամը իր բացասական հետևանքը թողեց նաև արտաքին առևտրի ծավալների վրա, մասնավորապես 1991 թվականին 1990 թվականի համեմատ արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվեց գրեթե կիսով չափ, իսկ 1992 թ. ավելի քան 16 անգամ, ընդ որում արտահանման ծավալները նվազեցին ավելի քան 24 անգամ, իսկ ներմուծմանը՝ շուրջ 13 անգամ:

Այնուհանդերձ, սկսած 1995 թվականից հանրապետության տնտեսությունում արձանագրված կայունացման և նույնիսկ որոշակի աշխուժացման միտումը իր դրական ազդեցությունը թողեց նաև արտաքին առևտրի վրա, հատկապես սկսած 2000 թվականից: Այդ տարիներին ՀՆԱ-ի 5.5 տոկոս միջին տարեկան աճին համընթաց արձանագրվեց առևտրաշրջանառության 16.4%, արտահանման՝ 29.3% և ներմուծման 11.8% միջին տարեկան աճ: Արդյունքում՝ արտահանման ծավալի հաշվին ներմուծման ծավալի ծածկման գործակիցը 2000թ. 0.29-ից 2003թ. կազմեց 0.51:

Վերջին տարիներին Հայաստանի կողմից կնքված միջպետական պայմանագրերը և Հայաստանի անդամակցությունը մի շարք միջազգային կառույցների (հատկապես Առևտրի համաշխարհային կազմակերպությունը) զգալի խթան հանդիսացան արտաքին առևտրի զարգացման համար: Արդյունքում նշանակալի փոփոխություն կրեց նաև արտաքին առևտրի կազմակերպումը:

Եթե անցումային շրջանի առաջին տարիներին Հայաստանի արտաքին առևտուրը հիմնականում կրում էր պատահական (մեկ գործարքի) բնույթ, ապա վերջին շրջանում արտաքին առևտրի մասնակիցները

առևտրային հարաբերություններն իրականացնում են այդ բնագավառում գոյություն ունեցող միջազգային նորմերին համապատասխան:

Արտաքին առևտրի զարգացումն ուղեկցվել է ինչպես աշխարհագրական ուղղվածության, այնպես էլ ապրանքային կառուցվածքի փոփոխմամբ: Եթե սկզբնական շրջանում առևտրային հարաբերությունները հիմնականում իրականացվում էին ԱՊՀ երկրների հետ, ապա հետագայում այն ուղղվեց դեպի ոչ ԱՊՀ երկրներ, հատկապես՝ Եվրոմիության երկրներ (2008թ. արդյունքներով համապատասխանաբար՝ 77.6% և 32.4%, 1993թ.՝ 28.0% և 13.0%): Արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ տնտեսական զարգացմանը և բնակչության սոցիալական որոշակի բարելավմանը գուզընթաց այն դրսևորել է դեպի տնտեսապես զարգացած երկրներ ուղղվածության միտում (ԵՄ երկրներ, ԱՄՆ, Կանադա, Շվեյցարիա և այլն): Այլ գործոնների ազդեցության հետ մեկտեղ, թերևս, դա կարող է հետևանք լինել նաև առավել համակարգված մարքեթինգային պայմաններով բնորոշվող այլ երկրների շուկաներում հայաստանյան գործարարների հարմարվելուն (ադապտացիային):

Արտահանում: Ընդունված փաստ է, որ Հայաստանի տնտեսության զարգացումը, իր սահմանափակ ներքին շուկայով, մեծապես կախված է արտահանման ծավալների առաջանցիկ աճից:

Ուսումնասիրելով Հայաստանի ապրանքային արտահանումը հետխորհրդային ժամանակահատվածում, պետք է այն բաժանել երկու մասի՝ 1992-1999թթ. և 2000-2008թթ.: Հաշվի առնելով, որ սկզբնական շրջանում խաթարված էին ԱՊՀ երկրների հետ եղած, պլանային տնտեսությանը հատուկ, սերտ կոռպերացիոն կապերը, իսկ արտաքին աշխարհի հետ արտաքին առևտուրը մինչ այդ իրականացվում էր գլխավորապես կենտրոնացված կարգով, բնականաբար առաջին ժամանակահատվածին ավելի շատ բնորոշ էին պատահական, միանգամյա գործարքները. այդ ժամանակահատվածը կարելի է համարել արտահանման կայացման ժամանակաշրջան:

Ընդ որում՝ այս ժամանակահատվածում արտահանման տեմպերը որոշ տարիների ունեցել են աճի, իսկ որոշ տարիների՝ անկման երևույթներ: Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել, որ սկզբնական շրջանում չունե-

նալով արտահանմանն ուղղված արտադրություն և համապատասխան ենթակառուցվածքներ և անհրաժեշտ պայմանագրեր, մեծ ծավալներով արտահանվում էր մետաղի ջարդոն և թափոն, որոշ տարիների դրանց տեսակարար կշիռը անցնում էր նույնիսկ ամբողջ արտահանման 20%-ի սահմանը (արտահանվում էր հիմնականում Վրաստան և Իրան):

Այնուհանդերձ, 1992-1999թթ. արտահանման ծավալները աճեցին ավելի քան 2.8 անգամ, կամ ապահովվեց 14% միջին տարեկան աճ: Երկրորդ ժամանակահատվածը, բացառությամբ 2008թ. (երբ, թերևս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցության պատճառով, արտահանումը նվազեց 7.2%-ով), կարելի է համարել Հայաստանի ապրանքային արտահանման կայուն զարգացման շրջան, որը արդյունք էր ինչպես միջազգային շուկայում հայաստանյան գործարարների «անդամագրվելուն», այնպես էլ երկրի կառավարության կողմից կնքված միջպետական պայմանագրերի և մի շարք միջազգային կառույցների Հայաստանի անդամակցության (հատկապես Առևտրի համաշխարհային կազմակերպությանը): 2000 թվականի համեմատությամբ արտահանման ծավալները 2008թ. աճել էին ավելի քան 4.5 անգամ, այդ տարիներին ապահովվել է 18.5% միջին տարեկան հավելված:

Ուսումնասիրվող ամբողջ ժամանակահատվածում արտահանման մեջ վերջին տարիներին տեղի ունեցող զարգացումները ապացուցում են, որ գոյություն ունի անմիջական կապ օտարերկրյա ներդրումների ներհոսքի և արտահանման ավելի բարձր ցուցանիշների միջև: Այն ոլորտները, որտեղ իրականացվել են նշանակալի ծավալներով օտարերկրյա ներդրումներ, հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ) օրինակ՝ աղամանդի վերամշակում, սննդամթերքի արտադրություն, քիմիական արդյունաբերություն, հանքագործական արդյունաբերություն և այլն, կարողացել են ձեռք բերել ավելի լավ դիրքեր արտասահմանյան շուկաներում: ՕՈՒՆ-ի և արտահանման աճի միջև եղած կապը ցույց է տալիս, որ գոյություն ունեն լավ հեռանկարներ արտահանման ուղղվածությամբ ձեռնարկությունների զարգացման համար, քանի որ նրանք ձեռք են բերում ռազմավարական գործընկերներ և մուտք դեպի նոր շուկաներ:

Ուսումնասիրելով ՕՈՒՆ-ի ազդեցությունը արտահանման խթանման տեսանկյունից, հարկ է նշել, որ այն որոշ տեսակի ապրանքների արտա-

հանման վրա ունեցել է որոշակի դրական ազդեցություն, մասնավորապես լոլիկի մածուկի, ադամանդի, սիգարետի, անմշակ ոսկու, չգտված պղնձի, ժամացույցների և դրանց մասերի գծով: Սակայն որոշ ոլորտներում կատարված ներդրումները դեռևս չեն խթանել արտահանման ծավալների աճը: Թերևս դրանց գծով կատարված ներդրումների արդյունքում մասնակիորեն բավարարվել է ներքին շուկայի պահանջարկը կամ դրա մի մասը, իսկ որոշ դեպքերում փոխարինվել է ներմուծումը (տես աղյուսակ 1-ում):

Հարկ է նշել, որ աղյուսակում բերված ապրանքներից՝ շաքարից և ալյուրից հրուշակեղենի, ձվի, սիգարետի, շաքարով ըմպելիքի հանրապետության սպառողական պահանջարկի գերակշիռ մասը անցումային շրջանի սկզբնական տարիներին ապահովվում էր ներմուծման հաշվին: 1997-2000թթ. հանրապետությունում կատարված օտարերկրյա և ներքին ներդրումների շնորհիվ որոշ ապրանքների գծով ոչ միայն ապահովվեց հանրապետության սպառողական պահանջարկը, այլ նաև իրականացվեց դրանց արտահանում, իսկ որոշ ապրանքների գծով ներմուծումը մասնակի կամ ամբողջապես փոխարինվեց (քացի աղյուսակում բերված ապրանքներից՝ կերակրի աղ, թռչնի միս, շաքարով գազավորված ըմպելիք, մրգային հյութեր, կարտոֆիլ, տխ, պաղպաղակ, մանածագործական արտադրանք, ներկանյութեր և այլն):

Այնուհանդերձ, ուսումնասիրվող ամբողջ ժամանակահատվածում արտահանման գերակշիռ մասը և բնականաբար հավելաճի տեմպը ապահովվել է չորս ապրանքային խմբերի գծով՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» (ադամանդ)», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր(ֆերոմոլիբդեն, պղինձ)», «Հանքահումքային արտադրանք (մոլիբդենի և պղնձի խտանյութ)» և «Պատրաստի սննդի արտադրանք (կոնյակ)»: Այսինքն, դա վկայում է այն մասին, որ Հայաստանի արտահանումը խիստ բևեռացված է (2004թ. կազմել է 32.0%, 2005թ.՝ 33.5%, 2006թ.՝ 45.5%, 2007թ.՝ 43.7%, 2008թ.՝ 45.2%), և վերջին տարիներին միայն վերը նշված 4 ապրանքային բաժինների գծով ապահովվել է արտահանման ծավալի շուրջ 80%:

Այսպիսով, արտահանման աճի բազան դեռևս մնում է սահմանափակ, քանի որ ապրանքատեսակները, որոնք կարող են արտահանվել, արտադրական հնարավորությունների սահմաններում արտադրված արտադրան-

Աղյուսակ 1.
Որոշ ապրանքների արտահանման դինամիկան, դրոնց արտադրության ճյուղերում իրականացվել են ՕՈՒՆ-ներ, 1998-2008թթ. (հազ. դոլար)

	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Թռչնի ձու	0	0	89	354	371	531	1320	538	575	419	561
Հրուշակեղեն շաքարից և շոկոլատ	0	35	75	164	136	187	185	230	305	269	441
Հրուշակեղեն այլուրից	4.6	0.3	4.2	1	19	91	87	133	161	309	438
Լոլիկի մածուկ	838.7	85.6	992	3501	3496	4050	3242	3220	2668	3598	2506
Ընկալիչ շաքարով	0	8	81	160	359	595	697	806	922	1037	1299
Կոնյակ	14153	8967	21278	36047	42722	57403	53710	79920	72303	116128	141780
Սիզարետ	371.6	1192	1695	2197	3089	2761	3939	3188	3124	3904	6179
Պղնձի համաբա- բար	8095	7005	6212	11674	12192	17023	28916	22056	72783	88062	101560
Արամանդ	47026	83891	98720	85800	198210	287948	221019	263021	226069	160579	145594
Ոսկի ամնշակ	3633	11832	9306	19242	42121	35404	43546	36454	36665	18298	5364
Չգտված պղինձ	3666	788	11396	9688	9617	11736	35732	46324	71340	66702	63254
Ժամացույց և դրա մասեր	985	317	732	3781	16580	28575	3273	2873	18846	25071	11408

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ «ՀՀ արտաքին առևտուրը, 4-միշ մակարդակ» տարբեր տարիների իրապարակումներ

քը շատ դեպքերում չի բավարարում միջազգային շուկայի պահանջներին: Դեռևս արտահանման առյուծի բաժինը ընկնում է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերին ու մետաղներին: Չնչին տեսակարար կշիռ ունեն Հայաստանի արտահանման համար ավանդական այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մանածագործական իրերի, մեքենաների, սարքավորումների, մեխանիզմների ոլորտները: Ընդ որում վերջինս դրսևորել է նվազման միտում:

Ներմուծում: Հարկ է նշել, որ եթե ապրանքների արտահանումը, այլ հավասար պայմաններում, անմիջականորեն կախված է երկրի տնտեսության գործունեությունից, ապա ներմուծումը՝ երկրի վերջնական սպառման մակարդակից: Ուսումնասիրելով ներմուծման դինամիկան հետխորհրդային ժամանակահատվածում հարկ է նշել, որ բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների նման՝ ներմուծումը ևս ունենալով ավելի քան 85% անկում, այնուհետև գրեթե ամբողջ այդ ժամանակահատվածում դրսևորել է կայուն աճի միտում, ապահովելով 21.1% միջին տարեկան աճի տեմպ, ընդ որում վերջին 4 տարիներին (2004-2008թթ.) ներմուծման ծավալները աճել են 3.3 անգամ, իսկ աճի միջին տարեկան տեմպը կազմել է 34.4%:

Ներմուծման կառուցվածքը ուսումնասիրելով աշխարհագրական և ժամանակագրական առումով, հարկ է նշել, որ սկզբնական շրջանում ներմուծվում էին գլխավորապես սպառմանն ուղղված առաջին անհրաժեշտության ապրանքներ, որոնք ներկրվում էին գլխավորապես այն երկրներից, որտեղ այդ ապրանքները համեմատաբար էժան էին, անկախ դրանց որակից: Այսպես, եթե 1993-1998թթ. Հայաստանի ներմուծման 45.5%-ը իրականացվում էր ԱՊՀ երկրներից, ԱՄՆ-ից (հիմնականում մարդասիրական օգնություն), 39.0%-ը՝ այլ երկրներից՝ Իրանից, Թուրքիայից և Արաբական Սիացյալ Էմիրություններից, իսկ 15.5%-ը Եվրոմիության երկրներից, ապա 2006-2008թթ. համապատասխանաբար՝ 29.6%, 38.0% և 32.4%-ը: Ընդհանուր առմամբ Հայաստանի ներմուծումը ժամանակագրական առումով ուղղվածությունը փոխել է դեպի արևմտյան զարգացած երկրներ:

Ուսումնասիրելով ներմուծման ապրանքային կառուցվածքն ըստ ապրանքի վերջնական օգտագործման ուղղությունների (ըստ ԼՏԳ դասակարգման), հարկ է նշել, որ 2001-2008թթ. ընթացքում, յուրաքանչյուր տարի միջինացված տվյալներով ներմուծված ապրանքների շուրջ 60.7%-ը

(49.9% արդյունաբերական պաշարներ և կապիտալ ապրանքներ, մոտ 10.81% վառելիք և տրանսպորտային միջոցներ) ուղղվել է արտադրության ոլորտ, իսկ մնացածը՝ բնակչության անմիջական սպառմանը: Ընդ որում, որպես դրական երևույթ պետք է նշել, որ վերջին տարիներին ներմուծման ծավալներում որոշ չափով աճել է ներդրումային՝ կապիտալ ապրանքների տեսակարար կշիռը՝ 2008թ. կազմելով 12.2% 2001թ. 10.3%-ի դիմաց: Աճի տեսանկյունից կապիտալ ապրանքների ներմուծման ծավալները ուսումնասիրվող տարիներին աճել են մոտ վեց անգամ կամ ասպառելով 29.1% միջին տարեկան հավելած (տես աղյուսակ 2):

Ներմուծման կառուցվածքում արձանագրելով դրական տեղաշարժերը, միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ հանրապետություն ներմուծվում են այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունն իրականացվում է հանրապետությունում կամ հնարավոր է, մույնիսկ փոքրածավալ ներդրումներով, կազմակերպել դրանց արտադրությունը, ներքին պահանջարկի բավարարման համար, ինչպես նաև հետագայում իրականացնել դրանց արտահանումը: Առավելապես դա վերաբերում է գյուղատնտեսական մթերքի արտադրության և վերամշակման, մանածագործության, կոշկակարության, քիմիական արդյունաբերության, ոսկերչության ոլորտներին:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին որոշ ապրանքների ներմուծման ծավալների ավելացումը հետևանք էր այն բանի, որ ազգային դրամի արժեւորման հետևանքով այնքան էժանացան ներմուծվող որոշ ապրանքներ, որ արտադրողների համար նմանատիպ ապրանքների արտադրության կազմակերպումը հանրապետությունում դարձավ ոչ եկամտաբեր և անմրցունակ՝ ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտերկրում: Օրինակ՝ հայաստանյան շուկայում վերջին երկու տարիներին մեծ քանակով իրականացվել է ուկրաինական գարեջրի, օդու, հրուշակեղենի ներմուծում, կամ բրազիլական ու ամերիկյան թռչնի մսամթերքի, չինական, թուրքական, կորեական կոշկեղենի ու տրիկոտաժեղենի և այլն: Իհարկե, Հայաստանը վերը նշված թերևս մի քանի ապրանքների գծով կարող է ունենալ հարաբերական առավելություններ և ոչ միայն բավարարել ներքին պահանջարկը, այլ նաև իրականացնել դրանց արտահանումը: Մոտավոր փորձագիտական գնահատումները ցույց են տալիս, որ տարեկան կտրվածքով կարելի է 500-600 մլն. դոլարի ապրանքների ներմուծումը փոխարինել ներքին արտադրությամբ:

Աղյուսակ 2.
Ներմուծման ծավալները և կառուցվածքն և կառուցվածքն ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման (BEC) 1998 - 2008 թթ. (առանց ֆիզիկական անձանց կողմից կատարված ներմուծման ծավալների) մլն. դրամ

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	Արժեքի տես. կշիռը, % 2001-2008 թթ.	Աճի տեմպը, 2001-2008 թթ.	Տարեկան միջին աճը 2001-2008 թթ., %
Ընդամենը	837.5	949.1	1237.1	1303.7	1725.4	2092.1	3052.6	4101.2	100.0	4.88	125.4
Մթերք և խմիչք	157.0	142.6	166.4	219.2	246.9	269.0	424.1	609.4	15.0	3.48	119.5
Արդյունաբերական պլաշտեր	267.2	408.0	552.8	507.4	659.4	765.3	1078.5	1345.1	37.7	5.29	126.9
Վառելիք և վառելակալոթ	181.8	158.0	169.4	202.3	260.4	344.8	471.8	627.6	16.2	3.64	120.3
Կապիտալ ապրանքներ (առանց տրանսպորտային սարքավորումների), սարքեր և դրանց մասեր	86.1	96.0	141.5	137.2	226.6	298.9	414.9	582.6	12.2	5.96	129.1
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	18.8	30.9	60.4	67.8	107.3	130.9	252.6	338.5	5.6	15.67	148.2
Սպառողական ապրանքներ	126.5	112.7	145.6	169.1	224.7	283.2	410.4	597.1	13.3	5.03	126.0
Այլ ապրանքներ	0.1	0.8	1.0	0.6	0.1	0.1	0.3	0.9	0.0	9.00	136.9

Աղբյուրը. ՀՀ ԱՎՃ հրատարակումներ՝ ՀՀ արտաքին առևտուրը 2-միլի մակարդակ», տարեկան ժողովածուներ:

Ներմուծման ծավալների բարձր աճը կապված է նաև բնակչության սպառման ծավալների ավելացման և դրանց կառուցվածքում որոշակի որակական փոփոխության հետ: Մասնավորապես, եթե 2001թ. հանրապետության յուրաքանչյուր բնակիչ միջինը մեկ ամսվա ընթացքում սպառում էր 11949 դրամի ապրանքներ, որից 8448 դրամի սննդամթերք (ներառյալ սպիրտային խմիչքը և ծխախոտը), ապա 2007թ. արդյունքներով դա համապատասխանաբար կազմել է 26297 և 15291 դրամ, այսինքն բնակչության սպառման ծավալները այդ տարիներին ավելացել են շուրջ 1.8 անգամ:

Այնինչ, ուսումնասիրվող ժամանակահատվածում գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները համադրելի գներով ավելացել են 1.7 անգամ, իսկ սննդամթերքի արտադրության (վերամշակող արդյունաբերություն) ծավալները՝ 1.5 անգամ: Այս պարագայում միայն սննդամթերքի (առանց բուսական ձագան արտադրանքի, գլխավորապես հացահատիկ) ներմուծման ծավալներն այդ տարիներին աճել են 4.2 անգամ (ընթացիկ գներով), իսկ հաշվի առնելով ներմուծվող ապրանքների գների ինդեքսի փոփոխությունը, ապա իրական աճը կկազմի 3.1 անգամ: Հաշվի առնելով, որ Հայաստանը սննդամթերքի գծով իրականացնում է գլխավորապես կոնյակի և գինու արտահանում, ապա վերոնշյալ արձանագրված փաստերից կարելի է եզրահանգել, որ բնակչության սպառման պահանջարկի 1.8 անգամ ավելացման հիմնական մասը բավարարվել է ներմուծման ծավալների ավելացման հաշվին:

Ընդունելով վերը նշված ընդհանրացումները, կարելի է ենթադրել, սակայն, որ տնտեսության բացության բարձր աստիճանը ավելի պակաս առաձգական է դարձնում մեր արտաքին տնտեսական հարաբերությունները: Ի վերջո, իրականությունից հետևություններ անելու փոխարեն, այլ ուղի է թերևս փոխարժեքի ենթադրելի փոփոխման ազդեցությունը որոշել այլ անփոփոխ պայմանների դեպքում, թեև սա էլ ունի իրեն բնորոշ առանձնահատկություններն ու ուսումնասիրման ենթակա հանգամանքները:

Այս առումով հատկապես պետք է ճշտել պատկերացումները արտաքին առևտրի կազմակերպման հարցերի վերաբերյալ, պայմանավորված, օրինակ, թե որքանով են այդ հարաբերությունները երկարաժամկետ, պայմանագրային կապերով հաստատված: Իսկ ընդհանուր առմամբ, արտաքին առևտրի իրական պատկերի վրա իր հետևանքներն է թողնում տնտե-

սության դոլարիզացիայի մակարդակը, որի բարձրացման համեմատ մի կողմ են մղվում փոխարժեքի փոփոխությամբ ցանկալի արդյունքներ քաղելու հնարավորությունները:

Արտաքին առևտրային հարաբերություններում հարկ է հաշվի առնել նաև վերամշակման նպատակներով ապրանքների ներմուծման ու արտահանման մասը, քանի որ այս տիպի գործառնությունները ևս շրջանցում են արտարժուրային հարաբերությունները: Մասնավորապես, ՀՀ արտաքին առևտրում բավական զգալի տեղ զբաղեցնող թանկարժեք քարերի շրջանառությունը վերոնշյալ բնույթն է կրում՝ մյուս կողմից հանդես գալով որպես ոչ առածգական պահանջարկ ունեցող ապրանք:

Կարելի է ասել, որ սա նշանակում է, որ ներմուծման պահանջարկն ավելի շատ ֆունկցիա է բնակչության համախառն պահանջարկից, այսինքն՝ եկամտներից, քան, ենթադրենք, փոխարժեքի մակարդակից, մույնն է թե գներից: Այս պայմաններում ակնհայտորեն բարդանում է տեսական ուսումնասիրություններ կատարելը միայն փոխարժեքի կտրվածքով:

Բարիքների համեմատական գները արտահայտելով փոխարժեքով, վերջինիս փոփոխությամբ առևտրային հաշվեկշռի բարելավման հասնելը մեծապես կախված է հայրենական և արտասահմանյան ապրանքների առաջարկի և պահանջարկի ճկունությունից: Այդ իսկ պատճառով փոխարժեքի արժեզրկման արդյունավետությունը հաճախ քննարկվում է Մարշալ-Լերների պայմանի շրջանակներում, որը պնդում է, թե արժեզրկումը կվատացնի առևտրային հաշվեկշիռը, եթե երկրի արտահանման և ներմուծման պահանջարկի ճկունության բացարձակ արժեքը մեծ չէ միավորից:

ՀՀ արտաքին առևտրական հարաբերությունների վերլուծությունը մինչ համաշխարհային ճգնաժամը

Հայաստանի Հանրապետությունն օգտագործելով համաշխարհային փորձը՝ որոշակի առանձնահատկություններ ունի արտաքին առևտրի քաղաքականության բնագավառում: Հայաստանի քաղաքական և տնտեսական անկախացումից հետո համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու անհրաժեշտությունն անխուսափելի դարձրեց ինքնուրույն արտաքին տնտեսական քաղաքականության մշակումն ու իրագործումը: Հայաստա-

նր ստանձնել է արտաքին առևտրատնտեսական գործունեության ազատականացման ուղին:

Եթե անցումային շրջանի առաջին տարիներին Հայաստանի արտաքին առևտուրը հիմնականում կրում էր պատահական բնույթ, ապա վերջին շրջանում արտաքին առևտրի մասնակիցները առևտրային հարաբերություններն իրականացնում են այդ բնագավառում գոյություն ունեցող միջազգային նորմերին համապատասխան:

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վ.Ս. Եղիազարյան

Շուկայական տնտեսության զարգացման և ձևավորման գործում նյութական և հոգևոր արտադրության հետ մեծ դեր ունի նաև ծառայությունների ոլորտը: Համաշխարհային տնտեսության մեջ գնալով ավելի մեծ ու տիրապետող է դառնում ծառայությունների ոլորտը: Բոլոր զարգացած երկրներում մարդկային գործունեության այդ ոլորտում է աշխատում հասարակական արտադրության մեջ զբաղվածների կեսից ավելին¹: Եվ դա տրամաբանական է: Սեր օրերի մարդը, որն ունի բարձր մշակութային և կրթական մակարդակ, նոր պահանջներ է առաջադրում ինչպես իր նյութական և հոգևոր կյանքի, այնպես էլ ծառայությունների նկատմամբ: Վերջին հաշվով նյութական և հոգևոր բարիքները մարդկանց կողմից սպառման են հասնում ծառայությունների ոլորտի միջոցով²:

Զբոսաշրջությունը նույնպես ծառայությունների ոլորտ է, որտեղ ամենակարևորը զբոսաշրջիկներին լավագույնս սպասարկելն է, իսկ բարձրակարգ սպասարկումն առաջին հերթին ենթադրում է զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքների առկայություն:

Զբոսաշրջության ենթակառուցվածքի բաղկացուցիչներ են տրանսպորտային փոխադրամիջոցները, զբոսաշրջիկներին տեղավորող կառույցները, սննդի սպասարկման օբյեկտները, առողջարանային կառույցները, զվարճանքի և ժամանցի համալիրները, համաժողովների և սեմինարների անցկացման կենտրոնները, միջնորդական ծառայություններ իրականացնող կառույցները, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք միաժամանակ սպասարկում են նաև տարածաշրջանի հասարակությանը:

Վերջին տարիներին շատ է մեծացել զբոսաշրջային կազմակերպու-

¹ Герасименко В.Г. Основы туристического бизнеса. Одесса, “Черноморье”, 1997, 160с.

² Н.И. Кавушкин, Менеджмент туризма, Минск, 2001, с.23.

յունների համատեղ աշխատանքի նշանակությունը: Այս ոլորտի ձեռնարկությունների համատեղ աշխատանքը կարող է իրականացվել հորիզոնական կամ ուղղաձիգ մակարդակով:

Ընդ որում, այսպիսի կազմակերպությունները ենթարկվում են ինտեգրացման թեթև ազդեցությունների՝ կապված տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակի հետ: Դրանք կարող են լինել նաև ճանապարհորդությունների կազմակերպման, հյուրանոցային հարցերի կարգավորման, տեղավորման ոլորտների ձեռնարկություններ ու այդ համակարգի այլ միավորումներ: Որպես օրինակ կարելի է բերել ավիաընկերությունները, որոնք միաժամանակ ունեն նաև հյուրանոցային ցանց³:

Մեր դիտարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության ծառայությունների ոլորտի բոլոր բնագավառները, չնայած իրենց զարթոնքին, հեռու են ժամանակակից մարդու պահանջները բավարարելու հնարավորությունից: Ծառայությունների շատ բնագավառներ խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում, համարվելով ոչ արտադրողական, արժեք չստեղծող ոլորտներ, ուղղակի անտեսվել և մղվել են զարգացման հետին պլան:

Ջրոսաշրջության զարգացման տեսանկյունից մեր երկրում հատկապես կարևորվում է տրանսպորտի և կապի միջոցների զարգացման բարձր մակարդակը: Սա տրամաբանական է, քանի որ առանց հուսալի կապի և տեղեկատվության միջոցների առկայության անհնար է հանրությանը և հատկապես զբոսաշրջիկներին մշտապես իրագել պահել զբոսաշրջային շուկայում տեղի ունեցող փոփոխություններին: Ինչ վերաբերում է տրանսպորտային փոխադրամիջոցներին, ապա դրանք պետք է լինեն հուսալի, ապահով, տեխնիկապես հագեցած, իսկ վարորդների մասնագիտացվածությունն ու հմտությունը խիստ պարտադիր է:

Ահա թե ինչու մեր օրերում ամենաարագ զարգացող, տեխնիկական միջոցներով անընդհատ կատարելագործվող բնագավառները դարձել են կապը և տրանսպորտը: Ազգային տնտեսության ստեղծման, շուկայական հարաբերությունների արդյունավետության, համաշխարհային տնտեսության համագործակցության երաշխիքը հուսալի և զարգացած հաղոր-

³ Ջրոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Շ. Հարությունյան, Երևան, 2004 թ., էջ 5:

դակցության և կապի միջոցներն են⁴: Ժամանակակից կապի միջոցների զարգացումը հանրապետությունում զուտ տեխնիկական և ֆինանսական խնդիրների հարց է, որը լուրջ դժվարություններ չի հարուցում և համեմատաբար հեշտ լուծում կարող է ստանալ, որի ուղղությամբ որոշակի քայլեր կատարվում են կապի խոշոր միջազգային ֆիրմաների միջոցով: Առաջիկա մի քանի տարում կապի տեխնիկական միջոցների զարգացումը հնարավորություն կտա ուղղակի կապ հաստատել աշխարհի ցանկացած երկրի և ֆիրմայի հետ: Կապի ծառայության կազմակերպման, կառավարման, կադրային ապահովման տեսակետից հանրապետությունում բարդություններ չկան:

Այլ է հանրապետության վիճակը տրանսպորտի բնագավառում: Այն ամենադժվար լուծելի խնդիրն է, քանի որ հանրապետությունը դեպի ծով ելք չունի, երկաթուղային, ավտոմոբիլային տրանսպորտի բոլոր ճանապարհները, գազամուղները Հայաստան են մտնում այլ երկրների տարածքից, որը մեծապես ազդում է դրանց հուսալիության վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում ուղևորափոխադրումների ծավալն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների⁵:

Աղյուսակ 1.

Ուղևորափոխադրումների ծավալն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակների⁶

	2012 թ. հունվար, հազ. մարդ	% -ով	
		2011 թ. հունվարի նկատմամբ	2011 թ. դեկտեմբերի նկատմամբ
Տրանսպորտ, ընդամենը այդ թվում՝	18567.6	99.2	82.6
երկաթուղային	33.6	64.7	70.9
ավտոմոբիլային	17064.7	100.8	83.1
որից՝ տաքսիներ	1340.6	96.0	83.7
օդային ⁷	115.3	102.7	85.4
էլեկտրատրանսպորտ	1354.0	83.5	77.5

⁴Кусков А.С., Джалалян Ю.А. Транспортное обеспечение в туризме.-М. КНОРУС, 2008.-300 с.

⁵ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012թ., էջ 20:

⁶ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվարին, Երևան, 2012թ., էջ 22:

Իսկ ահա թե ինչպիսին է ուղևորափոխադրումների ծավալի դինամիկան մեր երկրում վերջին տասնամյակում.

Աղյուսակ 2.

Ուղևորափոխադրումների ծավալի դինամիկան 2000-2011 թթ. դրությամբ⁸

	2000 թ. հունվար-դեկտեմբեր, հազ. մարդ	2005 թ. հունվար-դեկտեմբեր, հազ. մարդ	2007 թ. հունվար-դեկտեմբեր, հազ. մարդ	2011թ. հունվար-դեկտեմբեր, հազ. մարդ
Տրանսպորտ, ընդամենը	132500.6	204773.6	251834.9	22469.0
այդ թվում՝				
երկաթուղային	1086.6	703.2	586.5	47.4
ավտոմոբիլային	100378.8	181792.3	228540.8	20538.6
օդային	611.1	1158.2	1405.6	135.0
Էլեկտրատրանսպորտ	30424.1	21119.9	21302.0	1748.0

Զբոսաշրջության ոլորտում գործող գների խիստ բարձր մակարդակը, ճանապարհային անմխիթար ու անբարենպաստ վիճակը, ինչպես նաև տրանսպորտային մեծ ծախսերն ընդհանուր ուղևորափոխադրումների անկման հիմնական պատճառներն են:

Տրանսպորտային հաղորդակցության նոր ուղիների ստեղծումը նույնպես խնդրահարույց է, քանի որ առնչվում է հարևան երկրների տարածքով անցման հետ: Այս պայմաններում առաջին պլան է մղվում օդային հաղորդակցության ուղիների զարգացումը, որը հանրապետության սահմաններից դուրս բեռնափոխադրման շատ թանկ միջոց է, բայց ամենահուսալին է: Այդ ամենը չի կարող որոշակի բացասական դեր չկատարել ազգային տնտեսության ձևավորման, հանրապետության արտաքին տնտեսական կապերի ընդլայնման, աշխարհի տարբեր երկրների գործարար շրջանների հետ արդյունավետ համագործակցության բնագավառներում: Հարցի արմատական լուծումն ապագայի խնդիր է, որը պայմանավորված է տարածաշրջանի, առավել ևս հարևան երկրների, պետությունների հետ փոխհարաբերությունների կարգավորմամբ: Ահա թե ինչու այս-

⁷ Յուզանիչներում ներառված են նաև այլ երկրների ավիաընկերությունների ուղևորափոխադրումները:

⁸ www.armstat.am

օր հանրապետությունում հիմնավոր ու մեծ աշխատանք է տարվում օդային տրանսպորտի զարգացման և օդային հաղորդակցության ուղիների ընդլայնման ուղղությամբ:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ օդային տրանսպորտի ուղիների ընդլայնման հետ միասին այսօրվա և ապագայի տեսակետից պետք է լուծվեն ցամաքային տրանսպորտի զարգացման և աշխարհի հետ կապի ուղիների ընդլայնման հարցը: Այդ տեսակետից շատ կարևոր և առաջնահերթ է մեր երկաթուղային ճանապարհների բացումը, բաց ծով դուրս գալու խնդրի լուծումը: Դրա համար գոյություն ունի երկու ուղի: Առաջին՝ վրացական հանրապետության միջոցով ելք ունենալ Սև ծով և լայն տնտեսական կապեր հաստատել սևծովյան երկրների, ինչպես նաև Եվրոպայի և Ամերիկայի երկրների հետ, երկրորդ՝ օգտվելով բարիդրացիական հարաբերություններից՝ Իրանի Իսլամական Հանրապետության միջոցով դուրս գալ մի կողմից Կասպից ծովի երկրներ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնություն, իսկ մյուս կողմից՝ Պարսից ծոցի և ասիական երկրներ: Այս երկու խնդիրների լուծումը, տրամաբանական է, որ կպահանջի ավտոճանապարհների և երկաթուղային հաղորդակցության ուղիների կառուցում:

Մեր կարծիքով, Հայաստանում զբոսաշրջության զարգացման համար լուրջ խոչընդոտ են հանդիսանում նաև ավիատոմսերի խիստ բարձր գները: Օրինակ՝ Երևան-Մոսկվա չվերթի արժեքը 174500 ՀՀ դրամ է, այն դեպքում, երբ նույն հեռավորությունը Մոսկվա-Պրահա չվերթի դեպքում՝ 117400 ՀՀ դրամ է, նույն կերպ Երևան-Փարիզ չվերթի տոմսն արժի 198000 ՀՀ դրամ, իսկ Մոսկվա-Վալենսիա չվերթը նույն հեռավորությամբ՝ 142000 ՀՀ դրամ, Երևան-Ստամբուլ չվերթի արժեքը կազմում է 174900 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ նույն հեռավորությունը Տալլին-Ամստերդամ չվերթի դեպքում՝ 112000 ՀՀ դրամ: Սա մեծապես խոչընդոտում է զբոսաշրջիկների հոսքը դեպի Հայաստան:

Պետք է նկատել, որ հաղորդակցության միջոցների հուսալի համակարգի ստեղծումը հանրապետության ազգային տնտեսության ձևավորման, համաշխարհային տնտեսության հետ ինտեգրացման և մեր տնտեսական անկախության կարևոր գրավականն է:

Ինչպես իրավացիորեն նշում են Գ. Պապիրյանն ու Կ. Ստեփանյանը, ազգային տնտեսության ձևավորման, տրանսպորտի և կապի հանգույցի

խնդրի լուծումը կպահանջի խոր ու հիմնավոր ուսումնասիրության վրա համապատասխան ծրագրի մշակում և կառավարության հովանավորությամբ դրա իրականացում⁹:

Հայաստանում զբոսաշրջային կառույցները որոշակի առումով լավ են զարգացած, սակայն էկոլոգիական աղտոտվածությունը երկրում դեռևս լուրջ խնդիրներ է ստեղծում: Բազմաթիվ շրջաններում ենթակառույցները ցածր մակարդակի վրա են կամ էլ ընդհանրապես գոյություն չունեն՝ բացառությամբ համեմատաբար բարձր մակարդակի վրա գտնվող ճանապարհային ցանցի, իսկ մի քանի կարևոր շրջաններում նշանակալի վնաս է հասցվել շրջակա միջավայրին¹⁰:

Երևանը զարգացած ենթակառույցներով զինված միակ շրջանն է: Բացառությամբ Հայաստանի համայնքներում ձևավորված մի քանի զբոսաշրջային ենթակառուցվածքների, հյուրանոցային տնտեսության օբյեկտների ու զվարճանքի վայրերի՝ նման բնույթի զբոսաշրջային ռեսուրսների, տրանսպորտային միջոցների, զբոսաշրջային օպերատորների, ենթակառուցվածքների և զվարճանքի օբյեկտների մեծամասնությունը կենտրոնացած է Երևանում: Ներկայումս զբոսաշրջությունից ծագած եկամուտների շատ փոքր մասն է փոխանցվում մարզեր՝ չնայած նրան, որ գյուղական համայնքներում առկա է զբոսաշրջային գործունեության զարգացման և ծավալման մեծ ներուժ¹¹: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների բաշխվածության անհամաչափությունը ներկայացված է աղյուսակ 3-ում.

Ըստ «Բնապահպանական վերակակողության մասին» ՀՀ օրենքի՝ զբոսաշրջային գրավչություն և նշանակություն ներկայացնող գոտիներում ենթակառուցվածքներ ձևավորելիս անհրաժեշտ է սահմանել հստակ չափանիշներ և պետական հսկողություն՝ բացառելով նաև քիմիական և կենսաբանական նյութերով և ֆիզիկական ազդակներով աղտոտվածության աղբյուրները¹³: Միաժամանակ նշենք նաև, որ ծառայությունների որակի բարելավումն անհրաժեշտ է ողջ զբոսաշրջային արդյունաբերության մեջ՝

⁹ Менеджмент в индустрии гостеприимства (отели и рестораны), Папирян Г.А., М., Экономика, 2000, 207 с.

¹⁰ «Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ ենթակառուցվածքների արդի վիճակը Հայաստանի Հանրապետությունում», Կ.Ստեփանյան, Երևան 2006 թ., էջ 21:

¹¹ www.imegaservice.com

Աղյուսակ 3.

ՀՀ հյուրանոցային տնտեսության բաշխվածությունն ըստ մարզերի¹²

Հերթական համարը	Մարզի անվանումը	Հյուրանոցների քանակը
1	Շիրակի մարզ	5
2	Լոռու մարզ	6
3	Տավուշի մարզ	4
4	Կոտայքի մարզ	17
5	Վայոց ձորի մարզ	6
6	Գեղարքունիքի մարզ	4
7	Սյունիքի մարզ	5
8	Արարատի մարզ	3
9	Արմավիրի մարզ	3
10	Արագածոտնի մարզ	1
11	Երևան	34

օգտագործելով բոլոր հնարավոր արդյունավետ մեթոդները (ոչ միայն պետական կարգավորումը): Այստեղ պետական կարգավորումը հիմնականում ուղղված պետք է լինի զբոսաշրջիկների անվտանգության ու առողջության, սանիտարահիգիենիկ նորմերի ու շրջակա միջավայրի, պատմամշակութային, սոցիալական ժառանգության պահպանության, սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը¹⁴: Որակի բարելավման գործընթացում կարևոր է նաև մասնավոր հատվածի դերը՝ կամավոր որակավորման, սերտիֆիկացման, վարքագծի կանոնների և այլ համակարգերի կիրառմամբ:

Համաձայն «Հայաստան 2020» ծրագրի՝ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման տեսանկյունից խիստ արդիական են հետևյալ միջոցառումները¹⁵.

ա) հյուրանոցային տնտեսության օբյեկտներում մոտավոր հաշվարկներով 12 տարվա կտրվածքով անհրաժեշտ է 1300-1500 մլն ԱՄՆ դոլար ներդրում՝ 2020 թ. նախատեսված զբոսաշրջիկների քանակն

¹² <http://www.imegaservice.com>

¹³ www.arlis.am «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ N 82, 18.05.2005թ., Երևան 2005թ., էջ 7:

¹⁴ www.arlis.am «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ N 217, 30.05.1998թ., Երևան 1998թ., էջ 5:

¹⁵ «Հայաստան 2020» ծրագիր, Երևան 2005թ., էջ 62:

ընդունելու համար: Անհրաժեշտ է կառուցել 34000 մահճակալ հզորությամբ նոր հյուրանոցային տնտեսության օբյեկտներ: Հիմնական ներդրումներն անհրաժեշտ է իրականացնել 3 կամ 4 աստղանի հյուրանոցների սեգմենտում: Հաշվարկն արվել է մեկ մահճակալի համար անհրաժեշտ 45-50 քմ և 1քմ հյուրանոցային տարածքի շինարարության 900 ԱՄՆ դոլար կազմող արժեքի վրա: Նմանատիպ ներդրման ֆինանսավորման հիմնական աղբյուրը մասնավոր կապիտալն է, որին կնպաստեն պետական քաղաքականությունը և տարբեր աղբյուրներից նպատակային ներդրումները (այդ թվում՝ վաղ շրջանում միջազգային զարգացման կամ դոնոր կազմակերպությունների հատուկ ծրագրերից):

Մեր դիտարկմամբ ծրագրի՝ այս կետը փոքր-ինչ անիրատեսական է ներկայիս սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններում, քանի որ դժվար թե գտնվի այնպիսի մասնավոր ընկերություն, որը հանձն առնի նման հսկայածավալ ծրագրի իրագործումը: Փոխարենը գուցե կսահմանափակվեն զբոսաշրջային ավելի համեստ կառույցների շինարարությամբ, թեկուզև դրանք լինեն գուտ 3 աստղանի որակավորմամբ:

բ) Ավելի քան 250-300 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար անհրաժեշտ կլինի մայրուղիների և հիմնական զբոսաշրջային ուղղությունների ընթացիկ վերանորոգումների և պահպանման համար: Բարձրորակ միջքաղաքային ճանապարհային հնարավորությունները մոտավորապես կազմում են ներկայումս առկա ճանապարհների 700 կմ-ը և տեղական զբոսաշրջային նշանակության նոր կամ բարելավված ճանապարհների ընդամենը 400 կմ-ը: Այս գումարի մեջ է մտնում նաև օդանավակայանի հնարավորությունների արդիականացումը և դեպի դժվարամատչելի վայրեր ճուպանուղիների կառուցումը: Հայաստանի զբոսաշրջավայրերն առավել մատչելի դարձնելու, թե՛ ուղևորափոխադրումների և թե՛ բեռնափոխադրումների համար տրանսպորտային ծախսերի ու ժամանակի կրճատման առումով կարևոր նշանակություն ունի թունելների կառուցումը, որոնց իրականացման համար առանձին ֆինանսական նախահաշիվ է պահանջվում: Ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեն է, իսկ որոշ դեպքերում՝ պետական-մասնավոր հատված համաֆինանսավորումը:

Մեր կարծիքով ծրագրի այս կետն առավել իրագործելի է, քանզի

ավտոտրանսպորտային և օդային փոխադրումների ոլորտը նշանակալի եկամուտ է բերում ոչ միայն զբոսաշրջային ոլորտում, այլև առհասարակ ծառայում է երկրի բնակչության տարաբնույթ կարիքների բավարարմանը: Բնականաբար, ծրագրի կենսագործումը զգալիորեն կնպաստի զբոսաշրջության զարգացմանը, քանի որ տրանսպորտային և ճանապարհային խնդիրները մեր երկրում ամենացավոտ հարցերից են:

գ) 150-200 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար անհրաժեշտ կլինի թանգարանները, բնական, պատմական վայրերը և սրբավայրերը, կաժանները, վրանային ճամբարների համար հատկացված վայրերը և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններն արդիականացնելու համար: Հաշվարկն արված է 55-60 թանգարանների կառավարման նոր համակարգերով և նախագծային հարմարություններով համալրելու հիմքի վրա, որը կարժենա 1.2-2 մլն դոլար՝ յուրաքանչյուր միավորի համար: Ներդրումներ են նաև անհրաժեշտ տեսարժան վայրերի, ավտոկայանների կառուցման, ճամբարների տեղակայման տարածքների և զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնների համար: Վայրերի ամբողջական թիվը մոտավորապես կլինի 75-80՝ կառուցման/բարելավման ավելի քան 1-1.5 մլն. ԱՄՆ դոլար ծախսով:

Մեր դիտարկմամբ՝ ծրագրի այս կետը ևս անհրազործելի է, քանի որ ներկայումս մեր երկրում կան առավել խոցելի ենթակառուցվածքներ, որոնք ենթադրում են առաջնային ֆինանսավորում, իսկ ինչ վերաբերում է զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին և թանգարաններին, ապա դրանք ինչպես առաջ, այնպես էլ այսուհետ, հավանաբար կսահմանափակվեն պետական չնչին հովանավորչությամբ: Որպես մեր դիտարկման հիմնավորում՝ նշենք հետևյալը. ըստ հիշյալ ծրագրի 2008-2020թթ.՝ 12 տարվա ընթացքում միայն հանգստի և մշակույթի ոլորտում անհրաժեշտ է ընդհանուր առմամբ 1400-1700 մլն ԱՄՆ դոլար: Եթե այդ գումարը բաժանենք 12 տարիների վրա, ապա յուրաքանչյուր տարի ոլորտում կատարվելիք ներդրումները կկազմեն միջինը 116-142 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ ներդրումների այս ցուցանիշը մեր երկրի համար չափազանց անիրատեսական է:

Որպես ավացույց, նշենք, որ ըստ «Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ 2013թ. պետական բյուջեից

հանգստի և մշակույթի ոլորտին կտրամադրվի ընդամենը 17.964.991 ՀՀ դրամ գումար¹⁶: Այս դեպքում արդեն, թերևս, իրավիճակը փոքր-ինչ կարող է շտկվել մասնավոր ներդրումների հաշվին, որոնք, ըստ մեր դիտարկման, նույնպես բավարար ցուցանիշ չեն ապահովի:

Բացի վերոհիշյալից, ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, զբոսաշրջային ասոցիացիաները, որոշ ֆինանսավորում կարելի է ստանալ սպառողների վճարներից, որոնք կարող են ծածկել շահագործման և պահպանման ծախսերը:

Զբոսաշրջային այցելությունների աճի հետ կապված այլ ենթակառուցվածքների ընդհանուր արդիականացման անհրաժեշտություն կառաջանա, որի մեջ մտնում են ներդրումները էլեկտրաէներգիա արտադրող միավորների, էլեկտրական ցանցերի, ջրամատակարարման և թափոնների կառավարման մեջ, որոնց որոշ մասը կարելի է ստանալ սպառողների վճարներից: Բացի ընդհանուր ենթակառուցվածքից, անհրաժեշտ կլինի հատուկ ներդրումներ կատարել զվարճանքի վայրերի, ինչպես օրինակ՝ ռեստորանների և զվարճանքի այլ վայրերի ոլորտներում: Այստեղ ներդրման ընդհանուր գումարը կազմում է 350-400 մլն ԱՄՆ դոլար՝ որպես հիմնական ֆինանսավորման աղբյուր նկատի ունենալով պետական բյուջեն և մասնավոր հատվածը:

Համաշխարհային զբոսաշրջության աճող մրցակցությունը և հատկապես խստապահանջ զբոսաշրջիկների աճը հաշվի առնելով՝ ակնհայտ է դառնում որակյալ և բարձր հմտություններ ունեցող աշխատուժի անհրաժեշտությունը: Այս առումով նշանակալի ներդրումների կարիք կա կրթական ծրագրերի մշակման, ռեսուրսների տրամադրման, պրակտիկաների և գործնական արտադրական վերապատրաստումների անցկացման մեջ: Զբոսաշրջային արդյունաբերությունում մարդկային ունակությունների և հմտությունների բարձրացումն ընդհանուր օգուտ կրերի բազմաթիվ այլ ոլորտներում և առանցքային դեր կխաղա Հայաստանի իմիջի ստեղծման համար: Ներդրման մոտավոր գումարը կկազմի 300 մլն ԱՄՆ դոլար, որտեղ ֆինանսավորման հիմնական աղբյուրները կլինեն մասնավոր հատվածը, պետական բյուջեն և ասոցիացիաները:

¹⁶ ՀՀ 2013 թ. պետական բյուջեի մասին օրենք (նախագիծ), Երևան, 2012 թ., էջ 7:

Որպես կարևորագույն փաստ հարկ ենք համարում ավելացնել, որ բացի անմիջական ներդրումներից, կառավարությունը պետք է իրականացնի զբոսաշրջային ներդրումների ակտիվ խթանման քաղաքականություն՝ պարտատոմսերի, բանկային երաշխիքների և մասնավոր հատվածի համար ցածր տոկոսադրույքներով վարկեր տրամադրող հատուկ ծրագրերի միջոցով: Իրավական և քաղաքական դաշտում բարեփոխումները պետք է ուղղվեն ներքին և օտարերկրյա ներդրումների խթանմանը:

Այսպիսով, մեր երկրի զբոսաշրջային արդյունաբերության զարգացումը դեռևս ուղղակիորեն կախված է շատ լուրջ և կենսական նշանակություն ունեցող մի շարք կարևորագույն ոլորտների զարգացումից, որտեղ առանցքային շեշտը պետք է դրվի բնակչության կենսամակարդակի, ասել է թե տնտեսական զարգացման մակարդակի բարձրացման, ճանապարհաշինարարության, պետական ակտիվ ֆինանսական աջակցության, տեղեկատվական կենտրոնների ստեղծման և բազում այլ հիմնախնդիրների վրա:

Առանցքային հասկացություններ. շուկայական տնտեսություն, զբոսաշրջային ծառայություն, ճանապարհաշինարարություն, հյուրանոցային համալիրներ, տրանսպորտային փոխադրումներ, զբոսաշրջային ենթակառուցվածքներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Н.И. Кавушкин, Менеджмент туризма, Минск, 2001, с. 23.
2. Герасименко В.Г. Основы туристического бизнеса. Одесса, “Черноморье”, 1997-160 с.
3. Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Շ. Հարությունյան, Երևան 2004թ., էջ 5:
4. Кусков А.С., Джалалян Ю.А. Транспортное обеспечение в туризме.-М.,КНОРУС, 2008., 300 с.
5. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2012 թ.:
6. Менеджмент в индустрии гостеприимства (отели и рестораны), Папирян Г.А., М., Экономика, 2000.- 207с.
7. «Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ ենթակառուցվածքների

- արդի վիճակը Հայաստանի Հանրապետությունում», Կ. Ստեփանյան, Երևան, 2006 թ., էջ 21:
8. www.arlis.am «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ N 82, 18.05.2005թ., Երևան, 2005 թ., էջ 7:
 9. www.arlis.am «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ N 217, 30.05.1998 թ., Երևան 1998 թ., էջ 5:
 10. «Հայաստան 2020» ծրագիր, Երևան, 2005 թ., էջ 62:
 11. <http://www.imegaservice.com>

УСЛУГИ ИНФРАСТРУКТУРЫ ТУРИЗМА И ПЕРСПЕКТИВЫ ИХ РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В.С. Егизарян

Резюме

В настоящее время все инфраструктуры туризма пока что находятся на стадии формирования, уровень обслуживания довольно низкий, в стране наблюдается настоящий “кадровый” голод в сфере туризма, тарифы на услуги очень высоки и не соответствуют качеству.

Для развития инфраструктуры туризма в нашей стране необходимо осуществить следующее: провести изменения в структуре гостиничного хозяйства и существенно улучшить процесс обслуживания, установить строгий контроль в отношении эксплуатации транспортных средств, пересмотреть цены на авиабилеты, урегулировать льготный режим, привести к международному стандарту общее состояние транспортной сети республики, установить контроль за обеспечением общественного питания и по отношению к развлекательным комплексам, тем самым содействуя развитию туристской промышленности в Республике Армения.

Ключевые понятия: *рыночная экономика, туристическая услуга, строительство дорог, транспортные перевозки, гостиничные комплексы, туристические инфраструктуры.*

SERVICES OF TOURISM INFRASTRUCTURE AND THEIR
DEVELOPMENT PROSPECTS IN THE REPUBLIC OF
ARMENIA

V.S. Eghiazaryan

Summary

Currently, all tourism infrastructures in Armenia are so far at the stage of formation, the service level is quite low, there is a real “human” famine in tourism, rates are very high and do not match the quality. For the development of tourism infrastructure in our country we need to implement the following: make changes in the structure of the hotel industry and significantly improve the service process, establish strict control over the use of vehicles, review prices for airline tickets, resolve the preferential, lead the transport network of the Republic of Armenia to the international standard of General status, install monitoring of catering and entertainment complexes.

Only in this way we will contribute to the development of the tourism industry in the Republic of Armenia.

Key concepts: *market economy, travel service, road construction, transportation, hotel complexes, tourism infrastructures.*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ն.Ն. Դեմուրչյան

Միջազգային ֆինանսական շուկաներում աշխատանքի որոշակի փորձ կուտակելով, ՀՀ առևտրային բանկերը կարողացան էապես ընդարձակել հաճախորդներին տրամադրվող միջազգային բանկային ծառայությունների ցանկը: Առաջատար ՀՀ առևտրային բանկերի ինտերնետ-կայքերի վերլուծությունը թույլ տվեց որոշել միջազգային բանկային ծառայությունների հետևյալ ցանկը, որոնք ՀՀ բանկերը կարող են տրամադրել իրենց հաճախորդներին (տես աղ. 1):

ՀՀ առևտրային բանկերի միջազգային բանկային ծառայությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն տրամադրում իրենց հա-

Աղյուսակ 1.

ՀՀ առևտրային բանկերի միջազգային բանկային ծառայությունները [1]

Բանկային ծառայությունների տեսակներ	Բանկային ծառայություններ
1	2
Արտարժույթային գործառնություններ	<ul style="list-style-type: none"> • Ֆորեքս գործարքներ • Սվոփ գործարքներ • Ֆորվարդային գործարքներ • Ֆյուչերսային գործարքներ
Միջազգային փոխանցումներ	<ul style="list-style-type: none"> • Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ • Բանկ-հաճախորդ/Ինտերնետ-բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ • Արագ դրամական փոխանցման համակարգեր՝ MoneyGram, InterExpress, Быстрая почта
Փաստաթղթային գործառնություններ	Հարցումներ փաստաթղթերով՝ հաճախորդների հանձնարարմամբ
	Ակրեդիտիվ. - REVOLVING L/C՝ վերականգնվող ակրեդիտիվ, որի գումարը վերականգնվում է առանց ակրեդիտիվի պայմաններում էական փոփոխությունների անհրաժեշտության:

1	2
	<p>- TRANSFERABLE L/C՝ Փոխանցելի ակրեդիտիվ, որը իրավունք է տալիս շահառուին պահանջել բանկից փոխանցել ակրեդիտիվը ամբողջությամբ կամ մասամբ՝ մեկ կամ ավել երկրորդային շահառուներին:</p> <p>- BACK-TO-BACK L/C՝ Հանդիպակաց ակրեդիտիվ, որը թողարկվում է թողարկված այլ ակրեդիտիվին հակընդդեմ:</p> <p>- STANDBY L/C՝ Պահուստային ակրեդիտիվ, այսինքն՝ ակրեդիտիվի ձևով թողարկված բանկային երաշխիք, որի նպատակը պարտավորությունները չկատարելու հնարավոր ռիսկը ծածկելն է:</p> <p>- RED/GREEN CLAUSE L/C՝ ակրեդիտիվ, որը ներառում է հատուկ դրույթ, որով հանձնարարում է կատարող բանկին վճարել կանխավճար բենեֆիցիարին՝ մինչ առաքումը:</p> <p>Ինկասո.</p> <p>- Հաճախորդի պատվերով թողարկվող ինկասո/վաճառողի ինկասո</p> <p>- Հաճախորդի ամունով թողարկված ինկասո/գնորդի ինկասո</p> <p>Երաշխիքային գործողություններ.</p> <p>- ADVANCE PAYMENT GUARANTEE/ ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Բանկը պարտավորվում է փոխհատուցել կանխավճարը գնորդին, եթե վաճառողը չկատարի իր պայմանագրային պարտավորությունները:</p> <p>- PERFORMANCE BOND/ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Երաշխիք, որով բանկը պարտավորվում է փոխհատուցել բենեֆիցիարին՝ վաճառողի/ծառայություն մատուցողի պայմանագրային պարտավորությունները սահմանված ձևով չկատարելու դեպքում:</p> <p>- BID BOND/ՄՐՅՈՒԹՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Կոչված է փոխհատուցելու ծախսերը, որ առաջանում են մրցույթի կազմակերպչի համար, եթե պատվեր ստացած կազմակերպությունը հրաժարվում է այն իրականացնել, ինչի պատճառով նոր մրցույթ է կազմակերպվում:</p> <p>- PAYMENT GUARANTEE/ՎՃԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Ապահովում է գործարքով սահմանված վճարման իրականացումը:</p> <p>- CUSTOM BOND/ՄԱՔՍԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ՝ Երաշխիքի հատուկ տեսակ, որը տրվում է ի շահ Ռ-Դ մաքսային ծառայության՝ ի ապահովումն մաքսային տուրքերի վճարման:</p>

1	2
	- STANDBY L/C /ՊԱՀՈՒՄՍԱՅԻՆ ԱԿՐԵԴԻՏԻՎ՝ Ակրեդիտիվի ձևով թողարկված բանկային երաշխիք, որի նպատակն է ծածկել պարտավորությունները չկատարելու հնարավոր ռիսկը:
Վարկավորման կազմակերպում	Արտահանողների ու ներդրողների կարճաժամկետ ֆինանսավորման կազմակերպում Միջնաժամկետ և/կամ երկարաժամկետ ֆինանսավորման կազմակերպում օտարերկրյա բանկի կողմից ստացված վարկի հաշվին
Սպասարկում օտարերկրյա շուկաներում	Ամիջական մուտք դեպի NYSE, AMEX, NASDAQ
Անհատական վստահելի կառավարում	ՀՀ առևտրային բանկերն առաջարկում են իրենց ծառայությունները հաճախորդների ժամանակավոր ազատ միջոցները վստահելի կառավարման ուղղությամբ՝ տեղավորելով դրանք միջազգային ֆինանսական շուկաներում:

ճախորդներին միջազգային բանկային ծառայությունների ողջ ցանկը և, հետևաբար, միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ տնտեսական հարաբերությունները զարգացած են ոչ այնքան լիարժեք, որպեսզի հնարավոր լինի խոսել միջազգային վարկային շուկային ՀՀ բանկերի զգալի ինտեգրման մասին:

Համաձայն միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման մակարդակների դասակարգման, ՀՀ բանկերը պատկանում են ինտեգրման առաջին երկու մակարդակներին [2, էջ 35]: Այդ մակարդակները ենթադրում են պարզ միջազգային բանկային ծառայությունների տրամադրում, ինչպիսիք են արտարժույթի առքուվաճառքը, հաճախորդի հանձնարարությամբ անդրսահմանային վճարների իրականացումը, օտարերկրյա բանկերի կողմից դուրս գրված ակրեդիտիվների ավիզավորումը, հաճախորդների արտաքին առևտրային գործարքների ֆինանսավորումը, առաջատար օտարերկրյա բանկերի խոշոր նախագծերին մասնակցությունը՝ ազգային հաճախորդներին միջազգային ներդրումային բանկային ծառայությունների տրամադրման գծով: Այս մակարդակի շրջանակներում ՀՀ բանկերը մտնում են տնտեսական հարաբերությունների մեջ օտարերկրյա բանկային կառույցների հետ, արտահանման գործակալությունների, հա-

ճախողների օտարերկրյա գործընկերների և միջազգային վարկային շուկայի այլ մասնակիցների հետ:

Ավելի բարդ միջազգային բանկային ծառայությունները, որոնք ենթադրում են սերտ տնտեսական հարաբերություններ միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ, ներկայացված չեն ՀՀ բանկերի ինտերնետ-կայքերում: Դրանք բաժնետոմսերի, մուրհակների և այլ արժեթղթերի թողարկման գծով բանկային ծառայություններն են և միջազգային ֆինանսական շուկաներում դրանց տեղադրումը: Քիչ հավանական է, որ ՀՀ բանկերը կարող են իրականացնել խոշորամասշտաբ նախագծեր իրենց հաճախողների համար՝ եվրոպարտատոմսերի կամ սինդիկացված վարկերի թողարկման գծով, իբրև լիզ-մենթերներ:

ՀՀ առևտրային բանկերի զինանոցում տվյալ ծառայությունների բացակայությունն ու դրանց մեծ նշանակությունը հայրենական բանկային գործի զարգացման համար հիմնավորում է օտարերկրյա բանկային համակարգի փորձի կիրառությունը: Այս նպատակներով անհրաժեշտ է տեղական բանկի կազմակերպական կառուցվածքում առանձնացնել մի ստորաբաժանում, որը պատասխանատու կլինի միջազգային բանկային ծառայությունների զարգացման համար և որի խնդիրների մեջ կմտնեն համաշխարհային շուկաներում գործունեության կողողինացումը, միջազգային բանկային ծառայությունների զարգացումը, միջազգային դրամական հոսքերի արդյունավետության բարձրացումը, վարկանշային գործակալությունների հետ հարաբերությունների զարգացումը, միջազգային ստանդարտների հետ բանկի ֆինանսական հաշվետվությունների համաձայնեցումը, օտարերկրյա բանկերի հետ հարաբերությունների զարգացումը: Դա թույլ կտա ամրապնդել գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունները, նոր հարաբերություններ սահմանել միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ և աշխարհում արագացնել այդ շուկային հայրենական բանկերի ինտեգրումը:

Նպատակահարմար է օգտագործել թղթակցային հարաբերությունների կազմակերպման միջազգային փորձը: Առաջատար օտարերկրյա բանկերը ներկայումս հրաժարվում են բազմաթիվ նոստրո թղթակցային հաշիվներից այլ երկրների բանկերում, քանի որ դա հանգեցնում է գործարքային ծախսերի մեծացմանը [3, էջ 87]: Օրինակ՝ «ԱԲՆ ԱՄՐՕ Բանկը» (Հո-

լանդիա), որ մտնում է աշխարհի խոշորագույն բանկերի առաջին տասնյակի մեջ, ունի ընդամենը 8 արտաքին թղթակցային հաշիվներ: Դա թույլ կտա ՀՀ առևտրային բանկերին մատուցել միջազգային հաշվարկներով ծառայությունների լրիվ ցանկն ավելի բարձր որակական մակարդակով՝ կոնկրետ օտարերկրյա բանկերի հետ համագործակցության ուժեղացման հաշվին: Կարևոր է ՀՀ բանկերի կողմից վարկային գծերի բացումը թղթակցային հարաբերությունների շրջանակներում: Դա զգալիորեն կպարզեցնի արտահանման-ներմուծման գործարքների իրականացումը՝ միջազգային վճարահաշվարկային ծառայությունների տրամադրման ժամանակ:

Հեռանկարային է հանդիսանում հաճախորդների միջազգային առևտրային գործարքների գծով միջազգային բանկային ծառայությունների տրամադրումը և բանկի հաճախորդների համար բիզնես գործընկերների որոնումը: Արևմտյան բանկային պրակտիկայում նման ստորաբաժանումները կրում են «Trade Promotion Department» անվանումը, որոնց գործունեությունը պայմանավորված է արտաքին տնտեսական հարաբերությունների ընդլայնման գործում հաճախորդների պահանջարկի ուսումնասիրությամբ:

Առևտրային գործարքների կազմակերպման գծով միջազգային բանկային ծառայություններ տրամադրելիս հատուկ արդիականություն է ձեռք բերում հաճախորդների բիզնեսի սպասարկման ժամանակ խորհրդատվական ծառայությունների մատուցման գծով օտարերկրյա բանկերի փորձը, ինչպիսիք են՝ հաճախորդների արտաքին տնտեսական պայմանագրերի վերլուծությունը, օտարերկրյա բանկերի վարկունակության և ընթացիկ ֆինանսական վիճակի վերլուծությունը, հաճախորդների գործարքների կազմակերպման գծով անհատական սխեմաների մշակումը:

Միջազգային ներդրումային բանկային ծառայությունների օտարերկրյա փորձի կիրառումը միջազգային վարկային շուկային ՀՀ բանկերի ինտեգրման գործընթացի զարգացման առանցքային գործոններից մեկն է: Հեռանկարային է հանդիսանում արժեթղթավորման գծով ծառայությունների տրամադրումը: Գործնական հետաքրքրություն է ներկայացնում համաշխարհային ֆինանսական շուկաներում ՀՀ բանկերի մուրհակների և հաճախորդների բաժնետոմսերի տեղադրման գծով համաշխարհային փորձի օգտագործումը: Տվյալ ծառայությունների յուրացումը թույլ կտա

հայրենական բանկերին, մի կողմից, տնտեսական հարաբերություններ հաստատել միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ, իսկ մյուս կողմից՝ լավագույն կերպով բավարարել հաճախորդի ներդրումային պահանջարկը:

Վերոնշյալ միջազգային բանկային ծառայությունների տրամադրումը թույլ կտա բավարարել դինամիկ կերպով զարգացող հայրենական բիզնեսի աճող պահանջները: Դրա հետ առնչվող հարցերի համալիր լուծումը հնարավոր է միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ ՀՀ առևտրային բանկերի տնտեսական հարաբերությունների զարգացման պայմաններում:

Առանցքային հասկացություններ. միջազգային ֆինանսական շուկա, միջազգային վարկային շուկա, միջազգային բանկային ծառայություն, միջազգային վարկային շուկայի մասնակիցներ, արտարժութային գործառնություն, միջազգային փոխանցում, ակրեդիտիվ, ինկասո, արժեթղթավորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://banker.am/bank_services.php?lang=1&color=b,
<http://www.banks.am/am/#> (21.01.2013)
2. Кеткар С.С., Секьюритизация будущих потоков поступлений: полезный инструмент для развивающихся стран//Финансы и развитие, 2001, 255 с.
3. Добродомова С.В.« Международные финансовые отношения. Курс лекции. Н. Новгород, Изд-во ВВАГС, 2004г., 305 с.
4. Афоничкин А.И., Журова Л.И., Ягодин Н.В., Управление развитием интегрированных экономических систем на базе инструментария стратегического зонирования: Монография. — Тольятти, Изд-во Волжского ун-та им. В.Н. Татищева, 2006, 473с.
5. Кузнецов В., Что такое глобализация? Мировая экономика и международные отношения N 2,1998 , с.402.

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ МЕЖДУНАРОДНЫХ БАНКОВСКИХ УСЛУГ В РА

Н.Н. Демурчян

Резюме

В статье рассматриваются виды международных банковских услуг предоставляемые армянскими коммерческими банками, необходимость расширения и возможности для дальнейшего развития при текущих экономических условиях.

Анализ международных банковских услуг предоставляемые коммерческими банками РА показывает, что они не обеспечивают весь спектр международных банковских услуг.

В случае полного предоставление коммерческими банками РА всех типов международных банковских услуг, будет удовлетворено растущее требование динамично развивающегося отечественного бизнеса. Комплексное решение всех этих вопросов будет возможно только при развитие экономических отношений между коммерческими банками РА и участниками международного кредитного рынка.

Ключевые понятия: *международный финансовый рынок, международный кредитный рынок, международная банковская услуга, участники международного кредитного рынка, валютные операции, аккредитив, инкассо, международный перевод, секьюритизация.*

OPPORTUNITIES FOR THE DEVELOPMENT OF INTERNATIONAL
BANKING SERVICES IN THE RA

N.N. Demurchyan

Summary

This article discusses the types of international banking services offered by the armenian commercial banks, the need to expand and the opportunities for their further development in the current economic environment.

The analysis of international banking services provided by commercial banks of the RA shows that they do not provide the full range of international banking services.

In the case of the provision of commercial banks of the RA all the types of international banking services, will be satisfied with the increasing demands of a rapidly growing domestic business. Complex solution for all these matters will be possible only with the development of economic relations between commercial banks and international credit market participants.

Key concepts: *international financial market, international credit market, international banking service, participants in the international credit market, currency transactions, letters of credit, encashment, international transfers, securitization.*

**ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՅԻԱՆԵՐԻ
ՍԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հ.Ռ. Երիցյան

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի գործընթացներին առանձնահատուկ է վերագրվող կորպորացիաների (այսուհետ՝ ՎԱԿ-եր) բուռն աճը, որոնց գործունեության հիմնական նպատակը ողջ աշխարհով մեկ ամբողջականորեն և ինտեգրված մեխանիզմով բազմաթիվ շուկաներում գործելն է: Միաժամանակ համաշխարհային շուկայում ակտիվորեն զարգացող գիտատեխնիկական առաջընթացը մարդկությանը զինում է նոր տեխնոլոգիաներով, որոնք ոչ միայն բարձրացնում են արտադրության արդյունավետությունը, այլև հաջողությամբ լուծում են երբեմնի անհաղթահարելի համարվող խնդիրներ: Աննախադեպ աճ է նկատվում աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի ծավալների մեծացման ոլորտներում, ինչը հանգեցրել է ապրանքային տեսականու բազմազանության ընդլայնմանը, դրանց արագ փոփոխմանն ու մրցակցության ուժգնացմանը: Այս պայմաններում է, որ մարքեթինգը և հատկապես միջազգային մարքեթինգը դառնում են արտաքին շուկաներ ներթափանցման անհրաժեշտ գործիքներ ու պահանջում են հատուկ ուսումնասիրություն [1, 173]:

Եվ պատահական չէ, որ այսօր համաշխարհային տնտեսությանը բնորոշ է արտադրության միջազգայնացումն ու գլոբալացումը և որպես հետևանք՝ միջազգային մարքեթինգի արագ զարգացումը: Միջազգային մարքեթինգը թույլ է տալիս ուսումնասիրել արտաքին շուկաները և հաշվի առնել սպառողների վարքագիծն ու պահանջմունքները, որի շնորհիվ ՎԱԿ-երի համար հնարավոր է դառնում ավելի արդյունավետ իրականացնել իրենց արտադրական գործունեությունը, նախապես պլանավորել միջազգային շուկաներում մրցունակ համարվող արտադրանքի թողարկումը՝ ամբողջովին համապատասխանեցնելով այդ արտադրանքը ժամանակի բոլոր տեխնիկական և տնտեսական պահանջներին [2, 47]:

Հայաստանը ևս, լինելով համաշխարհային շուկայի անբաժանելի

մասն ու միաժամանակ անմասն չմնալով դրա զարգացման արդի օրինաչափություններից, առանձնանում է իր զարգացման որոշակի ինքնատիպությամբ ու հեռանկարներով: Անշուշտ, Հայաստանում գործող բազմաթիվ ՎԱԿ-երի մասնաճյուղեր իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են հիմնականում գլխամասային կազմակերպության կողմից մշակված գլոբալ ռազմավարությամբ, ինչն, անպատճառ, իր ազդեցությունն է ունենում սոցիալական, քաղաքական, տնտեսական և մի շարք այլ բնագավառների վրա: Անհրաժեշտ է ընդգծել նաև այն փաստը, որ նրանց կողմից իրականացվող մարքեթինգային տարբեր գործողություններ ու միջոցառումներ իրենց ուրույն հետքը կամ ազդեցությունն են թողնում հայաստանյան շուկայում՝ մասնավորապես առաջարկելով մարքեթինգային նոր լուծումներ, ազդելով սպառողական վարքագծի վրա և ներմուծելով նոր արժեհամակարգեր: Սակայն այս ամենի հետ մեկտեղ կարևոր է հաշվի առնել տեղական շուկայի որոշակի առանձնահատկություններ, որոնք մեծապես պայմանավորում են ՎԱԿ-երի կողմից իրականացված մարքեթինգային գործունեությունը: Ստորև անդրադառնանք այդ գործոնների վերլուծությանը:

Փաստ է, որ յուրաքանչյուր մարքեթինգային գործունեություն ուղղված է հիմնականում նոր սպառողների ներգրավմանն ու նրանց պահանջմունքների բավարարմանը: Պետք է ընդգծել, որ Հայաստանը համարվում է փոքր շուկա և սա, թերևս, շուկա մուտք գործելու հետազոտության ամենակարևոր կռվաններից մեկն է: 3274.3 հազ. ազգաբնակչություն [3, 3] ունեցող Հայաստանի պարագայում ձեռք բերված սպառողների թվաքանակն այդքան էլ մեծ չի լինում, եթե կատարված ծախսերը բաշխվում են այդ թվաքանակի վրա ու համեմատվում ակնկալվող շահույթի հետ, ապա պարզ է դառնում այդ գործողությունների ֆինանսական անարդյունավետությունը: Եթե սրան ավելացնենք այն, որ շուկան համասեռ չէ, ողջ ազգաբնակչությունը չէ, որ կարող է համարվել տվյալ ապրանքի կամ ծառայության սպառողը, այսինքն՝ կան սեզանտներ, որոնք կազմում են տվյալ ապրանքի կամ ծառայության սպառողական խմբերը, իսկ դրանցից էլ հետագայում ընտրվում են թիրախային խմբերը, պարզ է դառնում, որ Հայաստանում նոր սպառողներ գրավելու ու շուկայի մասնաբաժինն ընդլայնելու ներուժը գործնականում մեծ չէ:

Կարևոր գործոններ են համարվում նաև գնողունակությունն ու ազգաբնակչության կենսամակարդակը: Սա ևս կարող է համարվել լրացուցիչ խոչընդոտ մարքեթինգի տեսանկյունից, քանի որ արտադրանքի գնային քաղաքականությունը մշակելիս հաշվի են առնվում այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են գնողունակությունը, ֆինանսական կայունությունը և այլն: Գնողունակության անկումն ու ֆինանսների սղությունը հանգեցրել են նրան, որ հայ սպառողները շատ դեպքերում զգալիորեն սահմանափակել են իրենց գնումները և, մասնավորապես, ավելի շատ հակված են գնելու առաջին անհրաժեշտության ապրանքներ: Եթե հաշվի առնենք այն, որ ՎԱԿ-երի շուկան առավել առանձնանում է նոր տեխնոլոգիաների ու նորարարությունների առաջադրմամբ, որոնց գները համեմատաբար բարձր են, ապա սա, բնականաբար, լրացուցիչ խոչընդոտ է վաճառքն իրականացնելու համար: Նմանատիպ ապրանքների դեպքում որպես գնային քաղաքականություն ընտրվում է «սերուցքի քաղաքականությունը», որի ժամանակ, օգտվելով արտադրանքի անկրկնելիությունից ու շուկայում դեռևս մենաշնորհային դիրքից, ՎԱԿ-երը սահմանում են բարձր գներ ու ստանում առավելագույն շահույթ: Իսկ վերը թվարկված խոչընդոտները պատճառ են հանդիսանում, որպեսզի ՎԱԿ-երը Հայաստանում անմիջապես հանդես չգան նորամուծություններով, և բանականաբար այստեղ բացակայում է մարքեթինգային որևէ նշանակալի գործունեություն¹: Այս դեպքում կարելի է տեսնել հակասություն, քանի որ հզոր մարքեթինգային գործիքակազմ ունեցող ՎԱԿ-երը, Հայաստանում չունենալով առանձնապես մեծ շուկայի հեռանկարներ, այդուհանդերձ մուտք են գործում այնտեղ: Սակայն, մեր կարծիքով, սա բացատրվում է նրանով, որ ՎԱԿ-երը գլոբալացումն իրականացնող կարևորագույն այն կառույցներից են, որոնք հետապնդում են որոշակի տնտեսական, քաղաքական և այլ նպատակներ: Այսպիսով, նրանց ներկայությունը բազմաթիվ երկրներում առաջնային նշանակություն ունի:

Այնուհետև պետք է ընդգծել հայ սպառողների վարքագծի առանձնահատկությունն ու ՎԱԿ-ի կողմից որդեգրված ռազմավարությունը: Այսպես, հայ սպառողի վարքագիծն ու հոգեբանական առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես խորհրդային սպառողական վարքագծի

¹ Այս տեղեկնցի շուրջ չկան դեռևս պաշտոնական դիտարկումներ և ուսումնասիրություններ:

տարրերի ազդեցությամբ, այնպես էլ նրանով, որ հայ սպառողին ամենևին օտար չեն և՛ արևելյան, և՛ արևմտյան մշակույթն ու արժեքները: Մյուս կողմից՝ սերնդափոխության հետ մեկտեղ փոխվում են նաև արժեհամակարգերն ու մտածելակերպը, և ակնհայտ է դառնում, որ սպառողական վարքագիծը ևս ենթարկվում է փոփոխությունների: Բնականաբար, ցանկացած մարքեթինգային քայլ կատարելիս հաշվի են առնվում սպառողական վարքագծի առանձնահատկությունները, քանզի, վերջին հաշվով, յուրաքանչյուր գործողություն ուղղված է սպառողի պահանջմունքների բավարարմանը: Հայ սպառողի «բազմադեմ» վարքագծի առանձնահատկությունն է, որ շատ ՎԱԿ-երի հնարավորություն է տալիս կիրառել մարքեթինգային և հատկապես գովազդային գլոբալ քաղաքականություն: Այսպես, շատերն առաջնորդվում են «Think global, act local»² կարգախոսով: Այն թույլ է տալիս մշակել մեկ միասնական ռազմավարություն և այն հարմարեցնել տեղական շուկաներին [4, 128]: Որպես օրինակ այստեղ կարելի է բերել Coca Cola ընկերության օրինակը: Վերջինս Հայաստանում գործող ՎԱԿ-երից է և իր մարքեթինգային գործունեությամբ նպաստում է որոշակի արժեքների ներմուծմանը: Եթե ուշադիր վերլուծենք վերջինիս գովազդային քաղաքականությունը, ապա կնկատենք, որ շեշտադրումը կատարվում է հիմնականում երիտասարդների, պատանիների ու նոր եկող սերնդի վրա: Հիմնվելով վերոհիշյալ զանգվածի հոգեբանական և տարիքային առանձնահատկությունների վրա՝ կիրառվում են այնպիսի հնարքներ, որոնք ազդում են նրանց հոգեբանության վրա, դրդում նրանց գնումներ կատարելու, իսկ բոլորից էականն այն է, որ գովազդի հերոսներն ամենևին հայ հասարակությունից ընտրված կերպարներ չեն, այլ՝ արևմտյան արժեքները կրող անհատականություններ: Կարելի է հանգել այն եզրակացության, որ այդպիսով թելադրվում են արևմտյան արժեքներ, և լինելով այդ արտադրանքի սպառողը՝ հայ երիտասարդը ևս դառնում է այդ արժեքների կրողը: Սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ ՎԱԿ-երն իսկապես նոր արժեհամակարգեր ստեղծող ու տարածող օղակներ են, նպաստում են աշխարհի գլոբալացմանը և այլն, որին օգնող գործիքներից է նրանց կողմից իրականացվող մարքեթինգային գործունեությունը:

Անշուշտ, Հայաստանում գործող ՎԱԿ-երի մարքեթինգային գործու-

²Թարգմ.՝ Մտածիր գլոբալ, գործիր լոկալ:

նեության առանձնահատկությունները պայմանավորող գործոնները բազմաթիվ են: Սակայն Հայաստանում գործող ՎԱԿ-երից որպես քննարկման գործնական և հետաքրքիր օրինակ կարող է ծառայել «Պեռնո Ռ-իկար» կազմակերպության գործունեությունը, որը հայաստանյան շուկա մուտք գործեց 1998 թ.-ին՝ ձեռք բերելով Երևանի կոնյակի գործարանը (այսուհետ՝ ԵԿԳ) [5]:

ԵԿԳ-ի ձեռք բերումն ինքնին հեռատեսական ու շատ կարևոր քայլ էր «Պեռնո Ռ-իկար» խմբի կողմից, քանի որ դրանով իսկ այն կարողացավ հեշտությամբ ու հաստատուն քայլերով գրավել հետխորհրդային երկրների ակոհոլային շուկան: Բանն այն է, որ ԵԿԳ-ի թողարկած կոնյակների 93 %-ը արտահանվում է, որի 75.7 %-ը սպառվում է Ռուսաստանի Դաշնությունում, իսկ մնացած մասը՝ մեծամասամբ հետխորհրդային այլ երկրներում [6, 17-18]: Եթե սրա հետ մեկտեղ նշենք այն, որ հայկական կոնյակները վայելում են մեծ համբավ ու ճանաչված են այդ երկրներում և ողջ աշխարհում առհասարակ, ապա հասկանալի կդառնա այդ ձեռք բերման կարևորությունը:

Ինչպես երևում է մեր կողմից կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքից, «Պեռնո Ռ-իկարի» կողմից գնումից հետո (2000-2004 թթ.՝ էվոլյուցիոն 5-րդ շրջան)³, ընդունվում է ստանդարտիզացիայի ռազմավարություն, որը ենթադրում է միևնույն փաթեթավորումը ողջ տեսականու համար: Իհարկե, դա թույլ է տալիս ընդգծել ապրանքանիշի ուժեղ ինքնատիպությունը, սակայն թուլացնում է տարբեր տեսակների տարբերակումը: Փաթեթավորման կրկնօրինակումը մրցակիցների կողմից (կանաչ շշեր և միևնույն պիտակները գրեթե բոլոր կոնյակների համար) ստիպում է ԵԿԳ-ին վերստին փոխել ամբողջ փաթեթավորումը (էվոլյուցիոն 6-րդ շրջան), որը թույլ տվեց տալ գերազանց տարբերակում տեսականիների միջև, մեծացնել ապրանքանիշի համբավն ու ճանաչելիությունը, ինչպես նաև մշակել մրցակիցներից տարբերակման ռազ-

³ Տողերիս հեղինակը, 2009-2010թթ. ժամանակահատվածում աշխատել է ԵԿԳ-ի մարքեթինգային խմբի հետ, որի ընթացքում իրականացված շուկայի ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք շատ կարևոր եզրակացությունների և արդյունքների: Իմ կողմից վերականգնվել և վերլուծվել են ԵԿԳ-ի պատմական էվոլյուցիոն փուլերը, որոնք անմիջական կապ են ունեցել մարքեթինգային գործունեության հետ: Ուսումնասիրության ընթացքում կատարվել են ինչպես հարցումներ հարցաթերթիկով և ինտերնետով, այնպես էլ հանդիպումներ մաս-նագետների հետ և արխիվների ուսումնասիրություն:

մավարություն: Պետք է նշել, որ նոր փաթեթավորումը հիմք ծառայեց պրեմիումիզացիայի համար: Այդ նույն շրջանում է, որ ԵԿԳ-ն կրճատեց տեսականին (ARARAT 3 և 5 տարեկան, Անի, Ընտիր, Ախթամար, Տոնական և Նաիրի), քանի որ մեծ տեսականին շփոթություն էր առաջացնում սպառողների մեջ: Այսպիսով, նոր, ավելի փոքր տեսականին թույլ տվեց կատարել ARARAT ապրանքանիշի տարբերակում և ընդգծել ինքնատիպությունը [7, 37-38]:

Հակիրճ անդրադառնանք 2009 թ. մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներին, որոնք հաստատեցին 2010 թ. նոր ռազմավարության մշակման և վերադիրքավորման կարևորությունը: Այսպես, դրանք են՝

Ապրանքանիշի ճանաչելիության և ընկերության համբավի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հարցվողների մեծամասնությունը նշում է ARARAT ապրանքանիշը (*Top of mind* 90.6%), և ընկերությունների համբավի տեսանկյունից ԵԿԳ-ի համբավը ամենաբարձրն է (88.0 %): Մինչդեռ շուկայի մասնաբաժինը 17 % է: Այստեղ կարելի է գտնել հակասություն ստացված արդյունքների միջև: Չնայած այս խոստումնալից արդյունքներին՝ մեկ այլ ուսումնասիրություն (իրականացված M & AD Consulting ընկերության կողմից՝ 2008 թ. հուլիսին) ցույց է տվել, որ ԵԿԳ-ի կոնյակները համարվում են լյուքս ապրանքներ և սպառվում են հիմնականում հատուկ առիթների ժամանակ, ինչպես նաև ծառայում են որպես թանկարժեք նվեր: Սրանով էլ կարելի է բացատրել նման հակասական արդյունքների պատճառը:

↪ ԵԿԳ-ի արտադրանքի շարքում սպառողները նախընտրում են հատկապես «Նաիրին», «Տոնականը», «Ախթամարը» և այլն: Այնուամենայնիվ, ԵԿԳ-ի արտադրանքը շփոթվում է մրցակից արտադրանքի հետ: Այսպես, հարցվողներից ոմանք «Մանե» կոնյակը համարում են ԵԿԳ-ի արտադրանք, սակայն այն ՄԱՊ ընկերության կոնյակներից է:

↪ Ինչ վերաբերում է որակի գործոններին, որոնք ազդում են գնման որոշման կայացման վրա, ապա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ամենակարևոր գործոնը հնեցման տարիքն է, որին հաջորդում են համը, հոտը, գույնը և թնդությունը:

↪ Փաթեթավորման ֆունկցիաների ուսումնասիրության տվյալների

համաձայն գնման որոշման կայացման վրա առաջնային ազդում է «Գրավիչ լինելը», ապա, համապատասխանաբար, «Հեշտ օգտագործում», «Տարբերակում այլ ապրանքանիշներից» և «Հեշտ տեղափոխում» ֆունկցիաները:

☞ Փաթեթավորման տարբեր տարրերին վերաբերող ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ հիմնական դիտողությունները սպառողների կողմից վերաբերում են շշին՝ մատնանշելով նոր դիզայնի կարիքը: Այս խնդիրներ են առաջացել նաև պիտակի հետ, որտեղ հարցվողները նշել են, որ դժվար են հասկանում կամ ընդհանրապես չեն հասկանում պիտակի վրայի պատկերները: Սա խոսում է վատ հաղորդակցման և խթանման քաղաքականության մասին [8, 33-34]:

Ահա, ինչպես նշվեց, այս արդյունքներն ընդգծեցին ԵԿԳ-ի մարքեթինգային 7-րդ էվոլյուցիոն շրջանի անհրաժեշտությունը, որը ստացավ **Վերածնունդ** անվանումը: Այն ենթադրում է, փաթեթավորման ամբողջական փոփոխում, որը պահանջում է վերադիքավորման ռազմավարության մշակում: Իր հերթին վերադիքավորումը պահանջում է նորովի մշակել ողջ ռազմավարությունը, ինչպես նաև՝ մարքեթինգային միքսը: Լինելով առաջատարը շուկայում՝ ԵԿԳ-ն բախվել էր մի շարք խնդիրների, որոնք կապված էին մրցակիցների կողմից մարքեթինգային քաղաքականության կրկնօրինակման հետ, հատկապես՝ փաթեթավորման պարագայում: Իսկ վերադիքավորումն ու փաթեթավորման լրիվ նոր կոնցեպցիան թույլ տվեցին նորից ընդգծել տարբերությունները, ինքնատիպությունը և ուժեղացնել մրցակցային դիրքերը:



Հին փաթեթավորում

Նոր փաթեթավորում

Նկար 1. ԵԿԳ-ի կոնյակների հին և նոր ապրանքային կոնցեպցիաները

Արտադրության ռազմավարությունը տեսականու ընդլայնումն է դեպի վերև (Էքստրա-պրեմիում տեսականու թողարկում): Այսպես, պրեմիում և լյուքս դասի ապրանքները կարող են ծառայել որպես գովազդի միջոց կամ որպես խթան որակի տեսանկյունից: Հաղորդակցման քաղաքականությունը, որը հիմնված է բարձր դասի ապրանքների վրա, ուժեղացնում է ապրանքանիշի համբավն ու էքսկլյուզիվությունը: Արդյունքում, ԵԿԳ-ն կարող է տրամադրել ռեսուրսներ Էքստրա-պրեմիում տեսականու շնորհիվ բարձր իմիջ ստեղծելու, ինչպես նաև այդ էքսկլյուզիվությունն ու իմիջը մյուս միջանկյալ թիրախային խմբերին փոխանցելու համար (Պրեմիում և Սուպեր պրեմիում տեսականիներ): Մինչդեռ «Վասպուրական» կոնյակի թողարկումը ռուսական շուկա «Տոնական» կոնյակի փոխարեն կարող է շփոթություններ առաջացնել հայ սպառողների մոտ: Հաշվի առնելով, որ «Վասպուրականը» 18 տարեկան կոնյակ է և փոխարինելու է «Տոնական» 15 տարեկան կոնյակին, և որոշ սպառողներ դեռևս հիշում և փնտրում են «Վասպուրական» կոնյակը (այդպես է ցույց տվել նույն՝ 2009 թ.-ին մեր կողմից իրականացված հայկական շուկայի ուսումնասիրությունը), այս փոփոխությունները կարող են վատ ընդունվել ARARAT կոնյակների հավատարիմ սպառողների կողմից, որոնք լավ ճանաչում են տեսականին: Փաթեթավորման ամբողջական փոփոխումը կստեղծի առավելություններ պրեմիումիզացիայի, ինչպես նաև սպառողների նկատմամբ տարբերակման ռազմավարության համար: Սակայն կարելի է հաստատել, որ Ստանդարտ և Պրեմիում տեսականիները ունեն ընդհանուր տարրեր (շի վիզ և խցան) մրցակցի հետ համեմատած («Պոռչյան»): Հարկ է նշել, որ «Պեռնո Ռ-իկարի» ֆինանսավորմամբ նկարահանվեց կարճամետրաժ ֆիլմ «Ախթամար» լեգենդի շուրջ, որը կազմում էր նոր ռազմավարության կոմունիկացիոն քաղաքականության մի հատվածը, և որի շնորհիվ վերստին ճանաչելի դարձան ոչ միայն ԵԿԳ-ի տեսականին՝ դրանով իսկ լուծելով շփոթմունքները մրցակիցների տեսականու հետ կապված, այլև աշխարհին մատուցվեց Ախթամարի սիրո գեղեցիկ ու ողբերգական պատմությունը:

Այսպիսով, նոր լուծումները և դիզայնը, ինչպես նաև երկրորդային փաթեթավորումը ողջ տեսականու համար նպաստեցին պրեմիումիզացիայի ռազմավարության առաջխաղացմանը: Նոր տեսականու թողար-

կումը հետապնդում է ռազմավարություն, որը պարունակում է բազմաթիվ կարևոր կետեր, այդ թվում՝

- ARARAT ապրանքանիշի պրեմիումիզացիա
- Տեսականու ընդլայնում
- Ապրանքանիշի ինքնատիպության ուժեղացում
- Մրցակիցների ապրանքների համեմատ զգալի տարբերակում
- Նոր դիրքավորում
- Հաղորդակցման նոր ռազմավարություն և նոր արժեքներ [9, 39-40]:

«Պեռնո Ռիկարի» կողմից իրականացված ճիշտ մարքեթինգային քայլերը հետագայում հանգեցին նրան, որ 2012թ. ամփոփիչ արդյունքներով ԵԿԳ-ն գրանցեց աննախադեպ 50 % վաճառքի աճ [10]: Եվ այս ամենը շնորհիվ գրագետ ռեբրենդինգի և տարբերակման ռազմավարությունների, որոնք իրենց մեջ ներառեցին ռազմավարական ու օպերացիոն մարքեթինգի անթերի մշակված տարրեր, ինչպիսիք են՝

- ✓ Սեզմենտներ և թիրախային խմբեր
- ✓ Դիրքավորում և վերադիրքավորում
- ✓ Արտադրանքի քաղաքականություն
- ✓ Գ-նային քաղաքականություն
- ✓ Կոմունիկացիոն և խթանման քաղաքականություն
- ✓ Առաքման քաղաքականություն և ճիշտ վաճառքի կազմակերպում:

Այսպիսով, եթե ի մի բերենք Հայաստանում գործող ՎԱԿ-երի մարքեթինգային գործունեության առանձնահատկությունները, ապա կնկատենք, որ փոքր շուկան և մի շարք այլ խոչընդոտ համարվող գործոններ պատճառ են հանդիսանում մարքեթինգային ճկուն ու լայնածավալ քայլերի բա-



Նկար 2. Ռեբրենդինգի և տարբերակման արդյունքում ապրանքային նոր կոնցեպցիան և նոր լոգոտիպը հնի հետ համեմատած

ցակայության համար: Սակայն, ամեն պարագայում, ակտիվությունն այս բնագավառում առավել նկատելի է խմիչքների արտադրության ոլորտում: Այդ ակտիվությունն արտահայտվում է հիմնականում գովազդների միջոցով, որոնք իրենց հետ բերում են նոր արժեհամակարգեր՝ փոխելով հայ սպառողի մտածելակերպն ու վարքագիծը: Հայաստանում գործող ՎԱԿ-երից իր մարքեթինգային գործունեությամբ առավել դիտարկելի է «Պեռնո Ռ-իկարը», որն անընդհատ կատարելագործվող համակարգ է ստեղծել Հայաստանում՝ ոչ միայն ներդնելով նորագույն տեխնոլոգիաներ, մշակելով նոր որակ ու հոգ տանելով շրջակա միջավայրի մասին, այլև բերելով նոր մարքեթինգային և գործարար հմտություններ ու լուծումներ՝ դրանով իսկ նոր շունչ հաղորդելով հայաստանյան մարքեթինգային շուկային: Հարկ է նշել, որ ՎԱԿ համարվող «Պեռնո Ռ-իկար» խումբը հաշվի է առնում ինչպես հայ ու արտասահմանյան սպառողների պահանջներն ու սպառողական առանձնահատկությունները, այլև անընդհատ փոփոխվող ու դինամիկ միջավայրի շուկայի նոր պահանջներն ու խաղի կանոնները:

Առանցքային հասկացություններ. *համաշխարհային շուկա, գլոբալիզացում, վերազգային կորպորացիա, միջազգային մարքեթինգ, մրցակցային առավելություններ, սպառողական վարքագիծ, օպերացիոն մարքեթինգ, ռազմավարական մարքեթինգ, մարքեթինգային պլան, ռեբրենդինգ, վերադիզայնավորում, դիֆերենցիացիա:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Барсукова С.В. Международный маркетинг. М. ФА, 1999, 201 стр.
2. Ulrike Mayrhofer, Marketing International, Editions Economica, P., 2004, pp. 276.
3. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012 թ., Բնակչություն, 25 էջ, Երևան:
4. Ջ. Թադևոսյան, Հ. Երիցյան, «Վերազգային կորպորացիաներ» հասկացության մեկնաբանման շուրջ, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Գլխական հոդվածների ժողովածու, Երևան, 2012թ., 307 էջ:

5. <http://www.araratbrandy.com/am/ybc/history> ԵԿԳ պատմություն: Վերջին մուտքի ամսաթիվ՝ 03.03.2013թ.:
6. Հ. Երիցյան, ARARAT ապրանքանիշի փաթեթավորման էվոլյուցիոն վերլուծություն ստեղծման օրից մինչ նոր փոփոխվող փաթեթավորում. Մարքեթինգային պլանի մշակում, Երևան, 2010 թ., 110 էջ:
7. Հ. Երիցյան, ARARAT ապրանքանիշի փաթեթավորման էվոլյուցիոն վերլուծություն ստեղծման օրից մինչ նոր փոփոխվող փաթեթավորում. Մարքեթինգային պլանի մշակում, Երևան, 2010 թ., 110 էջ:
8. Հ. Երիցյան, Երևանի կոնյակի գործարանի Մարքեթինգային պլանի մշակում «Արտադրանք» կոնցեպցիայի համար, Երևան, 2009 թ., 107 էջ:
9. Հ. Երիցյան, ARARAT ապրանքանիշի փաթեթավորման էվոլյուցիոն վերլուծություն ստեղծման օրից մինչ նոր փոփոխվող փաթեթավորում. Մարքեթինգային պլանի մշակում, Երևան, 2010թ., 110 էջ
10. <http://arminfo.am/index.cfm?objectid=B2926D40-8017-11E2-81F1F6327207157C> ԵԿԳ-ի գործադիր տնօրեն Արա Գրիգորյանի հարցազրույցը ԱրմԻնֆո լրատվական գործակալության հետ: Վերջին մուտքի ամսաթիվ՝ 04.03.2013 թ.:

ОСОБЕННОСТИ МАРКЕТИНГОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ТРАНСНАЦИОНАЛЬНЫХ КОРПОРАЦИЙ В АРМЕНИИ

О.Р. Ерицян

Резюме

Эта статья призвана дать некоторые представления о маркетинговой деятельности транснациональных корпораций в Армении. Таким образом, можно заметить, что общими причинами отсутствия гибких и обширных маркетинговых мероприятий являются следующие факторы: маленький потребительский рынок Армении, покупательная способность и ряд других факторов. Маркетинговая деятельность более заметна в пищевой сфере. Это в основном проявляется через рекламу, которая приносит новую систему ценностей, изменив поведение и мышление армянских потребителей. На армянском рынке более наблюдаема и заметна маркетинговая деятельность группы Pernod Ricard. Эта группа постоянно совершенствует систему производства, не только создавая и внедряя новые технологии, развивая качество и заботясь об окружающей среде, но также принося

новые способы маркетинговых и бизнес-навыков и решения, что является новым импульсом на армянском рынке маркетинга.

Ключевые понятия: *международный рынок, глобализация, транснациональные корпорации, международный маркетинг, конкурентные преимущества, потребительское поведение, операционный маркетинг, стратегический маркетинг, маркетинговый план, ребрендинг, позиционирование, дифференциация.*

THE PARTICULARITIES OF TRANSNATIONAL CORPORATIONS' MARKETING ACTIVITIES IN ARMENIA

H.R. Yeritsyan

Summary

This article aims to give some notions on transnational corporations' marketing activities in Armenia. So, we can notice that the general reasons for the lack of marketing flexible and extensive steps are the Armenian small market and a number of other factors. The marketing activity is more noticeable in the food sphere. It is mainly manifesting through advertisements which are bringing new system of values by changing the Armenian consumer behavior and the way of thinking. From the marketing activities of the Armenian transnational corporations the most observable and noticeable are Pernod Ricard's marketing activities. This Group is constantly improving the production system, not only creating and introducing new technologies, developing the quality and caring about the environment, but also bringing a new way of marketing and business skills and solutions - a new impetus on the Armenian marketing market.

Key concepts: *international market, globalization, transnational corporation, international marketing, competitive advantages, consumer behavior, Marketing Mix, Strategic Marketing, Marketing Plan, rebranding, repositioning, differentiation.*

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մ.Ս. Կասիմյան

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունն ընդունված է դիտել որպես ազգային տնտեսությունների փոխկապակցված համակարգ, որտեղ յուրաքանչյուր երկիր ունի իր տեղն ու դերը: Այդ փոխազդեցությունները դիալեկտիկական միասնությունների և հակադրությունների դրսևորումներ են, որոնց բախման արդյունքում ձևավորվում են տնտեսական հարաբերություններ և որոնք կրում են կայուն և կանոնավոր բնույթ [1,5]:

Գաղտնիք չէ, որ երկրագնդի ոչ բոլոր երկրներն ունեն իրենց անհրաժեշտ չափով վառելիքային, մետաղային, անտառային և այլ ռեսուրսներ: Աշխարհի 220-ից ավելի պետություններ իրենց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, ինչպես նաև մեկ շնչի հաշվով թողարկվող արտադրանքի չափով, շատ տարբեր են, և այդ տարբերությունները՝ հումքային ռեսուրսների ու պատրաստի արտադրանքի սպառման առումներով, հարթվում են միջազգային տնտեսական կապերի հաստատման միջոցով [2,7]:

Միջազգային կամ արտաքին տնտեսական կապերն իրականացվում են տարբեր ձևերով, այդ ձևերը գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ բարդանում են և կազմավորվում են նորերը՝ ապահովելով արտաքին տնտեսական կապերի անընդհատ զարգացումը և էվոլյուցիան, ինչի արդյունքում էլ արտաքին տնտեսական կապերն իրենց զարգացման ընթացքում հանդես են գալիս տարբեր դրսևորումներով և ձևերով:

Արտաքին տնտեսական կապերի ձևավորումն ընդունված է անմիջականորեն կապել արտաքին առևտրի առաջացման հետ: Վերջինս, որպես տնտեսական կապերի հիմնական ձև, սկիզբ է առել դեռևս վաղ ժամանակներից: Երկրների միջև արտաքին առևտրային կապերը ձևավորվել են խորը անցյալում՝ սկիզբ առնելով տնտեսության բնամթերային ձևից ապրանքադրամական հարաբերությունների անցման շրջանում և դրա շնորհիվ:

Արտաքին առևտուրը (նաև համաշխարհային առևտուր և միջազգային առևտուր), ըստ էության, տարբեր երկրների միջև տնտեսական կա-

պերի այնպիսի ձև է, որը ծագել է աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա և արտահայտում է աշխարհի երկրների փոխադարձ տնտեսական կախվածությունը [3,52]:

Սկզբնական շրջանում առևտուրը կենտրոնացած էր խոշոր նավահանգստային քաղաքներում, որոնց միջոցով իրականացվում էր տվյալ երկրի կապը արտաքին աշխարհի հետ: Սակայն, բնատնտեսության վրա հիմնված հասարակական տնտեսական հասարակարգերում առևտուրը թե՛ ապրանքների անվանացանկի առումով, թե՛ ծավալների առումով կրում էր սահմանափակ բնույթ: Այնպիսի առևտրային կենտրոններ, ինչպիսիք էին Կարթագենն ու Աթենքը հին աշխարհում, իսկ Վենետիկը՝ միջնադարում, իրականացնում էին միջազգային ապրանքափոխանակության հիմնական մասը: Առևտրի առարկա էին հումքանյութերը, համեմունքները, պերճանքի առարկաները և այլն:

Բնատնտեսությունից անցումը ապրանքադրամական հարաբերությունների հանգեցրեց ոչ միայն ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնմանը, այլև զգալիորեն մեծացավ միմյանց հետ առևտրային կապեր հաստատող երկրների շրջանակը: Դրան նպաստեց, արդյունաբերական հեղաշրջմամբ պայմանավորված, խոշոր արդյունաբերության աստիճանական զարգացումը, հեռահաղորդակցության լայն ցանցի ձևավորումը, որոնք միջազգային ապրանքային շրջանառության մեջ ներգրավեցին նոր երկրներ, որոնց միջև էլ հաստատվեցին ամուր տնտեսական կապեր:

Այսպիսով, ապրանքադրամական հարաբերությունների աստիճանական զարգացումը, փոխանակության և արտաքին առևտրի աշխարհագրական գոտիների ընդլայնումը հանդիսացան տնտեսական կապերի զարգացման իրական գործոնները:

Հետագա դարերում պատմական զարգացումը տնտեսական հարաբերությունների առումով կանգ առավ: Տնտեսական հարաբերությունները երկրների միջև սկսեցին զարգանալ միայն միջնադարի վերջում (XIV դարի վերջ XV դարասկիզբ)՝ պայմանավորված աշխարհագրական մեծ հայտնագործություններով:

Ոսկու և արծաթի հարուստ պաշարների հայտնագործումը Ամերիկայում, Հնդկաստանի գաղութացումը, անհամարժեք փոխանակությունը, ստրուկների առևտուրը սկզբնավորեցին կապիտալի նախասկզբանա-

կան կուտակումը: Արտադրության ու փոխանակության զարգացման այդ շրջանում համաշխարհային շուկայում տիրապետող դարձավ առևտրային կապիտալը: Արտաքին առևտուրը բավականաչափ աշխուժացավ, ինչն էլ հիմք հանդիսացավ տնտեսագիտական մտքի պատմության մեջ նոր մոտեցման ձևավորման համար, որը ստացավ մերկանտիլիզմ անվանումը: Այս ուղղության հետևորդները, որոնք երկրի գլխավոր հարստություն համարում էին փողը՝ ոսկու տեսքով, գտնում էին, որ պետության հիմնական խնդիրը ոսկու պաշարների ավելացումն է, իսկ ոսկու ստացումը առաջին հերթին պետք է ապահովվի արտաքին առևտրի միջոցով [4; 14]: Երկրների միջև տնտեսական կապերի նշված մեկնաբանումը բավականին երկար գոյատևեց, որի ընթացքում արտաքին առևտուրը մնում էր որպես տնտեսական կապերի միակ ձև, իսկ պետությունների արտաքին տնտեսական քաղաքականության մեջ տիրապետում էր հովանավորչությունը:

Հետագայում՝ XVIII-XIX դարերում, կտրուկ մեծացավ ապրանքային շուկայի և արտաքին առևտրի նշանակությունը: Կապիտալիստական արտադրությունը, զարգանալով «խորությամբ» և քայքայելով բնատնտեսությունը, զարգացավ նաև «լայնությամբ», ընդգրկելով նոր աշխարհագրական տարածքներ՝ Եվրոպա, Ամերիկա, Ասիա, Աֆրիկա: Ազգային արդյունքների ավելի մեծ քանակություն դուրս գալով արտաքին շուկաներ, միաժամանակ տեղիք տվեց արտասահմանյան ապրանքների ներթափանցմանը ներքին շուկա: Երկրների միջև տնտեսական հարաբերությունների հետագա խորացումը նշանակալիորեն պայմանավորվեց նաև արդյունաբերական հեղաշրջմամբ: Վերջինովս պայմանավորված մանուֆակտուրային արտադրության և ապրանքադրամական հարաբերությունների հետագա զարգացումը, առանձին երկրների միջև փոխանակության շրջանակների ընդլայնումը, ինչպես նաև կապիտալի կուտակման ծավալների ավելացումը աստիճանաբար դարձան տնտեսական կյանքի աշխուժացման հիմնական գործոններ: 18-19-րդ դարերի արդյունաբերական հեղաշրջման հետևանքով արտադրողական ուժերի թռիչքաձև զարգացումը, այսպիսով, հանգեցրեց միջազգային տնտեսական հարաբերություններում նոր փուլի ձևավորման: Աշխատանքի ընդհանուր միջազգային բաժանումը դուրս մղվեց աշխատանքի դետալային, մասնակի բաժանման կողմից՝ զարկ տալով երկրների միջև արտադրության մասնագիտացման ու կոո-

պերացման խորացմանը: Սկսեցին առաջանալ արտադրության այնպիսի ճյուղեր, որոնք կողմնորոշվում էին ոչ միայն դեպի ներքին շուկա, այլև՝ առավելապես արտաքին շուկա: Գաղութները թանկարժեք մետաղների մատակարարներից աստիճանաբար վերածվեցին հումքի աղբյուրների և պատրաստի արտադրանքի վաճառահանման շուկաների: Արդյունքում ազատ մրցակցության կապիտալիզմին փոխարինելու եկավ մենաշնորհային կապիտալիզմը:

Այս ընթացքում առևտրային կապիտալի տիրապետությունը փոխարինվեց արդյունաբերական կապիտալի գերակայությամբ: Դրան համապատասխան, մերկանտիլիզմին և հովանավորչությանը փոխարինեցին դասական տնտեսագիտության գաղափարներն ու ազատ առևտրի քաղաքականությունը:

Հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած միջազգային առևտուրն ապրեց բուռն զարգացում: 1950-1970թթ. հանդիսացան միջազգային առևտրի «ոսկե դարաշրջանը»: Այդ ժամանակահատվածում միջազգային առևտուրը տարեկան աճում էր մոտ 7 տոկոսով: 1950-1994թթ. ընթացքում արտաքին ապրանքաշրջանառությունն աճեց մոտ 14 անգամ, մինչդեռ արտադրության ծավալը՝ ընդամենը 5.5 անգամ: Այս աճին նպաստում էին միջպետական հարաբերությունների կայունությունը, Գ-ՏԱ-ն (այն նպաստեց նոր ճյուղերի ստեղծմանը և հների վերագինմանը), արտաքին առևտրի ազատականացումը, ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացները, որոնք տեղի էին ունենում ամբողջ աշխարհում [5,94]:

Միջազգային առևտրի ծավալների տարեցտարի աճն ու ճկուն զարգացումն էլ հիմք հանդիսացան համաշխարհային տնտեսության ձևավորման համար: Ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտրի ծավալների շարժընթացը 2006-2011թթ. փաստում է, որ այն շարունակել է գրանցել աճի միտումներ նաև 21-րդ դարասկզբին՝ այդ ընթացքում աճելով մոտ 1.5 անգամ (աղյուսակ 1):

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 1-ում բերված տվյալները, միջազգային առևտրի ծավալների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2011թ., երբ այն կազմել է 22,421 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով մոտ 17,5%-ով: 2006-2008թթ. դիտվում է համաշխարհային առևտրի ծավալների կայուն աճ՝ այդ ընթացքում աճելով մոտ 1,3 անգամ:

Աղյուսակ 1.

Ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտուրը 2005-2010 թթ. (մլրդ ԱՄՆ դոլար) [6]

	2006	2007	2008	2009	2010	2011
Համաշխարհային առևտուր, այդ թվում՝	15,025	17,482	20,028	16,003	17,074	22,421
Ապրանքային առևտուր	12,133	14,005	16,124	12,526	15,255	18,197
Ծառայությունների առևտուր	2,892	3,477	3,904	3,477	3,819	4,224

Սակայն իրավիճակը կտրուկ փոխվում է 2008թ. սկսած, ինչը բնականաբար պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ նախապայմաններով: Դեռևս 2007թ. ԱՄՆ հիպոթեկային շուկայում սկիզբ էր առել խիստ անկայուն իրավիճակ, որը, աստիճանաբար զարգանալով, արդեն իսկ 2008թ.-ին վերածվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի: Ծգնաժամի հետևանքով սկիզբ առած խոշորամասշտաբ ցնցումները, ինչպիսիք էին միջազգային վարկային և բանկային համակարգերում տիրող ճգնաժամային իրավիճակները, մի շարք խոշոր ապահովագրական, ներդրումային և վարկային կազմակերպությունների սնանկացումը, բնականաբար, չէին կարող անմիջական ազդեցություն չունենալ նաև միջազգային առևտրի վրա: Ինչով էլ, կարծում ենք, պայմանավորված է 2009թ. միջազգային առևտրի ծավալների մոտ 1,25 անգամ կրճատումը: Բարեբախտաբար, 2010թ. համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում փոխվեց իրավիճակը նաև միջազգային առևտրի ոլորտում: 2010թ. միջազգային առևտրի ծավալը կազմում էր 17,074 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 1,2 անգամ: Իսկ արդեն 2011թ. ցուցանիշները թույլ են տալիս փաստել, որ համաշխարհային առևտուրը, գրանցելով աճի աննախադեպ ցուցանիշներ, զարգացման նոր փուլ է թևակոխել և կշարունակի գրանցել ծավալների ավելացման միտումներ:

Վերը բերված տվյալներից պարզ է դառնում նաև, որ միջազգային առևտրում գերակշիռ դիրք իր ծավալներով զբաղեցնում է միջազգային ապրանքային առևտուրը: Ուսումնասիրվող 5 տարիների ընթացքում միջ-

ազգային ապրանքային առևտրի ծավալներն աճել են մոտ 50%-ով՝ 2011թ. կազմելով 18,197 մլրդ ԱՄՆ դոլար: Վերլուծելով միջազգային առևտրում ապրանքային առևտրի տեսակարար կշիռը, պետք է նշել, որ 2006թ. այդ ցուցանիշը կազմում էր մոտ 80.7%: Սակայն, միջազգային ապրանքային առևտրի ծավալների աճի ավելացմանը զուգընթաց նրա բաժնեմասը միջազգային առևտրում էական փոփոխություններ չի կրել և 2011թ. գրանցվել է գրեթե նույն ցուցանիշը՝ 81.1%:

Ինչ վերաբերում է ծառայությունների միջազգային առևտրին, ապա այն ևս քննարկվող ժամանակահատվածում գրանցել է աճի միտումներ: 2011թ. այն 2006թ. համեմատությամբ աճել է մոտ 1,4 անգամ կամ 46%-ով: Հատկանշական է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ծառայությունների միջազգային առևտրի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2011թ.-ին, երբ այն կազմել է 4,224 մլրդ ԱՄՆ դոլար կամ միջազգային առևտրի 18,8%-ը:

Այսպիսով, միջազգային առևտրի ծավալների նման շարժընթացը վկայում է դրա ծավալների աճին զուգընթաց նաև ազգային տնտեսությունների փոխկապվածության և փոխազդեցության էլ ավելի խորացման և ընդլայնման մասին:

Հետևաբար, կարևորելով արտաքին առևտրի դերն ու նշանակությունը, ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկրի տնտեսական հաջողությունը կախված է նրա արտաքին առևտրից, քանի որ ոչ մի երկրի չի հաջողվի ստեղծել առողջ տնտեսություն, որը մեկուսացած կլինի միջազգային տնտեսական համակարգից և ներգրավված չի լինի միջազգային տնտեսական հարաբերություններում [7,284]:

Այսպիսով, շնորհիվ միջազգային առևտրի նման զարգացումների, արտաքին տնտեսական կապերը փոխանակության ոլորտից աստիճանաբար տեղափոխվում էին արտադրության ոլորտ: Ինչի արդյունքում էլ, արտաքին առևտրային կապերի, մասնավորապես ապրանքների և ծառայությունների միջազգային շարժին զուգահեռ առաջ էր գալիս և սկսում էր զարգանալ նաև արտաքին տնտեսական կապերի հաջորդ ձևը, որն իրենից ներկայացնում է կապիտալի միջազգային շարժը:

Կապիտալի միջազգային շարժը՝ որպես երևույթ և արտաքին տնտեսական կապերի դրսևորման ձև, ակտիվորեն սկսել է զարգանալ համաշ-

խարհային տնտեսության ձևավորման ժամանակաշրջանից սկսած: Այն իրենից ներկայացնում է տարբեր երկրներում պարտատերերի (վարկատուների) և պարտապանների (վարկառուների), սեփականատերերի և նրանց՝ արտասահմանում գտնվող ընկերությունների միջև ֆինանսական հոսքերի շարժը [8,156]:

Այն, լրացնելով միջազգային ապրանքաշրջանառության գործընթացը, աստիճանաբար դարձել է արդի համաշխարհային տնտեսության և միջազգային տնտեսական հարաբերությունների բաղկացուցիչ տարրը՝ համաշխարհային տնտեսությունը դարձնելով էլ ավելի միասնական և դի-նամիկ:

Աղյուսակ 2.

**Օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը 2006-2011թթ.
(մլն ԱՄՆ դոլար) [10,169]**

	2006	2007	2008	2009	2010	2011
ՕՈՒՆ-ների ընդհանուր արտահանումը, այդ թվում՝	1,415,094	2,198,025	1,969,336	1,175,108	1,451,365	1,694,396
Չարգացած երկրների կողմից	1,152,034	1,829,578	1,580,753	857,792	989,576	1,237,508
Չարգացող երկրների կողմից	239,336	316,863	328,121	268,476	400,144	383,754
ՕՈՒՆ-ների ընդհանուր ներմուծումը, այդ թվում՝	1,463,351	1,975,537	1,790,706	1,197,824	1,309,001	1,524,422
Չարգացած երկրների կողմից	981,869	1,310,425	1,019,648	606,212	618,586	747,860
Չարգացող երկրների կողմից	427,163	474,311	650,017	519,225	616,661	684,399

Հատկանշական է, որ 90-ական թվականներին, մասնավորապես, օտարերկրյա ուղղակի ներդրումների միջին տարեկան աճը կազմել է մոտ 34%, ինչը մոտ 5 անգամ գերազանցում էր միջազգային առևտրի աճի տեմպերը [9,96]:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ ՕՌԻՆ-ների ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2007թ.՝ համապատասխանաբար կազմելով 2,198,025 և 1,790,706 մլն ԱՄՆ դոլար: 2006թ. համեմատությամբ այս երկու ցուցանիշներն էլ զգալի աճ են դրսևորել: Մասնավորապես արտահանումը ավելացել է մոտ 1.6 անգամ, իսկ ներմուծումը՝ 1.3 անգամ: Ինչպես տեսնում ենք, ՕՌԻՆ-ների և արտահանման, և ներմուծման կառուցվածքում գերակշիռ դիրք են զբաղեցնում զարգացած երկրները: 2011թ. այս երկրներ ուղղված կապիտալ ներդրումները կազմել են շուրջ 748 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 21%-ով: Ջարգացող երկրներում ՕՌԻՆ-ները աճելով մոտ 11%-ով գրանցել են քննարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը՝ մոտ 684 մլրդ ԱՄՆ դոլար: Համաձայն ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի կանխատեսումների՝ 2012թ.-ին ՕՌԻՆ-ների ծավալների աճման միտումները դանդաղելու են՝ գրանցելով 1.6 տրլն ԱՄՆ դոլար մակարդակին մոտ ցուցանիշ: Իսկ ինչ վերաբերում է երկարաժամկետ կանխատեսումներին, ապա դրանք նախանշում են չափավոր, սակայն կայուն աճի միտումներ՝ 2013թ. կանխատեսելով 1.8 տրլն ԱՄՆ դոլար, իսկ 2014-ին՝ 1.9 տրլն ԱՄՆ դոլար [11,1]:

Այսպիսով, կապիտալի միջազգային միգրացիան, իր զարգացման այս տեմպերով, ինչպես նաև լինելով արտաքին տնտեսական կապերի առավել զարգացած դրսևորման ձևերից մեկը, բնականաբար, էականորեն պայմանավորում է նաև դրանց հետագա ընդլայնումն ու խորացումը: Դա ցույց տալու համար կարող ենք առանձնացնել կապիտալի միջազգային շարժի մի քանի գործոններ, որոնց միջոցով այն անմիջականորեն ազդում է միջազգային տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման վրա:

Ինստիտուցիոնալ գնահատման տեսանկյունից կապիտալի միջազգային միգրացիան նպաստում է տվյալ երկրում միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացի արդյունավետ և կարգա-

վորվող ընթացքին: Ակնհայտ է, որ այս դեպքում այն ապահովում է տարբեր երկրների բանկային և ներդրումային հաստատությունների, բորսաների, բրոքերային գրասենյակների միջև կապերի ստեղծման պայմանները, որոնք հնարավորություն են ստանում այս կերպ համատեղ իրականացնելու բազմաբնույթ գործառնություններ և գործարքներ:

Կազմակերպատեխնիկական առումով ևս, կապիտալի միջազգային միգրացիայի շնորհիվ իրար են կապվում տարբեր երկրների բանկային հաստատությունները, որոնք այս դեպքում կարողանում են իրականացնել միջազգային փոխհաշվարկներ և այլ արժույթային գործառնություններ:

Կարելի է փաստել, որ այն հանգեցնում է նաև մրցակցային պայքարի բնույթի վերախմաստավորմանը այսինքն՝ շուկայում սկսում են գերիշխել այն գործիքները, որոնք նպաստում են արժույթի տարբեր տեսակների ներդրմանը ազգային տնտեսության մեջ՝ նորագույն տեխնոլոգիաներում և դրանց հիմքով շուկայի նոր գործիքների ստեղծմանը, մատուցվող տարբեր արժույթային գործառնությունների որակի բարձրացմանը և տրանսակցիոն ծախսերի կրճատմանը:

Կապիտալի միջազգային միգրացիայի շնորհիվ աճում են նաև գլոբալ տեղեկատվական վերազինման ծավալները՝ Internet տեխնոլոգիաների հիման վրա, որոնք ոչ միայն վերացնում են տարբեր շուկաների միջև ազգային սահմանները, այլև ակտիվորեն նպաստում այդ ազգային շուկաների ինտեգրմանը համաշխարհային շուկայում՝ նպաստելով միջազգային տնտեսական հարաբերությունների ընդլայնմանն ու զարգացմանը:

Այսպիսով, ստացվում է, որ վերջինս այն հիմնական տնտեսական ու ֆինանսական գործիքն է, որ կարող են օգտագործել ազգային տնտեսությունները համաշխարհային շուկայում ինտեգրման ու միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով:

Հատկանշական է, որ միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, տնտեսական կապերի վերը քննարկված ավանդական ձևերի կողքին, ինչպես նաև դրանց զարգացման շնորհիվ, սկսում են ծնունդ առնել նաև գիտատեխնիկական համագործակցությանը, համատեղ տեխնոլոգիական ծրագրերի իրագործմանը, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, աշխատուժի միգրացիայի տնտեսական կարգավորմանն ուղղված համագործակցության նոր ոլորտներ՝ ձևավո-

րելով արտաքին տնտեսական կապերի նոր և առավել զարգացած դրսևորումներ:

Որպես արտաքին տնտեսական կապերի նման դրսևորումներ կարող ենք նշել միջազգային արժութային հարաբերությունները, վարկային և վճարահաշվարկային մեթոդները, աշխատուժի միջազգային շարժը, կադրերի պատրաստումը և փոխանակումը, համատեղ ձեռնարկությունների կառուցումը, նախագծերի կազմումը, տեխնոլոգիաների մշակումը և տրամադրումը, միջազգային ցուցահանդեսների ու տոնավաճառների կազմակերպումը, միջազգային զբոսաշրջությունը, ՎԱԿ-երի ձևավորումը և զարգացումը, արտադրական ու գիտատեխնիկական համագործակցությունը և այլ բազմաթիվ ձևեր:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրված արտաքին տնտեսական կապերի ձևավորման և զարգացման պատմական ուղին, կարծում ենք կարելի է առանձնացնել մի քանի խումբ գործոններ, որոնք և պայմանավորել են դրանց ձևավորումը և էվոլյուցիան: Դրանք են.

✓ բնաշխարհագրական պայմանները ակնհայտ է, որ աշխատանքի միջազգային բաժանման, ինչպես նաև միջազգային առևտրային գործընթացներում երկրների մասնակցության աստիճանը կախված է այն ռեսուրսների առկայությունից, որոնք հնարավորություն են տալիս երկրներին համաշխարհային արտահանման մեջ ձեռք բերել համեմատական առավելություններ:

✓ Հաջորդ խումբ գործոնները, կապված արդյունաբերական հեղաշրջման հետ, ձևավորվում են խոշոր մեքենայական արտադրության և դրա հիման վրա զանգվածային արտադրության կազմակերպման շնորհիվ: Չանազան ապրանքատեսակների զանգվածային արտադրությունը զարգանալով չի կարող ինչ որ փուլում չբախվել ներքին նեղ շուկայի հետ, և, բնականաբար, խնդիր է առաջանում ներքին շուկայում չսպառվող ապրանքներն արտահանել: Այստեղ էական դեր է խաղում նաև մասնագիտացումը: Արդյունքում՝ տարբեր երկրներում վերջնական արդյունքի տարբեր մասերի արտադրությունն ու փոխանակությունը էլ ավելի են ակտիվացնում համագործակցող երկրների տնտեսական կապերը:

✓ Արտաքին տնտեսական կապերի զարգացումը էականորեն պայմանավորված է նաև գիտատեխնիկական առաջընթացով: Գիտատեխնի-

կապան նորությունների, նոր տեխնոլոգիաների և արտադրանքների մշակումը բավականաչափ թանկ գործընթաց է, ուստի հաճախ տարբեր երկրների գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական մշակումները համաֆինանսավորվում են, իսկ դրանց տնտեսական արդյունքը դառնում է բոլորի սեփականությունը:

✓ Ի վերջո, ինչպես արդեն նշվել է, արտաքին տնտեսական կապերի զարգացման կարևորագույն գործոններ են հանդիսանում նաև օտարերկրյա ներդրումները և փոխատվական ռեսուրսների ակտիվ շարժը երկրների միջև:

Այսպիսով, շնորհիվ վերը բերված գործոնների՝ տնտեսական հարաբերությունների ամուր կապերով միմյանց են փոխկապվում աշխարհի գրեթե բոլոր՝ թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրները՝ յուրաքանչյուրն իր մասնաբաժնով կանխորոշելով տնտեսական կապերի հետագա զարգացումը և կատարելագործումը: Ուստի, այս տեսանկյունից, հարկ ենք համարում նշել, որ զարգացած երկրների արտաքին տնտեսական գործունեություն ծավալելու շարժառիթները խիստ տարբերվում են զարգացող երկրների շարժառիթներից: Ներկայումս զարգացած երկրների համար արտաքին տնտեսական կապերի հաստատումը և դրանց հետագա զարգացումը հանդիսանում են արտադրողական ուժերի արդեն իսկ ձեռք բերված մակարդակի պահանջներից բխող անհրաժեշտություն: Վերջիններիս միջև տնտեսական համագործակցության հետագա զարգացումը տանում է համաշխարհային տնտեսության մեջ որոշիչ դերի պահպանման նպատակով ուժերի համախմբման, ինչը պայմանավորված է հենց այդ երկրներում բարձր տեխնոլոգիաների զարգացմամբ և գիտատեխնիկական առաջընթացի շարունակական ապահովմամբ: Սակայն, նույնը չի կարելի ասել զարգացող երկրների մասին. այս դեպքում արտաքին տնտեսական կապերի տարբեր դրսևորումների զարգացման անհրաժեշտությունը բխում է նրանից, որ վերջինիս շնորհիվ այդ երկրները ստանում են տնտեսական զարգացման և հատկապես ինդուստրիալացման ճանապարհին առկա որոշ դժվարությունների հաղթահարման և համաշխարհային գլոբալացման բացասական հետևանքներին դիմակայելու հնարավորություն: Կարող ենք հստակ նշել, որ տնտեսական համագործակցության ծավալումը և զարգացման անհրաժեշտությունը այս երկրների համար գլխավորապես պայ-

մանավորված է արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի հաղթահարմամբ, ներքին շուկայում զարգացած երկրների մրցակցությամբ դիմակայման, ինչպես նաև համաշխարհային շուկայում իրենց դիրքերի ամրապնդման ձգտմամբ:

Այնուամենայնիվ, անկախ տարբեր երկրների տնտեսական զարգացածության աստիճանից և արտաքին տնտեսական կապերի հաստատման շարժառիթներից, տնտեսական կյանքի միջազգայնացումն այսօր ընդունում է լայն, համապարփակ բնույթ: Տնտեսությունների փոխկապվածությունն ավելի զգալի է դառնում: Փոխկապվում են տարբեր երկրների արտադրության, կրթության և գիտության, արտադրական ռեսուրսների օգտագործման, կադրերի պատրաստման, արժույթային հարաբերությունների կարգավորման, բնապահպանական հիմնախնդիրների համատեղ լուծման ոլորտները:

Ամփոփելով կարող ենք նշել, որ արտաքին տնտեսական կապերի զարգացումն ընթացել է ապրանքափոխանակության պարզ ձևերից դեպի արտադրության միջազգայնացում և ազգային տնտեսությունների մերձեցում: Համաշխարհային շուկայի կառուցվածքին համապատասխան առաջացած տնտեսական կապերի տարբեր ձևերը՝ արտաքին առևտուրը, կապիտալի արտահանումը, միջազգային արժույթային հարաբերությունները և արտադրության գործոնների միջազգային շարժն այսօր ունեն համալիր բնույթ, ինչը նշանակում է, որ դրանք խիստ փոխկապակցված են և չեն կարող իրականացվել առանց մեկը մյուսի: Ուստի, XX դարի երկրորդ կեսից սկիզբ առած միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում ծագած հենց վերը նշված տնտեսական կապերի տարբեր ձևերի փոխկապվածությունն ու զարգացման բարձր տեմպերն էին, որ հիմք հանդիսացան տնտեսական փոխկապվածության ավելի բարձր աստիճանին՝ տնտեսական ինտեգրմանն անցնելու համար:

Առանցքային հասկացություններ. արտաքին տնտեսական կապեր, համաշխարհային տնտեսություն, ազգային տնտեսություն, միջազգային առևտուր, աշխարհային միջազգային բաժանում, արդյունաբերական հեղաշրջում, համաշխարհային շուկա, ֆինանսական ճգնաժամ, ֆինանսական հոսքեր, կապիտալի միջազգային շարժ, աշխարհում միջազգային շարժ, միջազգային զբոսաշրջություն, օլտրաերկրյա ուղղակի ներդրումներ, վե-

րազգային կորպորացիա, միջազգային արժույթային հարաբերություններ, արտադրության գործոնների միջազգային շարժ, արևմտասկան ինվեզիցիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Մարկոսյան, Գ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, 2002, 431 էջ
2. Ս. Մելքումյան, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը. Երևան, 2002, 271 էջ
3. Раджабова З.К., Мировая Экономика, Москва, 2006, 336 с.
4. Рыбалкин В.Е., Международные экономические отношения, Москва 2000, 368 с.
5. Стрыгин А.В., Мировая Экономика, Москва 2004, 512 с.
6. URL, <http://unctadstat.unctad.org/TableViewer/tableView.aspx>,
<http://unctadstat.unctad.org/TableViewer/tableView.aspx> /մուտքի ամսաթիվ՝ 06.07.12/
7. Авдокушин Е.Ф., Международные экономические отношения, Москва 1999, 368 с.
8. Ա. Մարկոսյան, Գ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, 2002, 431 էջ
9. World Investment Report 2012, 204p.
10. World Investment Report 2012, 204p.

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ

М.С. Касимян

Резюме

Эта статья характеризует эволюцию основных разновидностей внешнеэкономических связей. В ней перечислены основные факторы, которые способствуют развитию этих отношений. В частности, в ней описываются формирование международной торговли, ее дальнейшее развитие и значение для всех стран мира. Рассматривается сущность миграции капитала и ее влияние на дальнейшее развитие международных экономических отношений.

Она также включает статистический анализ международной торговли и миграции капитала за последние годы и дает возможные пути дальнейшего развития этих видов экономических отношений.

Ключевые понятия: *внешнеэкономические связи, мировая экономика, национальная экономика, международная торговля, международное разделение труда, промышленная революция, мировой рынок, финансовый кризис, финансовые потоки, международное движение капитала, международное движение рабочей силы, международный туризм, прямые иностранные инвестиции, транснациональные корпорации, международные валютные отношения, международное движение факторов производства, экономическая интеграция.*

CURRENT TENDENCIES OF DEVELOPMENT OF INTERNATIONAL ECONOMIC RELATIONS

M.S. Kasimyan

Summary

This article characterizes the evolution of the main types of international economic relations. There are listed the main factors that contribute the development of these relations. Particularly, it describes the formation of the international trade, its further development and its significance for all of the countries of the world. The article explores the essence of the migration of capital and its influence on further development of international economic relations. It also includes a statistical analysis of international trade and migration of capital for recent years and gives the possible ways of further development of these types of economic relations.

Key concepts: *international economic relations, the global economy, national economy, international trade, the international division of labor, industrial revolution, the global market, financial crisis, financial flows, international capital movement, international labor movement, international tourism, foreign direct investments, transnational corporation, international monetary relations, international movement of factors of production, economic integration.*

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Զ. Ոսկանյան

Զբոսաշրջության ոլորտը աշխարհի՝ ամենախոշոր և մրցունակ ծառայություններ մատուցող ոլորտներից մեկն է: Զբոսաշրջությունը որպես տնտեսության ճյուղ էական ազդեցություն է ունենում ինչպես երկրների, այնպես էլ առանձին տարածաշրջանների տնտեսական զարգացման վրա: Ոլորտի աճը զուգորդվում է հասարակության բարեկեցությամբ, քանի որ զբոսաշրջության զարգացման միտումների հետ անմիջականորեն կապվում են բնակչության եկամուտները և տնտեսական ընդհանուր զարգացումը: Զբոսաշրջային շուկան շատ զգայուն է տնտեսական փոփոխությունների նկատմամբ: Ոլորտը ոչ միայն խթանում է ծառայությունների որակը, այլ նաև նպաստում է նոր աշխատատեղեր ստեղծելուն և բնակչության զբաղվածության առավել բարձր մակարդակ ապահովելուն:

Զբոսաշրջային գործունեությունը ոչ միայն ճամփորդությունների կազմակերպման ծառայություններ է մատուցում, այլև երկրի տնտեսության տարբեր հատվածների եկամտաբերության կարևոր աղբյուր է հանդիսանում: Այդ եկամուտները ավելի նկատելի են հետևյալ ենթահամակարգերում. տրանսպորտ, հյուրընկալման հաստատություններ, հանրային սննդի սպասարկման ձեռնարկություններ, զվարճանքի օբյեկտներ և այլն: Ոլորտում պետական հոգածության հիմնական խնդիրներն են.

- Զբոսաշրջության ոլորտում տարվող քաղաքականության սկզբունքների սահմանումը և մշակումը, դրանց իրականացման ծրագրերի, վերահսկման մեխանիզմների և գործունեության հետազոտման արդյունքների կոորդինացումը.

- Զբոսաշրջության ոլորտի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, տարաբնույթ կազմակերպությունների գործունեության կոորդինացումը. համապատասխան ենթակառուցվածքների և շրջապատող միջավայրի հանդեպ որոշ կազմակերպությունների և հասարակության վերաբերմունքի ձևավորումը.

• Երկրի գրավչության ձևավորման նպատակով զբոսաշրջության ոլորտում ինովացիաների խթանումը:

Ընդհանրապես, ինովացիոն քաղաքականության իրականացումը թույլ է տալիս կատարել երկրների հետևյալ դասակարգումը՝

• երկրներ, որոնք հակված են ինովացիայի տարածմանը և որտեղ հիմնական ուշադրությունը հատկացվում է կրթության, արտադրանքի ստանդարտացման, պետական և մասնավոր սեկտորի համատեղ ծրագրերին,

• երկրներ, որոնք խոշորամասշտաբ ծրագրերի միջոցով ցանկանում են հասնել համաշխարհային լիդերության,

• երկրներ, որոնք ձեռնամուխ են լինում տեխնոլոգիական ինովացիաների, որոնց գործարկման հիմքում ընկած է պետականորեն տարվող ինովացիոն ռազմավարությունը և ենթակառուցվածքների զարգացումը:

Զբոսաշրջության տարբեր ձևերի առաջընթացի համար բազմաթիվ պետություններ ստեղծում են պետության հովանու տակ գործող հատուկ ազգային կազմակերպություններ, օրինակ՝ կազմակերպություններ, որոնք զբաղվում են զբոսաշրջային ուղղությունների մարքեթինգով (այսուհետ՝ ՉՈՒՄԿ): Նմանօրինակ կազմակերպություններից են Visit Britain, Tourespana, Polska Organizacia Turystyczna և այլն [1]:

20-րդ դարի 90-ական թվականներին համակարգիչների լայն տարածման հետ միասին ՉՈՒՄԿ-ներն սկսեցին ինտենսիվ օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները: Սկզբում դրանք փակ համակարգեր էին, որոնք ապահովում էին զբոսաշրջային և տեղեկատվական հատվածների գործունեությունը, այժմ այդ համակարգերը համացանցի միջոցով հասանելի են վերջնական սպառողներին: Դրանք պարունակում են տեղեկատվություն զբոսաշրջային արտադրանքի, նրա գրավչության, գների հասանելիության, հեշտ և հասարակ ամրագրման մասին:

ՉՈՒՄԿ-ները միջնորդ են հանդիսանում և աշխատում են առանց եկամուտ հետապնդելու, ֆինանսավորվում են պետության կողմից, բայց միաժամանակ խուսափում են տարածաշրջանային, պետական և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ կոմերցիոն գործարքներով զբաղվելուց: Ոչ հեռու ապագայում ՉՈՒՄԿ-ներն պետք չեն լինի ներկայացուցչություններ խոշոր երկրներում, որոնք կապահովեն մեծ զբոսաշրջային ներհոսքեր: Այժմ ՉՈՒՄԿ-ները հաստատում են էլեկտրոնային կապ տա-

րաձաշրջանային զբոսաշրջային շուկաների հետ, ինչը հնարավորություն է տալիս անընդհատ թարմացնել իրենց ապրանքի մասին տեղեկատվությունը:

Գործընկերների հետ համագործակցության զարգացումը ՋՈՒՄԿ-ների համար բացում է ավելի լայն ընդգրկումով զբոսաշրջային տարածաշրջանների մասին տեղեկատվության տարածման հեռանկարներ: Այդ գործընկերները զբոսաշրջային օպերատորներ ու գործակալներ են, որոնք ձևավորում են զբոսաշրջային փաթեթներ և զբաղվում դրանց սպառմամբ: Ընդ որում նախապատվությունը տրվում է այդ արտադրանքի սպառմանը՝ խոշոր կազմակերպությունների միջոցով՝ հյուրանոցներ, ավիաընկերություններ և այլն: Դա թույլ է տալիս ՋՈՒՄԿ-ին հիմնվելով հատուկ պայմանագրերի վրա կոմերցիոն միջնորդների միջոցով վաճառել իր արտադրանքը:

Պետական սեկտորը շատ հաճախ դիմում է տեղեկատվական տեխնոլոգիաներին և համացանցին՝ իր զբոսաշրջային ուղղությունները առաջ մղելու համար: Որպես օրինակ կարելի է բերել Ֆինլանդիան: Ֆինլանդիայի զբոսաշրջության խորհուրդը (Finnish Tourist Board – FTB) հանդիսանում է պետական կազմակերպություն, որը զբաղվում է Ֆինլանդիայի զբոսաշրջության ոլորտի մարքեթինգով և ունի ներկայացուցչություն 11 երկրում (Ֆինլանդիայի զբոսաշրջության խորհուրդը, հիմնադրվել է 1973թ. Առևտրի և արդյունաբերության նախարարության հովանու ներքո (ներկայումս էկոնոմիկայի և ծառայությունների նախարարություն)՝ Ֆինլանդիայի զբոսաշրջության ոլորտի առաջխաղացման նպատակով):

Ֆինլանդիայի զբոսաշրջության խորհուրդը առաջիններից մեկն էր աշխարհում, որ ազգային զբոսաշրջության կազմակերպչական առաջխաղացման աշխատանքներում սկսեց օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները: Այն իրականացնում է ռազմավարական համագործակցություն զբոսաշրջության արդյունաբերության և հարակից կազմակերպությունների միջև, որոնց ընդհանուր նպատակն է երկրի առավելագույնս ներկայացումը համաշխարհային շուկայում: Այդ նպատակին հասնելու կարևոր գործոններ են հանդիսանում էլեկտրոնային տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները:

Ֆինլանդիայի զբոսաշրջային խորհուրդը առանձնակի կարևորություն է տալիս ազգային զբոսաշրջության յուրահատուկ նկարագրի ստեղծման-

նը, սպառողների և շուկաների հստակ հատվածավորմանը, արդյունավետ մարքեթինգին: Ֆինլանդիայի զբոսաշրջության ոլորտի գործարարության զարգացմանը նպաստեց 1992թ. ստեղծված զբոսաշրջային շուկայի տեղեկատվական համակարգը (Market Information System – MIS): Սկզբնական շրջանում այն օգտագործվում էր Ֆինլանդիայի զբոսաշրջության խորհրդի կարիքների համար, սակայն կարճ ժամանակահատվածում հասանելի դարձավ նաև այս ոլորտին հարակից մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

2001թ. Ֆինլանդիայի ազգային զբոսաշրջային կազմակերպությունն առաջինն էր աշխարհում, որ ստեղծեց ազգային տվյալների բազան որպես ծառայություն. (Wireless Application Protocol – WAP): Այդ բազան ներառում է ֆայլեր տեսարժան վայրերի, տեղավորման միջոցների, իրադարձությունների, տուրերի և էքսկուրսիաների, զբոսաշրջային գործակալությունների հեռախոսահամարների և զբոսաշրջիկներին հետաքրքրող այլ տեղեկատվություն: MIS և PROMIS բազային համակարգերը ֆինանսավորվում են Ֆինլանդիայի զբոսաշրջության խորհրդի կողմից և հանդիսանում են եկամուտ չհետապնդող կազմակերպություններ:

Անդրադառնալով Հայաստանին՝ հնարավոր էր նմանատիպ կառույց դիտարկել Ջրոսաշրջության զարգացման հայկական գործակալությունը՝ ՋՋՀԳ ՓԲԸ (հիմնադրվել է 2001թ.): Լինելով մասնավոր կազմակերպություն, այն ստեղծվել էր ՀՀ Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և իրականացնում էր վերջինիս կողմից մշակված ծրագրերը և միջոցառումները: Այս ընկերությունը հայաստանյան զբոսաշրջային կազմակերպությունների շուկայում գրավում էր մենաշնորհային դիրք և նրան էր հանձնարարվում պետության կողմից պլանավորված զբոսաշրջության ոլորտի ռազմավարական ծրագրերի իրականացումը: Արդյունքում՝ ՋՋՀԳ-ն հմտացել էր իր գործունեության մեջ՝ թե տեխնիկական առումով և թե իր աշխատանքային փորձով:

Իր հիմնադրման պահից ՋՋՀԳ-ն ձեռք էր բերել զգալի նվաճումներ և միջազգային ճանաչում՝ ներկայացնելով Հայաստանը համաշխարհային զբոսաշրջային խոշորագույն շուկաներում: ՀՀ-ում և արտերկրում զբոսաշրջության արտադրանքի ձևավորումն ու իրացումը, ոլորտի մրցակցության բարձրացումն ու բարենպաստ միջավայրի ձևավորումն իրակա-

նացվում էր ՋՋԳ-ի կողմից՝ դարձնելով Հայաստանը համաշխարհային զբոսաշրջության համար որոշ չափով հրապուրիչ երկիր: Դա ապահովում էր ներգնա զբոսաշրջության ակտիվացում: Այդ մասին էին վկայում Հայաստանն այցելող զբոսաշրջիկների հաճախելիության ցուցանիշները, որոնց համաձայն 2002-2009թթ. տարեկան կտրվածքով գրանցվել է շուրջ 60% աճ: Այս կառույցի ընդհանուր գործունեության նպատակներից էր հանդիսանում այն, որ աջակցում էր ինչպես Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը, այնպես էլ օժանդակում էր արտասահմանում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությամբ: ՋՋԳ-ի գործունեության հաջորդ ճյուղը մշակութային միջոցառումների, փառատոների, ինչպես նաև Հայաստանում տուրօպերատորների, զբոսաշրջային գործակալությունների և լրագրողների համար ճանաչողական այցերի կազմակերպումն էր:

«Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն Հայաստանի զբոսաշրջության ոլորտում ինովացիոն որոշ գործունեություն էր ծավալում, սակայն դեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ՝ կառավարությունը սահմանված կարգով լուծարել է «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն 2009թ.-ին՝ հանձնարարելով ընկերության գույքը և դեբիտորական պարտքերը հանձնել Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին, և զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրերի մարքեթինգային քաղաքականությունից բխող միջոցառումները այսուհետ իրականացվում են հիմնադրամի միջոցով:

Մանրամասներնք ՀՀ զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության կազմակերպմամբ զբաղվող կազմակերպության գործունեությունը:

Ազգային մրցունակության հիմնադրամը ոչ կառավարական կազմակերպություն է, հիմնվել է ՀՀ կառավարության և տարբեր երկրների առաջատար գործարարների համագործակցությամբ: Կազմակերպության նպատակն է տնտեսության առանցքային ոլորտների բեկումնային զարգացման միջոցով հասնել ազգային մրցունակության: Հիմնադրամը գործում է պետական-մասնավոր համագործակցության սկզբունքով՝ ներգրավելով ռազմավարական նշանակության ներդրումներ, որոնք հնա-

րավորություն են ստեղծում զարգացման գործընթացները խթանելու և դրանով բարձրացնելու ազգային մրցունակությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանում զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեությամբ զբաղվող կազմակերպությունը դեռ բավականին խնդիրների լուծումներ պետք է գտնի, որպեսզի զբոսաշրջության ոլորտում նկատելի արդյունքներ նշմարվեն:

Միջազգային զբոսաշրջային հիմնական շուկաներում Հայաստանը գրեթե ճանաչված չէ և թերի է ներկայացված: Սա նշանակում է, որ ակտիվ և ուղղակի գովազդային արշավները՝ խոշոր արտասահմանյան տուրօպերատորների ներգրավմամբ, մեծ հնարավորություն կընձեռնեն ավելացնելու պահանջարկը և երկիր այցելող զբոսաշրջիկների թիվը: Մրցունակության հիմնադրամի ջանքերն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է մշակել և միջազգային շուկա ներմուծել զբոսաշրջային նոր ապրանքներ:

Հաշվի առնելով զբոսաշրջության տնտեսական և սոցիալական նշանակությունը՝ պետությունները ձգտում են մշակել և ընդունել միջազգային նորմեր, որոնք կկարգավորեն հարաբերությունները միջազգային զբոսաշրջության ոլորտում: Մեծ նշանակություն ունի 1975 թ. օգոստոսի 1-ին Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի կազմած ակտը, որ ստորագրվել է Հելսինկիում, ԱՄՆ-ի, Կանադայի և Եվրոպական 33 պետության ղեկավարների կողմից: Մասնակից պետությունները արտահայտել են ցանկություն խթանելու զբոսաշրջության զարգացումը՝ այլ երկրների ժողովուրդների, պատմության, մշակույթի հետ ծանոթանալու համար: Ինչպես նաև միջամտելու զբոսաշրջության նյութական բազայի զարգացման տեմպերին համատեղ մախագծերի իրագործմամբ՝ ներառյալ տեխնիկական համագործակցությունը, տեղեկատվության փոխանակումը և այլն:

Կարևոր միջազգային իրավական ասպեկտ են հանդիսանում միջազգային զբոսաշրջային կապերը, որոնք իրագործվում են 1979թ. կնքված պայմանագրի շրջանակներում. ըստ այդ պայմանագրի, համատեղ աշխատելու են ՄԱԿ-ի Զբոսաշրջային համաշխարհային կազմակերպությունը (ՄԱԿ ԶՀԿ) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԿ ԶԾ): Պայմանագրով նախատեսված է զբոսաշրջության զարգացման հետ կապված տնտեսա-

կան և հասարակական սեկտորների տարբեր հատվածների համագործակցություն: Իրականացվող նախագծերի մեծ մասը ֆինանսավորվում է ՄԱԿ ՉԾ-ի կողմից և իրագործվում է ՄԱԿ-ի միջոցով:

Փաստենք, որ ՄԱԿ ՉՀԿ-ի հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում տարբեր երկրների համագործակցության զարգացումը, որը նպաստում է զբոսաշրջության ոլորտում ինովացիաների տարածմանը, ներգրավմանը և փորձի փոխանակմանը:

1980թ. Մանիլայում (Ֆիլիպիններ) կայացավ զբոսաշրջության միջազգային կոնֆերանս: Այն ընդունեց Մանիլայի դեկլարացիան, որում նշված է, որ համաշխարհային զբոսաշրջությունը կարող է զարգանալ՝ հիմնվելով արդարության, հավասարության վրա, բայց չխառնվելով պետությունների ներքին գործերին և համագործակցելով բոլոր պետությունների հետ՝ անկախ տնտեսական, սոցիալական համակարգերից, որի նպատակն է նպաստել բոլոր ազգերի կյանքի որակի բարձրացմանը:

1988թ. Հաագայում կայացած Միջպառլամենտական կոնֆերանսն ընդունեց Զբոսաշրջության մասին Հաագայի դեկլարացիան: Այնտեղ նշված է, որ զբոսաշրջությունը կարող է հանդիսանալ արդյունավետ միջոց, որը կարող է նպաստել երկրների սոցիալ-տնտեսական աճին, եթե միաժամանակ ընդունվում են անհրաժեշտ միջոցներ ազգային խնդիրների շտապ լուծման համար: Դեկլարացիայում նշվում է նաև, որ պետական կազմակերպությունները, ազգային զբոսաշրջության ադմինիստրատորները և շուկայագիտության կազմակերպիչները զբոսաշրջության ոլորտում պետք է լինեն սերտ կապի մեջ մասնավոր սեկտորի, տարածաշրջանային և տեղական իշխանությունների հետ: Սրանք համապատասխան մակարդակի վրա կպահեն սպառողների իրավունքների պաշտպանությունը՝ ներառյալ օպերատիվ կոնֆլիկտների լուծումը, ներդնելով առաջատար տեխնոլոգիաներ զբոսաշրջիկների հարմարավետության համար: Այդ դեկլարացիան կարելի է համարել զբոսաշրջության ոլորտում ինովացիոն պրոցեսների զարգացմանը միտված գործող ծրագիր:

Պետական ինովացիոն քաղաքականությունը հիմնականում առաջնորդվում է ապագա նախագծերի իրականացման սկզբունքով, այդ քաղաքականությանը անհրաժեշտ է ճկունություն, միասնական գիտական համակարգի դիմամիկա, տեխնոլոգիապես հարուստ ենթակառուցվածքներ,

տարածաշրջանային և կրթական նոր քաղաքականություն և այլն: Ամեն երկրում ինովացիոն գործունեությունը կարգավորվում է յուրովի՝ հաշվի առնելով տնտեսական, բնական և ինտելեկտուալ ռեսուրսների զարգացումը:

ՀՀ պետական ինովացիոն քաղաքականությունը մշակվում և իրականացվում է ՀՀ կառավարության պետական ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրով: Ինովացիոն գործունեության տարեկան ծրագիրը մշակվում է՝ հաշվի առնելով ինովացիոն ոլորտի զարգացման գերակայությունները, և իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: Ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ: Այդ ծրագրում ընդգրկվելու նպատակով ներկայացված ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատում է լիազոր մարմինը:

ՀՀ-ում ինովացիոն դաշտի թերի լինելը, ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակը, կազմակերպությունների գործընթացն արգելակող բոլոր գործոնները այս կամ այն չափով կապվում են պետության գործունեության հետ: Պետական սահմանափակ ֆինանսավորման, ինչպես նաև կազմակերպությունների սեփական դրամական միջոցների դեֆիցիտի պայմաններում ինովացիոն գործունեության ակտիվացման կարևորագույն պայման է տեխնոլոգիաների առևտրայնացման համար ոչ պետական աղբյուրներից ֆինանսների ներգրավումը: Մասնավոր ներդրողների ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է նախատեսել համապատասխան պետական երաշխիքներ և կարևորել պետության մասնակցությունը ստեղծվող վենչուրային հիմնադրամներին: Փոքր բիզնեսի նկատմամբ պետության ինովացիոն քաղաքականության հիմնական նպատակներից մեկը ֆինանսական հոսքերի կարգավորումն է, որտեղ առանձնացվում է 2 ուղղություն՝ բյուջեից նպատակային դրամական նպաստի տրամադրում և փոքր ֆիրմաների ինովացիոն գործունեության համար մասնավոր կապիտալի ներգրավում:

Ինովացիաների խթանման քաղաքականության երկրորդ ուղղությունը մասնավոր կապիտալի ընդգրկման միջոցով իրականացվող ֆինանսավորումն է վենչուրային կապիտալ տրամադրող ընկերությունների կող-

մից: Վենչուրային կապիտալի տակ հասկացվում է ռիսկային կապիտալը ձեռնարկությունների կամ ծրագրերի համար, որոնք կապված են միջինից բարձր ռիսկերի հետ: Վենչուրային կապիտալն ուղղակի ներդրումների ձևերից է, որի նպատակը հատույցի մեծ ներուժ ունեցող և զգալի ռիսկ պարունակող ինովացիաների ֆինանսավորումն է:

Այսպիսով, հանգում ենք այն եզրակացության, որ ինովացիոն գործունեության պետական աջակցությունը զբոսաշրջության ոլորտում պետք է միտված լինի մրցունակության ցածր վարկանիշ պայմանավորող գործոնների վերլուծության և այդ գործոնների չեզոքացման քաղաքականության մշակմանը, պետականորեն ինովացիոն ծրագրերի ֆինանսավորման նախատեսմանը, առաջարկվող նախագծերի գնահատման պարզ, բոլորի համար հավասար կարգի մշակմանը, որոնք կապահովեն ակնկալվող արդյունքների իրատեսական լինելը և այս ոլորտում քիզնես միջավայրի բարելավմանը:

Առանցքային հասկացություններ. ինովացիոն գործունեություն, առաջիադացում, մարքեթինգ, զբոսաշրջային շուկա, համագործակցություն, մրցունակություն, բարենպաստ միջավայր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Новиков В.С., Инновации в туризме, Москва 2007 г.
2. Базилевич А.И., Инновационный менеджмент предприятий, Москва, ЮНИТИ – ДАНА, 2008 г.
3. Бовин А.А., Чередникова Л.Е., Якимович В.А., Управление инновациями в организациях, Москва, 2009 г.
4. Янковцкий К.П., Введение в инновационное предпринимательство, Питер, 2004 г.

ГОСУДАРСТВЕННАЯ ПОДДЕРЖКА ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ОБЛАСТИ ТУРИЗМА

А.З. Восканян

Резюме

Индустрия туризма является одним из самых крупных и конкурентоспособных секторов услуг в мире. Туризм как сектор экономики имеет существенное экономическое влияние на страны и регионы. Государственная поддержка инновационной деятельности в сфере туризма направлена анализ факторов низким рейтингом и на развитие нейтрализации этих факторов. Государство также вносит свой вклад в предсказание финансирования инновационных проектов, приносящие реальные результаты, которые ожидаются в этой области, и в улучшение бизнес-среды.

Государственная поддержка инновационной деятельности в области туризма необходима потому, что она помогает повышению конкурентоспособности страны на международном рынке.

Ключевые понятия: *инновационная деятельность, прогресс, маркетинг, туристический рынок, сотрудничество, конкурентоспособность, благоприятные условия.*

STATE SUPPORT FOR INNOVATION IN THE FIELD OF TOURISM

A.Z. Voskanyan

Summary

The tourism industry is one of the largest and most competitive service sectors in the world. Tourism as a sector of the economy has a significant economic impact on the countries and regions. State support for innovation in the field of tourism focused in the analysis on the factors of low-rated and on the development of neutralizing these factors. The state also contributes to the prediction of funding innovative projects that will provide real

results that are expected in this area, and to improvement of the business environment.

State support for innovation in the field of tourism is necessary, because it helps the country's competitiveness increasing in the international market.

Key concepts: *innovative activities, progress, marketing, tourism market, cooperation, competitiveness, favorable environment.*

1994-2012 ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ն.Հ. Էվոյան

*Արժույթներն, ինչպես լոյկները և ֆուլբրոյի փոմսերը ունեն
արժեք, որով գնվում և վաճառվում են: Փոխանակման կուրսը դա
մի արժույթի արժեքն է՝ արտահայտված այլ երկրի արժույթով,
ինչպես օրինակ, ֆրանսիական ֆրանկի գինը՝ ԱՄՆ դոլարով կամ
գերմանական մարկով:*

Հարի Սմիթ¹

Խորհրդային Միության փլուզման արդյունքում ձևավորված անկախ պետությունների շարքում Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) նույնպես կանգնեց անկախ պետության կառուցման և տնտեսավարման խնդրի առջև, որի դժվարին քայլերից մեկը փողի սեփական համակարգի ստեղծումն էր: Սակայն փողի սեփական համակարգի ստեղծումը ՀՀ-ում կապված էր օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք դժվարությունների հետ: Սովորաբար, այն երկրներում, որոնցում տնտեսական համակարգի փոփոխություն չի կատարվում, մեծ դժվարություններ չեն առաջանում փողի սեփական համակարգի ստեղծման ժամանակ, քանի որ տնտեսական անկում տեղի չի ունենում կամ տեղի է ունենում չնչին չափով: Մինչդեռ ՀՀ-ում տնտեսական անկում սկսվել էր դեռ նախքան անկախացումը՝ 1988թ.-ի աղետալի երկրաշարժի հետևանքով, որը էլ ավելի խորացավ Միության նախկին հանրապետությունների հետ ունեցած տնտեսական կապերի խզման պատճառով: Դրան ավելացավ նաև ՀՀ տրանսպորտային շրջափակումը:

Այդ էր պատճառը, որ քաղաքական անկախացումից հետո դեռևս շուրջ երկու տարի ՀՀ-ն գտնվում էր Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) ռուբլու շրջանառության գոտում, որը կաշկանդում էր հանրապետության տնտեսական զարգացումը և սեփական դրամավարկային քաղաքականություն վարելը: Սեփական փողի համակարգին անցումը ՀՀ-ում իրակա-

¹ Հարի Սմիթ, Մակրոէկոնոմիկա (Նյու Յորք, Վ.Հ.Ֆրենման և ընկերներ, 1985), էջ 514.

նացվեց այն ժամանակ, երբ նախկինում (մինչև 1993թ.) շրջանառության մեջ եղած փողի ինֆլյացիան հասել էր զգալի չափերի:

Արժեզրկման տեմպերը գնալով արագանում էին օրեցօր ավելացող տնտեսական անկման, սոցիալ-պատերազմական լարվածության պայմաններում՝ անկառավարելի դարձնելով ֆինանսական համակարգը ՀՀ-ում: Այդ օրերին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ստեղծվեց ՀՀ դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողով, որն ընդունեց մի շարք հրատապ որոշումներ: Հոկտեմբերի 25-ի թիվ 4 որոշմամբ ԽՍՀՄ գանձատան 1961-1992թթ. նմուշի և Ռ-Գ Կենտրոնական բանկի 1992թ. նմուշի բանկային տոմսերը ժամանակավորապես համարվեցին ՀՀ արժույթ: Իսկ նոյեմբերի 22-ին որոշում ընդունվեց ազգային արժույթի՝ ՀՀ դրամի ներդրման վերաբերյալ: Ընդ որում, հաստատվեցին ռուսական ռուբլու և հայկական դրամի փոխարկման հարաբերությունները (1 դրամը 200 ռուսական ռուբլի), ինչպես նաև հաշվարկային փոխարժեքները ռուսական ռուբլու և ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ համապատասխանաբար 1000 ռուսական ռուբլին՝ 12 դրամ և 1 ԱՄՆ դոլարը՝ 14.5 դրամ: Այդ նույն ժամանակ մեր հարևան Ադրբեջանում 1 մանաթը հավասար էր 1.75 ռուբլու:

Տնտեսական անկումը, սպառման ապրանքների խիստ պակասը ՀՀ-ում, քնակչության ձեռքին գտնվող փողի ինֆլյացիայի հսկայական չափերը հնարավորություն չտվեցին ճշգրտորեն գնահատել և որոշել ՀՀ-ում շրջանառության համար անհրաժեշտ փողի պահանջարկը, իսկ ռուբլինների ՀՀ դրամով փոխարինման 200:1 հարաբերությունը չէր արտահայտում իրական վիճակը:

Փաստորեն Հայաստանը վերջինն էր ԱՊՀ երկրներից, որ ներդրեց իր ազգային արժույթը: Դա հիմնականում պայմանավորված էր ազգային արժույթի կայունության ապահովման համար անհրաժեշտ արտաքին պահուստների բացակայությամբ, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ-ի կառավարությանը աջակցության բացակայությամբ, ինչպես նաև ռուբլու գոտու փլուզմանը երկրի անպատրաստությամբ:

ՀՀ ազգային արժույթի՝ հայկական դրամի ներդրումն իրականացվեց անբարենպաստ՝ տնտեսական խոր անկման, բարձր սղաճի, համընդհանուր անվստահության պայմաններում: Նման իրավիճակում «նորամուտ» դրամի նկատմամբ վստահության ամրապնդումը, արժույթի փոխարին-

ման (դոլարիզացիայի) սահմանափակումը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը հնարավոր էր միայն փոխարժեքի կայունության ապահովման պայմաններում: Սակայն ներքին ապրանքների բացակայությունը, նախկին առևտրական կապերի խզման հետևանքով ներմուծումից տնտեսական խիստ կախվածությունը², արտահանման ցածր պոտենցիալը և տեղական ապրանքների ցածր մրցունակությունը հանգեցրել էին այն բանին, որ արտահանման ծավալները խիստ սահմանափակ էին:

Երկիրն ուներ խոշոր ֆիսկալ անհաշվեկշռվածություն: Այս ամենը ստեղծում էր արտարժույթի նկատմամբ մշտական մեծ պահանջարկ՝ ճնշում գործադրելով դրամի փոխարժեքի վրա, որը կարելի է գալել միայն Կենտրոնական բանկի արտարժույթային ինտերվենցիաների միջոցով: Մինչդեռ 1993թ. նոյեմբերին ՀՀ Կենտրոնական բանկը չէր տնօրինում բավարար քանակությամբ միջազգային պահուստներ,³ ինչպես, ասենք, մերձբալթյան երկրները, և չէր կարողանում անհրաժեշտ չափով միջամտել արժույթային շուկայում ձևավորվող գործընթացներին և կանխել ՀՀ դրամի շեշտակի արժեզրկումը: Հետևաբար, ՀՀ իշխանությունների կողմից ընտրվեց ոչ թե ֆիքսված, այլ կառավարելի լողացող փոխարժեքի ռեժիմ, որը հնարավորություն տվեց կուտակել արտարժույթային պահուստները և դրանց հաշվին ակտիվորեն միջամտել արժույթային շուկայում:

Այս պայմաններում ՀՀ ԿԲ-ն ինտերվենցիոն քաղաքականությամբ երկու նպատակ էր հետապնդում, նախ՝ գների մակարդակի կայունացման համար գալել ՀՀ դրամի քառատրոփ արժեզրկման տեմպերը (1993թ. նոյեմբերի 22-ից մինչև 1996թ. հուլիս ամիսը ՀՀ դրամն արժեզրկվել էր 27.263 %-ով), և երկրորդ՝ ֆինանսավորել վճարային հաշվեկշիռը:

Արդյունքում, այս ռեժիմը հնարավորություն տվեց ապահովել վաճառահանելի ապրանքների համեմատաբար կայուն գներ, որի արդյունքում սղաճի ճնշումը սպառողական գների ինդեքսի վրա կրճատվեց և վստա-

² Առաջին անհրաժեշտության ապրանքներն ապահովվում էին գերազանցապես ներմուծման հաշվին:

³ ՀՀ Կենտրոնական բանկի և կառավարության համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ և այդ կազմակերպությունների կողմից արտոնյալ վարկերի տրամադրումը (ուստի նաև դրանց հիման վրա ՀՀ միջազգային պահուստների համալրումը) սկսվել է միայն 1994թ.-ի դեկտեմբերից:

հուբյունը ՀՀ դրամի նկատմամբ բարձրացավ, միաժամանակ ավելացան ՀՀ դրամով իրականացվող գործարքների ծավալները:

Ինչպես գիտենք, դրամավարկային և արժութային քաղաքականությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից: ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական նպատակն է գների կայունության ապահովումը, որը ամրագրված է օրենքով: Կենտրոնական բանկի միջամտությունը արժութային շուկայում՝ իրականացվում է դրամավարկային քաղաքականության խնդիրներից ելնելով:

1994-1995թթ. ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացված արժութային քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես կայունացման և ֆինանսական շուկաների ձևավորմանը նպաստող քաղաքականության մի մաս, այսինքն ԿԲ-ի գործառնություններն առավելապես կրում էին ՀՀ դրամի արժեզրկման միտումները զապող, այլ ոչ թե կարգավորող, հարթեցնող բնույթ: Այսինքն, 1994թ.-ից դրամական ազդեցատների կարգավորումը ընդունվել է որպես դրամավարկային կառավարման միջոց: Այդ ընթացքում ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը կազմում էր 297.74 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ:


1995-1996թթ. ընթացքում Կենտրոնական բանկի կողմից վարվող արժութային քաղաքականությունն ուղղված էր ՀՀ կառավարության հետ համատեղ հայտարարված «Տնտեսության կայունացման ծրագրի» հիմնախնդիրների իրականացմանը: Այդ ընթացքում ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը համեմատաբար կայուն էր, և տատանվելով 2.5 %-ի սահմաններում, կազմում էր շուրջ 405.88 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ:

Եվ այսպես, 1996 թվականը ՀՀ արժութային քաղաքականության համար դարձավ շրջադարձային տարի: 1996թ. հուլիսի 19-ին ՀՀ Կենտրոնական բանկը հանդես եկավ «ՀՀ Կենտրոնական բանկի արժութային սկզբունքների մասին հայտարարությամբ»⁴, որով ԿԲ-ն լիովին ազատականացրեց արժութային շուկան և անցավ փոխարժեքի ազատ լողացող ռեժիմի: Այսպիսով, 1996թ. հուլիսից մինչև օրս ՀՀ դրամի փոխարժեքի կարգավորմանն ուղղված Կենտրոնական բանկի գործառնությունները արժութային շուկայում թելադրված են դրամավարկային քաղաքականության խնդիրների ապահով-

⁴ Տե՛ս «ՀՀ ԿԲ տեղեկագիր» 1996 թ., N3, էջ 14-17:

ման անհրաժեշտությամբ և վերջինիս նպատակ չեն հանդիսանում: ՀՀ ԿԲ-ն առաջնորդվում է դրամական բազայի՝ որպես իր գործառնական նպատակի, և դրամական զանգվածի՝ որպես իր միջանկյալ նպատակի կարգավորմամբ: Գների կայունությանը նպաստող տոկոսադրույքների և փոխարժեքի առավել ճկուն վարքագիծ ապահովելու նպատակով դրամական բազայի ծրագրային ցուցանիշից թույլ են տրվում որոշակի տատանումներ, որը սահմանվում է ծրագրային ցուցանիշի համեմատ վերև/ներքև միջակայքի ձևով: Այսպիսով, իր վերջնական նպատակին հասնելու համար ԿԲ-ն ընտրել է դրամավարկային ծրագրի ստրատեգիա, որում նախանշված ցուցանիշների ապահովումը դրամավարկային քաղաքականության մյուս գործիքներին գուզընթաց իրականացվում է նաև ինտերվենցիաների միջոցով, այսինքն վաճառում է արտարժույթ և գնում ազգային արժույթ: Գ-ն նպաստում է LM կորի շարժին դեպի ձախ այնքան, մինչև վերականգնվի հավասարակշռությունը E կետում: Մյուս կողմից, կապիտալի հոսքը, ազդելով արժույթի փոխարժեքի վրա, ազդում է նաև IS մեծության վրա:

Եթե $r = r_f$, ապա վճարային հաշվեկշիռը հաշվեկշռված է և կապիտալի շարժ, ըստ էության, չկա: Իսկ եթե $r < r_f$, ապա տեղի է ունենում կապի-



Գծապատկեր 1. Վճարային հաշվեկշիռը, տոկոսադրույքը, արժույթի փոխարժեքը, LM կորը

տալի արտահոսք և ազգային արժույթը արժեզրկվում է, բարձրանում է տնտեսության մրցունակությունը, ավելանում է զուտ արտահանումը և IS կորը տեղաշարժվում է դեպի աջ: Եվ հակառակը, արժույթի արժեքավորումը կամ թանկացումը վատացնում է առևտրային հաշվեկշիռը, նվազում է պահանջարկը տեղական արտադրանքի նկատմամբ և IS կորը տեղաշարժվում է դեպի ձախ $r > rf$ պայմանով⁵:

1996թ.-ին ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը կազմում էր 413.44 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, իսկ 1997թ.-ին՝ 490.77 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ:

1998-2004թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գների միջին տարեկան աճը կազմել է 2.4%: Սակայն, վերջին տարիներին դժվարություններ են առաջացել փողի զանգվածի կառավարման հարցում: ՀՀ բանկային համակարգի կառուցվածքային փոփոխությունները, վարկավորման ծավալների բարձր տեմպերը, դոլարիզացիայի մակարդակի նվազումը դրամի կուրսի շարունակական աճի պայմաններում, արտասահմանից ստացվող տրանսֆերտների բարձր տեմպերը էապես ազդել են դրամական պահանջի վարքագծի վրա՝ դարձնելով այն հաճախ փոփոխվող և անկայուն:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկմամբ պայմանավորված՝ 1999 թվականից զգալիորեն աճել է ներմուծման փոխարինիչների արտադրությունը, իսկ արդեն 2000թ.-ից՝ նաև արտահանման ծավալները: Արդյունքում Հայաստանի ընթացիկ հաշվի դեֆիցիտի խորացման միտումը կտրուկ փոխվել է, և 1999թ.-ից գրանցվում են ընթացիկ հաշվի էական բարելավումներ: Այդ ընթացքում ԱՄՆ 1\$= 535.06 ՀՀ դրամ 1999թ. և ԱՄՆ 1\$= 533.52 ՀՀ դրամ՝ 2000թ.:

2002թ. հատկանշական էր նրանով, որ շրջանառության մեջ մտավ եվրո կանխիկ արժույթը, որը լրջորեն մրցակցում էր ԱՄՆ դոլարի հետ: Եթե 2002թ. 1\$=573.35 ՀՀ դրամ, ապա 1€=606.88 ՀՀ դրամ:

2003թ. վերջերից սկսած ՀՀ տնտեսությունում նկատվեց դրամի փոխարժեքի արժևորման գործընթաց, որն արդյունք էր և ներքին տնտեսության, և համաշխարհային տնտեսության որոշակի զարգացումների: Դրամի արժևորման հիմնական պատճառները հետևյալն են.

⁵ Տե՛ս Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, (2005), էջ 131:

Վերջին տարիներին ԱՄՆ դոլարի թուլացումը միջազգային շուկաներում: Նշենք, օրինակ, որ միայն 2004թ. ընթացքում ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 9.2%-ով: Այլ երկրների արժույթները ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել էին դեռևս ավելի վաղ՝ 2002թ. սկսած: Ընդ որում, քանի որ կապիտալի ներհոսքի ժամանակահատվածներն այդ երկրներում տարբեր են, տարբեր է նաև այդ շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկման լագային ազդեցությունը: Դրանով է պայմանավորված, որ Հայաստանում և ԱՊՀ մյուս երկրներում դոլարի արժեզրկումը սկսել է նկատվել 2003թ., մինչդեռ, ասենք, Արևելյան Եվրոպայի երկրներում, դա սկսվեց քիչ ավելի վաղ: ԱՄՆ դոլարի նման վարքագիծը բերեց նաև զարգացող երկրներում, այդ թվում Հայաստանում, մասնավոր տրանսֆերտների էական աճի: Հայաստանում զգալի դոլարային ներհոսքը, այսինքն՝ դոլարային առաջարկի աճը, հիմնականում կապված է մասնավոր տրանսֆերտների ու եկամուտների ծավալների աճի հետ: 2003թ. ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը կազմում էր 578.77 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ: 2004թ. հենց տարեսկզբից աչքի է ընկել արտարժույթային միջոցների ներհոսքով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ըստ պաշտոնական վիճակագրության աճել են 56%-ով⁶), որն իր ազդեցությունն է ունեցել արտարժույթային շուկայի և փոխարժեքի վարքագծի վրա:

Այդ ընթացքում ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը կազմում էր 533.45 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ: Արժույթային միջոցները ստացվել են հիմնականում տրանսֆերտների տեսքով, որոնք 2004թ.-ին ունեցել են զգալի աճի միտում, ինչպես նաև զբոսաշրջիկության ծավալների ավելացման արդյունքում: Նշված աղբյուրներից ստացվող արժույթային միջոցները, որպես կանոն, ունեն կարճաժամկետ բնույթ և ծառայում են սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը, այսինքն ուղղակիորեն մուտք են գործում արտարժույթի շուկա և ճնշումներ առաջացնում դրամի փոխարժեքի վրա: Մյուս կողմից, համաշխարհային շուկայում վերջերս նկատվում է նաև դոլարի փոխարժեքի դիրքի թուլացում: Կենտրոնական բանկի իրականացրած վերլուծությունների համաձայն՝ ԱՊՀ գրե-

⁶ Տե՛ս www.cba.am:

թե բոլոր երկրներում 2004թ. ընթացքում գրանցվել է տեղական արժույթի փոխարժեքի արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ⁷:

Այսպես, չնայած ֆինանսական ներհոսքի (մասնավոր տրանսֆերտների) մեծ մասը տեղի է ունենում ԱՄՆ դոլարով, սակայն Հայաստանի հիմնական գործընկեր երկրները Եվրոմիությունը (2004 թվականի առևտրաշրջանառության 35.7 տոկոսը) և Ռուսաստանն են (12.4 տոկոսը), ընդ որում՝ աշխատուժի և կապիտալի ազատ հոսքեր գոյություն ունեն միայն Ռուսաստանի հետ: ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքի ամրագրման հետևանքով տնտեսությունը կարող է շատ մեծ վնասներ կրել, եթե հանկարծ ԱՄՆ դոլարը սկսի արժևորվել եվրոյի կամ ռուսական ռուբլու նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել իրական փոխարժեքի արժևորման, մրցունակության կորստի և ճգնաժամային երևույթների առաջացման: Դրամի փոխարժեքը հնարավոր չէ ամրագրել մաս եվրոյի կամ ռուսական ռուբլու նկատմամբ: Ռուսական ռուբլու նկատմամբ ամրագրումը նույնպես խնդիրներ կառաջացնի, քանի որ Հայաստանը և Ռուսաստանը ենթարկվում են ասիմետրիկ շուկերի. օրինակ՝ նավթի թանկացումը կարող է հանգեցնել ռուսական ռուբլու արժևորմանը, որին կցված լինելու դեպքում դրամի փոխարժեքը նույնպես էականորեն կարժևորվի, և Հայաստանը կկորցնի իր մրցունակությունը միջազգային շուկայում, կամ Ռուսաստանում տեղի ունեցող բացասական երևույթները (բարձր գնաճ կամ հնարավոր տնտեսական անկում՝ նավթի գների անկման հետևանքով) նույնությամբ կտեղափոխվեն Հայաստան: Նման պարագայում փոխարժեքի ամրագրումը կարող է ծանր հետևանքներ ունենալ տնտեսության համար, քանի որ արտաքին աշխարհի բոլոր տնտեսական ցնցումները ուղղակիորեն անդրադառնում են երկրի ներքին տնտեսության վրա: Մի քանի խոսքով անդրադառնանք այդ ցնցումների հնարավոր տարբերակներին: Որպես ոչ բարենպաստ ցնցում կարելի է դիտարկել արտաքին առևտրի պայմանների վատթարացումը, երբ նվազում են արտահանվող ապրանքների գները կամ բարձրանում են ներմուծվող ապրանքներիը: Այսպես, նավթի միջազգային գները 2003 թվականի դեկտեմբերի համեմատ 2005 թվականի հուլիսին աճել են գրեթե 2 անգամ, մինչդեռ Հայաստանի ներքին շուկայում բենզինի գների աճը կազմել է ըն-

⁷ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը. 2004թ. հունվար-դեկտեմբեր, Եր., 2005թ., էջ 1:

դամենը 11.4 տոկոս: Անժխտելի է, որ դա փոխարժեքի արժևորման շնորհիվ է տեղի ունեցել: Սակայն ամենավտանգավոր և դժվար հաղթահարելի ցնցումը կապիտալի արտահոսքն է, առավել ևս խոշորածավալ ներհոսքից հետո: Այսպես, վերջին տարիներին Հայաստանում զգալի ավելացել է ֆինանսական ներհոսքը (հիմնականում արտերկրում ապրող հայերի դրամական փոխանցումների տեսքով): Ինչ վերաբերում է սպեկուլյատիվ պորտֆելային ներդրումներին (կամ այլ կերպ ասած՝ «տաք փողերին»), ապա դրանց ներհոսքը շատ արագ կարող է վերափոխվել արտահոսքի, որի դեպքում մեծ կլինի արժուրային ճգնաժամի հավանականությունը և երկրում կառաջանա փոխարժեքի պաշտպանության անհրաժեշտություն: Հայաստանում ֆինանսական ներհոսքը մասնավոր տրանսֆերտների տեսքով է, որն ուղղված է ոչ թե ներդրումներին, այլ սպառմանը: Իսկ ի՞նչ տեղի կունենար, եթե Կենտրոնական բանկը թույլ չտար փոխարժեք արժևորում և ամբողջ արտարժուրային ներհոսքը փոխարկեր դրամի: Դրամական զանգվածի աճը կանդրադառնար ամբողջ տնտեսության վրա՝ հանգեցնելով գների էական աճի (մոտ 20 տոկոս) հիմնականում ծառայությունների և այլ ոչ արտահանելի ապրանքների հաշվին: Կենտրոնական բանկի միակ հնարավոր գործիքը կմնար դրամական զանգվածի աճի զսպումը տոկոսադրույքների աճի միջոցով, որը շատ վատ կանդրադառնար տնտեսության վրա՝ թանկացնելով վարկային միջոցների արժեքը և առաջացնելով հիմնախնդիրներ՝ բանկային համակարգում «վատ վարկերի» տեսքով, իսկ մյուս կողմից՝ կխթաներ լրացուցիչ կապիտալի ներհոսքը: Ազատ լրացող փոխարժեքը հնարավորություն ընձեռեց չդիմել նման միջոցառումների և ինքնաբերաբար մեղմեց գների աճը, քանի որ դրամի արժևորումը համեմատաբար էժանացրեց ներմուծումը և լրացուցիչ պահանջարկը բավարարվեց ներմուծվող ապրանքներով: Այս վերջին օրինակը հաստատում է տնտեսագիտության տեսությունում հայտնի եռընտրանքը՝ Կենտրոնական բանկն արդի ժամանակաշրջանում պետք է կարողանա երեք հնարավոր նպատակներից, որոնք հայտնի են «անհնարին երրորդություն» անվանմամբ, ընտրել երկուսը: Այդ երեք նպատակներն են՝ կայուն փոխարժեք, գների կայունություն և կապիտալի ազատ հոսքեր: Հնարավոր է միաժամանակ ապահովել այդ երեք նպատակներից միայն երկուսը: Փոքր բաց երկրի համար

(ինչպիսին է Հայաստանը) ֆինանսական ներհոսքի (ուղղակի ներդրումների կամ տրանսֆերտների) սահմանափակումը հավասարազոր է երկարաժամկետ զարգացումից հրաժարման: Այդ իմաստով, արտաքին ֆինանսական ներհոսքի պայմաններում Կենտրոնական բանկը ստիպված առաջնայնությունը տալիս է գների կայունությանը հետևյալ պատճառներով՝ գները սոցիալական առումով ավելի կարևոր ցուցանիշ են, իսկ միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրների զարգացման համար գների կայունությունը շատ ավելի կարևոր է, քան փոխարժեքի: Ամրագրված փոխարժեքի կողմնակիցները իրենց տեսակետը բացատրում են նաև մրցունակությունը պահպանելու անհրաժեշտությամբ: Սակայն այստեղ շեշտը պետք է դնել ոչ թե փոխարժեքի միջոցով արհեստականորեն մրցունակություն ապահովելու և էժան աշխատուժի շահագործման հաշվին անորակ արտադրանք արտադրելու վրա (որը փոխարժեքի արհեստական արժեզրկման երկարաժամկետ հետևանքն է), այլ ներդրումների միջոցով ավելի բարձրորակ, կապիտալատար և գիտատար ապրանքների արտադրության վրա, որը իրական մրցունակության երաշխիք է:

Այս դեպքում, կարծում ենք, հարկ չի լինի մտածել ամրագրված փոխարժեքի ռեժիմին անցնելու մասին. նախ՝ առկա չեն նախնական պայմանները, երկրորդ՝ դա հակասում է Կենտրոնական բանկի գլխավոր՝ գների կայունության խնդրին: Դրա փոխարեն անհրաժեշտ է մշակել դոլարայնացման նվազեցման, արժութային շուկայի խորության և լայնության ապահովման միջոցառումներ, որոնք կհարթեն փոխարժեքի տատանումները և կկանխեն սպեկուլյացիաները արժութային շուկայում:

Նման պայմաններում Կենտրոնական բանկը հավատարիմ է մնացել ազատ լողացող փոխարժեքի քաղաքականության իր սկզբունքներին և չի միջամտել արտարժույթի շուկայի զարգացումներին: Մյուս կողմից, արտարժույթի շուկայում ԿԲ-ի միջամտությունը կհանգեցնեք փողի քազայի էժանացման աճին ու լուրջ գնաճային ճնշումներ կառաջացնեք տնտեսության մեջ՝ վտանգելով գնաճի ցածր մակարդակի ապահովման ԿԲ-ի նպատակը: 2005թ. առաջին եռամսյակում ևս բանկային համակարգով ստացվող ոչ առևտրային բնույթի փոխանցումների ծավալն աճել է 43%-ով: Մասնավորապես, 2005թ. ընթացքում մեծ քանակությամբ արտարժույթի ներհոսքի պայմաններում, դրամի կուրսը կայուն աճ է

ցուցաբերել, ինչը հանգեցրել է ազգային արժույթի պահանջարկի կտրուկ աճի: ՀՀ ԿԲ-ն դրամական ագրեգատները կարգավորելու փոխարեն, որի նպատակն էր գների կայունությունը, 2006թ. հունվարի 1-ից գնաճի նպատակադրման ռազմավարություն էր ընդունել: Եթե մինչ այդ ԿԲ-ի գործող ռազմավարության միջանկյալ նպատակն էր կարգավորել փողի զանգվածը⁸, ապա այժմ, որպես գործող նպատակ կամ անվանական խարխախ, հանդես է գալիս գնաճի կանխատեսված մակարդակը, իսկ որպես գործառնական նպատակ՝ տոկոսադրույքը: Հայաստանում գների աճի կարգավորման ռազմավարության լիարժեք ընդունման հիմնական դժվարությունը թերզարգացած ֆինանսական շուկան է:

Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով դրամավարկային ցուցանիշների ծրագրային զգալի շեղումները և այն, որ արդյունքում դրանք չեն հանգեցրել գնաճային էական ճնշումների (կիսամյակային 1.5% գնաճ՝ ծրագրված 4%-ի փոխարեն), ԿԲ-ն տարվա երկրորդ կեսից վերանայել է դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակները՝ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նկատառումով: Ըստ վերանայված ծրագրի փողի բազան տարեվերջին, նախորդ տարվա համեմատ, նախատեսվում էր ավելացնել 41.4%-ով՝ սկզբնական ծրագրի 8.9%-ի փոխարեն:

ԿԲ-ն վերջին տարիներին մշտապես կիրառում է նման հայեցողական մոտեցում: Ընդ որում, այս հսկասությունը ունենալու է շարունակական բնույթ, քանի որ ցածր փողայնացման (մոնետիզացիայի), շրջանառության մեջ կանխիկ դրամի մեծ տեսակարար կշռի և արտաքին ֆինանսական ներհոսքի պարագայում էական տեղաշարժեր են սպասվում դրամի նկատմամբ պահանջարկի և՛ մակարդակում, և՛ կառուցվածքում:

Այս իրավիճակում դրամական ագրեգատների նպատակադրումը չի կարող լինել վստահելի խարխախ, և ՀՀ ԿԲ-ի առջև ծառանում է նոր ռազմավարության ընտրության խնդիր: Ընդհանուր առմամբ, այդպիսին կարող է լինել՝

⁸ Փողի ագրեգատների նպատակադրման ռեժիմի լիարժեք ներդրման ժամանակահատված է համարվում 1996 թվականը, երբ ՀՀ կենտրոնական բանկի վարչությունը հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի արժույթային քաղաքականության սկզբունքների մասին» թիվ 122 որոշմամբ սահմանեց դրամի ազատ լողացող փոխարժեք:

Աղյուսակ 3.

ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարած փոխանցումները 2004 - 2005 թվականներին՝ ըստ երկրների⁹

Երկիր	2004			2005		
	Մուտք	Ելք	Չուսմուտք	Մուտք	Ելք	Չուսմուտք
Ռուսաստան	419014	68210	350803	541308	83537	457771
ԱՄՆ	78787	20519	58268	82628	30671	51958
Գերմանիա	15319	8114	7206	15225	5346	9879
Լատվիա	11657	2654	9002	9801	3428	6373
Շվեյցարիա	12846	4364	8481	9379	2490	6889
Մեծ Բրիտանիա	5976	2114	3862	6678	2560	4118
Ուկրաինա	1065	8568	-7503	1622	7777	-6155
ԱՄԷ	4199	10308	-6109	4606	7775	-3169
Թուրքիա	5249	8306	-3057	5971	6030	-58
Այլ երկրներ	89909	38139	51770	75600	40179	35421
Ընդամենը	644019	171296	472723	752819	189793	563025

- փոխարժեքի նպատակադրումը, կամ
- գնաճի ուղղակի նպատակադրումը¹⁰:

Փոխարժեքի նպատակադրման ռազմավարության ընդունումը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝ բարձր գնաճի նվազեցում (Ռուսաստան, Չեխիա, Արգենտինա և այլ երկրներ) և տնտեսական ինտեգրում (օր.՝ Եվրոմիությանը անդամակցել ցանկացող երկրներ, ինչպիսիք են Էստոնիան, Սլովենիան, Չեխիան և այլն): Սակայն այդ նպատակներին հասնելու ընթացքում խիստ սահմանափակումներ են առաջանում դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների համար ՀՆԱ-ի և զբաղվածության կարճաժամկետ խնդիրների լուծման առումով:

Լողացող փոխարժեքի համեմատությամբ՝ ամրագրված փոխարժեքի առավելությունը գնաճի սպասումները անմիջականորեն չեզոքացնելն է,

⁹ ՀՀ ԿԲ Վիճակագրական տեղեկագիր - 2005 թ., Երևան, 2005:

¹⁰ Տեսականորեն կան մաս ալլ ռեժիմներ, սակայն հիմնարար են միայն նշված երկուսը:

որը չափազանց կարևոր է անցումային տնտեսությամբ երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանը: Սակայն ՀՀ-ում, ինչպես նշվեց, 1998 թվականից հետո արձանագրվել է գնաճի կայուն և ցածր մակարդակ, որը բացառում է ներկայումս փոխարժեքի ամրագրման միջոցով գնաճային սպասումների խարսխի սահմանումը:

Տնտեսական ինտեգրման նպատակով փոխարժեքի ամրագրումը, ըստ միջազգային տնտեսագիտության դասական տեսություններից մեկի¹¹, որը կոչվում է օպտիմալ արժույթային գոտիների տեսություն, թույլատրվում է միայն այն երկրի արժույթին, որի հետ իրականացվում է արտաքին առևտրի առնվազն 35 տոկոսը, այդ երկու երկրների միջև գոյություն ունի աշխատուժի և կապիտալի՝ միջինից բարձր շարժունակություն (ազատ տեղաշարժ երկրների միջև) և այդ երկրները ենթակա են միևնույն տեսակի արտաքին տնտեսական ցնցումների ազդեցությանը:


Միանշանակ չէ այն հարցի պատասխանը, թե որ երկրի արժույթի նկատմամբ կարելի է ամրագրել ՀՀ դրամի փոխարժեքը: Չնայած առաջին հայացքից տրամաբանական պատասխանը ԱՄՆ դոլարն է, սակայն ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրագրումը ևս անվտանգ չէ:

2005-2006թթ. գործընկեր երկրների շարքում ավելի շատ զգացվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի և ռուսական ռուբլու արժեքավորման ազդեցությունը, որոնց կանխատեսված ցուցանիշները կազմեցին 8.8 և 4.1 տոկոս: Սակայն, պայմանավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ Իրանի և Թուրքիայի արժույթների արժեզրկման կանխատեսումներով, գործընկեր երկրների արժույթների միջին կշռված արժեքավորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ ավելի քիչ եղավ, քան հայկական դրամինը, որն էլ 2005-2006թթ. ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի աճի (արժեքավորման) պատճառ դարձավ: Ինչը վկայում են ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքները. 1\$ = 457.69 ՀՀ դրամ 2005թ. և 1\$ = 416.04 ՀՀ դրամ՝ 2006թ.:

ՀՀ ԿԲ-ի դրամավարկային քաղաքականության հիմքում խնդիր էր դրվել մինչև 2007թ. վերջը գնաճի մակարդակը առավելագույնը հասցնել $4 \pm 1.5\%$ -ի: Այս ցուցանիշը գերազանցելու զգալի ռիսկերն են.

1. գյուղատնտեսական արտադրանքի աճի հնարավոր նվազեցում,

¹¹ Ս. Բուլտոով, Տնտեսագիտություն, 2006 թ.:



Գծապատկեր 2. Ազգային արժույթի գնողունակությունը և արժույթային կուրսը

2. աշխատավարձի նախատեսված ցուցանիշներից ավելի բարձր աճ,
3. ապրանքների, մասնավորապես նավթի և մետաղների, նախատեսված ցուցանիշներից համաշխարհային բարձր գները,
4. ներկրվող հացահատիկի քանակի հավանական աճ՝ կապված բերքի նվազման ակնկալիքի հետ,
5. շինարարության և ծառայությունների ոլորտում նախատեսված ցուցանիշներից ավելի բարձր աճ:

Այդ ընթացքում ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը կազմում էր 342.08 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ: Վերջին մի քանի տարիների ընթացքում այն մեծ ազդեցություն կրեց գերդոլարացման պատճառով: Կտրուկ անկում ապրեց դոլարը, որը, ըստ երևույթին, պայմանավորված էր միջազգային շուկայում նավթի գների կտրուկ աճով: Այն ձեռնտու էր խոշոր ներկրողներին՝ նավթ, բենզին, դիզվառելիք և այլն: Բայց այստեղ կա ևս մի տեսակետ, ըստ որի՝ դոլարի անկումը կապված էր ՀՀ փոխանցված տրանսֆերտների զգալի աճի հետ: Այս փոփոխությունները կապված են նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հետ, որը ձգտում է դոլարի

փոխարժեքի իջեցմամբ բարձրացնել իր երկրում արտադրվող ապրանքների շրջանառության և արտահանման ծավալները: 2008թ.-ին 1 ԱՄՆ դոլարը դարձավ 305.97 ՀՀ դրամ, 2009թ.-ին՝ 363.28, 2010թ.-ին՝ 373.66, 2011թ.-ին՝ 372.50, 2012թ.-ին՝ 405.32 ՀՀ դրամ: Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տևական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝ կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժևորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (օրինակ՝ երբ ներմուծման և արտահանման սեզոնները տարբեր են) և կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է: Վերջին մի քանի տարիների ընթացքում արձանագրվել է արտարժույթի էական ներհոսք Հայաստան և այդ երևույթը դեռևս շարունակվում է: Այս դեպքում դրամի փոխարժեքը հիմնականում միտված է արժևորման: Սակայն դա բնավ չի բացառում կարճաժամկետ թույլ և համեմատաբար կտրուկ տատանումները, որոնք, որպես կանոն, պայմանավորված են լինում սեզոնային գործոններով:

2011 թվականի դեկտեմբերին ավարտվեց ապադոլարայնացման միջոցառումների շրջանակում պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխության վերջին փուլը, որը ենթադրում էր ներգրավված արտարժույթային միջոցների դիմաց միայն դրամով պահուստավորում՝ նախկինում գործող 75%-ը դրամով, իսկ 25%-ը՝ արտարժույթով պահուստավորման տարբերակի փոխարեն¹²: 2011 թ. դեկտեմբերին, սեպտեմբերի համեմատությամբ, արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 2.8%-ով՝ կազմելով 383.2 դրամ, եվրոյի նկատմամբ արժևորվել է 1.7%-ով՝ կազմելով 504.6 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 0.16%-ով՝ կազմելով 12.16 դրամ:

Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ դրամի միջին շուկայական փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 5.9%-ով, եվրոյի նկատմամբ՝ 5.6%-ով, և ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 3.8%-ով: Չնայած նախորդ եռամսյակների համեմատ չորրորդ եռամսյակում արտարժույթային


¹² Տե՛ս www.cba.am:

ավանդների բավականին բարձր աճին, եռամսյակի ընթացքում շարունակվել է տնտեսության դոլարայնացման աստիճանի (արտարժույթային ավանդներ/փողի զանգված հարաբերակցություն) նվազումը՝ նախորդ եռամսյակի վերջի նկատմամբ 0.5 և նախորդ տարվա նույն եռամսյակի վերջի նկատմամբ 1.3 տոկոսային կետով: Տարվա վերջին եռամսյակում պահպանվել են տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը. արձանագրվել է եռամսյակային ամենաբարձր աճը՝ 8.9%:

Ֆինանսական շուկաները 2012թ. կշարունակեն աշխատել մեծ անորոշության մեջ՝ պայմանավորված Եվրագոտո ֆինանսական հիմնախնդիրների հնարավոր սրմամբ և համաշխարհային տնտեսության զարգացումների վերաբերյալ հոռետեսական սպասումների տարածմամբ:

Չնայած դրական զարգացումներին, ԱՄՆ տնտեսությունը դեռևս բավականին խոցելի է՝ հաշվի առնելով նաև համաշխարհային տնտեսության հոռետեսական հեռանկարը:

Նման իրավիճակում, հավելելով նաև հարկաբյուջետային կոնսոլիդացիայի անհրաժեշտությունը, սպասվում է, որ ԱՄՆ Գաշնային պահուստային համակարգը մինչև 2014 թ. վերջը զերծ կմնա դրամավարկային պայմանների խստացումից՝ պահպանելով ցածր տոկոսադրույքների մակարդակը:



Գծապատկեր 3. ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքը (2007 - 2012 թթ.)

Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Եվրագոտու տնտեսական հեռանկարները ավելի անորոշ են. սպասվում է, որ Եվրոպական կենտրոնական բանկը կշարունակի 2011 թ. վերջին եռամսյակից սկսած տոկոսադրույքների նվազեցման քաղաքականությունը և 2012 թ. առաջին քառորդում ևս շուրջ 0.5 տոկոսային կետով կնվազեցնի տոկոսադրույքները՝ միաժամանակ կիրառելով «քանակական ընդլայնման» և իրացվելիության ներարկման մեխանիզմները:

Վերոնշյալ զարգացումների պարագայում կանխատեսվող ժամանակահատվածում արժույթային շուկայում եվրոն հիմնականում կգտնվի արժեզրկման ճնշումների ներքո, մինչդեռ ԱՄՆ տնտեսության զարգացման դրական հեռանկարների պայմաններում ԱՄՆ դոլարը կդրսևորի արժևորման միտումներ:

Այսպիսով, 2012 թվականին համաշխարհային տնտեսական աճի տեմպերի դանդաղման և Եվրագոտում ֆինանսատնտեսական հիմնախնդիրների սրման պայմաններում ներքին տնտեսություն ներթափանցող ռիսկերը հիմնականում կդրսևորվեն ներքին և արտաքին պահանջարկի զարգացումներում (կապիտալ և ֆինանսական հոսքերի նվազում, արտահանման կրճատում և այլն), մինչդեռ միջազգային ապրանքային շուկաներից ներթափանցող գնաճային ճնշումները հիմնականում կբացակայեն:

Ազգային արժույթը ամրացնելու բացասական ազդեցությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ.

- Արժույթային շուկայի թափանցիկություն ապահովելու համար պետք է փոխանակման կետերի գործառույթները փոխանցել առևտրային բանկերին:

- Կենտրոնական բանկի՝ ավելի թափանցիկ և հանրության համար հասկանալի քաղաքականության իրականացում:

- Անհրաժեշտ պայմանների ստեղծում փողի զանգվածի վրա ազդելու համար՝ ոչ միայն արտարժույթային ինտերվենցիաների օգնությամբ:

- Դրամի ապահովագրություն ապրանքով և ոսկու պաշարով:

- Դոլարային մուտքերը (մասնավոր տրանսֆերտները) որպես «արտադրություն»:

Առանցքային հասկացություններ. դրամավարկային քաղաքականություն, արժույթային քաղաքականություն, դրամավարկային կարգավորում, դրամական ազդեցատներ, դոլարացում, տրանսֆերտներ, փոխարժեք, արժեզրկում, արժևորում, դրամաշրջանառություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտական հրատարակումներ, գրքեր

1. Թ.Թորոսյան-Սիջազգային տնտեսագիտություն, Երևան, 2005թ.
2. ՀՀ վիճակագրական տեղեկագիր. 2005-2012թթ., Երևան, 2012թ.
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2004-2012թթ., Երևան, 2012թ.
4. ՀՀ ֆինանսների վիճակագրություն 1994-2012թթ., Երևան, 2012թ.
5. ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր 2012թ.
6. Հարի Սմիթ, Սակրոտեկոնոմիկա (Նյու Յորք, Վ.Հ.Ֆրենսման և ընկերություն, 1985)
7. Ս. Բուլատով, Տնտեսագիտություն, 2006թ.

Ինտերնետ ռեսուրսներ և տվյալների բազա

8. Համաշխարհային բանկ(ՀԲ): Աշխարհի զարգացման ցուցանիշները, 2007 թ. <http://devdata.worldbank.org/dataonline/>;
9. Արժույթի միջազգային հիմնադրամ, www.imf.org;
10. ՀՀ Կենտրոնական բանկ, www.cba.am

АНАЛИЗ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ И ВАЛЮТНОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ПЕРИОД 1994-2012 ГГ.

Н.Г. Эвоян

Резюме

В данной статье раскрывается понятие анализа денежно-кредитной политики Республики Армения в 1994-2012 годы. Со стороны Центрального Банка Республики Армения реализуется методология денежной и валютной политики, выбор валютного режима, регулирование денежных агрегатов, а также стратегии борьбы с инфляцией. В статье рассматривается денежно-кредитная

политика, раскрывая сущность валютной политики и углубляясь в ее историческое развитие. Очень точно описываются те факторы, которые могут повлиять на обменные курсы. В статье раскрываются способы воздействия внешних факторов, таких как трансферты, нефть, влияние мировых цен на продовольствие, а также стихийные бедствия, военный период, анализ социально-экономических последствий в тяжелый период объявления независимости страны. Статья подробно описывает финансовые проблемы Еврозоны, а также сущность долларизации экономики, которая может привести к значительным колебаниям обменного курса.

Согласно вышеуказанным факторам воздействия, в прогнозируемый период ожидается девальвация евро под давлением валютного рынка, в то время как в экономическом развитии США наблюдаются положительные тенденции курса доллара.

Ключевые понятия: *денежно-кредитная политика, валютная политика, денежно-кредитного регулирования, денежных агрегатов, долларизация, трансферты, обменные курсы, девальвация, ревальвация, денежное оборот.*

ANALYSIS OF MONETARY AND CURRENCY POLICIES OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE PERIOD OF 1994-2012

N.H. Evoyan

Summary

This article touches upon RA methodology of monetary and foreign exchange policy implementation carried out by the Central Bank of the Republic of Armenia, the choice of exchange rate regime, the regulation of monetary aggregates as well as inflation targeting strategy in the period of 1994-2012. The notion of monetary policy is also described which discloses the essence of monetary policy and goes deep into the historical developments of the policy.

The factors that could affect the exchange rate are defined quite precisely in the article. In addition, the analysis of external factors; such as transfers,

global impact of oil and food prices, as well as the effects of the natural disaster, wartime period and independence era, socio-economic situation, influencing the implementation of the policy can be traced.

The issues relating to both Eurozone financial situation and the level of dollarization in economy which leads to substantial exchange rate fluctuations have been touched upon, as well.

In case of the aforementioned developments within the projected period Euro will mainly be under the devaluation pressure in the foreign exchange market, while the US dollar will record valuation trends if USA economic prospects are positive.

Key concepts: *monetary policy, currency policy, monetary regulation, monetary aggregates, dollarization, transfers, exchange rate, devaluation, revaluation, money turnover.*

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մ.Ս. Կասիմյան

Գլոբալացման ներկայիս պայմաններում տնտեսության զարգացման անհրաժեշտ նախապայման է դարձել հարևան երկրների հետ ամուր տնտեսական կապերի և հարաբերությունների հաստատումը և զարգացումը: Որքան էլ երկիրը հարուստ լինի բնական ռեսուրսներով, տնտեսապես զարգացած, մինևույն է, չի կարող զարգանալ մեկուսացած վիճակում: Տնտեսական մեկուսացածությունը խիստ բացասաբար է անդրադառնում բոլոր երկրների վրա, սակայն դրա ազդեցությունը առավել մեծ է այն տնտեսությունների վրա, որոնց տարածքը փոքր է, աշխարհագրական դիրքը՝ ոչ նպաստավոր, բնական ռեսուրսները՝ սահմանափակ: Ահավասիք՝ Հայաստանը:

Ուստի, տնտեսության զարգացման ներկա փուլում ՀՀ արտաքին տնտեսական հարաբերությունների, մասնավորապես. արտաքին առևտրի զարգացումը հանդիսանում է ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման և ժողովրդի բարեկեցության մակարդակի աճի կարևորագույն գործոն:

Հայաստանի Հանրապետության համար կարևոր է տնտեսության զարգացումը, արտաքին տնտեսական կապերի խթանումը, հայրենական արտադրության ընդլայնումն ու ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը եւ այդ ամենին զուգահեռ ակնհայտ է տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում ՀՀ դերի և նշանակության բարձրացման անհրաժեշտությունը: Տնտեսական զարգացման մակարդակով, ռազմական հզորությամբ, աշխարհագրական դիրքով, հարևանների հետ ունեցած տնտեսական ինտեգրացիոն և քաղաքական կապերով այնպիսի փոքր հանրապետություն, ինչպիսին Հայաստանն է, իր տնտեսական և քաղաքական անկախությունը չի կարող կերտել առանց արտաքին աշխարհի պետությունների հետ տնտեսական ու քաղաքական սերտ հարաբերությունների: [1, 285] Այս տեսանկյունից հատկապես կարևոր նախապայման է հանդիսանում առավելապես հարևան երկրների հետ տնտեսական հա-

րաբերությունների զարգացման անհրաժեշտությունը: Մասնավորապես, կարևոր են հայ-վրացական տնտեսական կապերի զարգացման հնարավորությունները՝ հաշվի առնելով մյուս հարևանների հետ ձևավորված ոչ բարիդրացիական հարաբերությունները, ինչպես նաև գոյություն ունեցող կրոնական և մշակութային էական տարբերությունները:

Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության գերակշիռ մասն իրենից ներկայացնում է փոխադարձ առևտուրը: Տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև հիմնականում ներառում է տարանցման և վրացական տարածքով դեպի Հայաստան, և հակառակ ուղղությամբ, ապրանքաշրջանառությունն ու Վրաստանի տարածքով էներգառեսուրսների ներկրումը:

Ուստի, վերլուծելով 2006-2011թթ. ընթացքում հայ-վրացական առևտրային կապերի զարգացման միտումները, ներկայացնենք վերջիններիս բնույթը և դրանց ներկայիս միտումները (աղյուսակ 1):

Բերված տվյալներից երևում է, որ առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդ ունեցել ենք միայն 2006 և 2010թթ.-երին: 2007թ.-ին արտահանման ծավալների գրեթե կրկնապատկման հաշվին, գրանցվել է առևտրային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդի ամենաբարձր ցուցանիշը, որը կազմել է 41534.9 հազ. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա ցուցանիշի համեմատ աճելով մոտ 3.2 անգամ: այս Ցավոք, միտումը հետագա տարիներին չի պահպանվել: 2008-2010թթ. նկատվել է արտահանման ծավալների զգալի կրճատում, 2010թ. արձանագրելով առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդ: Այնուհանդերձ, շնորհիվ արտահանման ծավալների նշանակալի աճի 2011թ. կրկին ունեցել ենք առևտրային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդ, որը կազմել է 1678.5 հազ. ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ այս ընթացքում փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալներն ունեցել են խիստ տատանողական բնույթ, 2007-2009թթ. դրսևորելով կայուն նվազման միտում: 2008թ. արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ նվազել են 2.2%-ով: Այդ ընթացքում արձանագրվել է արտահանման ծավալների մոտ 6.8%-անոց նվազում և ներմուծման ծավալների մոտ 6.1%-ոց աճ: Արդեն 2009թ. նշված ցուցանիշը խիստ անկում է ապրում ի հաշիվ և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալների միաժամանակյա

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտուրը Վրաստանի հետ 2006-2011 թթ.
(հազ. ԱՄՆ դոլար) [2,482-484, 467-470]

	2006	2007	2008	2009	2010	2011
ՀՀ ընդհանուր արտահանումը	985108.2	1152300.8	1057161.4	710157.5	1041056.6	1334338.8
ՀՀ արտահանումը ընթացիկ Վրաստան	56648.8	87868.9	81813.6	52806.1	49035.2	61851.9
ՀՀ ընդհանուր ներմուծումը	2191612.6	3267788.0	4426129.0	3321133.9	3748953.5	4145332.0
ՀՀ ներմուծումը Վրաստանից	35462.4	46334.0	49379.4	40912.4	54349.6	60173.4
Վրաստանի հետ արտաքին ապրանքաշրջանառությունը	132272.6	134202.9	131193.0	93753.5	103384.8	122025.3
Առևտրային հաշվեկշիռը Վրաստանի հետ	-18975.0	41534.9	32434.2	11928.7	-5314.4	1678.5

նվազեցման, կրճատվելով 32.8%-ով: Սա բնականաբար, պայմանավորված էր տարածաշրջանում 2008թ. սկիզբ առած աշխարհաքաղաքական ցնցումներով, մասնավորապես՝ ռուս-վրացական պատերազմով, ինչպես նաև այն հանգամանքով, որ Հարավային Կովկասը ևս անմասն չմնաց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից և դրա հետևանքով 2009թ. սկիզբ առած այնպիսի գործընթացներից՝ ինչպիսիք էին միջազգային վարկային շուկաներում և բանկային համակարգերում տիրող ճգնաժամային իրավիճակները, բանկերի և ապահովագրական ընկերությունների սննկացումները և այլն: Այդուհանդերձ 2010թ.-ից սկսած նկատվում է տնտեսական կապերի փոքր-ինչ աշխուժացում: Ընդ որում հատկապես ուշադրության են արժանի 2011թ. վիճակագրական տվյալները, երբ փոխադարձ ապրանքաշրջանառությունը գրեթե 130%-ով աճել է: Ելնելով էլ դրանից կարող ենք փաստել, որ ուսումնասիրվող ժամանակաընթացքում ապրանքաշրջանառության ծավալներն աճել են մոտ 108.8%-ով կամ կրկնակի:

Ինչ վերաբերում է 2006-2011թթ. դեպի Վրաստան արտահանմանը, այն ունենալով տատանողական բնույթ, այնուամենայնիվ դրսևորել է աճի միտում, որը կազմել է 9.1%: Հատկանշական է, որ արտահանման ծավալների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2007թ.՝ միևնույն տարվա համեմատ աճելով մոտ 1.5 անգամ: 2005-2007թթ. արտահանման ծավալներն աճել են մոտ 1.8 անգամ, ինչը վկայում է այն մասին, որ չլինելով տարանցիկ երկիր և Վրաստանի համար չունենալով միջնորդության հնարավորություններ, ՀՀ-ին հաջողվել է վրացական շուկա դուրս բերել վերջինիս անհրաժեշտ հայկական ապրանքներ: Սակայն սկսած 2008թ. մինչև 2010թ. նկատվում է արտահանման ծավալների աստիճանական անկում, 2007թ. համեմատությամբ կրճատվելով մոտ 1.7 անգամ: Նշենք նաև, որ 2006-2011թթ. ընթացքում ՀՀ ընդհանուր արտահանման մեջ Վրաստանի տեսակարար կշիռը տատանվել է 4.6%-ից (2011թ.) մինչև 7.7%-ի (2008թ.) սահմաններում:

Անդրադառնալով Վրաստանից Հայաստան ներմուծման շարժընթացին, նշենք, որ ներմուծման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2011թ. կազմելով 60173.4 հազ. ԱՄՆ դոլար: Ընդ որում ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ Վրաստանի տեսակարար կշիռը այդ թվականին կազմել է 1.4%:

Ընդհանուր առմամբ, Վրաստանից ներմուծման ծավալները տարեցտարի գրանցել են կայուն աճի միտումներ՝ քննարկվող ժամանակահատվածում աճելով գրեթե 1.7 անգամ: Իհարկե, բացառություն է կազմում 2009թ., երբ ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատությամբ կրճատվեցին են 17.2%-ով, ինչը կապված էր համաշխարհային տնտեսությունում տիրող ճգնաժամային իրավիճակի հետ:

Երկու երկրների առևտրատնտեսական կապերի վերաբերյալ ամբողջական պատկերացում ստանալու նպատակով իրականացնենք Վրաստանի արտաքին առևտրի ծավալների վերլուծություն (աղյուսակ 2):

Ինչպես երևում է աղյուսակից, ի տարբերություն ՀՀ-ի, Վրաստանը քննարկվող ժամանակահատվածում մշտապես ունեցել է առևտրային հաշվեկշռի դրական հաշվեկշիռ, ինչն էլ տարեցտարի գրանցել է մեծ աճ, բացառությամբ 2009թ., երբ այն 51344.0 հազ. ԱՄՆ դոլարից դարձել է 47063.7 հազ. ԱՄՆ դոլար, նվազելով մոտ 8.3%-ով: 2010թ.-ից իրավիճակը շտկվել է: Ուսումնասիրվող ժամանակահատվածում առևտրային հաշվեկշռի դրական մնացորդի ամենամեծ ցուցանիշը գրանցվել է 2011թ.՝ կազմելով 163950.2 ԱՄՆ դոլար, ինչը 2010թ. համեմատ աճել է գրեթե 1.3 անգամ կամ 35.2%-ով:

Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները այս ընթացքում ևս գրանցել են աճի կայուն միտումներ, կրկին բացառությամբ 2009թ.-ի: Ընդհանուր առմամբ 2006-2011թթ. ընթացքում արտաքին ապրանքաշրջանառության ծավալներն աճել են շուրջ 2.4 անգամ: Հատկանշական է, որ 2006-2011թթ. ընթացքում Վրաստանի արտահանման մեջ Հայաստանի տեսակարար կշիռը տատանվել է 7.8%-ից /2009թ./ մինչև 10.1%-ի /2011թ./ սահմաններում: Նույն ընթացքում Վրաստանից Հայաստան արտահանման ծավալները, բացառությամբ 2009թ.-ի, /թերևս պայմանավորված վերևում նշված գործոններով/, դրսևորել են կայուն աճի միտումներ: Արտահանման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2011թ., կազմելով 223036.7 հազ. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 1.3 անգամ: 2006-2008թթ. դեպի ՀՀ արտահանման ծավալներն աճել են գրեթե 1.6 անգամ կամ մոտավորապես 67.7%-ով:

Աղյուսակ 2-ի տվյալների հիման վրա իրականացված հաշվարկները նաև ցույց են տալիս, որ 2006-2011թթ. ընթացքում Վրաստանի ներմուծման

Աղյուսակ 2.
Վրաստանի արտաքին առևտուրը ՀՀ-ի հետ 2006-2011 թթ.
(հազ. ԱՄՆ դոլար) [3, 241,243,245,247]

	2006	2007	2008	2009	2010	2011
Վրաստանի ընդհանուր արտահանումը	936374.6	1232110.5	1495345.2	1133345.2	1677472.1	2 189135.8
Վրաստանի արտահանումը դեպի ՀՀ	73602.0	110844.2	123422.0	88941.7	166754.3	223 036.7
Վրաստանի ընդհանուր ներմուծումը	3674832.4	5212150.2	6301540.3	4500244.1	5257122.4	7 057759.7
Վրաստանի ներմուծումը ՀՀ-ից	40337.8	59557.5	72078.0	41877.9	46136.7	59 086.5
ՀՀ-ի հետ արտա- քին ապրանքաշրջա- նառությունը	113939.8	170401.7	195499.9	130819.6	212891.0	282123.2
Առևտրային հաշվեկշիռը ՀՀ-ի հետ	33264.2	51286.7	51344.0	47063.7	120617.7	163950.2

մեջ ՀՀ տեսակարար կշիռը տատանվել է 0.83%-ից /2011թ./ մինչև 1.14%-ի /2007թ./ սահմաններում: Ընդհանուր առմամբ ՀՀ-ից ներմուծման ծավալները դրսևորում են աճի միտումներ, բացառությամբ 2009թ.-ի, երբ ներմուծման ծավալները էականորեն կրճատվել են, կազմելով 41877.9 հազ. ԱՄՆ դոլար: Այս ժամանակաընթացքում ներմուծման ծավալներն ավելացել են մոտ 1.5 անգամ: Այդքանով հանդերձ ՎՀ ներմուծման մեջ ՀՀ մասնաբաժինը մշտապես եղել է շատ փոքր եւ տատանողական: Հարկ ենք համարում նաև նշել, որ փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները ապրանքների ներմուծման և արտահանման առումով բավականին տարբերվում են Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալներից: Նման հակասությունները, կարծում ենք, պայմանավորված են երկու երկրների կողմից վիճակագրության վարման հաշվարկների տարբերությամբ և մեթոդիկայով:

Հետաքրքիր է նաև Հայաստան-Վրաստան առևտրային հարաբերությունների ուսումնասիրությունը ապրանքային հոսքերի կառուցվածքի տեսանկյունից, ինչը թույլ կտա պատկերացում կազմել հայ-վրացական առևտրային կապերի արդի մակարդակի, դրանց հիմնական միտումների և հետագա զարգացման հնարավոր ուղիների մասին:

Աղյուսակ 3-ում ներկայացված են Հայաստանից Վրաստան արտահանման, ինչպես նաև Վրաստանից Հայաստան ներմուծման կառուցվածքում նշանակալի տեսակարար կշիռ ունեցող հիմնական ապրանքախմբերը:

Սկսած 2008թ. ծավալների նվազման միտում է նկատվել «շաքար և հրուշակեղեն շաքարից» ապրանքախմբի գծով: Այս ապրանքախմբի ներմուծման ամենամեծ ծավալը գրանցվել է 2007թ.՝ 19894.8 հազ. ԱՄՆ դոլար, կազմելով Վրաստանից ներմուծման ծավալի գրեթե 43%-ը, ինչը 2008թ. կրճատվել է շուրջ երեք անգամ, իսկ հետագա տարիներին ներմուծման ծավալներ գրեթե չեն գրանցվել: Մինևույն ժամանակ սկսած 2008թ. ՀՀ-ից դեպի Վրաստան արտահանման կառուցվածքում նկատվում է այս ապրանքախմբի ծավալների նշանակալի ավելացում: 2011թ. «շաքար և հրուշակեղեն շաքարից» ապրանքախմբի արտահանման ծավալները կազմել են 2871.6 հազ. ԱՄՆ դոլար, 2006թ. համեմատությամբ աճելով շուրջ 62.4 անգամ, ինչը խոսում է այս ոլորտում հայրենական արտադրության ծա-

Աղյուսակ 3.
Հայաստան-Վրաստան արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքային հիմնական խմբերի (հազ. ԱՄՆ բոլար) [3, 54-55, 55-56, 68-70, 138-140, 142-144, 101-103]

	Ապրանքային խմբի անվանումը	2006	2007	2008	2009	2010	2011
Արտահանում							
	Ընդամենը	54648.8	87868.9	81813.6	52806.1	49035.2	61851.9
1	Մուրճ, թեյ և այլ համեմունքներ	7928.9	12702.7	12049.8	7077.8	3965.1	3397.0
2	Շաքար և հրուշակեղեն շաքարից	46.0	37.3	45.2	75.0	1493.7	2871.6
3	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	674.8	491.3	1088.5	791.0	1071.4	1890.2
4	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	231.1	451.9	483.9	1947.4	1457.1	2605.0
5	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	16336.0	30552.8	38256.7	8335.2	2745.2	6977.7
6	Դեղագործական մթերք	663.3	908.4	1219.1	1559.8	1893.5	2043.9
7	Պլաստզանգված և դրանից իրեր	2565.6	5233.4	4874.0	4452.9	5609.5	7157.6
8	Ապակի և ապակե իրեր	1790.4	5567.2	7946.9	9612.6	11140.3	9736.2
9	Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր	6902.8	18349.1	2412.0	2300.6	1981.1	4674.8

Ներմուծում											
		35462.4	46334.0	49379.40	40890.8	54349.6	60173.4				
1	Ընդամենը	30.1	602.1	1056.2	1453.4	1209.6	96.5				
2	Բանջարեղեն և այլ կերային արմատավորվածներ և երակատուղիներ	1725.8	5268.7	9821.2	5594.9	8279.3	5276.9				
3	Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատներ և այլ բոստանային մշակաբույսեր	11856.6	19894.8	6606.0	0.1	0.0	0.3				
4	Շաքար և հրուշակեղեն շաքարից	1616.1	2280.6	2972.9	2479.1	3508.5	2885.8				
5	Ոգելից և ոչ ոգելից ընկելիքներ և քացախ	713.8	3.4	4.6	525.6	1519.8	913.0				
6	Սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի ամսամակեր	295.6	618.3	843.9	1175.9	1090.4	1321.8				
7	Առ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	21.8	25.4	39.0	680.4	3204.9	5037.0				
8	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	1187.1	170.7	546.3	1508.8	1817.8	1293.2				
9	Անօդանավակա քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ	9523.7	4435.7	5658.0	5611.0	3102.8	5714.8				
10	Պարարտանյութեր	5239.87	6046.3	6360.6	10475.0	6975.1	2410.2				
11	Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	229.6	1305.3	3751.3	781.3	9673.6	10503.9				
12	Սև մետաղներ	111.2	27.0	1085.9	5394.0	6659.1	11965.7				
	Լոկոմոտիվներ, տրամվայներ, դրոմեդ մասեր										

վալների աճի մասին, ինչը, փաստորեն, հնարավորություն է տվել ոչ միայն կրճատելու ներմուծման ծավալները, այլև գրանցելու արտահանման ծավալների առումով խոստումնալից ցուցանիշներ:

Ինչ վերաբերում է «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբին. այն Հայաստանի արտահանման կառուցվածքում զգալի տեսակարար կշիռ ունի: Ապրանքախումբն արտահանման ծավալներով տարբեր տարիների զբաղեցրել է երկրորդից չորրորդ տեղերը: Հատկապես արտահանման կտրուկ աճ է գրանցվել 2007 և 2008թթ.: Սակայն, դեպի Վրաստան նշված ապրանքախմբի արտահանման ծավալները քննարկվող ժամանակահատվածում ունեցել են խիստ տատանողական բնույթ, գրանցելով ինչպես աճի, այնպես էլ նվազման միտումներ: 2011թ. այն կազմել է 1890.2 հազ. ԱՄՆ դոլար, ինչպես նաև դեպի Վրաստան ընդհանուր արտահանման 3.07%-ը, 2006թ. համեմատ ունենալով գրեթե եռակի աճ: Միաժամանակ այս ապրանքախմբի ներմուծման ծավալները նշանակալիորեն գերազանցել են արտահանմանը, և տարեցտարի գրանցել են աճի միտումներ: 2011թ. նշված ապրանքախմբի ներմուծման ծավալները, չնայած 2010թ. համեմատությամբ փոքր-ինչ նվազել են (2885.8 հազ. ԱՄՆ դոլար) կազմելով ընդհանուր ներմուծման 4.79%-ը, 2006թ. նույն ցուցանիշի համեմատ աճել են մոտ 1.7 անգամ:

Սա, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև վերջին տարիներին հայկական գինիների և հանքային ջրերի արտահանման ուղղությամբ որոշակի առաջընթաց է նկատվում, այնուամենայնիվ դրանք ցածր մրցունակություն ունեն վրացական շուկայում, հայկական գինիները զգալիորեն զիջում են վերջիններիս նաև իրենց որակական հատկանիշներով: Դրանից գատ, հայրենական արտադրողները դեռևս չեն կարողանում համապատասխան ծավալներ ապահովել: Մյուս կողմից էլ ներմուծման ծավալների ավելացումը կարելի է պայմանավորել նրանով, որ Վրաստանի գինու արտահանման տարեկան ծավալները գրեթե 14-19 անգամ գերազանցում են Հայաստանի համապատասխան ցուցանիշը:

Անցնելով «աղ, ծծումբ, հող և քար, սվադման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախմբի գծով շարժընթացի ուսումնասիրությանը, նշենք, որ արտահանման ծավալները էականորեն գերազանցում են ներմուծման ծավալներին: Այս ապրանքախմբի արտահանման ամենամեծ ծավալը

գրանցվել է 2008թ., երբ կազմել է 38256,7 հազ. ԱՄՆ դոլար, 2006թ. ցուցանիշի համեմատ աճելով մոտ 2,3 անգամ և կազմելով դեպի Վրաստան արտահանման ողջ ծավալի 46.7%-ը: Ցեմենտի արտահանման ծավալների զգալի աճի շնորհիվ այդ տարիներին ապրանքախումբը գլխավորում էր Վրաստան արտահանվող տեսականու անվանացանկը: Ընդ որում, Հայաստանում գոյություն ունի ցեմենտի արտադրության երկու տեսակ՝ չոր և թաց, որոնք բավականին մրցունակ են վրացական շուկայում: Հատկանշական է նաև, որ թաց ցեմենտի արտադրության ծախսումների գերակշիռ մասը կազմում են գազի վրա կատարված ծախսումները: Իսկ Հայաստանը, հանդիսանում է գազ ներկրող, ուստի գազի ներմուծման ծավալները և գները անմիջականորեն կարող են ազդել այս արտադրատեսակի հետագա արտահանման ծավալների վրա: 2009թ. ապրիլի 1-ից Հայաստանի համար ռուսական գազի գինը հազար խմ-ի համար համարժեք է եղել 154 ԱՄՆ դոլարի՝ մինչ այդ գործող 110 դոլարի փոխարեն: Ուստի պատահական չէ 2009թ.-ից սկսած նշված ապրանքախմբի գծով արտահանման ծավալների խիստ նվազումը: Այն 2010թ. կազմել է 2745.2 հազ. ԱՄՆ դոլար և արտահանման ծավալի ընդամենը 5.6%-ը: Չնայած ռուսական գազի հետագա թանկացումներին, 2011թ. այս ապրանքախմբի գծով արտահանման ծավալները կազմել են 6977.7 հազար ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 2.5 անգամ, ինչը փաստում է վրացական շուկայում այս ապրանքատեսակի նկատմամբ մեծ պահանջարկի առկայությունը: Ինչ վերաբերում է ներմուծմանը. գրանցվում են կայուն աճի միտումներ, իհարկե, փոքր ծավալներով: 2011թ. նշված ապրանքախմբի ներմուծման ծավալը կազմել է 1321.8 հազ. ԱՄՆ դոլար՝ 2006թ. համեմատությամբ աճելով մոտ 4.4 անգամ:

Դեպի Վրաստան արտահանման կառուցվածքում գերակայում են նաև հետևյալ ապրանքային խմբերը՝ «սուրճ, թեյ և այլ համեմունքներ», «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ», «դեղագործական մթերք», «պլաստզանգված և դրանից իրեր», «ապակի և ապակե իրեր», «վերգետնյա տրանսպորտի միջոցներ և դրանց մասեր»:

Արտահանման ծավալների աճի միտումներ են նկատվում «պլաստզանգված և դրանից իրեր» ապրանքախմբի գծով, որը 2011թ. կազմելով 7157.6 հազ. ԱՄՆ դոլար՝ 2006թ. համեմատությամբ աճել է մոտ 2.78 ան-

գամ և կազմել դեպի Վրաստան արտահանման մոտ 11.3%-ը: 2006թ. համեմատությամբ 2011թ. արտահանման ծավալների զգալի աճ է նկատվել նաև «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ» և «դեղագործական մթերք» ապրանքախմբերի գծով, որոնք չնայած արտահանման փոքր ծավալներին, այնուամենայնիվ աճել են համապատասխանաբար 11.2 և 3.08 անգամ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Վրաստանի ներքին շուկայում նշված ապրանքատեսակները բավականին մրցունակ են:

Արտահանման ծավալների կրճատում ենք նկատում «սուրճ, թեյ և այլ համեմունքներ», ինչպես նաև «վերգետնյա տրանսպորտի միջոցներ և դրանց մասեր» ապրանքախմբերի գծով, որոնք 2006թ. համեմատությամբ 2011թ. համապատասխանաբար նվազել են 2.3 և 1.5 անգամ: Չնայած ծավալների կրճատմանը, այդուհանդերձ «սուրճ, թեյ և այլ համեմունքներ» ապրանքախմբի ծավալները բավականին զգալի տեսակարար կշիռ ունեն, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այս ապրանքատեսակները ՀՀ են ներմուծվում այլ երկրներից և դրանց մեծ մասի արտադրության համար մեր երկրում բավարար պայմաններ չկան:

Դեպի Վրաստան արտահանման ընդհանուր ծավալում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի «ապակի և ապակե իրեր» ապրանքախումբը: 2006-2011թթ. ժամանակահատվածում այն տարեցտարի գրանցել է կայուն աճի ցուցանիշներ: Արտահանման ամենամեծ ծավալը գրանցվել է 2010թ.՝ կազմելով 11140.3 հազ. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատությամբ աճելով մոտ 15.8%-ով և կազմելով ընդհանուր արտահանման 22.7%-ը:

Անդրադառնալով Վրաստանից ներմուծվող ապրանքախմբերի ուսումնասիրությանը, պետք է նշել, որ ուսումնասիրվող ժամանակաընթացքում աղյուսակում բերված ապրանքախմբերից միայն «պարարտանյութեր» ապրանքախմբի գծով է նկատվում ներմուծման ծավալների կրճատում: 2011թ. այս ապրանքախմբի գծով ներմուծումը կազմել է 5714.8 հազ. ԱՄՆ դոլար, ինչը 2006թ. համեմատությամբ նվազել է մոտ 1.6 անգամ: Այս առումով ներմուծման ծավալների հետագա նվազեցման համար կարևոր քայլ կարող է հանդիսանալ Վանաձորի քիմիական գործարանի վերագործարկումը, որտեղ պարարտանյութերի արտադրության կազմակերպումը կարող է հանգեցնել ոչ միայն ներմուծման ծավալների հետագա կրճատման

նը, այլև անհրաժեշտության դեպքում նպաստավոր պայմաններ կստեղծի այս ապրանքախմբի գծով արտահանում կազմակերպելու համար:

Շարունակելով վերլուծությունը, նշենք, որ ներմուծման ծավալների խիստ տատանողական բնույթ է նկատվում «սև մետաղներ» ապրանքախմբի գծով: Այն, 2009թ. նախորդ տարվա համեմատությամբ կրճատվելով մոտ 4.8 անգամ, 2010թ. և 2011թ. գրանցել է ծավալների աննախադեպ ավելացում՝ կազմելով համապատասխանաբար 9673.6 և 10503.9 հազ. ԱՄՆ դոլար: 2010թ. այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ավելացել է մոտ 12.3 անգամ և կազմել 2010թ. Վրաստանից ընդհանուր ներմուծման մոտ 17.8%-ը, իսկ 2011թ. նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է գրեթե 1.1 անգամ:

Ներմուծման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունի «փայտ և փայտից իրեր, փայտածուխ» ապրանքախումբը: Այս ապրանքախմբի գծով ներմուծման ամենամեծ ծավալը գրանցվել 2009թ., երբ այն կազմել է 10475.0 հազ. ԱՄՆ դոլար, կազմելով Վրաստանի այդ թվականի ներմուծման մոտ 25.6%-ը: Այնուամենայնիվ սկսած 2010թ.-ից նկատվում է ծավալների նվազեցում, իսկ 2011թ. այս ապրանքախմբի ներմուծման ծավալները կազմել են 2410.2 հազ. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազելով մոտ 2.9 անգամ:

Այսպիսով, առևտրատնտեսական կապերի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ երկու երկրների միջև առևտրային կապերը կրում են իրավիճակային բնույթ և, համեմատական առավելությունների սկզբունքին համապատասխան, չեն նպաստում փոխշահավետ, կայուն և երկարաժամկետ փոխհարաբերությունների ձևավորմանը: Բացի այդ, երկրների միջև առևտրային շրջանառությունը հաճախ ներառում է նույնատիպ ապրանքների հակադիր հոսքեր, ունենալով զարգացող երկրներին բնորոշ հումքային ուղղվածություն: Այնպիսի ապրանքախմբեր, ինչպիսիք են «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», ունենալով հայրենական արտադրության լայն հնարավորություններ և մեծ ներուժ, զգալի տեսակարար կշիռ ունեն նաև ներմուծման կառուցվածքում:

Այս առումով առաջարկում ենք խիստ կարևորել նշված ապրանքատեսակների արտադրության գծով պետական հովանավորությունը, ինչ-

պես նաև գործունեության բարենպաստ պայմանների ստեղծումը, ինչը հնարավորություն կտա ոչ միայն ավելացնելու արտահանման ծավալները, այլև հնարավորինս բացառելու նման ապրանքատեսակների հակադիր հոսքերը ներմուծման կառուցվածքում:

Այնուամենայնիվ, առևտրատնտեսական կապերը ներկայումս հանդես են գալիս որպես երկու երկրների միջև տնտեսական համագործակցության առավել զարգացած բնագավառ և կրելով կայուն աճի միտումներ, առանցքային նշանակություն ունեն երկու երկրների տնտեսական կապերի ընդլայնման ու խորացման գործում:

Ուստի, կարծում ենք, որ ներկայումս գոյություն ունեցող ոչ սակագնային արգելքների հնարավորինս սահմանափակմամբ, ազատ և անարգել առևտրի կազմակերպման ճանապարհով, ինչպես նաև վերոնշյալ առաջարկությունների իրականացման դեպքում երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերը կշարունակեն կայունորեն աճել: Դա կնպաստի տնտեսությունների աշխուժացմանն ուղղված տնտեսական համագործակցությանն ու միջպետական և միջտարածաշրջանային համագործակցության հեռանկարային ուղղությունների զարգացմանը:

Առանցքային հասկացություններ. *տնտեսական կապեր, առևտրային հարաբերություններ, արտաքին առևտուր, տնտեսական համագործակցություն, արտահանում, ներմուծում, ապրանքաշրջանառություն, առևտրային հաշվեկշիռ, հաշվեմնացորդ, ապրանքատեսակ, արտադրություն:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Մարկոսյան, Գ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Երևան, 2002, 431 էջ:
2. Հայաստանի Վիճակագրական տարեգիրք 2010, 608 էջ, Հայաստանի Վիճակագրական տարեգիրք 2011, 595 էջ,
3. Statistical Yearbook of Georgia 2010, 299 p., URL: http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=137&lang=eng /մուտքի ամսաթիվ 10.06.2012/

4. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրը 2006թ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2007, 226 էջ, ՀՀ արտաքին առևտուրը 2007թ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, 242 էջ, ՀՀ արտաքին առևտուրը 2008թ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2009, 313 էջ, ՀՀ արտաքին առևտուրը 2009թ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2010, 327 էջ, ՀՀ արտաքին առևտուրը 2010թ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2011, 327 էջ, ՀՀ արտաքին առևտուրը 2011թ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2012, 229 էջ:

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ АРМЯНО- ГРУЗИНСКИХ ТОРГОВО ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ

М.С. Касимян

Резюме

В настоящей статье представлено необходимость армяно-грузинского экономического сотрудничества и неотложность дальнейшего развития и расширения экономических связей между этими странами. В нем говорится об основных направлениях экономического сотрудничества и перечислены основные факторы, которые способствуют развитию этих отношений.. Особенно большое внимание обращено на исследование и на анализе внешнеторговых отношений. Она также включает в себе статистический анализ взаимной торговли за последние годы и дает возможные пути дальнейшего развития этих отношений.

Ключевые понятия: *экономические отношения, торговые отношения, внешняя торговля, экономическое сотрудничество, экспорт, импорт, товарооборот, торговый баланс, сальдо, продукт, производство.*

CURRENT TENDENCIES OF DEVELOPMENT OF ARMENIAN-GEORGIAN ECONOMIC RELATIONS

M.S. Kasimyan

Summary

This article presents the necessity of the Armenian-Georgian economic cooperation and the urgency of further development and expansion of economic relations between these two countries. It refers to the main areas of economic cooperation and there are listed the main factors that contribute the development of these relations.. Particular attention is paid to the research and analysis of foreign trade relations. It also includes a statistical analysis of the bilateral trade in recent years and gives the possible ways of further development of these relations.

Key concepts: *economic relations, trade relations, foreign trade, economic cooperation, export, import, trade turnover, trade balance, balance, product, production.*

ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ա.Ս. Մխիթարյան

Վարկունակության գնահատումն իրենից ներկայացնում է վարկավորման գործընթացի բաղկացուցիչ փուլերից մեկը, ինչի գրագետ կազմակերպումը մեծապես անդրադառնում է ողջ գործընթացի արդյունավետության, վարկային ռիսկի զսպման և վերջին հաշվով՝ բանկի եկամտաբեր գործունեության վրա: Վարկունակությունն իրենից ներկայացնում է վարկառուի՝ վարկը մարելու և դրա դիմաց հաշվարկված տոկոսները վճարելու իրավական և ֆինանսական հնարավորությունների ամբողջությունը:

Վարկունակությունը վարկային գործարքի ռիսկայնության գնահատականն է, որը տրվում է բանկի կողմից մինչև վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելը և հնարավորություն է տալիս կանխատեսել վարկի ժամանակին վերադարձը և արդյունավետ օգտագործումը [1]:

Հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգում առկա վարկերի մեջ խնդրահարույց վարկերի տեսակարար կշռի 2.4% ցուցանիշը և իմանալով, որ խնդրահարույց վարկերի առաջացման հիմնական պատճառներից է հաճախորդի ի սկզբանե վարկունակության ոչ ճիշտ վերլուծությունը, վարկունակության գնահատման մեթոդաբանությունների ուսումնասիրությունը բավական արդիական թեմա է [2]: Մյուս կողմից՝ բանկերի առողջ վարկային պորտֆելը ուղղակիորեն ազդում է տնտեսության զարգացման վրա, վարկերի տրամադրման գործընթացի բարելավումը թույլ է տալիս խուսափել բանկերին անեկամտաբեր հաճախորդներից, ինչպես նաև խուսափել վարկավորելու այն հաճախորդներին, որոնց ֆինանսական ցուցանիշները թույլ չեն տալիս նոր փոխառություն վերցնելու:

Ներկայումս ՀՀ բանկերը չունեն միասնական վարկունակության գնահատման մեթոդաբանություն, կամ առանձին դրույթներ, որոնք կարող են օգտագործել հաճախորդի վարկունակությունը գնահատելու համար: Այդ իսկ պատճառով ներկայացնում են զարգացած երկրների վարկունակության գնահատման մեթոդներ, մասնավորապես ԱՄՆ-ի և Ֆրանսիայի վարկունակության գնահատման կիրառվող մեթոդաբանությունները:

✓ **ԱՄՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ «գնահատման մեթոդաբանությունը»**

Ամերիկյան մի շարք տնտեսագետներ վարկունակության գնահատման համակարգը բնորոշում են՝ ելնելով հաշվետվողականության մնացորդային ցուցանիշներից: Ամերիկյան առևտրային բանկերն օգտագործում են հիմնական ցուցանիշների 4 խումբ՝

- կազմակերպության իրացվելիություն
- կապիտալի շրջանառություն
- միջոցների ներգրավում
- շահութաբերության ցուցանիշներ:

Առաջին խմբին են դասվում իրացվելիության $/Q_p/$ և $/Q_d/$ մարման գործակիցները:

Իրացվելիության գործակիցը $/Q_p/$ - առավել իրացվելի միջոցների և երկարաժամկետ պարտավորությունների հարաբերակցությունն է: Իրացվելի միջոցները ձևավորվում են կարճաժամկետ դեբիտորական պարտքից և դրամական միջոցներից: Փոխառության պարտավորությունները ներառում են կարճաժամկետ վարկերը, չմարված պահանջները և այլ կարճաժամկետ պարտավորություններ: Q_p -ը կանխատեսում է վարկառուի ունակությունը սահմանված ժամկետում և օպերատիվ մարել պարտքը՝ հիմք ընդունելով շրջանառու կապիտալի գնահատումը: Որքան բարձր է Q_p , այնքան բարձր է վարկունակությունը: Եթե Q_p գործակիցը ցածր է 1.2 ցուցանիշից, ապա վարկառուի իրացվելիության մակարդակը ցածր է և տվյալ վարկառուին նպատակահարմար չէ վարկավորել:

Մարման գործակիցը $/Q_d/$ - շրջանառու կապիտալի և կարճաժամկետ փոխառության պարտավորությունների հարաբերակցությունն է: Q_d ցույց է տալիս վարկավորման սահմանագիծը, հաճախորդի մոտ վարկի մարման համար անհրաժեշտ բոլոր տեսակի միջոցների առկայությունը: Եթե $Q_d < 1$ -ից, ապա վարկավորման սահմանները խախտվել են, վարկառուին այլևս չի կարելի տրամադրել վարկ, քանի որ նա չի հանդիսանում վարկունակ [3]:

Երկրորդ խմբին դասվող կապիտալի շրջանառության ցուցանիշները արտացոլում են շրջանառու ակտիվների որակը և կարող են կիրառվել Q_d աճի գնահատման համար: Օրինակ՝ այս գործակցի նշանակության աճը պահուստների հաշվին և դրանց շրջանառության միաժամանակյա

դանդադեցումը չի խոսում վարկառուի վարկունակության բարձրացման մասին:

Ներգրավման գործակիցը / Q_{α} /- գնահատման ցուցանիշների երրորդ խումբն է: Սրանք արտահայտում են բոլոր փոխառնական պարտավորությունների հարաբերակցությունը ակտիվների ընդհանուր գումարին կամ հիմնական կապիտալին, ինչը ցույց է տալիս կազմակերպության կախվածությունը փոխառու միջոցներից: Որքան բարձր է այս գործակիցը, այնքան վատ է վարկառուի վարկունակությունը [4]: Եթե Q_{α} գործակիցը ցածր է 0.6 ցուցանիշից, ապա վարկառուի մոտ նկատվում է փոխառու միջոցների բարձր մակարդակ և տվյալ վարկառուին նպատակահարմար չէ վարկավորել:

Ցուցանիշների երրորդ խմբի հետ սերտորեն կապված են չորրորդ խմբի ցուցանիշները, որոնք բնորոշում են կազմակերպության եկամտաբերությունը: Դրանց թվին են դասվում եկամուտներում շահույթի մասնաբաժինը, շահույթի նորման ակտիվների նկատմամբ, շահույթի նորման բաժնետոմսերի նկատմամբ: Եթե կազմակերպության կախվածությունը փոխառու միջոցներից աճում է, ապա Q_{α} -ով չափվող վարկունակության անկումը կարող է փոխհատուցվել շահութաբերության աճով:

Նման բնույթի տեղեկություն ձեռք բերելու համար վարկային հաստատությանը անհրաժեշտ են կազմակերպության ֆինանսական վիճակը բնութագրող տեղեկություններ: Դա պայմանավորված է ֆինանսական հաշվետվությունների, անկանխատեսելի իրավիճակների առաջացման հնարավորությունների և ապահովագրության հետ կապված խնդիրների ուսումնասիրման անհրաժեշտությամբ:

Վարկառուի վարկունակության մասին տեղեկությունների աղբյուր կարող են հանդիսանալ՝

- դիմումատուների հետ բանակցությունների արդյունքները,
- տեղում կատարված ստուգումները,
- ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը,
- արտաքին աղբյուրները:

Չնայած մոդելի կիրառելիությանը և հեղինակությանը, այնուհանդերձ միայն իրացվելիության, կապիտալի շրջանառության, միջոցների ներգրավման և շահութաբերության ցուցանիշների հաշվարկումը հնարա-

վորություն չի տալիս վարկատու կազմակերպությանը ստանալ վարկառուի վարկունակության և վճարունակության մասին ամփոփ տեղեկատվություն:

✓ Վարկառուի վարկունակության գնահատման համակարգը՝ հիմնված փորձագիտական գնահատականների և վարկի օգտագործման տնտեսական արդյունքների կանխատեսումների վրա

Փորձագիտական վերլուծության ժամանակ բանկը հիմնվում է ընդհանուր տնտեսական մոտեցման վրա, այսինքն՝ բանկերը վերլուծում են տեղեկատվությունը բանկային պահանջներին համապատասխան: Այսպիսի վերլուծությունը ենթադրում է հաճախորդի անհատական հատկանիշների և ֆինանսական վիճակի հավասարակշռված գնահատական:

Միջազգային պրակտիկայում այս մեթոդին մեծ ուշադրություն են դարձնում, զարգացնում են համապատասխան մոնիտորինգային ցանց, վերլուծվում են վարկառուների վարկային պատմությունները:

Այսպիսով, ԱՄՆ-ում վարկային մասնագետը գրեթե միշտ հարցում է կատարում հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ տեղական կամ տարածաշրջանային վարկային բյուրո: ԱՄՆ-ում գործում են ավելի քան երկու հազար վարկային բյուրոներ, որոնք տիրապետում են վարկառուների վարկային պատմության և վարկանիշի մասին ինֆորմացիաներին:

✓ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիական առևտրային բանկերի կողմից հաճախորդների վարկունակության գնահատումը ներառում է երեք բաժին՝

- իրավաբանական անձի գնահատում և նրա հաշվեկշռի, ինչպես նաև այլ հաշվետվությունների վերլուծություն,
- հաճախորդների վարկունակության գնահատում առևտրային բանկերի կողմից ընդունված առանձին մեթոդաբանությամբ,
- վարկունակության գնահատման համար ֆրանսիական բանկի քատադարանի տվյալների օգտագործում:

Իրավաբանական անձի գնահատման ժամանակ վարկային հաստատությունը օգտագործում է հետևյալ տվյալները՝

- կազմակերպության գործունեության բնույթն ու տևականությունը,
- արտադրական գործունեությունը, որտեղ առանձնացվում են արտադրական և աշխատանքային ռեսուրսները (արտադրական ռեսուրսները ամորտիզացիայի և ամորտիզացվող միջոցների հարաբերակցությունն է, ներդրումների մակարդակը, իսկ աշխատանքային ռեսուրսները՝ ղեկավարի կրթությունը, իրավունակությունն ու տարիքն են, հետնորդների առկայությունը, աշխատատեղերում ղեկավարների շարժը, աշխատակազմի կառուցվածքը, անգործության ցուցանիշները, աշխատանքի գնահատման և ավելացված արժեքի հարաբերակցությունը)[5],

- ֆինանսական ռեսուրսները,
- տնտեսական միջավայրը, այսինքն արտադրանքը ինչ կենսափուլում է գտնվում, արդյոք կազմակերպությունը մոնոպոլ արտադրող է, մրցակցության պայմանները, կազմակերպության հիմնական արտադրանքի շուկայի զարգացման փուլը, կազմակերպության առևտրային քաղաքականությունը, մարկետինգային հնարքների և եղանակների տիրապետման մակարդակը:

Վերլուծության ժամանակ հաշվեկշռի ակտիվներում առանձնացվում են երեք բաղկացուցիչ մասեր՝

- սպակենտրոնացված ակտիվներ,
- շրջանառու միջոցներ (պահուստ, դեբիտորներ, այլ),
- դրամի առկայություն (դրամական միջոցներ դրամարկղում, գումար բանկային հաշվեհամարին, արժեթղթեր):

Հաշվեկշիռը և այլ հաշվետվությունները կիրառվում են նախ մնացորդային ցուցանիշների հարաբերակցության գնահատման համար, ինչպես նաև վարկունակության գործակցի հաշվարկի համար՝ շրջանառու ցուցանիշների հիման վրա: Վերլուծության առարկա են հանդիսանում այնպիսի համադրություններ, ինչպիսիք են երկարաժամկետ պարտավորությունների և սեփական միջոցների հարաբերակցությունը, սեփական ռեսուրսների և ակտիվների գումարի համադրությունը, ծախսերի և կորուստների դինամիկայի և արտադրանքի աճի տեմպերի համեմատությունը և այլն: Կազմակերպության այս հաշվետվությունները համադրվում են համախառն հաշվեկշռի տվյալների հետ: Հաշվեկշռի տվյալների վերլուծության ուղղություններից է բանկային ռիսկի սահմանումը:

Դրամական միջոցների վիճակի ցուցանիշները գնահատվում են՝ հաշվի առնելով կազմակերպության զարգացման մակարդակը, նրա արդյունավետությունը և շրջանառու միջոցների անհրաժեշտությունը: Վերջինս որոշվում է՝ հիմնվելով պահուստում վերջնական մնացորդային արտադրանքի շրջանառության ցուցանիշների, ինչպես նաև մատակարարների հետ հաշիվների մարման ժամկետների վրա:

Վարկային հաստատության կողմից որպես հաճախորդի վարկունակության գնահատման մասնավոր մեթոդիկա կարելի է դիտարկել Credit Lyonnaise բանկի մեթոդաբանությունը: Այն իրենից ներկայացնում է գնահատման համակարգ, որը հիմնված է հինգ գործակիցների վրա, որոնք էլ իրենց հերթին որոշում են համախառն գործող եկամուտի (ՀԳԵ), ֆինանսական ծախսերի (ՖԾ), ներդրումների (Ն), երկարաժամկետ պարտավորությունների (ԵՊ) և լրացուցիչ արժեքի մեկ միավորի մնացորդի (ԼԱ) մակարդակը:

$$\alpha_1 = \frac{ՀԳԵ}{ԼԱ} \quad \alpha_2 = \frac{ՖԾ}{ԼԱ} \quad \alpha_3 = \frac{Ն}{ԼԱ} \quad \alpha_4 = \frac{ԵՊ}{ԼԱ} \quad \alpha_5 = \frac{մնացորդ}{շրջանառություն}$$

Ցուցանիշներից յուրաքանչյուրը գնահատվում է չորս բալային սանդղակով և ընդհանուր արդյունքը նույնպես սահմանվում է բալերով: Բալերի գումարը խոսում է հաճախորդի վարկունակության մասին:

Իրավաբանական անձի վարկունակության մակարդակը որոշելու համար օգտագործում են նաև Ֆրանսիական բանկի քարտադարանի տվյալները: Այս քարտադարանն ունի չորս բաժին:

Առաջին բաժնում կազմակերպությունները բաժանվում են տասը խմբի՝ կախված հաշվեկշռի ակտիվի չափից, և յուրաքանչյուր խմբին կցվում են Ա-ից մինչև Ի նիշերը:

Երկրորդ բաժինը վարկի գնանշման բաժինն է, ենթադրվող վստահությունը կազմակերպության նկատմամբ: Այն հիմնվում է ֆինանսական վիճակի և եկամտաբերության ուսումնասիրման վրա, ինչպես նաև կազմակերպության ղեկավարների և կապիտալի գնահատականի վրա: Վարկային գնանշումը բաժանում է հաճախորդներին յոթ խմբի, որոնք համարակալվում են 0-ից մինչև 6 համարներով:

Երրորդ բաժինը դասակարգում է հաճախորդներին ըստ վերջիններիս

վճարունակության: Ֆրանսիական բանկը գրանցում է չվճարման բոլոր դեպքերը և դրանով պայմանավորված՝ դասակարգում վարկային հաստատությունների հաճախորդներին երեք խմբի:

Չորրորդ բաժինը հաճախորդներին բաժանում է երկու խմբի՝ իրավաբանական անձինք, որոնց արժեթղթերը կարող են վերահաշվառվել Ֆրանսիական բանկում, և որոնց արժեթղթերը չեն կարող հաշվառվել: Վարկառուի վարկունակության խմբի որոշման հիմքում ցուցանիշների մակարդակն է և դրանց վարկանիշը:

Միջին մեծության մակարդակի ցուցանիշներն ու գործակիցները հիմք են հանդիսանում վարկառուին դասելու II խմբին, միջինից բարձրի դեպքում՝ I և միջինից ցածրի դեպքում՝ III խմբին:

Ընդհանուր առմամբ, ցուցանիշային վարկանիշն ու նշանակությունը սահմանվում են անհատապես յուրաքանչյուր վարկառուի համար՝ կախված տվյալ վարկային հաստատության քաղաքականությունից, հաճախորդի առանձնահատկություններից, նրա հաշվեկշռի իրացվելիությունից, վարկային շուկայի իրադրությունից: Օրինակ՝ կարճաժամկետ ռեսուրսների մեծ չափաբաժինը, վարկի մարման ժամկետի խախտման առկայությունը և մատակարարներին չվճարելը մեծացնում են իրացվելիության գործակցի դերը, որը որոշում է դրամական միջոցների օպերատիվ տնօրինման կազմակերպության ունակությունը:

Վարկունակության ընդհանուր գնահատականը տրվում է բալերով: I դասը շնորհվում է 100-150 բալի դեպքում, II-ը՝ 151-250, իսկ III-ը՝ 251-300 բալերի դեպքում:

Վարկային հաստատության հաճախորդի վարկունակության գնահատման ժամանակ խորհուրդ է տրվում կիրառել ոչ միայն հիմնական, այլև լրացուցիչ ցուցանիշներ: Դրանց թվում կարող են լինել այնպիսի ցուցանիշներ, որոնք բնորոշում են հիմնական և շրջանառու ֆոնդերի շրջապտույտը, իրացվելի ակտիվների չափաբաժինը շրջանառու միջոցների ընդհանուր գումարում կամ առաջին դասի իրացվելի ակտիվների հարաբերակցությունը պարտքերին, ժամկետանց վճարումների մակարդակը, արտադրական պոտենցիալի արդյունավետությունը, գործընկերների եկամտաբերությունը և շահույթը (օրինակ՝ պատվիրատուի վարկունակությունը), շահույթի հավասարաչափ բաշխումը և այլն [7]:

✓ **Հաճախորդների վարկունակության գնահատման բալային (սքորինգային) համակարգը**

Գնահատման բալային (սքորինգային) համակարգը ստեղծվում է բանկերի կողմից հիմնված վարկունակության գործոնների վերլուծության վրա: Այս համակարգը օգտագործում է արդեն հավաքագրված «լավ», «վստահելի» ու «անհաջող» վարկերի տվյալները, ինչը հնարավորություն է տալիս որոշել վարկառուի ռեյտինգային մակարդակը:

Այս համակարգը ավելի արդյունավետ ու տնտեսագիտորեն հիմնավորված որոշումների կայացման մեթոդ է, քան փորձագիտական գնահատականը [7]:

Օրինակ, Ֆրանսիայում ֆիզիկական անձի վարկունակությունը գնահատվում է բալային (սքորինգային) համակարգով: Ծրագիրը, որը որոշում է վարկի տրամադրման նպատակայնությունը և պայմանները, բաղկացած է երեք տեղեկատվական բաժիններից՝ վարկի մասին, հաճախորդի մասին և նրա ֆինանսական վիճակի մասին:

Առաջին բաժնում մուտքագրվում են բանկի աշխատակցի տվյալները, ով տրամադրելու է վարկը, հաճախորդի ֆայլի համարը, գործակալության անունը, վարկի տեսակը և գումարը, մարման հաճախականությունը, տոկոսադրույքը (առանց ապահովագրական վճարի), վարկի տրամադրման ամսաթիվը, ամսվա այն օրը, որ հաճախորդը ցանկանում է կատարել մարումները, ապահովագրության անհրաժեշտությունը, վարկի ամսական մարման մեծությունը (ներառյալ՝ ապահովագրական վճարը, եթե առկա է), տոկոսների ընդհանուր չափը և ապահովագրական վճարումները, որ պետք է վճարվեն բանկին:

Երկրորդ բաժնում մուտքագրվում են հաճախորդի մասին տվյալները՝ մասնագիտությունը, նրա որոշակի սոցիալական խմբի պատկանելությունը, գործատուի մասին տվյալները, տարեկան զուտ եկամուտը, տարեկան ծախսերը և աշխատանքային փորձը:

Երրորդ բաժինը՝ հաճախորդի ֆինանսական դրությունը, ներառում է հաճախորդի ընթացիկ և խնայողական հաշիվների մնացորդների մասին տվյալները, ինչպես նաև եկամուտների ու ծախսերի համադրությունը:

Գնահատման բալային համակարգերը ունեն անառարկելի առա-

վելություն՝ թույլ են տալիս արագ և աշխատանքի մինիմալ ծախսերով վերլուծել մեծ ծավալի վարկային դիմումներ՝ այդպիսով կրճատելով գործառնական ծախսերը: Բացի դրանից, այդ համակարգերը իրենցից ներկայացնում են դիմումների գնահատման առավել արդյունավետ մեթոդ, այսինքն՝ դրանք կարող են օգտագործել նույնիսկ քիչ աշխատանքային փորձ ունեցող վարկային մասնագետները: Դա թույլ է տալիս նվազեցնել տրամադրված անհուսալի վարկերի կորուստները:

✓ Դ. ԴՅՈՒՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴ

Ֆիզիկական անձանց վարկունակության գնահատման մեթոդաբանություն է մշակել ամերիկացի տնտեսագետ ԴՅՈՒՐԱՆը դեռևս 1940-ական թվականներին: Մեթոդի հեղինակը նշում է, որ առաջարկված մոտեցումը կարող է օգնել գնահատել սովորական վարկառուի հուսալիությունը, սակայն առանձնահատուկ դեպքերում մեթոդի կանխատեսումների վրա հենվել չի կարելի:

Դ. ԴՅՈՒՐԱՆը իր հետազոտության մեջ՝ «Ֆիզիկական անձանց տարածամկետ ֆինանսավորման ռիսկային գործոնները» (անգլ.՝ Risk Elements in Consumer Installment Financing), օգտագործել է 7200 հաճախորդների «լավ» և «վատ» վարկային պատմությունները, որոնք տրամադրել էին 37 ընկերություններ: Այս հետազոտությունը հեղինակը կատարել է 1937 թ.-ին՝ ԱՄՆ-ի մեծ դեպրեսիայի ժամանակ:

Դ. ԴՅՈՒՐԱՆը իր աշխատության մեջ օգտագործել է բնութագրերի բացահայտման համար chi-square ցուցանիշները, որոնք զգալիորեն տարբերակում էին «վատ» ու «լավ» հաճախորդներին: Հետագայում հեղինակի կողմից մշակվեց արդյունավետության ինդեքսը, որպեսզի ցույց տար, թե ինչքան արդյունավետ է գործում տվյալ բնութագիրը «լավ» ու «վատ» հաճախորդների տարբերակման համար:

ԴՅՈՒՐԱՆը բացահայտել է գործոնների խումբ, որը թույլ է տալիս որոշել վարկային ռիսկի աստիճանը սպառողական վարկեր տրամադրելիս: Նա միավորները հաշվարկելիս օգտագործել է հետևյալ գործակիցները.

Աղյուսակ 1.

Դյուրանի վարկունակության գնահատման մեթոդի գործակիցները

1.	Տարիքը	0.001 բալ՝ 20 տարուց ավելի յուրաքանչյուր տարվա համար	Առավելագույնը՝ 0.3 բալ
2.	Սեռը	կին՝ 0.4, տղամարդ՝ 0	
3.	Բնակության ժամկետը	0.042 բալ՝ տվյալ տեղանքում բնակության յուրաքանչյուր տարվա դիմաց	Առավելագույնը՝ 0.42 բալ
4.	Մասնագիտությունը	0.55 բալ՝ ցածր ռիսկով, 0 բալ՝ բարձր ռիսկով, ՝ 0.16 մյուս մասնագիտությունների գծով:	
5.	Ճյուղում աշխատանքը	0.21 բալ՝ հանրային հատվածի կազմակերպություններում, պետական հիմնարկություններում, բանկերում, բրոքերային ընկերություններում աշխատանքի դիմաց:	
6.	Զբաղվածությունը	0.059 բալ՝ տվյալ կազմակերպությունում աշխատանքի յուրաքանչյուր տարվա դիմաց:	Առավելագույնը՝ 0.59 բալ
7.	Ֆինանսական ցուցանիշներ	0.45 բալ՝ բանկային հաշվի առկայության համար, 0.35 բալ՝ անշարժ գույքի տիրապետելու, 0.19 բալ՝ կյանքի ապահովագրության պոլիսի առկայության դեպքում	

Կիրառելով աղյուսակ 1-ում նշված գործակիցները՝ Դյուրանը որոշել է այն սահմանը՝ 1.25 բալ, որով բաժանվում են «լավ» և «վատ» վարկառուները: Հաճախորդը, որը հավաքում է 1.25 բալից ավելի, կարող է գտնվել չափավոր ռիսկի խմբում, իսկ 1.25 բալից քիչ հավաքողը համարվում է բանկի համար ոչ ցանկալի:

Ներկայումս Դյուրանի մեթոդը լայն տարածում է գտել ողջ աշխարհում վարկունակության գնահատման գործում: Այն կիրառվում է նաև ՀՀ որոշ առևտրային բանկերի կողմից:

Մոդելի առավելությունը փաստացի և վիճակագրական տվյալների

հիման վրա կազմված գնահատումն է, այսինքն այն կրում է խիստ սուբյեկտիվ բնույթ և տալիս հաճախորդի վարկունակության վերաբերյալ մեկ գնահատական: Նմանատիպ մոդել արդեն կիրառվում է ՀՀ բանկային համակարգում, իսկ մասնագիտացված սքորինգային ծառայություն մատուցում է «ԱԲՌԱ քրեդիտ ռեփորթինգ» ընկերության կողմից: ՀՀ-ում գործող ԱԲՌԱ վարկային բյուրոն առաջարկում է վարկառուների վարկարժանության գնահատման սքորինգային համակարգ, որը կոչվում է «ԱԲՌԱ սքոր»: Մոդելի թերությունը սուբյեկտիվության բացարձակ բացակայությունն է, ինչը թույլ չի տալիս վարկային մասնագետին ճկունություն դրսևորել և բացահայտել այնպիսի պայմաններ, որոնք կարող են անդրադառնալ վարկառուի հետագայում վարկի սպասարկման վրա:

✓ **ՌԳ առևտրային բանկերի կողմից կիրառվող վարկունակության գնահատման մեթոդ**

Ներկայացնենք վարկային սքորինգի ևս մեկ օրինակ, որը առավել տարածված կիրառություն ունի ռուսական բանկերում: Այն հիմնված է գնահատման երկմակարդակ համակարգի վրա:

Առաջին փուլում բանկի աշխատակիցը առաջարկում է հաճախորդին լրացնել թեստ-անկետա: Թեստ-անկետան օգտագործվում է հաճախորդի նախնական գնահատման համար: Թեստը լրացնելիս հաճախորդից չեն պահանջվում անձնագրի տվյալները, այլ միայն ընդհանուր տեղեկություններ նրա մասին՝ զբաղվածությունը, ունեցվածքը, եկամուտները և ծախսերը [8]: Թեստ-անկետայի լրացման արդյունքում հաշվվում է հաճախորդի հավաքած բալերը և կազմվում է հաշվետվություն: Եթե հավաքած բալերը 30-ից ցածր են, ապա հաշվետվության մեջ նշվում է, որը հաճախորդը հնարավորություն չունի վարկ վերցնելու:

Ֆիզիկական անձի համապարփակ վարկային վերլուծության հաջորդ քայլը հանդիսանում է նրան տրամադրվող վարկի որակական գնահատականը:

Ֆիզիկական անձանց գնահատում են հետևյալ վարկանիշներով՝

- հաճախորդի բնութագիրը,
- հաճախորդի ֆինանսական հնարավորությունները,
- հաճախորդի չգրավադրված սեփականության բավարար լինելը,

- վարկի ապահովությունը,
- վարկավորման պայմանները:

Յուրաքանչյուր վարկանիշ ներառում է ցուցանիշներ, որոնք ձևավորում են վերջնական արդյունքները: Յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվում է բալերով. վարկանշի գնահատականը հավասար է ցուցանիշների գնահատականների գումարին: Վարկի որակական գնահատականը հավասար է բոլոր վարկանիշների գումարին:

Այսպիսով, հաճախորդի վարկունակության գնահատումը հանդիսանում է վարկային ռիսկի նվազեցման կարևորագույն մեթոդներից, քանի որ թույլ է տալիս խուսափել ռիսկերից դեռևս վարկային գործը ուսումնասիրելու ժամանակ: Օրեցոր վարկունակության գնահատման մեջ ավելի է կարևորվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են դրական վարկային պատմությունը, փոխառուի գործարար բնութագիրը, նրա ֆինանսական հոսքերը: Տարբեր զարգացած երկրների վարկունակության մեթոդաբանությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտա տեղական բանկերին բարելավել սեփական գնահատման մեթոդները և ունենալ բարձրորակ վարկային պորտֆել: Բացի այդ, Հայաստանում միջազգային վարկունակության գնահատման մեթոդաբանության կիրառումը կամ միջազգային լավագույն փորձի հիման վրա տեղական բանկերի համար վարկունակության գնահատման ուղեցույցը կազմի վարկատու կազմակերպությունների վարկային պորտֆելի որակի բարձրացմանը, ինչը ուղղակիորեն կհանգեցնի վարկավորման շուկայում տոկոսադրույքների նվազեցմանը և վարկավորման գործընթացի մեղմացմանը:

Առանցքային հասկացություններ. *բանկ, խնդրահարույց վարկ, գնահատման մեթոդաբանություն, վարկունակություն:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բանկային գործ» գլխավոր խմբագիր՝ Բագրատ Ասատրյան «Սարվարդ Հրատ», 2004 թ., էջ 313:
2. ՀՀ կենտրոնական բանկի բանբեր, 2012 թ., առաջին եռամսյակ, էջ 25:
3. Лаврушин О.И. Банковское дело. — М.: Финансы и статистика, 1999. - С. 67.

4. Лаврушин О.И. Банковское дело. – М.: Финансы и статистика, 1999. – С. 73.
5. Москвин В. Защита системы кредитования в коммерческом банке. – М.: / Бизнес и банки, 1999. – С. 105.
6. Ендовицкий Д.А., Бочарова И.В. «Анализ и оценка кредитоспособности заемщика» – «КноРус», 2008.
7. Колесников В.И. Банковское дело. – М.: Финансы и статистика, 2000. – С. 58.
8. Кушуев А.А. Показатели платежеспособности и ликвидности в оценке кредитоспособности заемщика // Деньгикредит, № 11, 2008. С. 43-45.
9. Тарасов В.И. Деньги, кредит, банки. – Минск: Мисанта, 1999. – С. 154.
10. Eric Lamarque “Management de la banque”, Pearson Editeur, 2011, 288 pages
11. Ս. Բագրատյան «Բանկային գործի հիմունքներ», -Եր., «Սարվանդ չրատ», 2004 թ., 720 էջ:
12. Լ.Հ. Բաղանյան «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» դասագիրք, Եր., «Մուս» ՍՊԸ, 2010 թ., 586 էջ:
13. ՀՀ կենտրոնարանի բանկի բանքեր, 2012 թ.:
14. www.cba.am

МЕЖДУНАРОДНЫЕ МЕТОДИКИ ОЦЕНКИ КРЕДИТОСПОСОБНОСТИ

А.С. Мхитарян

Резюме

В настоящее время не существует единой отечественной практики и универсальной методологии для оценки кредитоспособности заемщика. Его образование трудно, потому что оценки кредитного качества включает в себя анализ широкого спектра количественных и качественных показателей. Между тем, развитие и совершенствование собственной системы оценки кредитоспособности клиентов является важной задачей каждой кредитной организации, которая направлена на работу с стабильным и надежным партнером.

Ключевые понятия: банк, проблемные кредиты, методология оценки, кредитоспособность.

INTERNATIONAL CREDITWORTHINESS ASSESSMENT METHODOLOGIES

A.S. Mkhitaryan

Summary

Currently, there is no single domestic practice and universal methodology for the evaluation of the creditworthiness of the borrower. Its formation is difficult because credit quality assessment involves the analysis of a wide range of quantitative and qualitative indicators. Meanwhile, the development and improvement of its own system of evaluation of the creditworthiness of clients is an important task of each credit institution that seeks to work with a stable reliable partner.

Key concepts: *bank, problematic loans, evaluation methodology, credit worthiness.*

**ՀՀ ՏՏ ՈԼՈՐՏԻ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈԼՈՐՏԻ
ԽԹԱՆՄԱՆ ՍՈԴԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ**

Ն. Սարգսյան

ՀՀ ՏՏ ոլորտի զարգացման ներուժի գնահատման, ինչպես նաև ոլորտի աճի առկա մոդելի արդյունավետության գնահատման համատեքստում կարևորվում է վերջինի գլոբալ մրցունակության վերլուծությունը: Սակայն զարգացման հեռանկարների գնահատման համար առավել կարևոր է ՀՀ տարածաշրջանային մրցակիցների, ինչպես նաև արտապատվիրման շուկայում առաջատար ու միջանկյալ դիրքեր զբաղեցնող մրցակիցների համեմատ մեր երկրի ՏՏ ոլորտի մրցունակության գնահատումը: Մրցունակության վերլուծության համար լավ հիմք կարող են հանդիսանալ Համաշխարհային տնտեսական համաժողովի «Գլոբալ տեղեկատվական տեխնոլոգիաներ 2012» գեկույցի համապատասխան ցուցանիշները:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալների՝ միջավայրային, պատրաստվածության ու օգտագործման բաղադրիչների ցուցանիշների և դրանց ենթահնդեքսների վերլուծությունից, ՀՀ ՏՏ ոլորտը զարգացման մակարդակով դասվում է առավելապես հետ մնացած երկրների թվին՝ 138 երկրների շարքում զբաղեցնելով 90-125-րդ հորիզոնականները: Բոլոր բաղադրիչների ինդեքսների գումարային վարկանիշով ՀՀ-ն 138 երկրների շարքում ընդամենը 118-րդն է և առաջ է ընդամենը ասիական 7, Կենտրոնական Ամերիկայի 2 և Աֆրիկայի 11 հետամնաց ու ընդգծված բնաիրային տնտեսությամբ երկրներից: Ավելին՝ ՀՀ-ից առաջ են նույն կարգավիճակում գտնվող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Զամբիան, Հոնդուրասը, Մոզամբիկը կամ Ուգանդան:

Աղյուսակ 2-ից ակնհայտորեն երևում է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրների և արտապատվիրման գլոբալ շուկայում առաջատար դիրքեր (Չինաստան, Հնդկաստան, Կիպրոս) և միջանկյալ դիրքեր (աղյուսակի մնացյալ երկրները՝ ոչ Հվ Կովկասի) զբաղեցնող երկրների շարքում բոլոր ցուցանիշների գծով ՀՀ-ն կամ ամենավերջին տեղում է, կամ էլ վերջից երկրորդ (մեկում էլ երրորդ) հորիզոնականն է զբաղեցնում:

Աղյուսակ 1

ՀՀ ՏՏ ոլորտի համեմատական մրցունակությունը տարածաշրջանի մրցակիցների և արտասպասովիբրան 2-ովայի մրցակիցների համեմատ ՀՏՀ «Գլխավ տնտեսական տեխնոլոգիաներ 2012» զեկույցում

	Երկիր և նրա դիրքը																
	ՀՀ	Աբստրան	Գործարար	Գործարար պատրաստվածություն	Կառավարական պատրաստվածություն	Օգտագործման բաղադրիչ (որից)	Ամհատական	Գործարար	Կառավարական պատրաստվածություն	Օգտագործման բաղադրիչ (որից)	Ամհատական	Գործարար	Կառավարական պատրաստվածություն	Օգտագործման բաղադրիչ (որից)	Ամհատական		
Միջավայրի բաղադրիչ (որից)	114	86	77	83	91	63	29	35	42	53	40	58	62	57	60	50	87
Շուկայական միջավայր	119	66	78	118	122	80	22	36	72	79	56	41	37	71	74	90	97
Քաղաքական և կարգավորման միջավայր	125	93	79	111	89	61	29	37	51	53	46	52	72	50	81	63	100
Ենթակառուցվածքների միջավայր	88	87	79	42	64	60	32	34	33	50	31	81	74	58	43	36	68
Պատրաստվածության բաղադրիչ (որից)	97	107	49	68	81	78	40	37	62	72	45	33	39	16	73	91	56
Ամհատական պատրաստվածություն	52	86	67	59	94	94	16	84	65	49	66	21	18	8	83	69	53
Գործարար պատրաստվածություն	129	132	83	90	93	118	53	45	62	75	28	33	42	30	54	94	81
Կառավարական պատրաստվածություն	104	94	33	89	64	88	48	9	82	110	59	47	51	15	103	108	66
Օգտագործման բաղադրիչ (որից)	111	92	74	69	62	113	35	31	33	50	37	67	80	36	57	59	56
Ամհատական օգտագործում	108	81	69	55	58	110	35	27	34	43	39	98	87	63	46	50	73
Գործարար օգտագործում	107	103	76	72	61	114	36	40	38	62	30	45	50	19	60	88	75
Կառավարական օգտագործում	124	94	56	96	55	120	36	30	29	64	60	47	82	34	93	62	31

Աղյուսակ 2

ՀՀ ՏՏ ոլորտի, տարածաշրջանի մրցակիցների և արտապատվիրման շուկայի մրցակիցների համեմատական մրցունակության մատրիցը

Երկիր Գործոն	Շուկայական միջավայր	մրուհու- վորման և կարգու- կրթման միջավայր	Ենթակառուցվածք- ների միջավայր	Անհատական ցյալներ	Գործառն ցյալներ	Կառավարման ցյալներ	Անհատական օգտագործում	Գործառն օգտագործում	Կառավարման օգտագործում
ՀՀ	16	17	17	6	16	15	16	16	17
Վրաստան	6	14	16	16	17	13	13	14	14
Ադրբեջան	10	11	14	12	11	3	11	13	8
ՌԴ	15	16	6	9	12	12	8	11	15
Թուրքիա	12	8	10	17	13	8	9	9	7
Իրան	17	13	11	8	15	11	17	17	5
Կիպրոս	1	1	2	2	6	5	3	3	5
Պորտուգալիա	2	2	4	15	5	1	1	5	2
Լիտվա	8	5	3	10	8	10	2	4	1
Լատվիա	11	6	8	5	9	17	5	10	11
Չեխիա	5	3	1	11	1	7	4	2	9
Հնդկաստան	4	7	15	4	3	4	15	6	6
Ինդոնեզիա	3	10	13	3	4	6	14	7	12
Չինաստան	7	4	9	1	2	2	10	1	4
Լեհաստան	9	12	7	14	7	14	6	8	13
Հունաստան	13	9	5	13	14	16	7	14	10
Ղազախստան	14	15	12	7	10	9	12	12	3

Միակ բացառությունն այստեղ անհատական պատրաստվածության բա-
ղադրիչն է (մաթեմատիկական և գիտական կրթության որակ, կրթական
համակարգի որակ, մեծահասակների տառաճանաչության մակարդակ,
բնակարաններում հեռախոսի առկայություն, ֆիքսված հեռախոսի սա-
կագներ, բջջային հեռախոսի սակագներ, ֆիքսված լայնաշերտ ինտեր-
նետի սակագներ, գնորդների տեղեկացվածություն), որով ՀՀ-ն առաջ է
ակնհայտ հետամնաց երկրներից, սակայն այս բաղադրիչի երկու կարևոր
ցուցանիշներով՝ «լայնաշերտ ինտերնետի սակագներով» և «ՏՀՏ արդ-
յունքների մասին սպառողների տեղեկացվածության մակարդակով» ՀՀ-ն

կրկին զբաղեցնում է վատ դիրքեր (համապատասխանաբար 93րդ և 75-րդ հորիզոնականները):

Պետք է նշել, որ ՀՀ դիրքերը վատն են մաս առավել բարդ տեխնոլոգիաների արտադրությանն անցումն ապահովելու հարցում էական նշանակություն ունեցող այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են՝ «վեճաշուրային կապիտալի առկայությունն ու դրա ներգրավման աստիճանը» (130-րդ տեղ), «ՏՏ ճյուղում ժամանակակից տեխնոլոգիաների առկայությունը» (126-րդ տեղ), «ՏՀՏ ճյուղում կլաստերային զարգացման պատկերը» (123-րդ տեղ), «ՏՀՏ հետ կապված օրենքների արդյունավետությունը» (114-րդ տեղ), «կարգավորում իրականացնող մարմինների արդյունավետությունը» (102-րդ տեղ), «ՏՀՏ ոլորտում սեփականության իրավունքների պաշտպանությունը» (97-րդ տեղ), «ծրագրային «ծովահենության» դեմ պայքարի արդյունավետությունը» (103-րդ տեղ), «ինտերնետի հաճախականությունը մեզաբայթերով՝ տասը հզ. բնակչի հաշվով» (123-րդ տեղ), «որակյալ գիտահետազոտական ինստիտուտների առկայությունը» (102-րդ տեղ), «որակյալ գիտնականների և ինժեներների առկայությունը» (93-րդ տեղ), «հետազոտական և վերապատրաստման ենթակառուցվածքների առկայությունը» (123-րդ տեղ), «ՏՀՏ-ի ընկերությունների անձնակազմերի վերապատրաստման շրջանակները» (115-րդ տեղ), «կառավարման դպրոցների որակը» (129-րդ տեղ), «գիտահետազոտական աշխատանքների վրա ընկերությունների կատարած ծախսերը» (126-րդ տեղ), «համալսարաններ-արդյունաբերություն համագործակցության մակարդակը գիտական հետազոտություններում» (123-րդ տեղ), «ՏՀՏ-ի տեղական մատակարարների որակը» (116-րդ տեղ), «ներմուծումների մեջ ՏՀՏ արտադրանքի և ծառայությունների ներմուծման մասնաբաժինը տոկոսներով» (119-րդ տեղ), «առաջատար տեխնոլոգիաների կառավարական մատակարարները» (133-րդ տեղ), «տնտեսության այլ ճյուղերի ընկերությունների կողմից ՏՀՏ-ի ներգրավման աստիճանը» (120-րդ տեղ), «նոր ապրանքների և ծառայությունների թողարկման վրա ՏՀՏ ազդեցությունը» (121-րդ տեղ) և «էլեկտրոնային մասնակցության ինդեքսը» (117-րդ տեղ): Ուշագրավ է, որ դիտարկված բոլոր ցուցանիշների գծով ՀՀ-ն հետնապահ է ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ արտապատվիրման շուկայի առաջատարների ու միջանկյալ խաղացողների համեմատ:

Վերը բերված ցուցանիշները վկայում են, որ SS ոլորտի կայացման գործում ՀՀ կառավարության գործադրած ջանքերը ոլորտի գլոբալ մրցունակության բարձրացման աղյուսակ էլ չեն հանգեցրել: Միևնույն ժամանակ, սակայն, ՀՀ SS ոլորտի զարգացման ներուժի վերլուծությունից ակնհայտ է, որ այն օժտված է համեմատական զգալի առավելություններով, որոնց շարքում առավել հատկանշականներն են համարվում.

1. Ինֆորմատիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում համաշխարհային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական ներուժի առկայությունը:

2. Մտավոր ներուժի բարձր աստիճանը (IQ ցուցանիշը՝ 93, զբաղեցրած տեղն այլ երկրների շարքում՝ 46-րդ)¹:

3. SS ոլորտի զարգացման անհատական պատրաստվածության բաղադրիչի գծով գլոբալ ճյուղում համեմատաբար բարենպաստ դիրքերի և հատկապես արտապատվիրման շուկայի միջին հատվածի երկրների նկատմամբ առաջատար դիրքերի առկայությունը:

4. Տեխնիկական բարդ լուծումներ մշակելու հմտություններով և անգլերենի իմացությամբ բավարար թվով բարձրակարգ և շնորհալի մասնագետների առկայությունը. ապագա երեք տարիներին հնարավոր է ապահովել հավելյալ մոտ 9000 մասնագետ:


5. SS և հարակից այլ մասնագիտացումներով բուհ-ական հզոր ծրագրերի առկայությունը և SS մասնագետների գերարտադրության պայմաններում ցածր հավելյալ արժեք ապահովող մոդելի ընձեռած հնարավորություններից հետագայում ևս օգտվելու հավանականությունը: Մասնավորապես ՀՀ-ում SS տարբեր մասնագիտություններով և մասնագիտացումներով կադրեր են պատրաստում ՀՊՃՀ-ն (երկաստիճան համակարգում սովորողների թիվը՝ 3000), ԵՊՀ-ն (երկաստիճան համակարգում սովորողների թիվը՝ 2000), Ամերիկյան համալսարանը (մագիստրոսական ծրագրով սովորողների թիվը՝ 75), Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիան՝ (մագիստրոսական ծրագրով սովորողների թիվը՝ (180) և Հայռուսական սլավոնական համալսարանը (երկաստիճան համակարգում սովորողների թիվը՝ 324)², ևս 900 ուսանողներ սովորում են այլ բուհերում:

¹<http://www.molomo.ru/test/iq-test/index2.php?a=country>

²Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն 2011

6. Էժան աշխատուժի և ցածր գործառնական ծախսերի առկայությունը, անգամ ավելի ցածր հավելյալ արժեք ապահովող հատվածում արտադրողականության բարձրացման ցուցանիշի կայուն աճի ապահովումը (տարեկան միջինը՝ 14%), նոր որմնախորշում էժան աշխատուժի ներգրավման խնդրի էլ ավելի սրումը:

7. ՏՏ ոլորտի փոքր ընկերություններն արագորեն զարգացնելու կուտակված կարողությունները:



Գծանկար 1. ՀՀ ՏՏ ոլորտի ընկերություններում անձնակազմի տարրեր մեծություն ունեցող ընկերությունների և շրջանառության տարրեր մեծություն ունեցող ընկերությունների մասնաբաժինները ոլորտի 2008 և 2011 թվականների հասույթում

Մասնավորապես, գծանկար 1-ից ակնհայտ է, որ ընդամենը երեք տարիների ընթացքում ՀՀ ՏՏ ոլորտի ընկերությունների թվում 4%-ով մեծացել է մինչև 100 հզ. դոլար շրջանառություն ունեցող ընկերությունների թիվը, որոնց հասույթն ընդհանուր հասույթում ավելացել է 7%-ով, և եթե հաշվի ենք առնում, որ նշյալ ժամանակահատվածում զգալիորեն աճել են ինչպես կազմակերպությունների թիվը, այնպես էլ ոլորտի հասույթի ցուցանիշները, ապա կստացվի, որ ՀՀ ՏՏ ոլորտում անգամ փոքր ընկերությունները կուտակել են տնտեսավարման բավարար փորձ և ակնհայտորեն կարող են օգտագործել նոր մոդելի ընձեռած հնարավորությունները:

8. Պետության կողմից ոլորտին աջակցելու և ներդրումային դաշտը բարելավելու պատրաստակամությունը:

9. ՏՏ ոլորտի տեղական ընկերությունների և արտասահմանյան մասնաճյուղերի թիմերի կուտակած փորձը և հմտությունները:

10. Ուժեղ և ՏՏ ոլորտում հաջողակ սփյուռքի առկայությունը ռազմավարական նոր որմնախորշերի ձևավորման պատճառ հանդիսացող եվրոպական և հյուսիս-ամերիկյան երկրներում: Մասնավորապես «Տնտեսություն և արժեքներ» կենտրոնի հետազոտությունները ցույց են տվել, որ ՏՏ ոլորտ մուտք գործած արտասահմանյան ընկերությունների զգալի մասը, Հայաստան «եկել է» Սփյուռքի ներկայացուցիչների ջանքերով³: Տվյալ դեպքում անհրաժեշտ է միայն ճիշտ ուղղորդել ՀՀ ՏՏ ոլորտի նկատմամբ բարեհաճ տրամադրված Սփյուռքի մասնագետների ջանքերը:

11. ՏՏ ոլորտի խոշոր վերագգային կորպորացիաների ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձը և դրանցից առաջատարների մասնաճյուղ-լաբորատորիաների առկայությունը ՀՀ-ում: Մասնավորապես, ՀՀ ՏՏ ոլորտում նախագծային լաբորատորիաների տեսքով կամ ինովացիոն կենտրոնների տեսքով մասնաճյուղեր են հիմնել գլոբալ մասշտաբներով առաջատար դիրքեր ունեցող այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են ամերիկյան National Instruments, SUN Micrisystems, Microsoft, Cisco, Synopsys Mentor Graphics (ՀՀ-ում գնել է մեկ այլ ամերիկյան ընկերության Ponte Solution-ի ակտիվները), D-Link և սինգապուրյան ST Kinetics և եվրոպական Lycos Europe ընկերությունները⁴:

Մինևույն ժամանակ, ցածր մրցունակության, ինչպես նաև ոլորտի խթանման մոդելի առանձնահատկությունների պատճառով, առկա են նաև ոլորտի զարգացմանը խոչընդոտող որոշակի գործոններ, որոնք պայմանավորված են ինչպես պետական հատվածի, այնպես էլ մասնավոր հատվածի և ՏՏ ոլորտին հարակից այլ ոլորտների գործունեությամբ:

Պետական քաղաքականությամբ պայմանավորված խոչընդոտներն են.

1. Ոլորտում պետության վարած հարկային քաղաքականությունը, որ միտված է հիմնականում օտարերկրյա ներդրողներին կամ խոշոր ներդրողներին արտոնություններ տրամադրելուն, ինչն էականորեն նվազեցնում է փոքր ընկերությունների վերակազմակերպման և տեխնոլոգիական

³ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն 2011

⁴ նույն տեղում


վերազինման շարժառիթները: Մյուս կողմից՝ ՏՀՏ գործիքների ներմուծման և արտահանման բարդ ընթացակարգերը ևս խոչընդոտ են փոքր ընկերությունների գործունեության համար:

2. Ոլորտի կարգավորման օրենսդրական բացերը, հատկապես ցանցահեռության, ՏՀՏ բնագավառում մտավոր սեփականության պաշտպանության և ՏՏ ոլորտում պայմանագրերի կնքման ու դրանց ընթացակարգերի կարգավորման բնագավառներում:

3. Օրենսդիր մարմիններ-ՏՀՏ սուբյեկտներ (հատկապես փոքր սուբյեկտներ) քննարկումներ իրականացնելու և ոլորտը կարգավորելու արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Ոլորտը կարգավորելուն միտված տարաբնույթ կազմակերպությունների առկայությունը և բյուրոկրատական քաշքշուկների և պարզաբանումների ժամկետների անհարկի երկարաձգման իրավիճակը: Մասնավորապես, ոլորտում կարգավորիչ գործառույթներով օժտված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն քաղաքականության վարչությունը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալությունը, ՀՀ կառավարության կողմից Համաշխարհային բանկի «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի շրջանակներում հիմնված «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը: ՏՏ կապի և հեռահաղորդակցությունների ոլորտում կարգավորիչ գործառույթներով օժտված են նաև Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը և Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: Նշյալը բացասաբար է ազդում ՏՀՏ ոլորտի արդյունավետ կառավարման վրա: Նշյալ խնդիրները կարգավորելու նպատակով 2012թ. մայիսի 11-ին Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը հանդես եկավ տեղեկատվական, հեռահաղորդակցման տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտները կարգավորող առանձին պետական կառավարման մարմնի՝ նախարարության ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ հայտարարությամբ՝ ուղղված ՀՀ նախագահին և նորընտիր Ազգային ժողովին: Իբրև նախաձեռնության նպատակ մատնանշվել է ՀՀ-ում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների, նորարարության ներդրման և զարգացման, տնտեսության բոլոր բնագավառներում դրանց արդյունքների ներդրման, էլեկտրոնային կառավարման և տեղեկատվա-

կան հասարակության ձևավորման գործընթացները կարգավորելուն միտված մեկ միասնական մարմնի ձևավորումը, որը պատասխանատու կլինի ոլորտի պետական քաղաքականության մշակման ու իրականացման համար: Հատկանշական է, որ նշված նախաձեռնությանը միացել էին նաև SS ոլորտի ԻՏՁՄ ոչ անդամ ընկերությունները (շուրջ 200 ընկերություն): Փաստացի կարելի է նշել, որ նախաձեռնությանը միացել էին ոլորտում գործող ընկերությունների ավելի քան 70%-ը, ինչը կարգավորիչ գործառույթների մասնատման անարդյունավետության ամենախոստուն ցուցանիշն է:

4. SS ոլորտի ընկերություններում կառավարման գործառույթների իրականացման սահմանափակ փորձը: Չնայած նրան, որ SS ընկերություններում ներգրավված աշխատուժի շուրջ 21%-ը հանդիսանում են վարչական և ղեկավար անձնակազմի ներկայացուցիչներ (գծանկար 2) և SS ընկերությունները գնալով ավելի մեծ թվով SS կառավարման մասնագետների են աշխատանքի հրավիրում, իսկ ընկերությունների մեծամասնությունում սկսել են անցում կատարել ծրագրավորման գործընթացների կատարելագործման այնպիսի մեթոդաբանությունների, ինչպիսին՝ CMMI, ISO, IT MARK վկայագրերի ստացումն է, այնուամենայնիվ պետք է նշել, որ SS ոլորտի շատ ընկերություններ զարգացած SS ընկերությունների կառավարման մեթոդներին, ու փորձին ու գիտելիքներին լիարժեք չեն տիրապետում:



Գծանկար 2. ՀՀ SS ոլորտի ընկերություններում ղեկավար և տեխնիկական անձնակազմի մասնաբաժինները՝ ըստ տեղական և արտասահմանյան ընկերությունների

Նման վիճակի պատճառները երկուսն են: Առաջին հերթին՝ ՏՏ ոլորտի համապատասխան փորձ և կրթություն ունեցող բարձրակարգ մենեջերների սակավությունը և դրանց պատրաստմանը միտված կրթական ծրագրերի սակավությունը. արդյունքը՝ նոր տնտեսության առաջադրած պայմաններին անտեղյակությունը և օտարերկրյա հաճախորդների ու ներդրողների հետ հարաբերվելու անբավարար փորձը: Երկրորդ՝ արտասահմանյան ընկերությունների հայ մասնագետները ևս զրկված են առաջավոր փորձը յուրացնելու և այլոց փոխանցելու հնարավորություններից, քանի որ մասնաճյուղերի մեծամասնությունը կառավարման գործառույթներ (բիզնեսի զարգացում, մարկետինգ, ռազմավարական կառավարում) չեն իրականացնում. կառավարչական գործառույթներում ներգրավված են գլխամասային ընկերությունների մասնագետները:

5. Գիտահետազոտական աշխատանքների, մարկետինգային հետազոտությունների կազմակերպման սահմանափակ փորձը: Ներկայումս տեղական ընկերություններից մման հետազոտություններ իրականացնում են ընդամենը 20%-ը, այն էլ սահմանափակ խնդիրների լուծման համար: Մասնաճյուղերի հետազոտական աշխատանքները նախատեսված են գլխամաս ուղարկվելու համար և դրանց արդյունքները հիմնականում չեն հրապարակվում, և հետևաբար Հայաստանի համար մրցակցային որևէ առավելություն չեն ստեղծում: Ճիշտ է, խնդրի լուծման նպատակով որոշ բուհեր և գիտահետազոտական ինստիտուտներ իրականացնում են հետազոտություններ (ավտոմատացված նախագծման (CAD), դիսկրետ մաթեմատիկա և կոմբինատորիկայի, կոգնիտիվ ալգորիթմիկայի և փորձագիտական համակարգերի, ծրագրային ավտոմատացման ճարտարագիտության, բաշխված տվյալների մշակման, ինչպես նաև հաշվարկային մեթոդների ու ազդանշանային համակարգերի մշակման բնագավառներում)⁵, սակայն դրանք ֆունդամենտալ բնույթ չեն կրում և ունեն սահմանափակ կիրառական նշանակություն, որովհետև մասնավոր հատվածին հետաքրքրող խնդիրների լուծմանը միտված չեն եղել:

6. Կրթական հաստատություններում ՏՏ ոլորտի մասնագետների պատրաստման ծախսատարությունը և անբավարար ֆինանսավորումը (այս առումով մասնագետները նշում են, որ ինչպես վարձավճարները,

⁵ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն 2011

այնպես էլ պետական ֆինանսավորումը չեն կարողանում լուծել որակյալ կադրերի պատրաստման խնդիրը)⁶, համապատասխան գիտելիքներով օժտված պրոֆեսորադասախոսական անձնակազմի բացակայությունը, նախագծակոնստրուկտորական բաժինների սակավությունը: Դիշտ է, այս առումով որոշ ծրագրեր իրականացվում են (Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի» և «Մայքրոսոֆթ» ինովացիոն կենտրոնի հիմնում), սակայն դրանք ունեն սահմանափակ հնարավորություններ և թողունակություն:

7. Չարգացման նոր մոդելի ներդրման համար անհրաժեշտ մեծածավալ ներդրումներն ու դրանց ապահովման ոչ հստակ ուղիները: Մասնավորապես, նոր մոդելին անցումն ապահովելու համար առաջիկա 3 տարիների ընթացքում ՏՏ ոլորտի 75 ընկերությունների վերազինման և 100 նոր փոքր ընկերությունների հիմնման ու 3 նախագծակոնստրուկտորական բյուրոների հիմնման համար անհրաժեշտ ծախսերը՝ առկա ենթակառուցվածքների պահպանման և բնականոն զարգացման դեպքում գնահատվել են 1.3 մլրդ ԱՄՆ դոլար (հաշվարկվել են 3400 մասնագետների վերապատրաստման, 3000 մասնագետների պատրաստման, ընկերությունների տեխնոլոգիական վերազինման և ՏՏ արտադրանք թողարկող և դրանք ներքին շուկայում սպառող ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրման ծախսերը), որոնք ներդնելու շահագրգռվածություն ունեն սահմանափակ թվով միջազգային կազմակերպություններ:

Բանալի բառեր՝ ազարսկանացում, արտաքին առևտրային կապեր, արտահանում, արտարժույթային հարաբերություններ, ապրանքային կառուցվածք, առևտրային հաշվեկշիռ, համաշխարհային ֆինանսական ճգնաժամ, համեմատական գներ, օլտրաերկրյա ուղղակի ներդրումներ, ներմուծում

⁶ նույն տեղում

**КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ СФЕРЫ
ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ РА,
ЭФФЕКТИВНОСТЬ МОДЕЛИ ЕЕ СТИМУЛИРОВАНИЯ И
ПОТЕНЦИАЛ ДЛЯ ЕЕ СТРАТЕГИЧЕСКОГО РАЗВИТИЯ**

Н. Саргсян

Резюме

В данной статье, на основе анализа соответствующих данных, представленных Всемирным экономическим форумом в докладе «Глобальные информационные технологии 2012», дана оценка региональной конкурентоспособности ИТ сферы Армении и ее конкурентоспособности на аутсорсинговом рынке по сравнению с странами, занимающими передовые и промежуточные позиции. Ее целью является оценка эффективности государственной политики, направленной на развитие данной отрасли, а также раскрытие потенциала ее дальнейшего развития и выявление возможных препятствий. С другой стороны, в статье, на основе анализа плановых показателей концепции развития ИТ отрасли в Армении и существующих показателей, было обосновано, что она была частично невыполнена, основной причиной чего являются ограниченные возможности потребления и низкая производительность. Все вышесказанное дает основания утверждать, что дальнейшее развитие отрасли можно обеспечить только путем разработки и применения новой модели, направленной на стимулирование производства технологий с высокой добавочной стоимостью.

Ключевыми словами являются: *либерализация, внешнеторговые связи, экспорт, валютные отношения, товарная структура, торговый баланс, мировой финансовый кризис, сравнительные цены, импорт, прямые иностранные инвестиции*

COMPETITIVENESS OF THE ARMENIAN IT SECTOR,
EFFECTIVENESS OF THE MODEL FOR ITS STIMULATION
AND ITS STRATEGIC DEVELOPMENT POTENTIAL

N. Sargsyan

Summary


On the basis of the analysis of the corresponding showings presented in the “Global Information Technologies 2012” report by the World Economic Forum this article estimates the regional competitiveness of the IT sphere of Armenia and its competitiveness on the outsourcing market as compared to the countries which occupy leading and intermediate positions. Its goal is to assess the effectiveness of the state policy directed to the development of the sphere and to reveal the potential of its further development and obstacles in its way. On the other hand taking as a ground the analysis and comparison of the planned performance of the IT sphere development concept with the current showings, it has been substantiated that it was underfulfilled and the main reason is the limited consumption and poor efficiency. All the aforementioned allows to state that the further development of this sphere can be provided only by the elaboration and implementation of the model which would trigger production of the technologies with higher extra cost.

The key words are: *liberalization, foreign trade relations, exports, currency relations, commodity structure, balance of trade, the global financial crisis, comparative price, imports, Foreign direct investment*

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԼՈՔԱԼ ՇՈՒԿԱՅԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ն. Սարգսյան

Հանրահայտ է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների շուկայի առաջին և կարևորագույն առանձնահատկությունը կայանում է դրա դինամիկության մեջ, ինչն արձանագրված է գրեթե բոլոր հետազոտական ընկերությունների, միջազգային կառույցների և գիտական շրջանակների հաշվետվություններում և աշխատություններում: Եթե 2002 թվականին այս շուկայի ֆիզիկական ծավալները կազմել են մոտ 950 մլրդ ԱՄՆ դոլար, ապա արդեն 2012 թվականին այն կրկնապատկվել էր՝ կազմելով 2.0 տրլն ԱՄՆ դոլար¹: Մեկ այլ մեթոդաբանությամբ (որով հաշվարկվում են ՏՏ ոլորտի գործունեության բոլոր ուղղությունների ցուցանիշները՝ ներառյալ հեռակոմունիկացիաները) ՏՏ գլոբալ շուկայի ծավալները 2002 թվականին կազմել են 1.6 տրլն ԱՄՆ դոլար, իսկ 2012 թվականին արդեն՝ 3.7 տրլն ԱՄՆ դոլար²:




Գծանկար 1. ՏՏ ոլորտի աճի տեմպերը 2005-2012թթ. ժամանակահատվածում և աճի միջնաժամկետ կանխատեսումները 2013-2015 թվականների համար՝ ըստ Forester և Gartner հետազոտական կենտրոնների

¹ Stu IT Global Market Trends 2011-2015, Forester Report, New York, 2011

² Stu IT Industry Dinamic In The World 2011, Gartner, New York, 2012

Գծանկար 1-ից ակնհայտ է, որ ոլորտի աճի միջին տարեկան տեմպն առանց, 2009 թվականի անկման կազմում է 8.5%, ինչը մոտ 2.6%-ով ավելի է, քան նույն ժամանակահատվածում համաշխարհային տնտեսության 5.9%-անոց աճը³: Ավելին, 2009-2011 թվականների աճի ցուցանիշների վերլուծությունից ակնհայտ է, որ ՏՏ ոլորտի վերականգնողական աճը համաշխարհային տնտեսության վերականգնողական աճի նկատմամբ ունեցել է առաջանցիկ տեմպեր: Ինչպես երևում է գծանկարից, ոլորտի զարգացման ամենավատատեսական սցենարով (ըստ Gartner-ի) ոլորտը 2013-2015 թվականներին նույնպես համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերի համեմատ կզարգանա առաջանցիկ տեմպերով: Մյա հիմնական պատճառն այն է, որ ոլորտի առաջատար ընկերություններին հաջողվեց արագորեն գտնել ոլորտի ռազմավարական զարգացման նոր ուղղություններ՝ թե նոր շուկաների ձևավորման միջոցով (պլանշետների արտադրությամբ):



Գծանկար 2. ՏՏ ոլորտի զարգացումը 2008 - 2013 թթ. ժամանակահատվածում տարբեր տարածաշրջաններում ըստ Forester ընկերության⁴:

³ Տվյալը վերցված է Առևտրի համաշխարհային կազմակերպության «Համաշխարհային տնտեսության զարգացման ինդիկատորներ» զեկույցից: WTO World Economic Development Indicators Annual Report 2011, New York, 2012

⁴ Stu IT Global Market Trends 2011-2015, Forester Report

յուն, սոցիալական ցանցերի արտադրություն և այլն) և թե համաշխարհային տնտեսության նոր ոլորտներ ներթափանցելու միջոցով (հանրահումմաբային ռեսուրսների արդյունահանում, գյուղատնտեսություն և այլն):

Պետք է նշել սակայն, որ SS ճյուղի զարգացումն աշխարհի տարբեր տարածաշրջաններում և տարբեր երկրների կտրվածքով տարբեր է: Սրա արդյունքում տարբեր են նաև երկրների ու տարածաշրջանների մասնաբաժինները տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ շուկայում: Սա հիմնականում կապված է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արտադրանքի նկատմամբ տվյալ երկրների պետական ու մասնավոր հատվածի կազմակերպությունների պահանջարկի տարբերությունների հետ:

Գծանկար 2-ից ակնհայտ է, որ աճի տեմպերով SS ճյուղում առաջատարներ են հանդիսանում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի, Մերձավոր Արևելքի և Լատինական Ամերիկայի երկրները, որտեղ նախաճգնաժամային ժամանակահատվածում աճի տեմպը կազմել է միջինում 10 -16%, ԱՄՆ-ի 6% և Եվրամիության մոտ 4.5% աճի դիմաց: Վերականգնողական աճի տեմպերով առաջատարները մերձավոր արևելքի և լատինական ամերիկայի երկրներն են, որտեղ 2009 թվականի անկումից հետո, կրկին արձանագրվել է միջինում 14 -17% աճ, որը 2011 թվականին կայունացել է, արձանագրել որոշակի դանդաղում: Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների և ԱՄՆ-ի վերականգնողական աճի տեմպերը միանման են եղել՝ կազմելով համապատասխանաբար 6.9% և 9.2%: Սակայն եթե առաջինի աճը 2011 կայունացել է, իսկ 2012-ին շարունակել դանդաղ վերելք արձանագրել, ապա ԱՄՆ-ում 2010 թվականի երկրորդ եռամսյակից սկսած կրկին նկատվել է անկման դինամիկա: Գծանկարից երևում է նաև, որ աճի դանդաղ տեմպերի հիմնական պատճառը Եվրամիությունն է (կապված հիմնականում Եվրագոտու հիմնախնդիրներով), որի SS ոլորտը վերականգնողական աճից հետո կրկին գահավիժել է, իրենով պայմանավորելով մյուս տարածաշրջանների աճի դանդաղումը կամ անկումը: Սակայն Forester-ի փորձագետների վերլուծությունների համաձայն Եվրամիության SS ոլորտը 2012 թվականին հասել է անկման «հատակին» և արդեն 2013 թվականից սկսած կանխատեսվում է միջինը տարեկան 5% աճ⁵:

⁵ Stu IT Global Market Trends 2011-2015, Forester Report, New York, 2011

Չարգացած և զարգացող երկրներում ՏՏ ոլորտի աճի ցուցանիշների մասն մեծ շեղումները պայմանավորված են մի շարք հանգամանքներով.

- Չարգացած երկրների ՏՏ ոլորտը «գերտաքացած է» և ռազմավարական զարգացման ավելի քիչ հնարավոր ուղղություններ են մնում:

- Չարգացած երկրների պետական և մասնավոր հատվածներն աչքի են ընկնում տեխնոլոգիական հազեցման ծայրահեղ բարձր ցուցանիշներով, ինչի հետևանքով նշյալ երկրների ՏՏ ընկերությունների համար ներքին շուկայի պահանջարկի բավարարմամբ, աճի արձանագրման հնարավորությունները հետևողականորեն նվազում են:

- Կապված Հունաստանի, Պորտուգալիայի, Իսպանիայի և Կիպրոսի պարտքային ճգնաժամի հետ, նշված երկրներում ընդհանրապես գրոյական մակարդակի են հասել տեղեկատվական տեխնոլոգիաների վրա կատարվող ծախսերը, իսկ եվրոգոտու մյուս երկրներում սահմանափակվել են մասնատիպ ծախսերը՝ կապված ֆինանսական միջոցները եվրագոտու «փրկության» համար ձևավորված «Եվրագոտու կայունացման հիմնադրամ» նպատակատողելու հետ (2010-2012 թվականներին կայունացման հիմնադրամին է փոխանցվել ավելի քան 900 մլրդ եվրո):


- Չարգացող երկրներում մասնատիպ արտադրանքի իրացումը դեռևս բարդ է՝ պայմանավորված վերջինների սահմանափակ ֆինանսական ռեսուրսների ու ֆինանսատնտեսական ճգնաժամով սկսված փողի դեֆիցիտի պայմաններում սուղ միջոցները խնայելու անհրաժեշտության հետ:

- ՏՏ ոլորտի առաջատար ընկերությունների ծախսերի կրճատման մրցավազքի հետևանքով անընդհատ մեծանում են զարգացող երկրներում արտապատվիրման ծավալներն ու ձեռնարկությունների հիմնումը (վերջինը հատկապես Չինաստանում, Հնդկաստանում, Սինգապուրում, Ինդոնեզիայում, Հվ. Կորեայում, Թայվանում և Ֆիլիպիններում), ինչը նպաստում է ենթակառուցվածքների ձևավորմանն ու թարմացմանը, ինչն իր հերթին գեներացնում է ՏՏ արտադրանքի նկատմամբ ներքին մեծ պահանջարկ, որը բնականաբար բավարարում են հենց տեղական ընկերությունները:

- Չարգացող երկրներում գնալով մեծանում է այն ընկերությունների թիվը, որոնք գորբալ շուկայում դիրքավորում են սեփական արտադրանքը (հիմնականում համակարգեր, համակարգիչներ, հեռախոսներ, օպտիկական մալուխներ և քիչ թվով օպերացիոն համակարգեր ու ծրագրային ապա-

հովման միջոցներ) և հիմնականում էժան գնի շնորհիվ կարողանում են արձանագրել վաճառքի պատկառելի աճ: Մասնավորապես 2012 թվականին Forbes ընկերության կողմից հրապարակված SS ճյուղի 100 առաջատար ընկերությունների մոտ 30%-ը զարգացող երկրների՝ սեփական ապրանքանիշով գլոբալ շուկայում հանդես եկող ընկերություններն են: Ավելին՝ բիզնեսի աճի տեմպերով առաջատար 15 ընկերություններից 5-ը, ամենամեծ զուտ եկամուտ արձանագրած 15 ընկերություններից 5-ը, ամենամեծ շահութաբերություն (ROS) ունեցող 15 ընկերություններից 5-ը հանդիսանում են չինական, հնդկական, հարավ կորեական կամ թայվանյան ընկերություններ: Համակարգիչների արտադրության սեգմենտի 20 առաջատար ընկերություններից 9-ը, հեռակոմունիկացիոն սարքավորումների և դրանց լուծումների սեգմենտի 10 խոշոր ընկերություններից 3-ը (առաջատարը հարավ կորեական Samsung ընկերությունն է), կիսահաղորդիչների և ինտեգրալ համակարգերի արտադրության սեգմենտի 10 առաջատար ընկերություններից 3-ը և ինտերնետ ծառայությունների մատուցման սեգմենտի 20 առաջատար ընկերություններից 8-ը կազմում են չինական, հարավ կորեական, թայվանյան, սինգապուրյան կամ Հոնկոնգի ընկերությունները:

Պետք է նշել սակայն, որ չնայած զարգացման տեմպերի տարբերություններին և զարգացող երկրներում տեղեկատվական տեխնոլոգիաների վրա կատարվող ծախսերի հետևողական աճին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ ճյուղում և շուկայում զարգացած ու զարգացող երկր-




Գծանկար 3. 2012 թվականին SS գլոբալ շուկայի գնորդներն ու ճյուղի սուբյեկտները ըստ առանձին տարածաշրջանների⁶:

⁶ Stu IT Industry Dinamice In The World 2011, Gartner, New York, 2012

ների ուժերի հարաբերակցությունը 2012 թվականի դրությամբ կազմել է համապատասխանաբար 67/33 (ճյուղում թողարկված արտադրանքի հաշվարկով) և 68/32 (SS արտադրանքի գնման հաշվարկով) (պատկերված է գծանկար 3-ում):

Մյուս կողմից, սակայն ուժերի հարաբերակցությունը հետևողականորեն հավասարվում է և 2012 թվականի 67/37 հարաբերակցությունն էականորեն տարբերվում է 2000 թվականի 80/20 հարաբերակցությունից⁷: Ավելին՝ ուժերի հավասարակշռում հնարավոր է արձանագրվի արդեն 2015 թվականին, քանի որ, ըստ ոլորտի բոլոր վերլուծական ընկերությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ ծախսերում կգերակայեն հենց զարգացող երկրների և հատկապես Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի և Բրազիլիայի ծախսերը, որոնք էլ կհանդիսանան SS ճյուղի հավանական աճի աղբյուրները: Մասնավորապես 2013-2015 թվականներին, ըստ կանխատեսումների, միայն BRIC-ի երկրների ծախսերը տարեկան կաճեն 10.9%-ով (կամ տարեկան 740 մլրդ դոլարով), իսկ Ասիայի-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներինը՝ 6 - 7%-ով՝ ԱՄՆ ծախսերի 5.9%, Եվրամիության ծախսերի 1.2%, Ճապոնիայի ծախսերի 2% աճի⁸



Գծանկար 4. SS գլոբալ շուկայի ապրանքային կառուցվածքը 2012 թվականին⁹

⁷ 2000 թվականին նման հարաբերակցություն էին ներկայացրել ամերիկյան IDC, PAC և JP Morgan հետազոտական ընկերություններն՝ իրենց գլոբալ հետազոտության արդյունքների ամփոփումից հետո:

⁸ IT Industry In The World at 2011, IDC, Oklahoma, 2011

⁹ IT Industry Dinamice In The World 2011, Gartner, New York, 2012

և համաշխարհային համախառն ծախսերի 3.8 - 4.2% աճի (նվազագույն կանխատեսումը՝ JP Morgan-ի, առավելագույնը՝ Gartner-ի և IDC-ի) դիմաց: Նշվածը կհանգեցնի նրան, որ արդեն 2014 թվականին «Բրիքսի» չորս զարգացող երկրներին բաժին կընկնի SS ոլորտի համաշխարհային ծախսերի 35%-ը և համաշխարհային ծախսերի հավելաճի ուղիղ կեսը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ շուկայի կառուցվածքի վերլուծությունից (գծանկար 4) ակնհայտ է, որ շուկայի ամենամեծ մասնաբաժինն ունեն հեռակոմունիկացիոն ծառայություններն ու IT ծառայությունները, որոնց բաժին է ընկնում շուկայի 69%-ը, և եթե դրան գումարում ենք նաև ծրագրային ապահովման միջոցների 7% մասնաբաժինը, ապա կարող ենք ասել, որ ֆիզիկական տեսք ունեցող SS ապրանքները կազմում են շուկայի ընդամենը 24%-ը:

Հատկանշական է սակայն, որ տեղեկատվական տեխնոլոգիաների շուկայի տարբեր հատվածների զարգացման հնարավորությունները և բնականաբար դրանց զարգացման միջնաժամկետ (2013-2016թթ. ժամանակահատվածում) կանխատեսումները միանգամայն տարբեր են:

Մասնավորապես, 2013-2016թթ. ժամանակահատվածում ծրագրային ապահովման միջոցների արտադրության աճը կանխատեսվում է 2.5 - 5.1%, IT ծառայությունների աճը՝ 3.1 - 7.2%, «երկաթների» (միկրոպրոցեսորների և միկրոսխեմաների) արտադրության աճը՝ 4.1 - 9.1%, հեռակոմունիկացիոն սարքավորումների և ծառայությունների աճը՝ համապատասխանաբար՝ 5.2 - 11.7% և 4.2 - 7.4%¹⁰:

Ըստ ամերիկյան IDC ընկերության փորձագետների՝ 2013-2016թթ. ժամանակահատվածում SS շուկայում կանխատեսվող աճի 90%-ը կապահովի հեռախոսային, սոցիալական և «big data» (տեղեկատվական բազաներ) տեխնոլոգիաների ու այսպես կոչվող «ամպերի» արտադրությունը: Ոլորտի աճի մյուս կարևոր շարժիչ ուժերից մեկն էլ կհանդիսանա հեռախոսային սարքավորումների հետագա «ինտելեկտուալիզացիան», ինչի արդյունքում SS շուկայի «սմարթֆոնների», «պլանշետների» և «ռիդերների» կամ, այլ կերպ ասած, էլեկտրոնային գրադարանների հատվածի ֆիզիկական ծավալները կմեծանան շուրջ 20%-ով¹¹: Հասկանալու համար, թե

¹⁰ www.jpmorgan.com, www.pac.com

¹¹ www.idc.com

նշյալ ոլորտի ազդեցությունը ճյուղի աճի կանխատեսման մեջ ինչպիսին է, նշենք, որ SS ոլորտի կանխատեսվող աճը 2013-2016թթ. ժամանակահատվածում, առանց հեռախոսային սարքավորումների հատվածի, տարեկան միջինը կազմում է 3.9%, կանխատեսված 8.5% միջին աճի դիմաց¹²:

Հանրահայտ է, որ ցանկացած ոլորտի ռազմավարական զարգացման վրա էական ազդեցություն ունեն սպառողական ծախսերը և դրանց փոփոխությունները, որոնցով պայմանավորված են ընկերությունների վաճառքի հնարավորությունները: Նմանատիպ կանխատեսումներ 2013-2014 թվականների համար կատարել է ամերիկյան Gartner հետազոտական ընկերությունը, որը հետազոտելով SS շուկայի վերջնական սպառողների, կազմակերպությունների և պետական հատվածի պահանջումները 2013 թվականի համար կանխատեսել է SS համախառն ծախսերի 4.2% աճ, իսկ 2014 թվականի համար՝ 3.8%:

Աղյուսակ 1

SS ոլորտի առանձին հատվածների համաշխարհային ծախսերը և դրանց կանխատեսումը 2013-2014 թվականներին¹³

	Ծախսերը 2012 թ.	Աճը 2012 թ.	Ծախսերը 2013 թ.	Աճը 2013 թ.	Ծախսերը 2014 թ.	Աճը 2014 թ.
Սարքավորումներ	627	2.9%	668	6.3%	694	4.2%
Տվյալների բազաներ (big data)	141	2.3%	147	4.5%	154	4.2%
Կորպորատիվ կառավարման ծրագրային ապահովման միջոցներ	278	3.3%	296	6.4%	316	6.8%
IT ծառայություններ	881	1.8%	927	5.2%	974	5.1%
Հեռակոմունիկացիոն ծառայություններ	1661	-0.1%	1701	2.4%	1742	2.4%
Ընդամենը	3588	1.2%	3739	4.2%	3881	3.8%

¹² www.jpmorgan.com

¹³ Տես IT Industry Dinamic In The World 2011, Gartner, New York, 2012

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ծախսերի ամենամեծ աճը կանխատեսվում է գործարար շուկայում, որտեղ պահանջարկը մեծ կլինի հատկապես կորպորատիվ կառավարման ծրագրային ապահովման միջոցների, IT ծառայությունների և տվյալների բազաների մշակման ծրագրերի նկատմամբ (համապատասխանաբար 6.6%, 4.3%, 5.15%), դրա փոխարեն հեռակոմունիկացիոն ծառայությունների նկատմամբ պահանջարկը կկազմի ընդամենը 2.4%, սակայն մեծ կլինի նաև տարաբնույթ սարքավորումների նկատմամբ պահանջարկը, որը միջինը կկազմի 5.25%:

Ըստ նույն խնդրի վերաբերյալ Gartner, JP Morgan, IDC, Forester և PAC ընկերությունների կատարած կանխատեսումների վերլուծության, կարելի է նշել, որ 2013-2016թթ. ժամանակահատվածում SS ոլորտի աճի հնարավորությունները պայմանավորված կլինեն տարբեր ճյուղերի կազմակերպությունների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաներին հատկացվող ծախսերի հետևյալ ուղղություններով.

- ծրագրային ապահովման միջոցների ձեռք բերում,
- մարդկային ռեսուրսների կառավարման և տվյալների պահուստարանների կառավարման ծրագրային ապահովման միջոցների ձեռք բերում,
- տեղեկատվական մենեջմենթի տեխնոլոգիաների և տվյալների բազաների (big data) ձեռք բերում,
- կորպորատիվ կոնտենտի կառավարման և տվյալների ինտեգրման համակարգերի ձեռք բերում¹⁴:

Մյուս կարևոր ուղղությունը հենց SS ոլորտի ընկերությունների պահանջարկով է պայմանավորված: Այսպես, «սմարթֆոնների», «սլանշետների» և «ռիդերների» գլոբալ պահանջարկի հետևողական աճը դրանք արտադրող ընկերությունների մոտ կմեծացնի հեռակոմունիկացիոն ծառայությունների և հատկապես հեռախոսային տեխնոլոգիաների նկատմամբ պահանջարկը, որը 2013-2016թթ. ժամանակահատվածում կպահպանի աճի 28 - 38% ցուցանիշ¹⁵:

Ընդ որում նշված 4 հատվածներում առավելապես մեծ կլինի հետևյալ ենթահատվածների արտադրանքի նկատմամբ պահանջարկը. բիզնես

¹⁴ www.gartner.com, www.idc.com, www.jpmorgan.com

¹⁵ www.gartner.com, www.pac.com

վերլուծության ծրագրային ապահովման միջոցներ, համատեղ աշխատանքի կոմունիկացիաներ, սպառողների հետ հարաբերությունների ավտոմատացման համակարգեր, թվային կոնտենտի ձևավորման համակարգեր, ERP համակարգեր, անձնական աշխատանքի և գրասենյակային աշխատանքի ծրագրային փաթեթներ, ծրագրերի և պորտֆոլիոյի կառավարման ծրագրային միջոցներ, մատակարարումների շղթայի որոշումների կառավարման համակարգեր (SCM), համատեղ ցանցային մուտքի ապահովման «ամպային» համակարգեր և դրանց սպասարկման ծառայություններ (SaaS, LaaS, PaaS), վիրտուալացման համակարգեր, IT ակտիվների կառավարման համակարգեր, կորպորատիվ հավելվածներ:

Հայտնի է, որ արտապատվիրման շուկայի ապրանքային կազմի վրա էականորեն ազդում են նաև SS ոլորտի առաջատար ընկերությունների բիզնես առաջնահերթությունները: Այդ առումով ոլորտի շուրջ 200 առաջատար ընկերությունների կառավարման մասնագետների հարցումները ցույց են տալիս, որ ընկերությունների բիզնեսի և ապրանքային առաջնահերթությունների տասնյակը ավանդական SS արտադրանքից անցում է կատարում դեպի ավելի բարդ լուծումներ պահանջող արտադրանքի թողարկում (աղյուսակ 2): Սա իր հերթին ենթադրում է, որ արտապատվիրման շուկայում մոտ ապագայում մրցակցային առավելություններ կունենան այն ընկերությունները, որոնք մասնագիտացած են ավելի բարձր հավելյալ արժեք ապահովող տեխնոլոգիաների թողարկման մեջ:

Աղյուսակ 2

SS ոլորտի ընկերություններում բիզնեսի զարգացման և ապրանքների զարգացման 10 առանցքային առաջնահերթությունները 2013-2016թթ. ժամանակահատվածում¹⁶

Բիզնեսի զարգացման 10 առաջնահերթությունները	Վարկ.	Ապրանքների զարգացման 10 առաջնահերթությունները	Վարկ.
Ընկերությունների աճի ինտենսիվացում	1	Վերլուծական և բիզնես վերլուծության ծրագրերի արտադրություն	1

¹⁶ www.gartner.com, www.idc.com, www.jpmorgan.com

Նոր հաճախորդների ներգրավում և պահպանում	2	Հեռախոսային տեխնոլոգիաների արտադրություն	2
Ծախսերի կրճատում	3	Ամպերի արտադրություն (SaaS, IaaS, PaaS)	3
Նոր ապրանքների և ծառայությունների մշակում	4	Համատեղ աշխատանքի և փաստաթղթաշրջանառության ապահովման համակարգերի արտադրություն	4
Օգտագործման արդյունքների բարելավում	5	Վիրտուալ համակարգերի արտադրություն	5
Արդյունավետության բարելավում	6	Կորպորատիվ կառավարման ծրագրային միջոցների արտադրություն	6
Շահութաբերության բարձրացում	7	IT կառավարման ծրագրային միջոցների արտադրություն	7
Աշխատուժի ներգրավում և պահպանում	8	Հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման ավտոմատացված համակարգերի արտադրություն	8
Մարկետինգի և վաճառքների արդյունավետության բարձրացում	9	ERP հավելվածների արտադրություն	9
Նոր շուկաներ և նոր տարածաշրջաններ ներթափանցում	10	Ցանցային անվտանգության համակարգերի արտադրություն	10

Աղյուսակ 2-ից ակնհայտ է, որ ընկերությունների առաջնահերթություններում ամենաբիչ կարևորվողներից մեկը հանդիսանում է անձնակազմի ներգրավման խնդիրը, ինչը հանդիսանում է արտապատվիրման շուկայի աճի կարևոր ինդիկատորներից մեկը: Այստեղից հնարավոր է եզրակացնել, որ խոշոր ընկերությունների կողմից SS արտապատվիրման ծավալները 2013-2016 թթ. կշարունակեն աճել և ըստ կարևորության աստիճանի կբաշխվեն աղյուսակում ներկայացված 10 ապրանքային ոլորություններում:

Կանխատեսվում է, որ 2013-2016թթ. ժամանակահատվածում SS ոլորտի արտադրանքի հիմնական սպառողները կհանդիսանան ֆինանսական հաստատությունները, կոմունիկացիոն ընկերությունները, մեդիայի և սպասարկման ոլորտի ընկերությունները, ինչպես նաև արտադրական

ձեռնարկություններն ու այս ուղղությամբ նորեկներ հանդիսացող՝ հումք արդյունահանող ընկերությունները: Ըստ կանխատեսումների՝ ՏՏ ծախսերի մեծությամբ առաջատար դիրքեր դուրս կգան հենց արտադրական ընկերություններն ու հումքի վերամշակմամբ զբաղվող ընկերությունները, որոնց ծախսերի մեծ մասը կուղղվի վաճառքի գործընթացի օպտիմալացմանն ու ավտոմատացմանը, «ամպային», սոցիալական և «big data» տեխնոլոգիաների ձեռք բերմանը: Ընդհանրապես նշված երկու ճյուղերի ընկերությունները, ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի ընկերությունների, իրենց շահույթից, տոկոսային հարաբերակցությամբ, մոտ երեք անգամ ավելի մեծ ծախսեր կկատարեն: Այստեղ առավել հեռանկարային ներդրումների ուղղություններ են հանդիսանում վճարումների, փոխառությունների և առևտրային օպերացիաների ավտոմատացման և ռիսկերի կառավարման ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման միջոցների արտադրությունները: Համաշխարհային տնտեսության մյուս ճյուղերի, ՏՏ արտադրանքի նկատմամբ պահանջարկի կայուն աճ կարձանագրվի նաև ապահովագրության և տրանսպորտավորման ճյուղերում:

ՏՏ ոլորտի մյուս կարևորագույն առանձնահատկությունը կայանում է ինչպես համաշխարհային տնտեսությունում և դրա առանձին տարածաշրջաններում ընթացող մակրոտնտեսական գործընթացների, այնպես էլ առանձին ճյուղերում վերափոխումների և դրանց առաջադրած խնդիրների նկատմամբ գերզգայունության մեջ: Այդ առումով 2013-2016թթ. ժամանակահատվածում ՏՏ ոլորտի հնարավոր զարգացման ռազմավարական ուղղությունների բացահայտման համար հիմք կարող են հանդիսանալ համաշխարհային տնտեսության մյուս ճյուղերում ակնկալվող կարևորագույն իրադարձությունների կանխատեսումները: Մասնավորապես ՏՏ ոլորտի զարգացման վրա առանցքային նշանակություն կունենան համաշխարհային տնտեսությունում ընթացող հետևյալ գործընթացները.

- Ավտոարդյունաբերողների կողմից ավտոնոմ կառավարվող ավտոմեքենաների արտադրության պլանները, որոնց սերիական արտադրությունը առաջատար ավտոկոնցեռներում նախատեսված է կազմակերպել 2016 թվականից, ինչը մեծապես կնպաստի ՏՏ ոլորտում ճանաչման, կողմնորոշման և կառավարման ավտոմատացված համակարգերի նոր ուղղությունների զարգացմանը:

- Աշխատանքի և դրամաշրջանառության ոչ ավանդական ձևերի զարգացումը կնպաստի կոմունիկացիաների և ֆինանսական հատվածներում նոր լուծումների նկատմամբ պահանջարկի մեծացմանը:

- Բարդ բժշկական տեխնոլոգիաների կյանքի կարճ պարբերաշրջանը արդեն 2016 թվականին գլոբալ մասշտաբներով կարի բժշկական սարքավորումներում նոր SS լուծումների առաջարկման խնդիրները:

- Կրթական շուկայում կրթական ծրագրերի տևողության հետևողական կրճատումը կհանգեցնի «մեծ տեղեկատվության» պահպանման ասպարեզում նոր լուծումների որոնմանը:

- Սկսած 2015 թվականից ընկերությունների կողմից մրցակցային ամենաառանցքային առավելություն կդիտարկվի տեղեկատվության ինտեգրացիան, ինչը կնպաստի այս ուղղությամբ նոր լուծումների որոնմանը:

- Ավտոապահովագրության բնագավառում pay-as-you-drive մոդելի կիրառման աճը կհանգեցնի ապահովագրական շուկայում նոր լուծումների որոնմանը:

- Մեղիագովազդի արդյունավետության գնահատման համատեքստում մասնագիտացած կազմակերպությունների թվի և դրանց բիզնեսի աճը կմեծացնի համացանցում մեղիայի ավտոմատ գնահատման համակարգերի մշակման խնդիրը:

- Հեռախոսներով վճարումների համակարգերի ներթափանցումը զարգացող երկրներ և դրանց հաջող ծավալումը կսրեն mobypay համակարգերի մշակման խնդիրները և տվյալների ավտոմատ ինտեգրման լուծումների անհրաժեշտությունը:

- Ինտերնետի BtoC հատվածի արագ զարգացման հետևանքով գնալով կմեծանա սպառողական ապրանքներ արտադրող այն ընկերությունների թիվը, որոնք ներդրումներ կիրականացնեն տեխնոլոգիական «ստարտափներում»:

- Բիզնես գործընթացների միասնականացման և ֆինասական մենեջմենթի սկզբունքների միասնականացման արդյունքում՝ սկսած 2014 թվականից գործարար հատվածում կորպորատիվ ծրագրային ապահովման միջոցների նկատմամբ պահանջարկում կսկսի մեծանալ ինտելեկտուալ օպերացիոն տեխնոլոգիաների նկատմամբ պահանջարկը:

- Դիսկրետային դետալաշինության բնագավառում 3D տեխնոլո-

գիաների ներդրման արագ տեմպերը 2016 թվականից սկսած կսրեն նշյալ տեխնոլոգիայով ավտոնոմ աշխատող հոսքագծերի արտադրության և դրանց ծրագրային ապահովման խնդիրները¹⁷:

Ինչպես երևաց տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ շուկայի զարգացման միտումների կանխատեսումների վերլուծությունից, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում SS ոլորտի որդեգրած ռազմավարական ընդլայնման քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ գնալով ավելի է ընդգծվում առավել առաջատար տեխնոլոգիաների պահանջարկի աճը ավանդականների նկատմամբ: Սա նշանակում է, որ արտապատվիրման ավանդական շուկան մոտ ժամանակահատվածում կենթարկվի լուրջ վերածնունդների՝ ավելի բարձր հավելյալ արժեք ունեցող, սակայն ավելի բարդ լուծումներ ենթադրող տեխնոլոգիաների սեգմենտի արևմտյան ընդլայնման հաշվին: Մյուս կողմից ակնհայտ դարձավ, որ ցածր հավելյալ արժեքի սեգմենտում մասնագիտացած երկրները (նաև ՀՀ-ն) հետզհետե կկորցնեն իրենց իրացման հնարավորությունները՝ կապված ավանդական տեխնոլոգիաների նկատմամբ պահանջարկի՝ առավել զարգացող երկրներ տեղափոխման հետ: Սա կապված է նրա հետ, որ ապագայում ավանդական տեխնոլոգիաներում ծախսերն իրենց վրա վերցնելու պատրաստ երկրների կազմակերպությունները հանդիսանում են արտապատվիրման շուկայի առաջատարներ և ծախսեր-որակ-պատվերներ տիրություն ունեն անհամեմատ ավելի ծանրակշիռ մրցակցային առավելություններ: Սա ենթադրում է, որ ոլորտի զարգացման նկատառումներից ելնելով, ՀՀ SS ոլորտը կարճ ժամանակահատվածում պետք է կարողանա համապատասխան փորձ կուտակել ավելի բարդ տեխնոլոգիաների մշակման բնագավառում:

¹⁷ www.gartner.com, www.idc.com, www.jpmorgan.com

ОСОБЕННОСТИ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ГЛОБАЛЬНОГО РЫНКА ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ

Н. Саргсян

Резюме

В статье выявлены особенности отрасли информационных технологий и динамика роста как в глобальных масштабах, так и в региональных. Представлены также товарная структура рынка и прогнозы роста разных сегментов рынка информационных технологий в периоде 2013-2016гг. В статье также представлены вероятные пути перестановок сегментов рынка и тренды развития, которые обусловлены перестановками других вертикальных отраслей. В статье также представлены перестановки сегмента аутсорсинга в связи с изменениями бизнеса и товарных приоритетов ведущих компаний отрасли информационных технологий.

CHARACTERISTICS AND DEVELOPMENT TRENDS OF THE GLOBAL MARKET OF INFORMATION TECHNOLOGY

N. Sargsyan

Summary

The research paper presents specifications of IT sector and its growth dynamics on both regional and global levels. It also presents product structure of global IT market and forecasts consumption growth volume of distinct products. Based on the researches of leading think tanks, it presents consumption target directions for the period of 2013-2016. Based on forecasts of dynamics of growth in different sectors of the economy and their probable impact on IT sector, the paper presents recommended directions of reforms. Based on business and product priorities of leading companies we show reform directions of IT sector for the period of 2013-2016.

ОБНАРУЖЕНИЕ СИГНАЛОВ В РАЗНЕСЕННЫХ РЛС ПРИ ТЕНЕВОМ РАССЕЙАНИИ

Г.Л. Айвазян

Современные многопозиционные РЛС (МПРЛС) представляют собой сложные иерархические структуры, решающие широкий круг целевых задач. Большой интерес, проявляемый к МПРЛС, определяется их существенными преимуществами по сравнению с моностатическими РЛС - благодаря совместной обработке информации о целях, поступающих от отдельных измерительных позиций [1, 2].

При объединении РЛС в многопозиционные системы улучшаются их основные тактико - технические характеристики и показатели качества. Использование структурной и информационной избыточности МПРЛС способствует получению высокоточной координатной информации [3, 4]. Наряду с этим, благодаря одновременному наблюдению радиолокационной цели с различных направлений возрастает объем сигнальной информации, используемой в процессе ее распознавания [5, 6].

Использование в МПРЛС нескольких передающих и приемных пунктов повышает также общую энергетику системы, причем наибольший выигрыш реализуется в пространственно-когерентных МПРЛС при кооперативном приеме радиолокационных сигналов. Повышению общего энергетического потенциала МПРЛС способствует также снижение потерь СВЧ - энергии благодаря исключению антенных переключателей, устройств защиты приемников и т.д. при разделении передающих и приемных позиций.

Вместе с тем, характеристики многопозиционных РЛС можно дополнительно увеличить использованием специфического эффекта, связанного с многократным увеличением ЭПР радиолокационных объектов при теневом рассеянии [7-9]. Функционирование многопозиционных РЛС в условиях теневого рассеяния приводит к существенному возрастанию энергетического отношения сигнал / шум,

с которым связаны все основные показатели качества обработки радиолокационной информации и технические параметры радиолокационных систем [8, 10, 11].

Наблюдаемое при больших бистатических углах возрастание средней ЭПР радиолокационных целей может заметно повысить эффективность обнаружения радиолокационных объектов. Для оценки эффективности обнаружения целей в разнесенных системах при теновом рассеянии рассмотрим важный для практики случай обнаружения радиолокационных сигналов со случайными амплитудами и начальными фазами. Так как бистатическая система является элементарным звеном, зная характеристики которого, можно провести исследование более сложной МПРЛС, то проведем анализ применительно к бистатической РЛС.

Как известно [12], характеристика обнаружения $D(q)$ для радиолокационных сигналов с медленно флуктуирующими амплитудами выражается формулой

$$D = F^{(1+q^2)^{-1}} \quad (1),$$

где D - вероятность правильного обнаружения,

F - вероятность ложной тревоги,

q^2 - соотношение сигнал / шум по мощности.

В соответствии с выражением (1), приращение δD вероятности правильного обнаружения, вызванное эффектом теневого рассеяния, в предположении равенства вероятностей ложных тревог в бистатической и эквивалентной моностатической системах будет равно

$$\delta D = F^{(1+q_b^2)^{-1}} - F^{(1+q_m^2)^{-1}} \quad (2),$$

где q_b^2 - соотношение сигнал / шум по мощности в бистатической системе, функционирующей в условиях теневого рассеяния,

q_m^2 - соотношение сигнал / шум по мощности в эквивалентной моностатической системе.

В случае бистатической радиолокационной системы соотношение сигнал / шум по мощности q_b^2 может быть представлено в виде [10]

$$q_b^2 = \frac{\sigma_b}{\sigma_m} q_m^2 \quad (3),$$

где q_m^2 - соотношение сигнал / шум по мощности в эквивалентной моностатической системе,

σ_b - бистатическая ЭПР радиолокационного объекта,

σ_m - моностатическая ЭПР радиолокационного объекта.

На основании (3) выражение (2) можно записать в виде

$$\delta D = F^{(1+\frac{\sigma_b}{\sigma_m}q_m^2)^{-1}} - F^{(1+q_m^2)^{-1}} \quad (4)$$

Для оценки приращения вероятности обнаружения δD воспользуемся формулами для бистатической и моностатической ЭПР σ_b и σ_m . Для средних значений бистатической ЭПР радиолокационного объекта произвольной формы имеем [8]

$$\sigma_b \simeq 4\pi \left(\frac{\bar{S}}{\lambda}\right)^2, \quad \beta \leq \beta^* \quad (5)$$

$$\sigma_b \simeq \frac{\lambda \bar{l}}{\pi^2 \beta^3}, \quad \beta > \beta^* \quad (6)$$

$$\beta^* = \frac{\lambda}{\pi} \left(\frac{\bar{l}}{4\bar{S}^2}\right)^{1/3} \quad (7)$$

где β^* - угол, определяющий границу между главным лепестком и боковыми лепестками диаграммы рассеяния в случае бистатической радиолокации,

β - угол, дополняющий бистатический угол рассеяния $\bar{\beta}$ до 180° ($\beta = \pi - \bar{\beta}$),

\bar{l} - средняя длина теневого контура объекта,

\bar{S} - площадь плоской фигуры, ограниченной кривой раздела освещенной и теневой частей объекта,

λ - длина волны.

Средняя ЭПР обратного рассеяния выпуклого объекта произвольной формы равна [8, 13]

$$\sigma_m = \frac{S_{\Pi}}{4} \quad (8)$$

где S_{Π} - площадь полной поверхности радиолокационного объекта.

Подставляя выражения (5), (6) и (8) в (4), для приращения вероятности обнаружения δD с учетом коэффициента отражения γ получим

$$\delta D = F^{(1 + \frac{16\pi\bar{\sigma}^2}{\lambda^2\gamma S_{\Pi}} q_m^2)^{-1}} - F^{(1 + q_m^2)^{-1}}, \quad \beta \leq \beta^* \quad (9)$$

$$\delta D = F^{(1 + \frac{4\lambda\bar{\sigma}}{\pi^2\beta^2\gamma S_{\Pi}} q_m^2)^{-1}} - F^{(1 + q_m^2)^{-1}}, \quad \beta > \beta^* \quad (10)$$

Для оценки величины δD воспользуемся также эмпирической формулой, связывающей бистатистическую и моностатическую ЭПР радиолокационных объектов [7]

$$\frac{\sigma_b}{\sigma_m} = 1 + \exp\left[n|\bar{\beta}| - (2,4n+1)\right] \quad (11)$$

где n - эмпирический коэффициент, определяемый конфигурацией и сложностью радиолокационного объекта. После подстановки (11) в (4) для δD получим

$$\delta D = F^{\left\{1 + \exp\left[n|\bar{\beta}| - (2,4n+1)\right]\right\} q_m^2}^{-1} - F^{(1 + q_m^2)^{-1}} \quad (12)$$

Для оценки величины приращения δD были проведены расчеты по формулам (9), (10) и (12) для конуса с параметрами $\lambda/a = 0,5$, $h/a = 6$ и цилиндра с параметрами $\lambda/a = 0,2$, $h/a = 16$. Из расчетов следует, что в условиях теневого рассеяния наблюдается заметное приращение вероятности правильного обнаружения, причем это имеет место не только в пределах главного лепестка ($\beta^* \approx 8^\circ$ для конуса и $\beta^* \approx 1^\circ$ для цилиндра), но и в области боковых лепестков диаграммы рассеяния объектов. Так, например, в случае конуса при бистатистическом угле $\bar{\beta} = 170^\circ$, $q = 10$, $\gamma = 1$ приращение $\delta D = 0,12$ и $\delta D = 0,39$ при $q = 5$. Для цилиндра при тех же значениях параметров $\delta D = 0,1$ и $\delta D = 0,29$ соответственно. Кроме того, значения δD

возрастают и при уменьшении коэффициента отражения γ . Так, в случае конуса при бистатическом угле $\bar{\beta} = 160^\circ$ уменьшение γ от 1 до 0,01 приводит к возрастанию δD на 0,05 при $q = 10$ и на 0,18 при $q = 5$.

Как известно, эффективным средством улучшения характеристик обнаружения является накопление радиолокационных сигналов. При накоплении увеличивается суммарная энергия сигнала и улучшается соотношение сигнал/шум. Число накапливаемых импульсов, обеспечивающее требуемое результирующее отношение сигнал/шум, зависит от способа накопления. В то же время, существенного сокращения необходимого числа суммируемых импульсов можно добиться за счет функционирования разнесенных систем в условиях теневого рассеяния. В этом случае имеет место дополнительное улучшение результирующего соотношения сигнал / шум, определяющего рабочую характеристику приемного устройства.

При однопороговом обнаружении (обнаружении с фиксированным объемом выборки) и когерентном накоплении количество суммируемых импульсов можно определить по формуле

$$M_K \approx \rho^{-1} \left(\frac{\lg F}{\lg D} - 1 \right) \quad (13),$$

где F и D - вероятности ложной тревоги и правильного обнаружения для пачки из M импульсов, $\rho = q^2$ - соотношение сигнал/шум по одному импульсу, обеспечивающее вероятности F и D по пачке из M импульсов.

При некогерентном накоплении достаточно хорошим приближением для количества суммируемых импульсов M служит формула

$$M_H \approx \rho^{-2} \left(\frac{\lg F}{\lg D} - 1 \right)^2 \quad (14)$$

Как следует из соотношений (13) и (14)

$$M_H = M_K^2 \quad (15)$$

На основании (13) с учетом выражений (3), (5), (6) и (8), а также коэффициента отражения γ , выигрыш в числе когерентно накапливаемых импульсов в разнесенной радиолокационной системе по сравнению с моностатической системой будет равен

$$\frac{M_{km}}{M_{kb}} \simeq \frac{\pi}{\gamma S_{II}} \left(\frac{4\bar{S}}{\lambda} \right)^2, \quad \beta \leq \beta^* \quad (16)$$

$$\frac{M_{km}}{M_{kb}} \simeq \frac{4\lambda\bar{I}}{\pi^2 \beta^3 \gamma S_{II}}, \quad \beta > \beta^* \quad (17)$$

Аналогично, на основании эмпирического соотношения (11) получим

$$\frac{M_{km}}{M_{kb}} \simeq 1 + \exp \left[n |\bar{\beta}| - (2,4n + 1) \right] \quad (18)$$

причем с учетом (15) будем иметь

$$\frac{M_{nm}}{M_{nb}} = \left(\frac{M_{km}}{M_{kb}} \right)^2 \quad (19)$$

Результаты расчетов, проведенных по формулам (16)-(19) для конуса и цилиндра, показывают, что выигрыши в количестве накапливаемых импульсов в разнесенных радиолокационных системах из-за теневого рассеяния могут быть достаточно большими. Так, в случае конуса при бистатическом угле $\bar{\beta} = 165^\circ$ выигрыш составляет 8 дБ при когерентном и 16 дБ при некогерентном накоплении. Для цилиндра при $\bar{\beta} = 170^\circ$ выигрыш равен 6,4 дБ и 12,8 дБ соответственно.

Таким образом, обобщая сказанное, можно заключить, что в разнесенных радиолокационных системах в условиях теневого рассеяния эффективность обнаружения радиолокационных объектов повышается. Выигрыши в вероятности обнаружения наблюдаются не только в пределах главного лепестка, но и в области боковых лепестков диаграммы рассеяния объектов. Кроме того, число накапливаемых импульсов, необходимое для обеспечения требуемого соотношения сигнал / шум, уменьшается, что сокращает время поиска и обнаружения радиолокационных объектов.

Ключевые понятия: *бистатическая радиолокация, многопозиционная радиолокация, теневое рассеяние, обнаружение сигналов.*

ЛИТЕРАТУРА

1. S.R. Doughty - Development and Performance Evaluation of a Multistatic Radar System. University College London, 2008, pp.213
2. C.J. Baker - An Introduction To Multistatic Radar. College of Engineering and Computer Science, ANU, 2007, pp.20
3. V.S. Chernyak - Fundamentals of Multisite Radar Systems: Multistatic Radars and Multiradar Systems, Gordon and Breach Science Publishers, 1998, pp.475
4. W. Beide - The Nature of Bistatic and Multistatic Radar, International Conference on Radar, 2001, pp.15-18
5. W.G. Nebabin - Methods and Techniques of Radar Recognition, Artech House, 1995, pp. 239
6. А.Л. Горелик, В.А. Скрипкин - Селекция и распознавание на основе локационной информации, Москва, Радио и связь, 1990, -240с.
7. В.Я. Аверьянов - Разнесенные радиолокационные станции и системы, Минск, Наука и Техника, 1978, -250с.
8. А.К. Черемисов - Статистические характеристики эффективной площади рассеяния тела в бистатической радиолокации, Москва, Радиотехника и Электроника, 1987, N 12, с.2516-2524
9. J.I. Glaser - Bistatic RCS of complex objects near forward scatter, IEEE Trans.AES, 1985, N1, pp.70-78
10. Г.Л. Айвазян - Адаптивное управление сопровождением объектов в разнесенных РЛС при теневом рассеянии, Ереван, Европейская Академия: Сборник научных трудов, 2011, N1(01),с.156-165
11. Г.Л. Айвазян - Информативность разнесенных РЛС при теневом рассеянии, Ереван, Европейская Академия: Сборник научных трудов, 2012, N1(02),с.86-93
12. Финкельштейн М.М. - Основы радиолокации, Москва, Радио и связь, 1983, -530с.
13. В.О. Кобак - Радиолокационные отражатели, Москва, Сов.Радио, 1975, -248с.

ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ ՌԱԴԻՈԼՈԿԱՅԻՈՆ ՀԱՍԱԿԱՐԳԵՐՈՒՄ
ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՅՐՄԱՆ
ԳԵՊԸՈՒՄ

Գ.Լ. Այվազյան

Ամփոփում

Հոդվածում դիտարկվում են ստվերային ցրման դեպքում տարանջատված ռադիոլոկացիոն համակարգերում ռադիոլոկացիոն ազդանշանների հայտնաբերման հնարավորությունները: Գնահատվում են բիստատիկ համակարգերում ռադիոլոկացիոն ազդանշանների կուտակումներն ու հայտնաբերման հավանականությունները կոնաձև և գլանաձև ռադիոլոկացիոն օբյեկտների համար:

Ստացված արդյունքները ցույց են տալիս բիստատիկ համակարգում ազդանշանների հայտնաբերման արդյունավետության նկատելի աճ՝ ցրման դիագրամայի ինչպես գլխավոր, այնպես էլ կողային տիրույթներում:

Առանցքային հասկացություններ. բիստատիկ ռադիոլոկացիա, բազմադիրքային ռադիոլոկացիա, ստվերային ցրում, ազդանշանների հայտնաբերում:

SIGNAL DETECTION IN SEPARATED RADARS NEAR
FORWARD SCATTER

G.L. Ayzayan

Summary

In this article, possibilities of signal detection in separated radars near forward scatter are discussed. The radar signals accumulation and probabilities of their detection in bistatic systems for cylindrical and conical radar objects are estimated.

The obtained results show that there is significant increasing in the efficiency of radar signals detection in bistatic system near the main and side-lobe scattering.

Key concepts: bistatic radar, multistatic radar, forward scatter, signal detection.

«ՏԱՐԱԾՔԻ ԻՄԻՋ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ա.Ս. Մատենցյան

Անգլերենից թարգմանաբար՝ «age» բառը նշանակում է պատկեր կամ կերպար: Իր բովանդակային լիքքավորմամբ իմիջը շատ ավելի ընդարձակ հասկացություն է: Դա հասարակական գիտակցության մեջ կազմված և որոշ դեպքերում կարծրատիպի նշանակություն ստացած ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի կերպարն է, որն ունի պատկերավոր և զգացմունքային գունավորում: Իմիջ կարող են ունենալ մարդը, կազմակերպությունը, ապրանքը, ինչպես նաև զբոսաշրջային տարածքը՝ քաղաքը, երկիրը, տարածաշրջանը, այլ կերպ ասած՝ դեստինացիան: Իմիջի ձևավորումը երբեմն տեղի է ունենում տարերայնորեն, սակայն ավելի հաճախ դա հոգեբանության, գովազդի և մարքեթինգի ոլորտների մասնագետների համատեղ աշխատանքի արդյունք է: Իմիջն արտացոլում է որոշակի սոցիալական խմբերի սպասումները և այդ պատճառով այն կարող է տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող սուբյեկտների հաջողության երաշխիքը հանդիսանալ: Իմիջի առկայությունը, բնույթը և ներգործության աստիճանը բացահայտվում է հատուկ հետազոտությունների միջոցով: Իմիջի որոշակի ընկալումն առկա է միայն այն զանգվածի (հասարակության մասի) մոտ, որի գիտակցության մեջ այն ձևավորվել է:

Սակայն վերադառնանք «age» բառի ուղիղ իմաստին և դրա կիրառման առանձնահատկություններին: Հայերենի մաքրության պահպանման ջատագովները կորականապես դեմ են օտար իմիջ բառի հայատառ օգտագործմանը՝ պնդելով, որ ցանկացած պարագայում այն անհրաժեշտ է փոխարինել հայեցի կերպար բառով:

Ապացուցենք, որ «իմիջ» և «կերպար» հասկացություններն իրենց նշանակությամբ բնավ չեն կարող նույնացվել, թեև դրանց միջև, հաճախ թյուրիմացաբար, հավասարության նշան է դրվում: Ընդ որում, կերպար բառը բացատրական դեր է խաղում իմիջ հասկացության սահմանումներում, իսկ հակառակը երբեք չի հանդիպում, այսինքն՝ հնարավոր չէ իմիջ բառով

բացատրել «կերպար» հասկացությունը: Հետևաբար՝ հավասարության նշանն արդեն իսկ բացառվում է:

Պետք է նաև հստակեցնել երկու հասկացությունների կիրառման բնագավառները: Ավելի սովորական կամ ավելի «կենցաղային» օգտագործման շրջանակներում է կերպար բառը, որի տակ, որպես կանոն, հասկացվում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի սուբյեկտիվ ընկալումը: Այդ ընկալումը տարերային բնույթ է կրում ընդհուպ մինչև այն պահը, երբ որոշակի կերպարի ստեղծումը դառնում է նպատակ, և այս պահից ի վեր խնդիրը կենցաղային դաշտից տեղափոխվում է հաղորդակցական դաշտ, ուր և ի հայտ է գալիս իմիջ հասկացությունը:

Գովազդի և PR-ի* բնագավառում «իմիջ» հասկացությունը կիրառվում է որպես հասարակության թիրախային խմբերի պահանջմունքների ուսումնասիրության հիման վրա ստեղծված հատուկ կերպար, որի նպատակներից մեկն է հնարավորինս կատարելագործել թիրախային խմբի պատկերացումներն իմիջը կրող սուբյեկտի մասին՝ մոտեցնելով դրանք իդեալական կերպարին և ծառայեցնելով սուբյեկտի հաղորդակցական (գովազդային) խնդիրների լուծմանը [1]: (Այստեղ մենք գիտակցաբար չենք քննարկում մրցակիցների իմիջի թուլացմանը կամ նույնիսկ կործանմանը նպատակաուղղված գործողությունները:) Այսպիսով, «իմիջ» հասկացությունը կիրառվում է որոշակի սուբյեկտի (օրինակ՝ զբոսաշրջային տարածքի) անհրաժեշտ կերպարի ձևավորման հաղորդակցական տեխնոլոգիայի իմաստով:

Իմիջի տեխնոլոգիական բնույթն ընդգծող բնորոշ առանձնահատկություններն են.

- Իմիջը պարզեցված է՝ ի տարբերություն սուբյեկտի, որի հասարակական դիմանկարն է այն հանդիսանում: Կարևոր առանձնահատկություններից է իմիջի գերիշխող բնույթը. թվով սահմանափակ սիմվոլների միջոցով մեծ ծավալի ինֆորմացիա արտահայտելու իր կարողությամբ իմիջը սուբյեկտի մասին համառոտ և սպառիչ հաղորդագրություն է փոխանցում:
- Իմիջն ընդգծում է սուբյեկտի յուրահատկությունն ու եզակիութ-

* PR – Public Relations՝ կապեր հասարակության հետ, հանրային կապեր

յունը՝ դրանով իսկ տարբերվելով կարծրատիպից, որն ընդհանրացնում է երևույթները, այլ ոչ թե անհատականացնում:

- Իմիջը հստակ է և որոշակի, սակայն, միաժամանակ, ճկուն է և փոփոխական. այն անընդհատ հղկվում և ադապտացվում է ժամանակի պահանջներին ու թիրախային խմբերի սպասումներին համընթաց (հասարակական արձագանքը մշտապես վերահսկվում է):

- Իմիջը հաղորդակցություն է, որն անպայման պետք է «հետադարձ կապ» ունենա. իմիջից բխող ինֆորմացիան հիմնված է թիրախային խմբերից ակնկալվող արձագանքի վրա:

- Իմիջը որոշ չափով համապատասխանում է իրականությանը, սակայն, միևնույն ժամանակ, իդեալականացնում է սուբյեկտին, չափազանցում է վերջինիս շահավետ կողմերը և հաճախ նրա կերպարին վերագրում լրացուցիչ գաղափարային, սոցիալական, հոգեբանական և այլ արժեքներ՝ փորձելով արդարացնել հասարակության սպասումները: Նշենք, որ տարածքի (օրինակ՝ երկրի) դեպքում իմիջի և սուբյեկտի համապատասխանության տոկոսը բավական բարձր է, քանի որ այն մեծ մասամբ հիմնվում է իրականության այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են սուբյեկտի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները, քաղաքական համակարգը, տնտեսական զարգացման առանձնահատկությունները, ժողովրդագրական և այլ օբյեկտիվ տվյալները [2]:

- Իմիջը միավորում է սուբյեկտի իրական կերպարը և հասարակական պատկերացումները նրա մասին՝ հասարակության գիտակցության մեջ ակտիվացնելով սուբյեկտի միայն այն բնութագրերը, որոնք նպաստում են անհրաժեշտ իմիջի ամրապնդմանը:

- Եթե իմիջ կրող սուբյեկտը տարածքային միավոր է (երկիր, տարածաշրջան, զբոսաշրջային դեստինացիա), ապա իմիջը պետք է հաշվի առնի այդ տարածքային միավորի բնորոշման հետ կապված բոլոր մանրուքները, քանի որ իմիջային ռազմավարության մշակման արդյունքում տվյալ տարածքը դառնում է նաև մրցակցային միավոր: Բացատրենք այս դրույթը. սպառողական տեսանկյունից զբոսաշրջային դեստինացիայի ողջ արտադրական համալիրն արտադրում է սպառողական պահանջարկ ունեցող զանազան ծառայություններ, որոնք սպասարկման մարքեթինգում ընդունված է անվանել ծառայությունների շղթաներ (chains of services) [3]:

Ծառայությունների շղթաները իմիջային գործիքներ են, որոնք ամբողջական զբոսաշրջային ապրանքը բաժանում են առանձին գնահատելի բաղադրիչների և մասնակի գործընթացների: Սակայն զբոսաշրջիկը, սպառելով զբոսաշրջային ապրանքը (տուրփաթեթը), չի ընկալում այն որպես տարբեր սպասարկող ձեռնարկությունների կողմից մատուցվող առանձին ծառայություններ, այլ գնահատում է փաթեթը իբրև ամբողջական ծառայություն՝ վերջինիս որակը վերագրելով դեստինացիային (երկրին): Այսպիսով, տարածքային միավորը պետք է հոգա ծառայությունների շղթաների բոլոր տարրերի որակի մասին և դրանք օգտագործի իր զբոսաշրջային իմիջի ձևավորման մեջ:

Ընդունենք, որ իմիջ կրող սուբյեկտը տարածքային միավոր է, օրինակ՝ երկիր: Ցանկացած երկրի համար դրական իմիջի առկայության հույժ կարևորությունն ընդգծել է պետությունների ինքնության և միջազգային հեղինակության ձևավորման հայտնի ուսումնասիրող, Օքլանդի (Նոր Զելանդիա) համալսարանի պրոֆեսոր, քաղաքական գիտությունների դոկտոր Ջաքի Թրուն (Jacqui True)՝ ասելով. «Երկրների համար սեփական դրական իմիջի արտահանումը նույնքան կարևոր է, որքան այն ամենը, ինչ այդ երկրներն արտադրում և վաճառում են» [4]:

Գիտարկենք երկրի իմիջի բաղկացուցիչ տարրերը:

Երկրի իմիջի կառուցվածքը ներառում է բնութագրիչների երեք խումբ՝ անհատական, սոցիալական և սիմվոլիկ (խորհրդանշական) [5], որոնք որոշ հեղինակների կողմից տարանջատվում են նաև տեղեկությունների օբյեկտիվության և սուբյեկտիվության սկզբունքով [2].

1) Անհատական բնութագրիչների խումբ (օբյեկտիվ և պայմանականորեն ստատիկ տեղեկություններ, որոնք իմիջի ձևավորման ժամանակ գրեթե չեն ենթարկվում փոփոխությունների՝

- բնական ռեսուրսային ներուժը,
- հասարակության էթնոմշակութային ժառանգությունը,
- աշխարհաքաղաքական տվյալները (աշխարհագրական դիրքը, զբաղեցրած տարածքը, պետական սահմանների երկարությունը, ելքը դեպի ծով և այլն),

– երկրում պետականության ձևավորման վրա ազդեցություն գործած կարևոր պատմական իրադարձությունները,

– քաղաքական համակարգը և պետական կառավարման կառուցվածքը:

2) Սոցիալական բնութագրիչների խումբ (սուբյեկտիվ և պայմանականորեն դինամիկ տեղեկություններ, որոնք փոփոխվում են երկրի զարգացմանը համընթաց և իմիջի ձևավորման ժամանակ կարող են բազմիցս վերանայվել)՝

- հասարակությունում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը,
- քաղաքական և հասարակական միավորումների բնույթը և գործունեության սկզբունքները,
- հասարակության զարգացման բարոյական նորմերը,
- տնտեսական զարգացման կայունությունը,
- իրավական դաշտի համապատասխանությունը միջազգային նորմերին,
- կյանքի տարբեր ոլորտների պետական կարգավորման արդյունավետությունը:

Թե՛ անհատական, թե՛ սոցիալական տեղեկությունները կարող են ընդգրկվել այսպես կոչված սիմվոլիկ բնութագրիչների խմբում՝ ստեղծելով իմիջի համար անհրաժեշտ խորհրդանշական պատկերներ, որոնք արտացոլում են երկրի պատմամշակութային, քաղաքակրթական, կրոնական, ժողովրդա-առասպելական նկարագիրը:

Իմիջին նվիրված մասնագիտական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում երկրի ինքնության խնդրին (կորպորատիվ իմիջի ուսումնասիրություններում քննարկվում է կազմակերպության ռազմավարական կորպորատիվ ինքնությունը) [6]: Ըստ էության՝ ինքնությունը երկրի սեփական պատկերացումն է իր մասին և այլ երկրների շարքում իր տեղի մասին: Այս բավականին բարդ հասկացությունը երկրի իմիջի պարտադիր բաղկացուցիչներից մեկն է: Մասնագետների կարծիքով՝ երկրի ինքնությունը պետք է ներառի.

- ազգային ինքնությունը, որը որոշվում է աշխարհագրական դիրքի, քաղաքական և տնտեսական կյանքի, մշակույթի և պատմության առանձնահատկություններով, բնակչության էթնիկ և կրոնական կազմով, հասարակության մեջ առկա համոզմունքներով և արժեքային համակարգով,
- պետության կարգավիճակը՝ դիրքը միջպետական տարածության

մեջ, այլ երկրների հետ հարաբերությունների բնույթը, պետության դերը (կամ դերերը) միջազգային «բեմահարթակում»:

Իմիջն արտացոլում է հասարակության վերը թվարկված պատկերացումները սեփական ինքնության մասին, թեև դրանք, հնարավոր է, լիարժեք չհամապատասխանեն օբյեկտիվ իրականությանը: Եթե կա այդպիսի անհամապատասխանություն, ապա անխուսափելի է նաև երկրի կերպարի աղավաղումն արտաքին աշխարհում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության իմիջի և ինքնության բացահայտման ուղղությամբ բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ են կատարվել, որոնց արդյունքները հանգեցնում են հետևյալին՝ Ռուսաստանի հասարակական գիտակցության մեջ դեռևս չի հասունացել հստակ պատասխան այն հարցին, թե ինչպիսի՞ պետություն պիտի դառնա Ռուսաստանը կամ ո՞րն է այսօր Ռուսաստանի ազգային գաղափարը: Քանի դեռ երկրի ներսից սեփական ինքնության մասին արտաքին աշխարհին հղած ուղերձն անորոշ է, այն տարբեր երկրներում Ռուսաստանի վերաբերյալ հակասական կարծիքներ և նույնիսկ վիրավորական կասկածանքներ է առաջացնելու [7]:

Անկասկած, երկրի իմիջի կարևոր մաս են կազմում նաև հայտնի մարդկանց, քաղաքական գործիչների, առաջնորդների կերպարները: Մեծ Բրիտանիայի կառավարության հանրային դիվանագիտության հարցերի խորհրդական և ազգային բրենդինգի խոշոր մասնագետ՝ Սայմոն Անհոլթը (Simon Anholt) չափազանց բարձր է գնահատում առաջնորդների դերը երկրի իմիջի ստեղծման գործում՝ հատկապես ընդգծելով հզոր ինտելեկտ ունեցող խարիզմատիկ անձի նշանակությունը: Որպես օրինակ՝ Անհոլթը հիշատակում է Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Մարգարեթ Թեչչերին, որը ժամանակին կարողացել էր ողջ աշխարհում մեծ հեղինակություն ձեռք բերել և երկար տարիներ իր երկրի իմիջի անբաժան մասն էր կազմում [8]:

Իբրև իմիջի առանցքային բաղադրիչ՝ վերջին ժամանակներում շատ է կարևորվում երկրի ներդրումային գրավչությունը (կորպորատիվ իմիջի տեսությունում այն կոչվում է «բիզնես-իմիջ»): Որպեսզի երկիրն իր քաղաքական և տնտեսական պարամետրերով գրավիչ լինի ֆինանսական ներդրումների համար, այն պետք է աշխարհին ներկայանա բիզնես-իմիջի հետևյալ տարրերով.

- բիզնեսի քաղաքակիրթ միջավայր,
- թափանցիկություն և սոցիալական պատասխանատվություն (Էկո-լոգիական և տեխնոլոգիական անվտանգություն, կրթության և գիտության ֆինանսավորում, սոցիալական փաթեթների մշակում տարբեր ոլորտների աշխատակիցների համար և այլն),
- քաղաքական կայունություն և ներքին անվտանգության երաշխիքներ:

Պետությունը պետք է պատրաստակամություն ցուցադրի համաշխարհային շուկայի պայմաններն ընդունելու և յուրացնելու հարցում (օրենքով կարգավորվող և արդար «խաղի կանոնների» հաստատում, հարկային, դատական, բանկային և այլ համակարգերի բարեփոխումների իրականացում, բնական մենաշնորհների կարգավորում և այլն) [9]:

Ինչպե՞ս է ձևավորվում տարածքային միավորի իմիջը: Փորձենք այս հարցի պատասխանը գտնել արտասահմանյան հեղինակավոր մասնագետների աշխատություններում:

Իմիջաբանության և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում մի շարք հիմնարար աշխատությունների հեղինակ, հայտնի քաղաքագետ և տնտեսագետ, ՌԳ արտգործնախարարության Գիվանագիտական ակադեմիայի պրոֆեսոր Էռաստ Գալումովը (Галумов, Эраст Александрович) գտնում է, որ ցանկացած երկրի իմիջը տարածվում է հաղորդակցության բնական և արհեստական զանազան ուղիներով՝ արդյունքում որոշակի վերաբերմունք ձևավորելով տվյալ երկրի նկատմամբ [10]: Հայտնի է, որ երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին միջավայրում ծավալվող փոխգործակցությունները հիմնականում կառուցվում են ոչ թե իրական ճանաչողության, այլ ստեղծված իմիջի հիման վրա: Ուստի, եթե երկրի իմիջը համընկնում է պահանջվող կարծրատիպի հետ, ապա այն զգալիորեն բարձրացնում է երկրի մրցունակությունը միջազգային ասպարեզում: Ծիշտ ձևավորված իմիջը համոզիչ փաստարկ է անգամ կարևորագույն միջպետական որոշումների վրա ազդելու գործում: Ստացվում է, որ երկրի համար հույժ կարևոր խնդիրներից է իր պետական քաղաքականությամբ պայմանավորված գերակայություններին համապատասխանող միջազգային իմիջի ձևավորման և դրա հետագա կառավարման տեխնոլոգիաներին տիրապետելը:

Նույն Գալուստովն իր «Ռուսաստանի միջազգային իմիջը. ձևավորման ռազմավարություն» գրքում պնդում է, որ պետությունը պետք է ստեղծի որոշակի միասնական իմիջ, որը պարտավոր են քարոզել տվյալ պետության բոլոր ՋԼՄ-ները [11]:

Սակայն, լինելով ամբողջական, իմիջը հասարակության տարբեր խմբերին կարող է տարբեր իմաստային շեշտադրումներ և բնորոշումներ առաջարկել: Օրինակ՝ ներդրողներին հետաքրքրում են ներդրված միջոցների եկամտաբերությունը և հնարավոր ռիսկերը, գործարար հանրության բարձր խավը մտահոգված է երկրի հեղինակության և միջազգային շուկայի զարգացման վրա նրա ազդեցության հարցով, առհասարակ բիզնես միջավայրին հուզող խնդիրներից են ինովացիոն տեխնոլոգիաները, բիզնեսի վարման ռազմավարությունները, բիզնեսի նկատմամբ պետության կայուն դիրքորոշումը և իրավական դաշտի վիճակը, համագործակցող կողմերին հետաքրքրում է մրցակցային միջավայրը, սպառողների սպասումները կենտրոնացած են կազմակերպությունների արհեստավարժության, հուսալիության և ապրանքների (ծառայությունների) որակի վրա և այլն: Վերջապես, գրեթե բոլորին հուզում է երկրի ներքին և արտաքին իմիջների համապատասխանությունը, քանի որ վերջինով հաճախ պայմանավորված է այդ երկրի մասին պատկերացումների ճշմարտացիության աստիճանը:

Իմիջի փուլ առ փուլ ձևավորման տեխնոլոգիաները մեծ մասամբ հենվում են PR-տեսությունում մշակված հաղորդակցության ուսումնասիրության մոտեցումների վրա: Հաղորդակցության գործընթացի հիմնական խնդիրը առաջին անգամ համապարփակ կերպով ներկայացվեց Հարոլդ Դուայթ Լասվելի կողմից՝ իր հաղորդակցության մոդելում: Լասվելի հայտնի մոդելը հիմնված է հետևյալ բանաձևի վրա. «Who says what to whom via what channels with what effect?» [12]: Հետագայում այն տրոհվում է հինգ ինքնուրույն հարցերի, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է հաղորդակցական գործընթացի վերլուծության առանձին փուլ.

1. **Ո՞վ է ասում՝** հաղորդագրությունն ուղարկողի ուսումնասիրություն:
2. **Ի՞նչ է ասում՝** հաղորդագրության բովանդակության ուսումնասիրություն:
3. **Ու՞մ է ասում՝** հաղորդագրությունը ստացողի (հասցեատիրոջ) ուսումնասիրություն:

4. Ի՞նչ ուղիներով՝ հաղորդակցման ուղիների, միջոցների ուսումնասիրություն:

5. Ի՞նչ արդյունք է ունենում՝ հասցեատիրոջ վրա հաղորդագրության ազդեցության ուսումնասիրություն:

Լաավելի բանաձևն արտացոլում է հաղորդակցության վաղ մոդելներին բնորոշ մոտեցումը, այն է՝ հաղորդակցության գործընթացը մեկնաբանվում է որպես համոզման ակտ, որի արդյունքում հաղորդագրություն ուղարկողը պետք է ներազդի հասցեատիրոջ գիտակցության վրա: Քանի որ իմիջի կարևորագույն նպատակը նույնպես թիրախային խմբերի գիտակցության վրա ներազդելն է, ապա զարմանալի չէ, որ իմիջի ձևավորման գործընթացում PR-մասնագետների կողմից հաճախ կիրառվում է հենց Լաավելի մոտեցումը:

Կարծում ենք, միջազգային իմիջի ձևավորման լիարժեք ալգորիթմը կարող է ներառել հետևյալ փուլերը.

1. Իրավիճակի գնահատում (հետազոտություններ և վերլուծություն):

Ուսումնասիրությունների ելակետը իմիջի ստեղծման նպատակն է, ուստի և՛ իմիջի ազդեցության օբյեկտ հանդիսացող թիրախային լսարանը: Հասկանալով, թե ում պետք է ուղղված լինի իմիջը, պարզվում են այդ մարդկանց պահանջմունքները և նրանց գիտակցության մեջ արդեն իսկ ձևավորված պատկերացումները սուբյեկտի (երկրի) մասին, այսինքն՝ բացահայտվում է երկրի ներկայիս կարծրատիպային կերպարը: Որպես չափման միավորներ այդ թվում հաշվի են առնվում կերպարի գոյության երկարատևությունը, կայունությունը, դրականության կամ բացասականության աստիճանը:

2. Մրցակիցների իմիջների ուսումնասիրություն:

Կորպորատիվ ռազմավարություններում իմիջի ձևավորման ալգորիթմում առկա է նաև այսպիսի փուլ: Հավանաբար այն ավելորդ չէր լինի երկրների իմիջի ձևավորման գործընթացում, հատկապես երբ խոսքն այլ երկրների հետ համակեցության մեջ որոշակի կարգավիճակի նվաճման մասին է: Տնտեսական սուր մրցակցության պայմաններում անհրաժեշտ է ճանաչել մրցակիցներին՝ հնարավորինս ճիշտ կողմնորոշվելու համար սեփական առավելությունների դիրքավորման հարցում:

3. Չուզադիպության կետերի որոնում:

Ընթացիկ կերպարը համեմատվում է թիրախային լսարանի սպասումների հետ, ասինքն՝ գնահատվում է կերպարի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը ցանկալի իմիջին: Ջուզադիպության կետերը կամ համընկնումներն ապագա իմիջի հիմքն են դառնում: Մակայն, քանի որ իմիջը միայն մասամբ է համապատասխանում իրականությանը, ապա այդ հիմքին մի շարք լրացուցիչ, կերպարը շտկող կամ այսպես ասած՝ «ռետուշող» բնութագրեր են ավելանում:

4. Դիրքավորում:

Այս փուլում կատարվում է այլ սուբյեկտների միջև տվյալ սուբյեկտի անհատականությունն ընդգծող տարբերակիչ առավելությունների որոնում և ներկայացում: Գոյություն ունեն դիրքավորման տարբեր սկզբունքներ (ըստ առավելության, ըստ թիրախային խմբի սպասումներին համապատասխանության, ըստ հակադրության, այսինքն՝ ընդդեմ այլ սուբյեկտների բնութագրերի, ըստ լուծման ենթակա խնդրի, ըստ սպառողի գիտակցության մեջ ձևավորվող գուգահեռների և այլն): Քանի որ իմիջային բնութագրերը, հեռարձակվելիս, հասանելի են դառնում ամենատարբեր լսարաններին, ապա նպատակահարմար կլիներ կիրառել տարբեր սկզբունքների գուգորդման վրա հիմնված դիրքավորման ռազմավարություն, որը թիրախային խմբերի լայն շրջանակ կապահովեր սուբյեկտի համար:

5. Իմիջի առաջխաղացման հաղորդակցական ռազմավարության մշակում:

Մշտական տեղեկատվական հոսքի ապահովման համար անհրաժեշտ է կայուն հարաբերություններ հաստատել տարբեր մակարդակի ՋԼՄ-ների հետ, որոնք PR-պրակտիկայում իմիջի տարածման հիմնական հաղորդակցական ուղիներն են: Իմիջային տեղեկատվությունը պետք է ձևավորվի ոչ միայն որոշակի գաղափարական և արժեքային հարացույցի (պարադիգմայի) տեսքով, այլև պետք է մրցունակ լինի՝ համապատասխանելով մեդիամիջավայրում ընդունված չափորոշիչներին:

Այսպիսով, երկրի ներկայիս միջազգային կերպարի ուսումնասիրումն ու գնահատումը, թիրախային խմբերի սպասումների բացահայտումը և դրանց համադրումը առկա կերպարի հետ, ցանկալի իմիջի տեղեկատվական հարացույցի ձևավորումը, համապատասխան հաղորդակցական միջոցների օգնությամբ երկրի դիրքավորումը, տեղեկատվական շուկայի

օրենքների վրա հիմնված կայուն հարաբերությունների հաստատումը միջազգային մեղիահանրության հետ՝ սրանք են երկրի իմիջի ձևավորման հիմնական փուլերը:

Անդրադառնանք երկրի զբոսաշրջային իմիջի ստեղծման խնդրին:

Բնութագրելով «տարածքային-պետական սուբյեկտի զբոսաշրջային իմիջ» հասկացությունը՝ որպես ելակետ կարելի է ընդունել Ջբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մոտեցումը, համաձայն որի՝ «երկրի զբոսաշրջային իմիջը ռացիոնալ և էմոցիանալ պատկերացումների ամբողջություն է, որը բխում է երկրի բոլոր օբյեկտիվ բնութագրերի, մարդկանց սեփական փորձի և շրջանառվող ասեկոսեների համադրումից և ազդում է որոշակի կերպարի ստեղծման վրա» [13]:

Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք «տարածքի զբոսաշրջային իմիջ» հասկացության բնորոշման առնվազն երեք մոտեցումների՝ իմիջաբանական, բրենդինգային և մարքեթինգային, ընդ որում՝ տարբեր հեղինակների մոտ այս երեք մոտեցումները հաճախ գուգորդված են նույն տեքստի շրջանակներում: Օրինակ՝ Մ.Ա. Սպիրչենկոն, ուսումնասիրելով քաղաքների զբոսաշրջային իմիջի ձևավորման առանձնահատկությունները, քաղաքը դիտարկում է որպես «յուրօրինակ և եզակի ապրանք», որն ունի որոշակի բնորոշ հատկանիշներ և պահանջում է որոշակի դիրքավորում և առաջխաղացում՝ որոշակի շահերի հասնելու նպատակով: «Քաղաքի իմիջի տակ կարելի է հասկանալ քաղաքի՝ որպես տարածաշրջանի կամ երկրի համակարգում սոցիալական հարաբերությունների սուբյեկտի, պատմականորեն ձևավորված կերպարը, որը պայմանավորված է ազգային, սոցիալական, մշակութաբանական և բուն քաղաքակերտ («градосоставляющие») գործոններով և արտահայտված է ուղեկցող հաղորդակցական ատրիբուտներում» [14]: Այս բնորոշմանը կարելի է ավելացնել, որ քաղաքն ունի նաև զբոսաշրջային բրենդ՝ ձևավորման իր առանձնահատկություններով: Ընդունելով այս մոտեցումը՝ պետք է հիշել, որ քաղաքը նոր նյութական ապրանք չէ և ունի վաղուց ի վեր ձևավորված կերպար, որն ավելի առաջնային է, քան իմիջը և բրենդը: Կարելի է ասել, որ իմիջի հիմքում կերպարն է, իսկ բրենդի հիմքում՝ իմիջը: Ամփոփելով միտքը՝ նշենք, որ քաղաքի կերպարը սուբյեկտիվ երևույթ է, որը գոյատևում է կառավարման վարչական կառույցներից անկախ ու չի

վերահսկվում իշխանությունների կողմից: Ուստի, կոնկրետ նպատակներից ելնելով, տրամաբանական է և անհրաժեշտ այդ կերպարը վերահսկող և կառավարող ինչ-որ կատեգորիա սահմանել: Դա հենց իմիջն է՝ հատուկ ստեղծվող այն կերպարը, որը կծառայի քաղաքի զբոսաշրջային բաղադրիչի առաջխաղացմանը և հասցեագրված կլիմի հանրության որոշակի խմբերին:

Կիրառելով միաժամանակ մարքեթինգային և բրենդինգային մոտեցումները՝ Ա.Ֆ. Գորոխովը դիտարկում է զբոսաշրջային դեստինացիայի բրենդի գաղափարը: Հեղինակն զբոսաշրջային դեստինացիան ներկայացնում է որպես «զբոսաշրջային ապրանքների ինտենսիվորեն արտադրվող և սպառվող ամբողջություն, որը մշակված է որոշակի տարածքի ռեսուրսային և ենթակառուցվածքային բազայի վրա, խտացած է ժամանակի և տարածության մեջ և նախատեսված է սպառողների որոշակի կատեգորիաների համար» [15]: Զբոսաշրջային դեստինացիայի բրենդի հայեցակարգը, հեղինակի կարծիքով, իրենից ներկայացնում է գերիշխող ստեղծագործական մի գաղափար, որը կառուցված է տարածքի հիմնական ռեսուրսների և արժեքների «սիմվոլիզացիայի» հիման վրա և արտահայտված է իմաստային, պատկերավոր (գրաֆիկական), հնչյունային, անիմացիոն և այլ խորհրդանիշների օգնությամբ:

Բուն իմիջաբանական մոտեցում է ցուցաբերում Յու.Վ. Տարանովան՝ երկրի զբոսաշրջային իմիջը սահմանելով որպես «երկրի յուրահատկության և ինքնատիպության մասին սիմվոլիկ արտահայտված զգացմունքային և ռացիոնալ պատկերացումների ամբողջություն, որը հաղորդակցական տեխնոլոգիաների օգնությամբ ձևավորվում է հասարակության խմբերի (ռեալ և ապագա զբոսաշրջիկների) գիտակցության մեջ» [16]:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով տարածքի իմիջի հարցերը լուսաբանող գրականությունը, կարող ենք եզրակացնել, որ երկրի զբոսաշրջային իմիջի բնորոշումը հիմնականում համընկնում է երկրի ընդհանուր իմիջի բնորոշման հետ: Ավելանում են միայն որոշակի կոնկրետացումներ, որոնք կապված են հասցեատերերի՝ հասարակության ավելի փոքր խմբերի ընդգծման և իմիջային որոշակի բնութագրիչների (տվյալ թիրախային խմբի համար կարևորվող տարածքի բաղադրիչների) շեշտադրման հետ:

Կարելի է առանձնացնել տարածքային-պետական սուբյեկտի զբոսաշրջային իմիջի ձևավորման հետևյալ փուլերը.

– հասարակության թիրախային խմբերի սուբյեկտի հետ կապված սպասումների բացահայտում,

– տարածքի՝ որպես զբոսաշրջության զարգացման վայրի, առանձնահատկությունների և առավելությունների բացահայտում,

– սուբյեկտի առաջնային կերպարի բնութագրի համադրում ցանկալի իմիջի և թիրախային խմբերի պահանջմունքների հետ,

– հաղորդակցման գերակա միջոցների որոշում, որոնց օգնությամբ սուբյեկտի իմիջային տեղեկատվությունը կուղղվի թիրախային խմբերին. տվյալ դեպքում հիմնական հաղորդակցական ուղիներն են՝

ա) համացանցը (ներառյալ՝ բլոգները և ֆորումները).

բ) ՋԼՄ-ները.

գ) հատուկ միջոցառումները և իրադարձությունները.

դ) միջնորդները (զբոսաշրջային գործակալությունները).

ե) PR-տեխնոլոգիաների մաս կազմող տարբեր տիպի կենդանի հաղորդակցությունը թիրախային խմբերի հետ, այդ թվում՝ անձնական հանդիպումները,

– գործընթացի բոլոր մասնակիցների գործողությունները համակարգող և շահերը հաշվի առնող անհրաժեշտ ծրագրի մշակում և իրագործում,

– որոշակի ժամանակ անց ստեղծված իմիջի ներգործության արդյունավետության վերլուծություն:

Վերջին փուլը խիստ անհրաժեշտ է, քանի որ իմիջի նպատակն է ոչ թե մեկ անգամ գրավել զբոսաշրջիկներին, այլ նրանց հորդորել մշտական այցելություններ կատարել տվյալ տարածք, ինչպես նաև նրանց դրդել տարածքը գովազդել սեփական ծանոթների շրջանում:

Ի՞նչն է զբոսաշրջիկներին գրավում դեպի որևէ երկիր կամ տարածաշրջան:

Տարածքի իմիջը ձևավորող գործոններից առանձնացնում են, օրինակ՝

- պատմամշակութային ասպեկտը, տեսարժան վայրերը, իրադարձությունները, ընդհանուր գաղափարները, արժեքները, զգացմունքները (օրինակ՝ Լոնդոնը բիզնես-հեռանկարների կամ բարձրակարգ կրթություն ստանալու հնարավորությունների քաղաք),

- հիմնական զբոսաշրջային ռեսուրսները, որոնք ձևավորում են զբոսաշրջային պահանջարկը,

- տարածքի զբոսաշրջային ենթակառուցվածքները, որոնք ապահովում են ուղևորության ստանդարտացված որակը (տրանսպորտային փոխադրումը, տեղավորումը և սնունդը, զբոսաշրջիկներին մատուցվող ծառայությունների բոլոր տեսակները և այլն):

Որքան էլ զբոսաշրջիկները տարված լինեն կոնկրետ զբոսաշրջային (ճանաչողական, ռեկրեացիոն, գործնական, այլ) նպատակներով, նրանց ուշադրությունից չի վրիպի տարածքային սուբյեկտի ընդհանուր վիճակը՝ փողոցների մաքրությունը, տեղի բնակիչների քաղաքավարությունը և օգնություն ցուցաբերելու պատրաստակամությունը, հանրային վայրերում սպասարկման եղանակները, զանազան լրացուցիչ ծառայություններից օգտվելու մատչելիությունը (բանկոմատներ, կապի միջոցներ, խանութներ, դեղատներ և այլն): Այս ամենի մասին զբոսաշրջիկները, տուն վերադառնալուն պես, պատմում են իրենց ծանոթներին՝ ակամայից գովազդի կամ հակագովազդի աղբյուր հանդիսանալով: Ջրոսաշրջության զարգացումը կարող են խաթարել ոչ միայն վերը թվարկված գործոնների բացասական դրսևորումները, այլև ինֆորմացիայի պակասը, տարածքային սուբյեկտի ոչ հստակ դիրքավորումը ներքին և արտաքին տեղեկատվական դաշտերում, ենթակառուցվածքային թերությունները, քաղաքական խնդիրները, մուտքի արտոնագրերի ստացման հետ կապված դժվարությունները, ֆորսմաժորային (արտակարգ) և ճգնաժամային իրավիճակները և այլն:

Տարածքի իմիջը կերտելիս պետք է հիշել, որ տարբեր թիրախային խմբերին ուղղված հաղորդագրություններում ընդգրկվող իմիջային կառուցատարրերի համադրությունը և հաղորդակցության ուղիների ընտրությունը տարբեր են, քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր թիրախային խմբի յուրահատկությունը, զբոսաշրջային ուղևորության նպատակը, կրթական և ֆինանսական մակարդակը և այլ ժողովրդագրական տվյալներ:

Այսպիսով, երկրի զբոսաշրջային իմիջը մեծ մասամբ կարող է նույնացվել երկրի ընդհանուր իմիջի հետ կամ վերջինիս կարևորագույն բաղադրիչներից մեկը հանդիսանալ: Ակնհայտ է զբոսաշրջային իմիջի կապը երկրում առկա աշխարհագրական, բնակլիմայական, պատմամշակութա-

յին, սոցիալ-տնտեսական, քաղաքական և ժողովրդագրական գործոնների հետ, որոնցով և պայմանավորված է երկրի հեղինակությունը միջազգային ասպարեզում: Բոլոր նշված տարրերը իմիջային կառուցվածքում գտնվում են անընդհատ փոխազդեցության մեջ, և յուրաքանչյուր տարրի քիչ թե շատ նկատելի փոփոխությունը կարող է հանգեցնել իմիջի շտկման կամ, նույնիսկ, վերանայման անհրաժեշտությանը: Տարածքային սուբյեկտի համար գրագետ զբոսաշրջային իմիջի ձևավորման և հետագա կառավարման կարևորությունը դժվար է գերազնահատել, քանի որ զբոսաշրջության կայուն զարգացումը նպաստում է երկրում տնտեսական և սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծմանը՝ գրանցելով բյուջեի լուրջ մուտքեր, խթանելով փոքր ու միջին բիզնեսի զարգացումը, ապահովելով ազգաբնակչության զբաղվածությունը: Դրա հետ մեկտեղ, զբոսաշրջությունն ազդում է երկրի պատմամշակութային և բնական ռեսուրսների պահպանման և շարունակական զարգացման վրա, նպաստում է տարբեր երկրների և ժողովուրդների միջև խաղաղ և ներդաշնակ հարաբերությունների հաստատմանը:

Առանցքային հասկացություններ. տարածքային-սլետական միավոր, զբոսաշրջային դեստինացիա, իմիջ, իմիջաբանություն, իմիջային ռազմավարություն, ծառայությունների շղթաներ, մրցակցություն, դիրքավորում, հաղորդակցական մոդելներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гринберг Т.Э. Образ страны или имидж государства: поиск конструктивной модели. // “МЕДИАСКОП” – электронный научный журнал факультета журналистики МГУ им. М.В. Ломоносова, Выпуск №2., 2008 г./ URL: <http://www.mediascope.ru/taxonomy/term/150> (հարցման ամսաթիվը՝ 15.03.2013):
2. Киселев И.Ю. Проблема образа государства в международных отношениях в рамках конструктивистской парадигмы. // Электронный Информационно-аналитический центр по изучению общественно-политических процессов на постсоветском пространстве / Публикации от 08 апреля 2007 г. /

- URL: http://www.ia-centr.ru/archive/public_detailsa5fc.html?id=49 (հարցման ամսաթիվը՝ 15.03.2013):
3. Fisk, R.P., Grove, St.J., John, J. Interactive Services Marketing. HOUGHTON MIFFLIN, 2008, 3rd Edition. Pages: 340. էջ 187:
 4. True, J. “Globalisation and Identity” // Globalisation and Identity / Raymond Miller (ed.) – South Melbourne: Oxford University Press, 2006, 73-74.
 5. Минтусов И.Е., Егорова-Гантман Е.В. Политическое консультирование. Изд. 2-е. – М.: “Никколо-Медиа”, 2002, 471 с. էջ 231:
 6. Афанасьев С.В. Формирование корпоративного имиджа как основная составляющая PR-стратегии. – Барнаул, 2008. – 26 с. // “Гуманитарные технологии в социальной сфере” – электронное издание Российского государственного педагогического университета им. А.И. Герцена. Дата размещения: 19.08.2008/ URL: http://portal.gersen.ru/component/option,com_mtree/task,viewlink/link_id,7163/Itemid,50/ (հարցման ամսաթիվը՝ 28.04.2013):
 7. Чернышов Ю.Г. Имидж России и проблемы интеграции на постсоветском пространстве. // Вестник Российской Ассоциации Политической Науки. Материалы конференции “Стратегии политического развития России”, 05-06 февраля 2004г. Барнаул: Изд-во Алт. гос. ун-та. URL: <http://rapn.ru/?grup=72&doc=137> (հարցման ամսաթիվը՝ 30.04.2013):
 8. Anholt, S. Competitive Identity: The New Brand Management for Nations, Cities and Regions. Palgrave Macmillan, 2007. Pages: 160. էջ 87:
 9. Шипова Е.А. PR-сообщество на службе страны // “Советник” – профессиональный журнал о связях с общественностью и рынке PR. Москва, 2004, №6. էջ 4-5:
 10. Галумов Э.А. Имидж против имиджа. – М.: Изд-во “Известия”, 2005, 552с. էջ 174:
 11. Галумов Э.А. Международный имидж России: стратегия формирования. – М.: Изд-во “Известия”, 2004, 446 с. էջ 149:
 12. Lasswell, H. D. The Structure and Function of Communication in Society. // The Communication of Ideas. Lyman Bryson (ed.). New York: The Institute for Religious and Social Studies. 1948. Pages: 203-243.
 13. UNWTO e-library: Tourism region definition. URL: <http://www.wtoelibrary.org/content/?k=definition+country+image&mode=allwords> (հարցման ամսաթիվը՝ 22.04.2013):
 14. Спирченко М.А. Образ, имидж и брэнд туристского города. // Архитектон: известия вузов – электронный межвузовский

журнал. 2007, №18 (Приложение). Материалы студенческой научной конференции “Актуальные проблемы архитектуры и дизайна-2007”. URL: http://archvuz.ru/2007_22/5 (hıurgıwıǵı wııwıwıǵıǵı 22.04.2013):

15. Горохов А.Ф. Комплексный подход к формированию маркетинговой стратегии развития туристической дестинации // Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук. – С-Пб., 2007.
16. Таранова Ю.В. Туристический имидж страны. // Имидж государства/региона: современные подходы, новые идеи в теории и практике коммуникации. Сб. науч. трудов. Вып. 3 /Отв. ред. Д.П. Гавра. – С-Пб.: “Роза мира”, 2009. 264 с.

ОСНОВНЫЕ СОСТАВЛЯЮЩИЕ ПОНЯТИЯ “ИМИДЖ ТЕРРИТОРИИ”

А. Матенця

Резюме

В статье предпринят всесторонний анализ понятия “имидж”, которое рассмотрено как обычное, стихийно возникающее представление человека о чем- или о ком-либо, а также как специально формируемый образ, предназначенный для воздействия на сознание целевых групп общества для достижения определенных результатов. Уточнен контекст применения понятия “имидж” в качестве инструмента коммуникационной технологии, представлены особенности имиджа, подчеркивающие его технологическую сущность. Представлено понятие имиджа территориального субъекта, в качестве которого подробно рассматривается страна со всеми составляющими ее имиджа. Особое внимание уделено процессу формирования туристического имиджа страны, с представлением сравнительного анализа дефиниции “туристический имидж” в зарубежной научной литературе, посвященной вопросам территориального маркетинга. Подчеркнута важность создания грамотного туристического имиджа и дальнейшего его менеджмента

для повышения международного рейтинга страны.

Ключевые понятия: *государственно-территориальный субъект, туристическая дестинация, имидж, имиджеведение, имиджевая стратегия, цепи услуг, конкуренция, позиционирование, коммуникационные модели.*

BASIC COMPONENTS OF THE “AREA IMAGE” CONCEPT

A. Matentsyan

Summary

The article presents a comprehensive analysis of the concept of “image” which is considered to be a normal, spontaneously occurring human idea about something or somebody, as well as a specially created image intended to influence the minds of target groups of the society in order to achieve certain results. Besides, the concept of image is specified as an instrument of communication technology together with the features emphasizing technological nature of the image. The notion of territorial entity is considered in detail in reference to a country with all the peculiarities of its image. Special attention is paid to the formation of tourist image of the country with the comparative analysis of “tourist image” definition existing in the foreign scientific literature on territorial marketing. The importance of establishing proper tourist image of a country and its further management is emphasized in connection with international ranking of the country.

Key concepts: *state-territorial subject, tourist destination, image, imageology, image strategy, the chain of services, competition, positioning, communication model.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Թադևոսյան

Վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորումն ըստ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի..... 3

Ա. Հովհաննիսյան, Կ. Բատիկյան

Գերատեսչական վերահսկողությունը քննիչի գործունեության նկատմամբ..... 18

Ա. Չոբանյան

Ֆինանսական արբիտրաժը որպես վեճերի քննության այլընտրանքային եղանակ 27

Գ. Գ. Սարգսյան, Տ. Ս. Բաղդասարյան

Հայցի ապահովման ինստիտուտի առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում..... 41

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Ա. Վ. Պետրոսյան

Թվաբանական բազմանիստերի տեղեկատվության գնահատում մոդելային վիճակագրությամբ..... 52

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ռ. Է. Ֆատյան

Թվային տարրի մոդել..... 60

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հ. Շ. Խաչատրյան

Կրթության համակարգի արտաբյուջետային ֆինանսավորման կատարելագործման ուղիները 70

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ն. Լ. Կիրակոսյան

Ինտերակտիվ ուսուցման մեթոդական հարցեր..... 82

Լ. Մ. Ավանեսյան

Արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականության կիրառման նպատակահարմարությունը ՀՀ տնտեսության զարգացման գործում 95

Վ. Սահակյան

ՀՀ գործարար միջավայրի զարգացման տեմպերը ըստ «Գործավարությամբ զբաղվելու մասին 2013թ. զեկույցի» 103

Կոռուպցիոն դրսևորումների դգաեցությունները ՀՀ գործարար միջավայրի վրա 118

Ս. Մկրտչյան

Ճապոնիայի արտաքին առևտրի կառավարման հիմնախնդիրների վերլուծությունը..... 131

ՀՀ արտաքին առևտրային հարաբերությունների վերլուծությունը մինչ համաշխարհային ճգնաժամը..... 143

Վ. Ս. Եղիազարյան

Զբոսաշրջության ենթակառուցվածքային ծառայությունները և դրանց զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում 155

Ն. Ն. Գեմուրչյան

Միջազգային բանկային ծառայությունների զարգացման հնարավորությունները ՀՀ-ում 168

Հ. Ռ. Երիցյան

Վերազգային կորպորացիաների մարքետինգային գործունեության առանձնահատկությունները Հայաստանում 176

Մ. Ս. Կասիմյան

Արտաքին տնտեսական կապերի զարգացման արդի միտումները 188

Ա. Զ. Ոսկանյան

Զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության պետական աջակցությունը..... 202

Ն. Հ. Էվոյան

1994-2012թթ. Հայաստանի Հանրապետության արժույթային քաղաքականության վերլուծություն..... 213

Մ. Ս. Կասիմյան

Հայ-վրացական առևտրատնտեսական կապերի ընդհանուր բնութագիր..... 233

Ա. Ս. Մխիթարյան

Վարկունակության գնահատման միջազգային փորձը..... 249

Ն. Սարգսյան

ՀՀ ՏՏ ոլորտի մրցունակությունը, ոլորտի խթանման մոդելի արդյունավետությունը և ռազմավարական զարգացման ներուժը..... 263

Տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ շուկայի բնորոշ գծերը և զարգացման միտումները..... 276

Г. Л. Айвазян

Обнаружение сигналов в разнесенных РЛС при теневом рассеянии 291

Ա. Ս. Մատենցյան

«Տարածքի իմիջ» հասկացության հիմնական բաղադրիչները 299

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Գավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38
(374 10) 24 14 05
Ֆաքս (374 10) 24 00 38
Էլ. փոստ. euroarmenia@yahoo.com
d.hovhannisyan@ericta.am
ashmarz@mail.ru

Ֆորմատ՝ 60x84/16; Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 20 մամուլ: Տպաքանակ՝ 150:

ԵԱ գիտական հոդվածների ժողովածու, 2013

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
հրատարակչություն,
Երևան 0037, Գավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Պոլիգրաֆբիզնես» ՍՊԸ-ի տպարանում:
Հասցեն՝ ՀՀ ք.Երևան, Ծովակալ Իսակովի 2/48: